ՀՀ  կառավարությանն
առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտե
“Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն” ՊՈԱԿ

# Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան

# ԵՐԵՎԱՆ-2008
# ՆԱԽԱԲԱՆ

Սույն բառարանը ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ինչպես ներկայումս, այնպես էլ անցյալում գործածված անունները, որոնք ներկայացված են այբբենական կարգով: Յուրաքանչյուր անուն-գլխաբառից հետո տրվում է նրա սահմանումը և դիրքը, համառոտ բնութագիրը և պատմական ակնարկը: Բառարանն ընդգկում է շուրջ 1690 բառ:

Բառարանի հիմնական սկզբնաղբյուրներն են հանդիսացել նախախորհըրդային, խորհրդային և անկախության տարիներին հրատարակված տարբեր մասշտաբի քարտեզները, լիազոր մարմինների կողմից պարբերաբար լույս տեսնող վարչա-տարածքային բաժանման տեղեկագրքերն ու պաշտոնական այլ նյութեր:

Բառարանում անուն-գլխաբառերը տրված են գլխատառերով, նրանց վերաբերյալ տեղեկությունները՝ սովորական տառերով: Համառոտ բնութա-գրից և պատմական ակնարկից հետո, փակագծերի մեջ, նշվում են անցյալում գործածված անունը (կամ անունները): Օրինակ՝

**ԳՈՐԱՅՔ**- գյուղ Սյունիքի մարզում, .......... (**Վասակակերտ**, **Բագրատավան**, **Ակունք**):

Հին անվանումները, իրենց տեղում, նույնպես տրվում են գլխատառերով և հղվում ներկայիս անվանմանը, որը շարված է շղատառերով: Օրինակ՝

**ԼԵՆԻՆԱԿԱՆ**-քաղաք Շիրակի մարզում, տե՛ս **Գյումրի**:

Երկու կամ մի քանի նույնանուն բնակավայրերի առկայության դեպքում, նախ տրվում է քաղաքային բնակավայրերի, ապա գյուղական, իսկ նրանց մեջ հաջորդականությունը սահմանվում է ըստ մարզերի այբբենական կարգի: Օրինակ՝

**ԱԳԱՐԱԿ**-քաղաք Սյունիքի մարզում, .............

**ԱԳԱՐԱԿ**-գյուղ Լոռու մարզում,.......................

**ԱԳԱՐԱԿ**-գյուղ Սյունիքի մարզում,..................

Նույն մարզում երկու կամ մի քանի նույնանուն բնակավայրերի առկայության դեպքում նրանց մեջ հաջորդականությունը սահմանվում է ըստ տարածա-շրջանների այբբենական կարգի: Օրինակ՝

**ԱԳԱՐԱԿ**-գյուղ Արագածոտնի մարզում, Աշտարակի տարածաշրջանում, .....

**ԱԳԱՐԱԿ**-գյուղ Արագածոտնի մարզում, Թալինի տարածաշրջանում,...........

Բնակավայրերի բնակչության թվի 1831, 1873, 1886, 1897, 1908, 1914, 1916, 1919, 1922, 1926 և 1931 թվականների տվյալների համար հիմնական աղբյուր է հանդիսացել Զ. Կորկոտյանի "Խորհրդային Հայաստանի բնակչու-թյունը" գիրքը, որը հրատարակվել է 1932թ.: Հետագա տարիների համար օգտագործվել են 1939, 1959, 1970 և 1989 թվականների Համամիութենական մարդահամարների, ինչպես նաև 2001թ. Հայաստանի Հանրապետության մարդահամարի, "Հայաստանի

Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանապարհային քարտեզ"-ը և այլ պաշտոնական տեղեկագրերի նյութերը:

Բառարանն օգտակար կլինի տարբեր մասնագիտության գիտաշխատող-ների, պետական և տեղական իշխանությունների, դասախոսների, ուսուցիչ-ների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

# Բ Ա Ռ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

*ԳՈՐԾԱԾՎՈՂ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ*

ք.- *քաղաք*
քտա.-*քաղաքատիպ ավան*
գ.-*գյուղ*
հս.-*հյուսիս*
հվ.- *հարավ*
արմ.-*արևմուտք*
արլ.-*արևելք*
կմ-*կիլոմետր*
մ-*մետր*
թ.-*թվական*
թթ.-*թվականներ*
դ.-*դար*
դդ.-*դարեր*
մջնդ.-*միջնադար*
մ.թ.ա.-*մեր թվարկությունից առաջ*
հզմ.-*հազարամյակ*
ՀԷԿ-*հիդրոէլեկտրակայան*
ՋԷԿ-*ջերմաէլեկտրակայան*
ՀԱԷԿ-*հայկական ատոմային էլեկտրակայան*

# Ա

**ԱԲՈՎՅԱՆ**- քաղաք Կոտայքի մարզում: Գտնվում է Կոտայքի սարավանդում, մարզկենտրոնից 37 կմ հվ-արմ.: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1360 մ բարձրության վրա: 1961թ. վերանվանվեց **Ա.:** 1963թ. դասվեց քաղաքների կարգին: 1873թ. ուներ 360, 1897-ին՝ 548, 1926-ին՝ 897, 1939-ին՝ 1024, 1959-ին՝ 2289, 1970-ին՝ 14700, 1976-ին՝ 38400, 1989-ին՝ 58671, 2001-ին՝ 44596, 2004-ին՝ 44800 բնակիչ, որոնց մի մասը հայրենադարձվել է Իրանից 1960-70-ական թթ.: Արդյունաբերական կենտրոն է: Բնակչությունը զբաղվում է նաև բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ և անասնաբուծությամբ: **Ա.**-ի տեղում բնակավայր է եղել հնագույն ժամանակներից: Այստեղ հայտնաբերվել են Արգիշտի I-ինի (մ.թ.ա. 8-րդ դ.) սեպագիր արձանագրություն, քաղաքի հվ. մասում կան մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. կիկլոպյան ամրոց, բնակատեղի և դամբարաններ: Քաղաքի եզրում են գտնվում “Էլառ-Դարանի” ամրոցը (մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ.) և սբ. Ստեփանոս եկեղեցին (**Ուրուբա**, **Դարանի**, **Էլառ**):

**ԱԲՈՎՅԱՆ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 13 կմ հս.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 960 մ: Գյուղը հիմնադրվել է 1830թ.: 1897թ.ուներ 191, 1926-ին՝ 344, 1939-ին՝ 319, 1959-ին՝ 703, 1970-ին՝ 849, 2001-ին՝ 1457, 2004-ին՝ 1440 բնակիչ, որոնց նախնիները ներգաղթել են Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ: **Ա.** Է գտնվում “Թուխ Մանուկ” մատուռը (19դ.):

**ԱԳԱՐԱԿ**- քաղաք Սյունիքի մարզում, Արաքսի ձախ ափին, մարզկենտրոնից 80 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 650 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1949թ. որպես բանվորական ավան: 1972թ. ուներ 3800, 1979-ին՝ 4073, 2001-ին՝ 4801, 2004-ին՝ 4800 բնակիչ, որոնք զբաղվում են պղնձամոլիբդենային հանքանյութի հանույթով ու նախնական մշակությամբ:

**ԱԳԱՐԱԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, Աշտարակի տարածաշրջանում, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ: 1897թ. ուներ 603, 1926-ին՝ 550, 1939-ին՝ 701, 1959-ին 897, 1979-ին՝ 1150, 2001-ին՝ 1655, 2004-ին՝ 1792 բնակիչ, որոնք գաղթել են Վանից և Բիթլիսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում են գտնվում 5-6դդ. սբ. Աստվածածին և 10դ. սբ. Ամենափրկիչ (Թուխ Մանուկ) եկեղեցիները:

**ԱԳԱՐԱԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, Թալինի տարածաշրջանում տե՛ս **Ագարակավան**:

**ԱԳԱՐԱԿ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1370 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 34 կմ հս.: 1831թ. ուներ 56, 1897-ին՝ 657, 1914-ին՝ 999, 1926-ին՝ 847, 1939-ին՝ 1581, 1959-ին՝ 1366, 1979-ին՝ 1273, 2001-ին՝ 1434, 2004-ին՝ 1268 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, պտղաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղում կան՝ սբ. Աստվածածին (5-6դդ.), “Ճգնավոր” (19դ.), սբ. Սի-

ոն եկեղեցիներ և “Դարմանաթաղ” մատուռ համանուն գյուղատեղիում (մջնդ.): **Ա**-ի մոտ է գտնվում Ագարակի մենաստանը:

**ԱԳԱՐԱԿ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախ կողմում, մարզկենտրոնից 12 կմ արլ., ծովի մակերևույթից 1025 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 81, 1897-ին՝ 929, 1914-ին՝ 814, 1939-ին՝ 553, 1959-ին՝ 217, 1979-ին՝ 226, 2001-ին՝ 190, 2004-ին՝ 185 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղը հիշատակվում է 12-13դդ.: Գյուղում կան զանազան հնություններ՝ խաչքարեր, գյուղատեղիներ (“Կեչուտ” և “Սիրաձոր” վայրերում): Գյուղի 19դ. Օհանա կոչվող եկեղեցին կանգուն է, կա մատուռ:

**ԱԳԱՐԱԿԱՁՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ ափին, Ագարակաձոր վտակի գետաբերանի շրջանում, մարզկենտրոնից 3 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1160 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 216, 1897-ին՝ 346, 1914-ին՝ 382, 1926-ին՝ 277, 1959-ին՝ 480, 1970-ին՝ 283, 1979-ին՝ 930, 2001-ին՝ 1283, 2004-ին՝ 1355 բնակիչ, որոնց մի մասը 1828-29թթ. գաղթել է Խոյից, Սալմաստից և Մակուից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և խաղողագործությամբ: Գյուղի մոտ, Արփայի վրա, գտնվում է համանուն կամուրջը (13դ.), 12-17դդ. խաչքարեր, սբ. Հովհաննես մատուռը (19դ.), գյուղից 1,5 կմ արլ.՝ 17դ. եկեղեցին և 9դ. ամրոցը:

**ԱԳԱՐԱԿԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 32 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ: **Ա.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1922թ.ուներ 550, 1959-ին՝ 535, 1970-ին՝ 610, 1979-ին՝ 707, 2001-ին՝ 1069, 2004-ին՝ 1104 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունից և Տարոնից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և պտղաբուծությամբ: Գյուղից արլ. գտնվում է “Ագարակ” գյուղատեղին, իսկ 2,5 կմ հս-արլ.՝ “Պարտիզակ” գյուղատեղին (**Ագարակ**):

**ԱՁԱՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 86 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 389, 1959-ին՝ 276, 1979-ին՝ 448, 1989-ին՝ 300, 2001-ին՝ 165, 2004-ին՝ 187 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ և անասնաբուծությամբ: Գյուղում 11-13դդ. եկեղեցուց բացի կան նաև սբ. Աստվածածին եկեղեցին (1618-1621թթ.) և “Արիստակես քահանայի” խաչքարը (1658թ.):

**ԱՁԱՏ**- պատմական ավան Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Բերդկունք**:

**ԱՁԱՏԱԿ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Ազատեկ**:

**ԱՁԱՏԱՄՈՒՏ**- գյուղ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 11 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 580 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 25.01.1978թ.: 1979թ. ուներ 1517, 1989-ին՝ 4004, 1991-ին՝ 3400, 2001-ին՝ 2446, 2004-ին՝ 2640 բնակիչ, որոնք հիմնականում աշխատում են բենտոնիտի գործարանում (**Բենտոնիտային կավերի գործարանին կից**):

**ԱՁԱՏԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1490 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 8 կմ հվ.: 1831թ. ուներ 1450, 1922-ին՝

2940, 1959-ին՝ 3039, 1970-ին՝ 4000, 1979-ին՝ 3956, 1989-ին՝ 5616, 2001-ին՝ 5117, 2004-ին՝ 5175 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից, Ալաշկերտից և այլ վայրերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, բանջարեղենի մշակությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում կան սբ. Ստեփանոս (1865թ.), սբ. Աստվածածին եկեղեցիներ և "Սրբատեղի" մատուռ:

**ԱՋԱՏԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, արգավանդ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 855 մ: 1931թ. ուներ 140, 1970-ին՝ 405, 1979-ին՝ 429, 2001-ին՝ 606, 2004-ին՝ 447 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1929թ.: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

**ԱՋԱՏԱՇԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Սառնակունք**:

**ԱՋԱՏԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, հեռավորությունը մարզկենտրոնից 3 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: 2001թ. ուներ 3117, 2004-ին՝ 2923 մարդ, որոնց նախնիները գաղթել են Սալմաստի գյուղերից: Գյուղը հիմնադրվել է 1830թ.: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

**ԱՋԱՏԵԿ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ կողմում, մարզկենտրոնից 24 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1625 մ բարձրության վրա: Բնակչության նախնիները 1828-29թթ. ներգաղթել են Սալմաստից: 1831թ. ուներ 166, 1931-ին՝ 838, 1959-ին՝ 638, 1961-ին՝ 1000, 2001-ին՝ 600, 2004-ին՝ 511 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Այստեղ պահպանվել են "Սմբատաբերդ" հին բերդի ավերակները, սբ. Հակոբ եկեղեցին (գյուղից 2 կմ արմ., 1623թ.), սբ. Գևորգ (3 կմ հս-արլ., 10դ.), սբ. Վառվառա (1,5 կմ հվ.), սբ. Հովհաննես (2 կմ արմ., 19դ.), "Բառոժի" (3 կմ հս-արմ.), Շողակաթ (գյուղի արլ. մասում, 19դ.) մատուռները, 13-14դդ. խաչքարեր և սբ. Ենոք սրբատեղին (10դ.) (**Ազատակ**):

**ԱՋԻՁԲԵԿՈՎ**- քաղաք Վայոց ձորի մարզում, տե՛ս **Վայք**:

**ԱՋԻՁԲԵԿՈՎ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Արեգնադեմ**:

**ԱՋԻԶԼՈւ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Նորաբակ**:

**ԱՋՆՎԱՁՈՐ**- գյուղ Լոռու մարզում, Բազումի լեռների հս. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 4 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1675 մ: Գյուղը վերանվանվել է **Ա.** 03.04.1991թ.: 1831թ. ուներ 33, 1897-ին՝ 393, 1926-ին՝ 706, 1939-ին՝ 822, 1959-ին՝ 624, 1970-ին՝ 1041, 1979-ին՝ 1091, 1989-ին՝ 706, 2001-ին՝ 473, 2004-ին՝ 255 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ (**Գյոզալդարա**):

**ԱԹԱՆ**- գյուղ Լոռու մարզում: Մարզկենտրոնից՝ 63 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ: 1873թ. ուներ 104, 1897-ին՝ 235, 1919-ին՝ 433, 1926-ին՝ 500, 1959-ին՝ 614, 1979-ին՝ 601, 2001-ին՝ 396, 2004-ին՝ 338 բնակիչ, որոնց նախնիները եկել են Հաղպատից, Սանահինից և Շիրակի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում կան 12-13դդ. եկեղեցի և 12-20դդ. մատուռ:

**ԱԹԱՐԲԵԿՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Արտիմետ**:

**ԱԹԱՐԲԵԿՅԱՆԻ ՀԷԿ-ԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գագարին**:

**ԱԼԱԳՅԱԶ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 44 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 2050 մ: 1831թ. ուներ 278, 1873-ին՝ 196, 1914-ին՝ 339, 1931-ին՝ 523, 1970-ին՝ 732, 1979-ին՝ 710, 2001-ին՝ 469, 2004-ին՝ 536 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշից և Այնթապից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և պտղաբուծությամբ:

**ԱԼԱՇԿԵՐՏ**- գյուղ Արմավիրի մարզում, այգեվետ հարթավայրում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 7 կմ հվ.: **Ա.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1831թ. ուներ 413, 1897-ին՝ 1474, 1926-ին՝ 853, 1939-ին՝ 744, 1959-ին՝ 1149, 1970-ին՝ 1313, 1979-ին՝ 1371, 1989-ին՝ 1689, 2001-ին՝ 1714, 2004-ին՝ 2001 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-18թթ. գաղթել են Բայազետ քաղաքից և շրջակայքի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ (**Սովետական**):

**ԱԼԱՎԵՐԴԻ**- քաղաք Լոռու մարզում, Դեբեդ գետի կիրճում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 770 մ: 1831թ. ուներ 24, 1873-ին՝ 748, 1926-ին՝ 4500, 1959-ին՝ 16805, 1970-ին՝ 23311, 1976-ին՝ 23182, 2001-ին՝ 16641, 2004-ին՝ 17000 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Քաղաքում, Դեբեդի վրա, պահպանված է Սանահինի կամուրջը (13դ.): Այստեղ է գտնվում Սանահինի վանական համալիրը (13դ.), սբ. Կարապետ մատուռը (10-11դդ.), սբ. Սարգիս (12-13դդ.), սբ. Աստվածածին (928-944թթ.), “Նարեկ” եկեղեցիները և “Սրբատեղ” մատուռը:

**ԱԼԱՓԱՐՍ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդանի ձախ ափին, մարզկենտրոնից 17 կմ հվ-արմ., ծովի մակերեվույթից 1500 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 267, 1922-ին՝ 2881, 1959-ին՝ 1891, 1970-ին՝ 2125, 1979-ին՝ 2046, 1989-ին՝ 2207, 2001-ին՝ 2527, 2004-ին՝ 2096 բնակիչ, որոնց նախնիների մեծ մասը 1829-30թթ. գաղթել են Մակուից, Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: **Ա**-ի հնություններից են՝ սբ. Հովհաննես (7դ.), սբ. Աստվածածին (1897թ.) և սբ. Վարդան Զորավար եկեղեցիները (901թ.), որը հայտնի է նաև Ծիրանավոր վանք անունով (**Այլաբերք**):

**ԱԼԴԱՐԱ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ալվանք**:

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ**- քաղաք Շիրակի մարզում, տե՛ս **Գյումրի**:

**ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԿԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Չկալովկա**:

**ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԿԱ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ղարիբջանյան**:

**ԱԼՎԱՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Մալևի գետահովտում, մարզկենտրոնից 86 կմ հվ., ծովի մակերևույթից 600 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 131, 1873-ին՝ 911, 1914-ին՝ 1987, 1959-ին՝ 601, 1970-ին՝ 831, 1979-ին՝ 784, 2001-ին՝ 382, 2004-ին՝ 239 բնակիչ: **Ա.** է վերանվանվել 04.07.2006թ.: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծու-

թյամբ: Գյուղից մոտ 10 կմ հս. գտնըվում են Ափկես և Մալեվ լքված գյուղատեղիները, որտեղ պահպանվում են հինգ կանգուն և մեկ ավերված եկեղեցիներ (14-16դդ.) (**Ալդարա**):

**ԱԼՎԱՐ**- գյուղ Շիրակի մարզում: Մարզկենտրոնից՝ 44 կմ հս-արմ., ծովի մակերևույթից՝ 1980 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1886թ. ուներ 348, 1931-ին՝ 468, 1959-ին՝ 366, 1970-ին՝ 528, 1979-ին՝ 630, 1989-ին՝ 154, 2001-ին՝ 147, 2004-ին՝ 157 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ: Գյուղում կա "Գևոյի" մատուռ և ավերակ եկեղեցի: **Ա**-ի մոտ է գտնվում "Ալվար" ամրոցը (**Դուզքենդ**):

**ԱԽԹԱԼԱ**- քաղաք Լոռու մարզում, Լալվարի ստորոտում, Դեբեդի ձախ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 62 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 740 մ: 1897թ. ուներ 69, 1926-ին՝ 140, 1939-ին՝ 398, 1970-ին՝ 4430, 2001-ին՝ 2435, 2004-ին՝ 2400 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հանքարդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Քաղաքում կան բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ՝ "Ախթալա" ամրոցը (10դ.), սբ. Երրորդություն (սբ. Աստվածածին) վանքը (13դ.), Առաքելոց (սբ. Գևորգ) և "Այանես" եկեղեցիները, "Խաչվանք", "Նահատակի վանք" մատուռները և սբ. Հովհաննես մատուռ-խաչքարը:

**ԱԽԹԱԼԱ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1375 մ, հեռավորությունը Շամլուղ ք-ից՝ 4 կմ արլ.: 1886թ. ուներ 76, 1922-ին՝ 104, 2004-ին՝ 33 բնակիչ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ: Ունի հունական կանգուն եկեղեցի (**Վերին Ախթալա**):

**ԱԽԼԱԹՅԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան վտակ Սիսիան գետի աջ օժանդակ Այրիգետի ափին, մարզկենտրոնից 111 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1775 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 97, 1897-ին՝ 1146, 1926-ին՝ 1103, 1939-ին՝ 790, 1959-ին՝ 515, 1970-ին՝ 557, 1979-ին՝ 495, 2001-ին՝ 588, 2004-ին՝ 621 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և մեղվապահությամբ: Սբ. Սարգիս եկեղեցու ավերակները մնում են հին գյուղատեղիում, որը գտնվում է նորից 300-400 մ հվ.: Շրջակայքում կան բնակավայրերի ավերակների հետքեր, հայտնաբերվել են կավե և բրոնզե իրերով հարուստ դարաններ:

**ԱԽՊՐԱԶՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների հս. լանջին, մարզկենտրոնից 70 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2230 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 98, 1908-ին՝ 917, 1970-ին՝ 629, 1979-ին՝ 534, 1989-ին՝ 549, 2001-ին՝ 344, 2004-ին՝ 378 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: **Ա.**-ից 2 կմ արլ. կա 16-18դդ. "Ուղեո", իսկ հս. մասում՝ "Հին Ախպրաձոր" (10-20դդ.) և "Կարմիրշեն" (17-18դդ.) գյուղատեղիներ: Ունի 16-18դդ. եկեղեցի և "Տիկնա" (18դ.) մատուռ:

**ԱԽՏԱ**- նախկինում քաղաքատիպ ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Հրազդան**:

**ԱԽՏԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան վտակ Աղտք գետակի ափին, ծովի մակերևույթից 1650 մ բարձրության

վրա, Գոմքից 3 կմ հվ-արլ.: 1897թ. ուներ 426, 1926-ին՝ 131, 1939-ին՝ 268, 1959-ին՝ 202, 1970-ին՝ 379 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Պահպանվել է 17դ. եկեղեցի:

**ԱԽՈՒՆԴՈՎ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Փյունիկ**:

**ԱԽՈՒՐԻԿ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1470 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հվ-արմ.: 1886թ. ուներ 410, 1897-ին՝ 484, 1926-ին՝ 739, 1939-ին՝ 1119, 1959-ին՝ 941, 1970-ին՝ 1137, 1979-ին՝ 1107, 2001-ին՝ 1163, 2004-ին՝ 1069 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշից, Սասունից, Խնուսից և Կարսից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ, ճակնդեղագործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կան նոր ժամանակների կիսավեր եկեղեցի և սբ. Եղյա մատուռ: Գյուղից արմ. ընկած է “Հինշեն” գյուղատեղին:

**ԱԽՈՒՐՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1540 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 456, 1897-ին՝ 1635, 1926-ին՝ 2447, 1939-ին՝ 2320, 1959-ին՝ 2966, 1970-ին՝ 3812, 1979-ին՝ 6364, 2001-ին՝ 9696, 2004-ին՝ 10172 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Արմ. Հայաստանի՝ Բասենի, Կարսի, Սեբաստիայի, Ալաշկերտի գավառներից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, ճակնդեղագործությամբ, անասնաբուծությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ, պտղաբուծությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղն ունի 13-14դդ. սբ. Նշան եկեղեցի և “Սրբատեղ” մատուռ:

**ԱԽՈՒՐՅԱՆ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Շիրակի մարզում, ծովի մակերևույթից ՝ 1490 մ, Ղարիբջանյան գյուղից՝ 1,5 կմ հեռու: 1926թ.ուներ 17, 1939-ին՝ 29, 1979-ին՝ 28 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և պտղաբուծությամբ:

**ԱԿՆԱԼԻՃ**- գյուղ Արմավիրի մարզում, Վաղարշապատ-Արմավիր խճուղու վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 12 կմ արլ.: Որպես ավան հիմնադրվել է 1954թ.: 1926թ. ուներ 190, 1933-ին՝ 60, 1959-ին՝ 245, 1970-ին՝ 2026, 2001-ին՝ 2864, 2004-ին՝ 2900 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, ձկնաբուծությամբ և այգեգործությամբ: **Ա.** տարածքում են գտնվում նախնադարյան բերդաշենի մնացորդներ:

**ԱԿՆԱԽԱՉ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ջիլաքար**:

**ԱԿՆԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստև գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 11 կմ հս., ծովի մակերևույթից 650 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 200, 1908-ին՝ 341, 1922-ին՝ 248, 1939-ին՝ 313, 1959-ին՝ 355, 1979-ին՝ 437, 1989-ին՝ 345, 2001-ին՝ 506, 2004-ին՝ 650 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ, անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի արմ. մասում է գտնվում 13-20դդ. խաչքարերով գերեզմանոցը (**Մորուտ**):

**ԱԿՆԱՇԵՆ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, մարզկենտրոնից 34 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է

ծովի մակերևույթից 835 մ բարձրության վրա: Բնակիչների նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյից, որոշ թվով բնակիչներ այստեղ են գաղթել նաև Սուրմալուից Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: 1897թ. ուներ 504, 1926-ին՝ 458, 1939-ին՝ 652, 1959-ին՝ 941, 1970-ին՝ 1177, 2001-ին՝ 1404, 2004-ին՝ 1400 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի տարածքում են գրտնըրվում սբ. Բարդուղիմեոս եկեղեցին և մ.թ.ա. 6-րդ-5-րդ հզմ. "Հին Ակնաշեն" բնակատեղին, մ.թ.ա. 4-րդ-3-րդ հզմ. դամբարանադաշտը:

**ԱԿՆԵՐ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1050 մ, հեռավորությունը Ալավերդի ք-ից՝ 6 կմ հվ-արլ.: 1886թ. ուներ 290, 1914-ին՝ 501, 1922-ին՝ 475, 1939-ին՝ 765, 1959-ին՝ 644, 1970-ին՝ 302, 2001-ին՝ 655, 2004-ին՝ 100 բնակիչ: **Ա.** է վերանվանվել 03. 01.1935 թ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և դաշտավարությամբ: Ունի քարաշեն փոքրիկ եկեղեցի (1863թ.) (**Որնակ**):

**ԱԿՆԵՐ**- գյուղ Սյունիքի մարզում, համանուն գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 73 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ: **Ա.** է վերանվանվել 04. 07. 2006թ.: 1880թ. ուներ 226, 1907-ին՝ 150, 1922-ին՝ 468, 1931-ին՝ 540, 1959-ին՝ 568, 1970-ին՝ 709, 1979-ին՝ 632, 1989-ին՝ 832, 2001-ին՝ 1087, 2004-ին՝ 1233 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: **Ա**-ի մոտով է հոսում 10դ. "Տերտերի առու" ջրանցքը (**Բռուն**):

**ԱԿՈՒՆՔ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագածի հվ-արմ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 53 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: 1831թ. ուներ 10, 1873-ին՝ 526, 1886-ին՝ 697, 1909-ին՝ 994, 1916-ին՝ 1098, 1922-ին՝ 388, 1939-ին՝ 614, 1959-ին՝ 789, 1970-ին՝ 765, 1979-ին՝ 644, 2001-ին՝ 672, 2004-ին՝ 730 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշից, Ալաշկերտից և Խոյից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղն ունի 19դ. սբ. Ստեփանոս եկեղեցի, սբ. Սարգիս և 12-13դդ. "Թուխ Մանուկ" մատուռներ: **Ա**-ից 1 կմ հս. գտնվում է "Բերդի կալ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.):

**ԱԿՈՒՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների ստորոտներից բխող աղբյուրների մոտ, մարզկենտրոնից 77 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1960 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 247, 1897-ին՝ 948, 1926-ին՝ 1071, 1939-ին՝ 1678, 1959-ին՝ 2028, 1970-ին՝ 2958, 1979-ին՝ 3174, 1989-ին՝ 3352, 2001-ին՝ 3663, 2004-ին՝ 4526 բնակիչ, որոնց մի մասը հին բայազետցիներ են: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, կարտոֆիլի և ծխախոտի մշակությամբ: **Ա.** և նրա շրջակայքը հարուստ են հնություններով: Գյուղում կան սբ. Մեսրոպ (19դ.) և սբ. Հակոբ (13դ.) եկեղեցիներ, Թուխ Մանուկ կոչվող երկու սրբատեղիներ: **Ա.**-ից 3 կմ հվ. կա "Հին Գոմեր" (13-17դդ.) բնակավայրի ավերակներ, իսկ արմ. մասում գտնվում է "Կլոր Դար" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) բնակատեղի (**Բյուրակ**, **Բազմաղբյուր**):

**ԱԿՈՒՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Սարուխան**:

**ԱԿՈՒՆՔ**- գյուղ Կոտայքի մարզում, Հատիս լեռան ստորոտին, Քառասունակն աղբյուրների մոտ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 42 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 9, 1897-ին՝ 827, 1926-ին՝ 1048, 1939-ին՝ 985, 1959-ին՝ 932, 1970-ին՝ 1190, 1979-ին՝ 1392, 1989-ին՝ 1725, 2001-ին՝ 1914, 2004-ին՝ 1957 բնակիչ, որոնց նախկինների հիմնական մասը 1829թ. Պարսկահայաստանից (Սալմաստ, Խոյ) և Նոր Բայազետից գաղթածներ են: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և պտղաբուծությամբ: **Ա.** կա սբ. Կարապետ (սբ. Աստվածածին 1855թ.) եկեղեցի, հս. մասում՝ սբ. Սարգիս եկեղեցու ավերակներ, իսկ Շամիրամ լեռան հվ. ստորոտում պահպանվել են սբ. Պողոս-Պետրոս մատուռի ավերակները (1551թ.):

**ԱԿՈՒՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գորայք**:

**ԱՀՆԻՁՈՐ**- գյուղ Լոռու մարզում, մարզկենտրոնից՝ 52 կմ հս-արլ., ծովի մակերևույթից՝ 1500 մ բարձրության վրա: Բնակչությունը՝ 1897թ.-133, 1926թ.-311, 1939թ.-470, 1959թ.-364, 1970թ.-275, 1979թ.-210, 2001թ.-332, 2004թ.-240 բնակիչ: Նախնիները 19դ. երկրորդ կեսին եկել են Հաղպատ և Սանահին գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: **Ա.** կա 13դ. եկեղեցի:

**ԱՂԱՁՈՐ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Կաթնաղբյուր**:

**ԱՂԱՎՆԱՁՈՐ**- գյուղ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի ստորին հոսանքի ձախափնյա դարավանդի վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 11 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 709, 1926-ին՝ 868, 1939-ին՝ 1182, 1959-ին՝ 736, 1979-ին՝ 1041, 1989-ին՝ 971, 2001-ին՝ 1366, 2004-ին՝ 1071 բնակիչ, որոնց նախնիները 1829թ. գաղթել են Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, հացահատիկի և ծխախոտի մշակությամբ: Գյուղում կա սբ. Հովհաննես եկեղեցի (17դ.):

**ԱՂԱՎՆԱՁՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, ծովի մակերևույթից 1610 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 14 կմ հս-արմ.: **Ա.** է վերանվանվել 1946թ.: 1897թ. ուներ 851, 1926-ին՝ 1331, 1939-ին՝ 1775, 1959-ին՝ 1485, 1979-ին՝ 1800, 2001-ին՝ 1948, 2004-ին՝ 2029 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ, ծխախոտագործությամբ, դաշտավարությամբ և անասնաբուծությամբ: Գյուղից 4 կմ հս. գտնվում է “Ներքին Ուլնոց” գյուղատեղի (13-14դդ.), “Վանքի ձոր” հնավայրը սբ. Աստվածածին եկեղեցիով (10-11դդ.) և 1009թ. մահարձանով, 1 կմ արլ.՝ “Աղջկաբերդ”-ը (13դ.), 11-14դդ. խաչքարեր, իսկ 4 կմ հս-արմ.՝ 13-14դդ. իջևանատուն (**Ըղնաձոր**, **Եղեգնաձոր**):

**ԱՂԱՎՆԱՎԱՆՔ**- գյուղ Տավուշի մարզում, Գետիկի ստորին հոսանքի աջափնյակում, մարզկենտրոնից 32 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1950-ական թթ. ապաբնակեցված Գոգարչին գյուղի վերաբնակիչների համար: 1970թ. ուներ 934, 1979-ին՝ 918, 1989-ին՝ 302, 2001-ին՝ 417, 2004-ին՝ 287 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և կերային

կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 2 կմ հս-արլ. գտնվում է “Անապատ” գմբեթավոր վանքը (11-12դդ.), իսկ 10 կմ հս.՝ “Աղավնուտ” գյուղատեղին (14-17դդ.):

**ԱՂԱՎՆԱՏՈՒՆ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, մարզկենտրոնից 22 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 920 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 186, 1897-ին՝ 821, 1926-ին՝ 1024, 1939-ին՝ 1292, 1959-ին՝ 1700, 1970-ին՝ 2350, 1979-ին՝ 2296, 2001-ին՝ 3158, 2004-ին՝ 3200 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի մշակությամբ և թռչնաբուծությամբ: **Ա**-ից հս-արմ. կան տուֆի և բազալտի հանքավայրեր: Գյուղում և նրա շրջակայքում կան զանազան հնություններ: Դեպի արմ.՝ բերդամրոցի ավերակներ; սբ. Գևորգ, Մարիամ Աստվածածին (10դ.) և “Ծիրանավոր” (14դ.) եկեղեցիների ավերակները, հվ-արմ՝ 13դ. բավական պահպանված իշխանական մատուռ-դամբարան: **Ա**-ի շրջակայքում են գտնըվում նաև սբ. Կարապետ, “Կարմրավոր” եկեղեցիների և կիկլոպյան ամրոցի ավերակները:

**ԱՂԲԵՐՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների հվ-արլ. մասից դեպի Արտանիշի թերակղզի իջնող ճանապարհի վրա, մարզկենտրոնից 68 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1897թ. ուներ 806, 1926-ին՝ 1229, 1939-ին՝ 1504, 1959-ին՝ 1141, 1970-ին՝ 1563, 1989-ին՝ 688, 2001-ին՝ 298, 2004-ին՝ 209 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, ծխախոտագործությամբ և դաշտավարությամբ: Գյուղից հս. պահպանված է հայկական հին գերեզմանոց (17-18դդ.) (**Աղբուլաղ**):

**ԱՂԲՈՒԼԱՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Աղբերք**:

**ԱՂԲՈՒԼԱՂ** - գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան վտակ Քաշունի գետից դեպի ձախ: Հեռավորությունը Շուռնուխ գյուղից՝ 9 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ: 1926թ. ուներ 66, 1939-ին՝ 146, 1959-ին՝ 187, 1970-ին՝ 355, 1989-ին՝ 71 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Գյուղի մոտ է գտնվում “Կալանըդար” ամրոցը:

**ԱՂԻՆ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 28 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1470 մ բարձրության վրա: Բնակչության նախնիները 1829-30թթ. գաղթել են Մուշից, Ալաշկերտից և Բասենից, 1877-78թթ.՝ Կարսից: 1897թ. ուներ 1004, 1926-ին՝ 443, 1939-ին՝ 771, 1959-ին՝ 612, 1970-ին՝ 791, 1979-ին՝ 359, 2001-ին՝ 474, 2004-ին՝ 591 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Կանգուն վիճակում են սբ. Հակոբ (1878թ.) և սբ. Գրիգոր եկեղեցիները, կա “Թուխ Մանուկ” մատուռ:

**ԱՂԻՆ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Շիրակի մարզում, Երևան-Գյումրի երկաթուղու վրա, Ախուրյանի ձախ ափին, Աղին գյուղից 1 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1460 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 60, 1939-ին՝ 108, 1959-ին՝ 184, 1970-ին՝ 185, 1979-ին՝ 140, 2001-ին՝ 73 բնակիչ: Գյուղի գլխավոր ձեռնարկությունն է պանրի գործարանը: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ:

**ԱՂԻՏՈւ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի բարձրադիր ձախ ափին, մարզկենտրոնից 97 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 60, 1873-ին՝ 450, 1914-ին՝ 1070, 1959-ին՝ 828, 1970-ին՝ 1222, 2001-ին՝ 209, 2004-ին՝ 247 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Գյուղում կա 6-7դդ. կոթող-մահարձան, գյուղից հվ. գտնվում են "Բերդատեղ" ավերակ բերդը, "Ձորագյուղ" և "Գյուղատեղ" ավերակ գյուղատեղիները: Շրջակայքում կան հանքային աղբյուրներ (**Աղուդի**):

**ԱՂՁՔ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250 մ: 1831թ. ուներ 93, 1897-ին՝ 404, 1926-ին՝ 603, 1939-ին՝ 837, 1959-ին՝ 1040, 1970-ին՝ 1266, 1979-ին՝ 1351, 2001-ին՝ 1801, 2004-ին՝ 1932 բնակիչ: **Ա.** է վերանվանվել 1991թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և այգեգործությամբ: Գյուղում է գտնըվում 4դ. եկեղեցի: Այստեղ հայտնաբերվել է Արշակունյաց թագավորների դամբարանը (364թ.) (**Ձորափ**):

**ԱՂՅՈԽՈւՇ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ջառիվեր**:

**ԱՂՆՋԱՁՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Սելիմագետի ափին, ծովի մակերևույթից 1610 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 23 կմ հս.: Նախնիները 1829թ. գաղթել են Խոյից ու Սալմաստից: 1897թ. ուներ 670, 1926-ին՝ 300, 1939-ին՝ 621, 1959-ին՝ 577, 1970-ին՝ 502, 1979-ին՝ 478, 2001-ին՝ 449, 2004-ին՝ 427 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: **Ա**-ից 16 կմ հս. է գտնվում Սելիմի քարավանատունը (14-15դդ.), 4 կմ հս.՝ "Կապույտ" բերդի ավերակները, խաչքարեր (9-14դդ.) և կամուրջներ (13-15դդ., 18-19դդ.) (**Տրունք**):

**ԱՂՎԱՆԻ**- գյուղ Սյունիքի մարզում, Քաշունի գետի ափին, մարզկենտրոնից 39 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 96, 1939-ին՝ 237, 1959-ին՝ 245, 1970-ին՝ 247, 1979-ին՝ 151, 2001-ին՝ 138, 2004-ին՝ 92 բնակիչ: Հիմնադրվել է 1923թ. հին բնակավայրի տեղում: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղի տարածքում կան նախաքրիստոնեական շրջանի գերեզմաններ, 17դ. կիսավեր եկեղեցի, խաչարձաններ:

**ԱՂՎՈՐԻԿ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճից 14 կմ արլ.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 42 կմ հս-արմ.: **Ա.** է վերանվանվել 03. 04.1991թ.: 1896թ. ուներ 285, 1897-ին՝ 406, 1926-ին՝ 457, 1939-ին՝ 595, 1959-ին՝ 703, 1970-ին՝ 1072, 1979-ին՝ 1091, 1989-ին՝ 45, 2001-ին՝ 90, 2004-ին՝ 110 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի մոտակայքում հայտնաբերվել են "Բերդ սար" դամբարանադաշտը և համանուն ամրոցը (**Ենի Յոլ**):

**ԱՂՏԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Լեռնակերտ**:

**ԱՂՈւԴԻ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Աղիտու**:

**ԱՂՔԻԼԻՍԱ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Ճերմակավան**:

**ԱՃԱՆԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի հովտում, մարզկենտրոնից 8 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 910 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել

04.07.2006թ.: Գյուղի մոտ կան պղնձարջասպի հանքեր: 1831թ. ուներ 23, 1897-ին՝ 374, 1926-ին՝ 94, 1939-ին՝ 131, 1959-ին՝ 269, 1979-ին՝ 331, 2001-ին՝ 161, 2004-ին՝ 183 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է կաթնաանասնապահությամբ: Գյուղում կա եկեղեցի, իսկ շրջակայքում՝ "Նեղոց", "Տաձատի" գյուղատեղիներ (**Խմայձ**, **Խալաջ**):

**ԱՃԱՐԿՈՒՏ**- գյուղ Տավուշի մարզում, Քարահան գետի ափին, մարզկենտրոնից 25 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 780 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1930թ., **Ա.** է վերանվանվել 1978թ.: 1970թ. ուներ 364, 1979-ին՝ 216, 1989-ին՝ 137, 2001-ին՝ 196, 2004-ին՝ 178 բնակիչ: Բնակչության հիմնական զբաղմունքն է անտառտնտեսությունը: **Ա.** շրջակայքում են գտնվում "Առաքելոց" (13դ.), "Դեղձնուտ" (10-17դդ.), "Կիրանց" (14դ.) և "Սամսոնի" (12-13դդ.) վանքերը, իսկ հվ. մասում են 1695թ. սբ. Աստվածածին եկեղեցին և 13-19դդ. գերեզմանոցը (**Սնքարի փայտամշակման գործարանին կից**, **Սնքարի անտառտնտեսությանը կից**):

**ԱՄԱՂՈւ**- գյուղ Վայոց ձորի մարզում: Գտնվում է Գնիշիկ գետի ձախ ափի, ծովի մակերևույթից 1660 մ բարձրության վրա, Արենի գյուղից 12 կմ հվ-արմ.: 1873թ. ուներ 198, 1908-ին՝ 350, 1931-ին՝ 131, 1959-ին՝ 385, 1970-ին՝ 526, 1979-ին՝ 491 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղից հս-արլ., Ամաղուի ձորում է գտնվում Նորավանքի համալիրը (10-14դդ.), 13-14դդ. խաչքարեր, 10-11դդ. եկեղեցի, ինչպես նաև սբ. Կարապետ (1221թ.) և "Բուրթելաշեն" սբ.Աստվածածին (1339թ.) եկեղեցիները:

**ԱՄԱՍԻԱ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 10 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 890 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1930թ.: 1931թ. ուներ 95, 1959-ին՝ 502, 1966-ին՝ 660, 1970-ին՝ 747, 2001-ին՝ 958, 2004-ին՝ 1000 բնակիչ, որոնց մի մասը գաղթել է Սառնաղբյուր գյուղից, մյուս մասը՝ Կոստանդնուպոլսից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ (**Նոր Ամասիա**):

**ԱՄԱՍԻԱ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի աջ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից 23 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1870 մ: 1886թ.ուներ 274, 1914-ին՝ 564, 1931-ին՝ 645, 1959-ին՝ 1527, 1970-ին՝ 2773, 1980-ին՝ 3175, 2001-ին՝ 1878, 2004-ին՝ 1941 բնակիչ, որոնց նախնիները 1829թ. գաղթել են Բասենից, Կարսից և այլ տեղերից: 1956թ. վերանվանվել է **Ա.**: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և սննդի արդյունաբերությամբ: Գյուղից հս-արմ. է գտնվում "Ամրաձոր" ամրոցը (**Ղուկասավան**):

**ԱՄԲԵՐԴ**- գյուղ Արմավիրի մարզում, Արագածի հվ. փեշերին, մարզկենտրոնից 26 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 947 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 25.01.1978թ.: 1831թ. ուներ 176, 1897-ին՝ 557, 1926-ին՝ 682, 1939-ին՝ 685, 1959-ին՝ 768, 1970-ին՝ 1019, 2001-ին՝ 1363, 2004-ին՝ 1400 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղի արլ. կողմում են գտնվում սբ. Թովմաս եկեղեցու ավերակները: Ունի հին գերեզմանոց,

զարդաքանդակ գերեզմանաքարերով (**Ֆրանկանոց**):

**ԱՄՈՋ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի բարձրադիր ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1200 մ, հեռավորությունը Օձուն գյուղից՝ 1 կմ հս-արմ.: 1886թ. ուներ 45, 1926-ին՝ 157, 1939-ին՝ 163, 1959-ին՝ 110, 1970-ին՝ 219, 2001-ին՝ 201, 2004-ին՝ 183 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղն ունի 13դ. սբ. Հակոբ եկեղեցի:

**ԱՄՐԱԿԻՑ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջափնյակում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1380 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արմ.: 08.08.1991թ. գյուղը վերանվանվել է **Ա.**: 1873թ. ուներ 289, 1897-ին՝ 413, 1939-ին՝ 611, 1959-ին՝ 589, 1970-ին՝ 520, 1979-ին՝ 495, 1989-ին՝ 407, 2001-ին՝ 675, 2004-ին՝ 463 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա 1914թ. եկեղեցի (**Կիրով**):

**ԱՄՐԵ ԹԱԶԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Սադունց**:

**ԱՄՐԽԵՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Կալավան**:

**ԱՅԱՓՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Կապույտ**:

**ԱՅԳԱԲԱՑ**- գյուղ Շիրակի մարզում, ծովի մակերևույթից՝ 1600 մ, մարզկենտրոնից՝ 10 կմ հվ-արև.: Բնակչությունը՝ 1831թ.-434, 1873թ.-900, 1914թ.-2050, 1919թ.-2170, 1959թ.-1089, 1979թ.-617, 1989թ.-691, 2001թ. -757, 2004թ.-722 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1830թ. Բասենից գաղթած հայերի կողմից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ և անասնաբուծությամբ: **Ա.** կանգուն է 19դ. սբ.Գևորգ եկեղեցին:

**ԱՅԳԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 12 կմ հվ-արև.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 840 մ: 1873թ. ուներ 206, 1914-ին՝ 467, 1931-ին՝ 594, 1959-ին՝ 1992, 1979-ին՝ 3103, 2001-ին՝ 4058, 2004-ին՝ 4213 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1828թ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի հս-արմ. եզրին է գտնվում "Այգավան" բնակատեղին (մ.թ.ա. 3-րդ հզմ.): **Ա.** հայտնաբերվել են (մ.թ.ա. 10-րդ-8-րդ դդ.) զանազան հնություններ: Այստեղ կա 18-19դդ. եկեղեցի:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ № 15 ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Այգեկ**:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Վերին Պտղնի**:

**ԱՅԳԵԶԱՐԴ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6,5 կմ արև., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 870 մ: Բնակչությունը՝ 831թ.-535, 1873թ.-789, 1908թ. -1277, 1919թ.-1350, 1931թ.-1242, 1959թ.-2627, 1970թ. -2969, 1979թ.-2984, 2001թ.-3458, 2004թ.-2961 բնակիչ: Նախնիները գաղթել են Պարսկահայաստանի Սալմաստի և Խոյի գյուղերից: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 01.12.1949թ. վերանվանվել է **Ա.**: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, մեղվաբուծությամբ և դաշտավարությամբ (**Անաստասավան**):

**ԱՅԳԵԿ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 943 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 39 կմ հս-արև.: Հիմնադրվել է 1946թ. Իրանից

ներգաղթած վերաբնակիչների համար, **Ա.** է վերանվանվել 25.01. 1978թ.: 1970թ. ուներ 933, 2001-ին՝ 1178, 2004-ին՝ 1200 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ և անասնաբուծությամբ (**Այգեգործական № 15 սովխոզին կից**):

**ԱՅԳԵՀԱՏ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1150 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 43 կմ հս-արլ.: Բնակչությունը՝ 1831թ.-88, 1886թ.-337, 1922թ.-500, 1959թ.-391, 1970թ.-366, 1979թ.-295, 1989թ.-478, 2001թ.-332, 2004թ.-277 բնակիչ: Գյուղը **Ա.** է վերանվանվել 03.04. 1991թ.: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում են գտնվում սբ. Սարգիս եկեղեցին (6-7դդ.), "Գողգոթավանք" եկեղեցին (10-17դդ.) և սբ. Սարգիս մատուռը (16-17դդ.): Գյուղից ոչ հեռու գտնվում է "Քոբայրի" վանքը (**Իգահատ**, **Դանուշավան**):

**ԱՅԳԵՀՈՎԻՏ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստև գետի ստորին հոսանքի աջափնյա ձորում, մարզկենտրոնից 17 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 760 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 345, 1873-ին՝ 788, 1914-ին՝ 3662, 1931-ին՝ 1588, 1959-ին՝ 2380, 1970-ին՝ 2895, 1979-ին՝ 3195, 1989-ին՝ 2884, 2001-ին՝ 3102, 2004-ին՝ 2794 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, ծխախոտագործությամբ և անասնաբուծությամբ: **Ա**-ի հնություններից են՝ 12-14դդ. "Սրվեղի" վանքը և 12-19դդ. "Կոտրած եղցի" եկեղեցին: Հվ-արլ. մասում են գտնվում "Քոլի գեղ" (14-17դդ.), "Վարդխմհատի" (12-17դդ.) և այլ գյուղատեղիներ (**Հոնուտ**):

**ԱՅԳԵՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրի գետի աջ ափին, Վարդանիձոր գյուղից 1 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1085 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 22, 1873-ին՝ 91, 1904-ին՝ 264, 1914-ին՝ 327, 1931-ին՝ 250, 2001-ին՝ 17, 2004-ին՝ 12 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Շրջակայքում կան պղնձի հանքապաշարներ: Գյուղի մոտ է գտնվում "Փուշկազ" ավերակ բնակավայրը (**Փուշկազ**):

**ԱՅԳԵՁՈՐ**- գյուղ Տավուշի մարզում, Աղնջա գետի ափին, մարզկենտրոնից 75 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 830 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 910, 1873-ին՝ 1147, 1914-ին՝ 1036, 1922-ին՝ 1437, 1931-ին՝ 1678, 1959-ին՝ 2455, 1970-ին՝ 2375, 1979-ին՝ 1990, 1989-ին՝ 2833, 2001-ին՝ 2701, 2004-ին՝ 2491 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, խոզաբուծությամբ, մեղվաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: **Ա**-ի մոտ հայտնաբերվել են գրանիտի և մարմարի հանքավայրեր: Գյուղի մեջ է սբ. Հռիփսիմե եկեղեցին (5-19դդ.), իսկ արմ. մասում՝ "Խզնաքար" (10-12դդ.) և "Երգեվանք" (10-13դդ.) ամրոցները, "Էրի ձոր" գյուղատեղին (10-17դդ.): Գյուղից 3 կմ արլ. է գտնվում "Կարմիր Արեգունի" ամրոցը (վաղ մջնդ.), 2 կմ հվ-արմ.՝ "Հայզրնի" դամբարանադաշտը (մ.թ.ա. 1-ին հզմ.):

**ԱՅԳԵՇԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, Արմավիրի տարածաշրջանում, մարզկենտրոնից 10 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 136, 1873-ին՝ 604, 1886-ին՝ 729, 1914-ին՝ 920, 1919-ին՝

1005, 1931-ին՝ 835, 1959-ին՝ 1253, 1970-ին՝ 1590, 1979-ին՝ 1652, 2001-ին՝ 1754, 2004-ին՝ 1700 բնակիչ, որոնց նախնիները և այժմյան բնակչության մի մասը այստեղ են ներգաղթել Մուշից, Պարսկաստանից և Սիրիայից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա սբ. Գևորգ եկեղեցի:

**ԱՅԳԵՇԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, Վաղարշապատի տարածաշրջանում, մարզկենտրոնից 32 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 950 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 141, 1897-ին՝ 431, 1926-ին՝ 547, 1939-ին՝ 718, 1959-ին՝ 859, 1970-ին՝ 1100, 1979-ին՝ 1178, 2001-ին՝ 1480, 2004-ին՝ 1500 բնակիչ, որոնց նախնիները 1829թ. ներգաղթել են Պարսկահայաստանի Խոյի շրջանից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնաբուծությամբ: Գյուղի շրջակայքում պահպանվել են նախաքրիստոնեական շրջանի դամբարանադաշտը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և “Արդար Դավիթ” աշտարակը (մ.թ. ա. 2-րդ-1-ին հզմ.) համանուն լեռան գագաթին: Գյուղում են 7դ. սբ. Աստվածածին (“Թարգմանչաց վանք”) և 19դ. սբ. Աստվածածին եկեղեցիները:

**ԱՅԳԵՊԱՏ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 6 կմ արլ.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 850 մ: Բնակչությունը՝ 1831թ.-62, 1873թ.-360, 1926թ.-329, 1939թ.-429, 1959թ.-1022, 1970թ.-1270, 1979թ.-1243, 2001թ.-1451, 2004թ.-1223 մարդ, որոնց նախնիները գաղթել են Պարսկահայաստանի Խոյի և Սալմաստի գյուղերից: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

**ԱՅԳԵՊԱՐ**- գյուղ Տավուշի մարզում, Տավուշ գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 64 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 680 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1937թ. որպես ծխախոտի գործարանին կից բնակավայր, **Ա.** է վերանվանվել 30.12. 1964թ.: 1970թ. ուներ 600, 1979-ին՝ 575, 1989-ին՝ 735, 2001-ին՝ 609, 2004-ին՝ 720 բնակիչ: Ունի ծխախոտի ֆերմենտացիայի գործարան, որտեղ մշակում են տարածաշրջանի գյուղատընտեսական հումքի հիմնական մասը (**Ֆերմենտացիոն գործարանին կից**):

**ԱՅԳԵՍՏԱՆ**- գյուղ Արարատի մարզում, Ազատ գետի ձախ կողմում, հարթավայրում: Ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արլ.: Բնակչությունը՝ 831թ.-279, 1897թ.-1003, 1926թ.-329, 1930թ.-1348, 1959թ.-1946, 1970թ.-2171, 1979թ.-2278, 2001թ.-2642, 2004թ.-2227 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: Նախնիները այստեղ են գաղթել Պարսկահայաստանի Խոյի և Սալմաստի գավառներից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կա 19դ. եկեղեցի: **Ա.** մոտակայքում գտնվում են մի շարք ավերակ բնակավայրեր:

**ԱՅԳԵՎԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 5 կմ հվ-արմ., հարթավայրում, թաղված մրգատու և խաղողի այգիների մեջ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 875 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1946թ., **Ա.** է վերանվանվել 14.12. 2004թ.: 1959թ. ուներ 1294, 1966-ին՝ 1585, 1970-ին՝ 1700, 1981-ին՝ 1579, 2001-ին՝ 1573, 2004-ին՝ 1600 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողա-

գործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ (**№ 10 սովխոզին կից**, **Ձերժինսկու անվան սովխոզին կից**, **Ձերժինսկի**):

**ԱՅԳՈւՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Միափորի լեռների հվ. լանջին, Գետիկի հովտում, մարզկենտրոնից 93 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1420 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03. 04.1991թ.: 1831թ. ուներ 357, 1886-ին՝ 2157, 1922-ին՝ 1015, 1959-ին՝ 1123, 1979-ին՝ 2022, 1991-ին՝ 78, 2001-ին՝ 1071, 2004-ին՝ 1052 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ (**Գյոլքենդ**):

**ԱՅԼԱԲԵՐՔ**- պատմական գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Ալափարս**:

**ԱՅՆԹԱՊ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 25 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 865 մ: Բնակչությունը՝ 1831թ.-866, 1873թ.-827, 1914թ.-1255, 1967թ.-5001, 1975թ.-5746, 1979թ.-6608, 2001թ.-7712, 2004թ.-7200 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյից: **Ա.** Նորագեղ անունով հիշատակվում է 1465-1466թթ., որը 1679թ. Երևանի երկրաշարժի ժամանակ ավերվել և ամայացել է: Նոր գյուղը հիմնադրվել է 1830թ., իսկ 10.09.1970թ. վերանվանվել է **Ա.**: Բնակչությունը զբաղվում է բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և այգեգործությամբ: Գյուղն ունեցել է մի եկեղեցի՝ սբ. Գրիգոր, որին կից գործում էր փոքր վարժարանը (**Նորագեղ**, **Թազագյուղ**):

**ԱՅՍԱՍԻ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Արատես**:

**ԱՅՐԻՎԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Հայրավանք**:

**ԱՅՐՈւՄ**- քաղաք Տավուշի մարզում, Դեբեդ գետի ափին, մարզկենտրոնից 60 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 500 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 46, 1939-ին՝ 100, 1959-ին՝ 282, 1979-ին՝ 2252, 1989-ին՝ 2620, 1991-ին՝ 2700, 2001-ին՝ 2351, 2004-ին՝ 2385 բնակիչ, որոնց մի մասը եկել են Երևանի շրջակայքից, Արճիսից և Ռուսաստանից: Բնակչության հիմնական մասը աշխատում է պահածոների գործարանում և երկաթուղային կայարանում: Շրջակայքում հայտնաբերվել են բրոնզե դարի մշակույթի մնացորդներ՝ դամբարաններ, արձանիկներ և խեցեղեն:

**ԱՅՐՈւՄԻ ԽԱՂՈՂԱ-ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Պտղավան**:

**ԱՅՐՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 80 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2155 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1897թ. ուներ 1004, 1926-ին՝ 1003, 1939-ին՝ 1474, 1959-ին՝ 930, 1970-ին՝ 1322, 1979-ին՝ 1632, 2001-ին՝ 441, 2004-ին՝ 496 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղում կան սբ. Աստվածածին (1281թ.) և Կաթողիկե սբ. Գևորգ (13դ.) եկեղեցիներ, որոնց շրջակայքում կան 16-17դդ. բազմաթիվ խաչքարեր (**Դաշքենդ**):

**ԱՆԱՍՏԱՍԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Այգեզարդ**:

**ԱՆԳԵՂԱԿՈԹ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի ձախափնյա սարավանդի վրա, մարզկենտրոնից 108 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: 1831թ. ուներ

276, 1877-ին՝ 1112, 1908-ին՝ 2055, 1914-ին՝ 3420, 1919-ին՝ 2930, 1931-ին՝ 1939, 1970-ին՝ 1779, 1979-ին՝ 1717, 2001-ին՝ 1860, 2004-ին՝ 1909 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, հացահատիկի և ծխախոտի մշակությամբ: Որպես բնակավայր շատ հին է: Տարածքում հայտնաբերվել են նեոլիթի, բրոնզե դարի դոլմեններ և դամբարաններ: Ունի միջնադարյան հուշարձաններ՝ սբ. Աստվածածին, սբ. Ստեփանոս, սբ. Հազարափրկիչ եկեղեցիներ, մի քանի մատուռ, խաչքարեր, "Վարդան Զորավար" սրբավայր (**Ընկղակոթ**):

**ԱՆԻ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Անիավան**:

**ԱՆԻԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Երևան-Գյումրի երկաթուղու վրա, մարզկենտրոնից 43 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1420 մ բարձրության վրա: Բնակիչների զգալի մասը եկել են Անիի, Ախուրյանի, Արթիկի և Թալինի գյուղերից: **Ա.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1926թ. ուներ 66, 1939-ին՝ 249, 1959-ին՝ 386, 1966-ին՝ 560, 1970-ին՝ 460, 2001-ին՝ 393, 2004-ին՝ 432 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ: Շրջակայքում կան սև և կարմիր տուֆի, որձաքարի հարուստ հանքավայրեր (**Անի կայարանին կից**):

**ԱՆԻՊԵՄԶԱ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ափին, մարզկենտրոնից 49 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1425 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 647, 1873-ին՝ 2359, 1931-ին՝ 529, 1959-ին՝ 1119, 1972-ին՝ 710, 1979-ին՝ 558, 2001-ին՝ 349, 2004-ին՝ 405 բնակիչ, որոնց մի մասը այստեղ են վերաբնակվել Ախուրյանի, Արթիկի, Թալինի և Անիի գյուղերից: Արդյունահանվում է պեմզա, կարմիր տուֆ և անդեզիտային ալյուր: Գյուղի մոտ են գտնվում 5դ. Երերույքի տաճարը, "Խոր2" քարանձավը, Թուխ Մանուկ մատուռը, հայտնաբերվել են մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. զենքեր և զարդեր:

**ԱՆՏԱՌԱՄԵՋ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գետիկի ձախ կողմում, մարզկենտրոնից 102 կմ հս.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1575 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1897թ. ուներ 133, 1926-ին՝ 171, 1939-ին՝ 254, 1959-ին՝ 387, 1970-ին՝ 524, 1979-ին՝ 536, 1989-ին՝ 66, 2001-ին՝ 233, 2004-ին՝ 171 բնակիչ: Բնակչությունը ըզբաղվում է անասնապահությամբ, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղի մեջ կա եկեղեցի (**Մեշաքենդ**):

**ԱՆՏԱՌԱՄՈւՏ**- գյուղ Լոռու մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ հս-արլ., ծովի մակերևույթից՝ 1300 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1870թ.: 1886թ. ուներ 223, 1914-ին՝ 470, 1926-ին՝ 539, 1939-ին՝ 637, 1959-ին՝ 641, 1970-ին՝ 499,1979-ին՝ 407, 1989-ին՝ 494, 2001-ին՝ 410, 2004-ին՝ 256 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի շրջակայքում կան հին գյուղատեղիներ, իսկ Նավերի ձորում՝ հին բերդի հետքեր: Գյուղում են գտնվում "Թուխ մանուկ" մատուռը, սբ. Կիրակի մատուռը (13դ.) և սբ. Աստվածածին եկեղեցին (18-20դդ.):

**ԱՆՏԱՌԱՇԱՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների հվ-արմ. լանջին, մարզկենտրոնից 27 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1280 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 16,

1914-ին՝ 327, 1919-ին՝ 730, 1931-ին՝ 264, 1959-ին՝ 208, 1970-ին՝ 167, 1979-ին՝ 106, 2001-ին՝ 131, 2004-ին՝ 93 բնակիչ: **Ա.** է վերանվանվել 1949թ.: Բնակչությունը զբաղվում է կաթնա-անասնապահությամբ: Գյուղն ունի 10դ. սբ. Հռիփսիմե եկեղեցի (**Տորթնի**):

**ԱՆՏԱՌԱՇԵՆ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1880 մ, հեռավորությունը մարզկենտ-րոնից՝ 12 կմ հվ-արլ.: **Ա.** է վերանվան-վել 04.07.2006թ.: 1970թ. ուներ 173, 1979թ.-443, 2001-ին՝ 254, 2004-ին՝ 233 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ (**Գազանաբուծա-կան պետական տնտեսությանը կից**):

**ԱՆՏԱՌՈՒՏ**- գյուղ Արագածոտնի մար-զում, Արագածի լեռան հվ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ: Բնակչու-թյունը՝ 1873թ.-92, 1886թ.-139, 1914թ.-269, 1939թ.-216, 1959թ.-265, 1970թ.-186, 1979թ.-228, 2001թ.-225, 2004թ.-326 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյից, Սալմաստից, Վանից և Մոկսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկ-րագործությամբ: Գյուղում է գըտ-նըվում 19դ. սբ. Աստվածածին եկեղե-ցին, իսկ 2 կմ հս.՝ մ.թ.ա. 2-րդ հզմ. "Զույգաղբյուր" ամրոցը:

**ԱՆՈՒՇԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Արագածի հս-արմ. ստորոտին, մարզ-կենտրոնից 23 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1720 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 267, 1873-ին՝ 782, 1914-ին՝ 1520, 1939-ին՝ 1384, 1959-ին՝ 1503, 1970-ին՝ 1755, 1979-ին՝ 1825, 2001-ին՝ 1983, 2004-ին՝ 2150 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել են Արմ. Հայաստանի տարբեր գյուղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտու-րաների մշակությամբ և անասնա-բուծությամբ: Գյուղում կա սբ. Գևորգ եկեղեցի և 12-14դդ. սբ. Նշան մատուռ:

**ԱՇՆԱԿ**- գյուղ Արագածոտնի մար-զում, մարզկենտրոնից՝ 50 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1420 մ: Բնակչությունը՝ 1831թ.-62, 1873թ.-363, 1931թ.-778, 1959թ.-965, 1970թ.-1110, 1979թ.-1061, 2001թ.-1226, 2004թ.-1364 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունի Փիրշեն, Մշգեղ, Տալվորիկ, Մկդենք, Ջրթնիկ, Քաջրենք, Ճամ, Բլենք, Տալիոր, Գոմք և Կոշակ գյուղերից: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահու-թյամբ: Գյուղում կա 4-5դդ. կիսավեր եկեղեցի, 3 կմ հվ-արլ. գտնվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոցը:

**ԱՇՈՏԱՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան վտակ Սի-սիանի ձախ օժանդակ Կամրջաձոր գետակի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 109 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1680 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 1948թ.: 1831թ. ուներ 18, 1873-ին՝ 293, 1908-ին՝ 390, 1919-ին՝ 803, 1931-ին՝ 557, 1959-ին՝ 497, 1970-ին՝ 455, 1979-ին՝ 448, 2001-ին՝ 623, 2004-ին՝ 604 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյից ու Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, հացահատիկի, ծխախոտի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և թռչնաբուծությամբ: Ունի 1903թ. եկե-ղեցի: Գյուղից 12 կմ հվ-արմ. գտնըվում է Թանատի վանքը: Ծայրամասերում նշմարվում են հին "Կիրակոսիկի" և "Խնոքի" ավերակները: Տոլորսի ջրամբարի կառուցման պատճառով

գյուղը տեղափոխվել է մոտ 500 մ հեռու (**Խնոք**, **Կիրակոսյկ**):

**ԱՇՈՑՔ**- գյուղ Շիրակի մարզում, Աշոցքի սարահարթում, Ախուրյանի ձախակողմյան վտակ, Աշոցք գետի ափերին: Հեռավորությունը մարզկենտրոնից 35 կմ հս., ծովի մակերևույթից 1990 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 14.11. 1990թ.: 1873թ. ուներ 438, 1886-ին՝ 602, 1931-ին՝ 916, 1959-ին՝ 1459, 1970-ին՝ 1693, 1979-ին՝ 2069, 2001-ին՝ 2378, 2004-ին՝ 3006 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա եկեղեցի, մատուռ, իսկ հվ-արլ. մասում՝ հին բնակավայրի մնացորդներ (**Ղուկասյան**):

**ԱՇՈՑՔ**- պատմական գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ղազանչի**:

**ԱՇՏԱՐԱԿ**- քաղաք Արագածոտնի մարզում, Քասաղ գետի վրա, մարզկենտրոն: Երևանից 22 կմ հեռու, բարձրությունը ծովի մակերևույթից 1160 մ: 1831թ. ուներ 826, 1873-ին՝ 2515, 1914-ին՝ 4867, 1919-ին՝ 6100, 1931-ին՝ 4782, 1959-ին՝ 7563, 1972-ին՝ 13900, 1976-ին՝ 16362, 2001-ին՝ 20636, 2004-ին՝ 21500 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Քաղաքում գտնվում են վաղ քրիստոնեական շրջանի "Ծիրանավոր" (5դ.), սբ. Աստվածածին (Կարմրավոր) (7դ.), "Սպիտակավոր" (13դ.), սբ. Մարինե (1281թ.) և սբ. Սարգիս (13դ.) եկեղեցիները: Հին կառույցներից է նաև 1664թ. Քասաղի եռակամար, քարակերտ կամուրջը, կառուցված ծիրանագույն տուֆից:

**ԱՉԱՋՈՒՐ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստևի հովտում, մարզկենտրոնից 14 կմ հս., ծովի մակերևույթից 750 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 889, 1897-ին՝ 1405, 1914-ին՝ 2043, 1922-ին՝ 2056, 1939-ին՝ 3213, 1959-ին՝ 3106, 1970-ին՝ 3891, 1979-ին՝ 3509, 1989-ին՝ 4114, 2001-ին՝ 4513, 2004-ին՝ 3850 բնակիչ, որոնք այստեղ են վերաբնակվել Արցախի, Գանձակի և Շամխորի շրջաններից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, ծխախոտի, հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ և խոզաբուծությամբ: Գյուղի մեջ է սբ. Աստվածածին եկեղեցին (19դ.), 1 կմ արմ.՝ սբ. Կիրակի եկեղեցին (10-13դդ.), 3 կմ հվ-արլ.՝ "Աչաջուր" գյուղատեղին (12-13դդ.), 3 կմ հս-արմ.՝ սբ. Հովհաննես եկեղեցին (13դ.), իսկ 4 կմ արմ.՝ "Մակարավանք"ի համալիրը (10-13դդ.) (**Նոր Հաչաջուր**):

**ԱՉՔԱՁՈՐ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Լճկաձոր**:

**ԱՊԱԳԱ**- գյուղ Արմավիրի մարզում, Մեծամոր գետի աջ ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 837 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 15 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 280, 1873-ին՝ 360, 1914-ին՝ 535, 1922-ին՝ 544, 1931-ին՝ 427, 1959-ին՝ 984, 1970-ին՝ 1205, 1979-ին՝ 1232, 2001-ին՝ 1679, 2004-ին՝ 1700 բնակիչ: 1915թ. այստեղ են հաստատվել Սասունի Մոտկան գավառից եկած վերաբնակիչները: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի արմ. մասում կա մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. բնակատեղի և մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. ամրոց:

**ԱՊԱՎԵՆ**- գյուղ Լոռու մարզում, Ծովի մակերևույթից՝ 1700 մ բարձրության վրա, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 55 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1897թ.-92, 1926թ.-162, 1931թ.-181,

1939թ.-221, 1959թ.-172, 1970թ.-305, 1979թ.-326, 1989թ.-162, 2001թ.-128, 2004թ.-99 բնակիչ: 03.04.1991թ. գյուղը վերանվանվել է **Ա.**: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղն ունի փոքրիկ եկեղեցի (**Սարիար**):

**ԱՊԱՐԱՆ**- քաղաք Արագածոտնի մարզում, Արագած լեռան հս-արմ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 32 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մ: Բնակչությունը՝ 1831թ.-386, 1873թ.-1353, 1914թ.-2337, 1919թ.-2295, 1931թ.-2668, 1959թ.-2662, 1970թ.-5969, 1979թ.-5990, 2001թ.-6614, 2004թ.-6600 բնակիչ: **Ա**-ում վերաբնակվեցին Վանից, Մուշից, Ալաշկերտից, Կարինից, Խոյից եկած գաղթականները: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: **Ա.** է վերանվանվել 03.01.1935թ.: Քաղաքի կենտրոնում են գտնվում Քասախի բազիլիկ եկեղեցական համալիրը (4-5դդ.) և 19դ. սբ.Աստվածածին եկեղեցին: **Ա**-ի հս-արմ. մասում են գտնվում մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. "Ապարան" քաղաքատեղին և "Բերդ" ամրոցը (**Քասախ**, **Բաշ Աբարան**):

**ԱՋԱԲԱՋ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների հվ-արմ. ստորոտին Գեղի գետի և իր ձախակողմյան վտակ Աջաբաջի միախառնման տեղում, Նոր Աստղաբերդ գյուղից 2 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1950մ բարձրության վրա: 1886թ. ուներ 202, 1926-ին՝ 90, 1939-ին՝ 134, 1959-ին՝ 180, 1970-ին՝ 227, 1979-ին՝ 202, 2001-ին՝ 30, 2004-ին՝ 1 բնակիչ: Գյուղն ունի 17դ. եկեղեցի:

**ԱՋՈՂՔ**- պատմական գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Արտավան**:

**ԱՌԱՋԱՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 19 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: Բնակիչների նախնիների մի մասը 1760-1770թթ. գաղթել են Արցախի Առաջաձոր գյուղից, 1805-1806թթ. Գողթից, 1829թ. Ղարադաղից: 1897թ. ուներ 627, 1926-ին՝ 561, 1939-ին՝ 575, 1959-ին՝ 351, 1970-ին՝ 316, 1979-ին՝ 202, 2001-ին՝ 208, 2004-ին՝ 163 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է կաթնաանասնաբուծությամբ: Գյուղում կա սբ. Ստեփանոս եկեղեցի, իսկ 2 կմ հվ-արլ.՝ գյուղատեղիների ավերակներ:

**ԱՌԱՏԱՇԵՆ**- գյուղ Արմավիրի մարզում, Քասաղ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 19 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 775, 1897-ին՝ 1262, 1926-ին՝ 773, 1939-ին՝ 813, 1959-ին՝ 1598, 1970-ին՝ 1885, 1979-ին՝ 2037, 2001-ին՝ 2823, 2004-ին՝ 2800 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Սալմաստից, Խոյից և 1915-16թթ. Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, բանջարաբուծությամբ, խաղողագործությամբ և խորդենու մշակությամբ: Գյուղում կա 19դ. 70-ական թթ. կիսավեր եկեղեցի:

**ԱՌԱՓԻ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 1 կմ արմ.: 1886թ. ուներ 577, 1914-ին՝ 989, 1931-ին՝ 1087, 1959-ին՝ 1359, 1970-ին՝ 1511, 1979-ին՝ 1589, 1989-ին՝ 2075, 2001-ին՝ 1980, 2004ին՝ -2035 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի մշակությամբ և բանջարաբուծությամբ:

Գյուղից հս. կա սբ. Կույս Մարիամ անունով սրբավայր:

**ԱՌԻՆՋ**- գյուղ Կոտայքի մարզում, Երևան- Սևան խճուղուց աջ, մարզկենտրոնից 41 կմ հվ-արմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 538, 1926-ին՝ 815, 1939-ին՝ 1500, 1959-ին՝ 1612, 1970-ին՝ 2981, 1979-ին՝ 3856, 1989-ին՝ 4831, 2001-ին՝ 5413, 2004-ին՝ 5670 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և թռչնաբուծությամբ: **Ա.** հիշատակվում է 15-16դդ.: Գյուղի մոտ է գտնվում "Գետարգելի" վանքը, "Առընջուց" վանքի ավերակները, հին գերեզմանոցը, որն ունի քանդակազարդ խաչքարեր:

**ԱՌՈՂՋԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Լոռու մարզում, Վիրահայոց լեռների շրջակայքում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 725 մ, հեռավորությունը Ախթալա ք-ից՝ 1 կմ հս.: Բնակչությունը՝ 1922թ.-21, 1931թ.-80, 2001-ին՝ 21 բնակիչ: Այժմ հակաթոքախտային առողջարան է:

**ԱՍՏՂԱՁՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Աստղաձոր գետի ներքին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 39 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2030 մ բարձրության վրա: 1831թ. ուներ180, 1897-ին՝ 1311, 1926-ին՝ 1990, 1939-ին՝ 2107, 1959-ին՝ 2074, 1970-ին՝ 2756, 1979-ին՝ 2928, 1989-ին՝ 3325, 2001-ին՝ 3758, 2004-ին՝ 4137 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են Ալաշկերտից և Վանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և խոզաբուծությամբ: Գյուղամիջում պահպանված է կիսավեր սբ. Պողոս-Պետրոս (15դ.), գյուղի հվ. եզրին՝ սբ. Հռիփսիմե (13դ.) եկեղեցին: **Ա.**-ից 2 կմ հվ-արմ. կա սբ. Հռիփսիմե մատուռ: Այստեղ հայտնաբերվել են երկաթե դարի (մ.թ.ա. 9-րդ-8-րդ դդ.) դամբարաններ (**Խաչաձոր**, **Ձոր**):

**ԱՍՏՎԱԾԱՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Շվանիձոր**:

**ԱՎԱԶԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների ստորոտին, լճափից ոչ հեռու, մարզկենտրոնից 97 կմ արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2075 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1897թ. ուներ 187, 1926-ին՝ 227, 1939-ին՝ 314, 1959-ին՝ 264, 1970-ին՝ 396, 1979-ին՝ 531, 1989-ին՝ 92, 2001-ին՝ 269, 2004-ին՝ 271 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից արլ. կան հայկական գերեզմաններ (**Գյոյսու**):

**ԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագածի հվ. լանջերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1680 մ: Բնակչությունը՝ 1831թ.-104, 1873թ.-321, 1916թ.-556, 1939թ.-672, 1959թ.-675, 1970թ.-626, 1979թ.-640, 2001թ.-915, 2004թ.-866 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունից, Մուշից, Բաղեշից, Վանից և Կարսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում են գտնվում 5-6դդ. սբ. Աստվածածին եկեղեցին, "Թուխ Մանուկ" և 10-11դ. սբ. Վառվառա մատուռները: **Ա**-ից 3 կմ արլ. գտնըվում են մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. "Ձյանբերդ", իսկ 500մ հվ.՝ մ.թ.ա. 1-ին հզմ. "Կզնուտ" ամրոցները:

**ԱՎԹՈՆԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Մեծաձոր**:

**ԱՎՇԱՐ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 13 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 835 մ: Բնակչությունը՝ 1831թ.-80, 1897թ.-1166, 1926թ.-857, 1939թ.-1359, 1959թ.-2543, 1970թ.-3646, 1979թ.-3877, 2001թ.-4390, 2004թ.-5177 բնակիչ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո այստեղ բնակություն են հաստատել Վանից, Շատախից, իսկ հետագայում Մարտունու, Սևանի, Վարդենիսի և Սիսիանի տարածաշրջաններից եկածները: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղից 5 կմ հս. կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոց , իսկ 29 կմ արլ.՝ "Կաթնաղբյուր" գյուղատեղի (12-17դդ.):

**ԱՎՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ծաղկունյաց լեռների հվ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 49 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2150 մ: Բնակչությունը՝ 1831թ.-278, 1897թ.-466, 1926թ.-460, 1939թ.-583, 1959թ.-350, 1970թ.-421, 1979թ.-426, 2001թ.-277, 2004թ.-276 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից և Արմ. Հայաստանի այլ վայրերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ:

**ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս ք. **Մեծամոր**:

**ԱՐԱԳԱԾ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ապարանի տարածաշրջանում: Գեղարոտ գետի ափին, Արագած լեռան արլ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1980 մ: 1873թ. ուներ 1095, 1922-ին՝ 1535, 1959-ին՝ 1519, 1970-ին՝ 2103, 1979-ին՝ 2251, 2001-ին՝ 3040, 2004-ին՝ 3100 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղում են գտնվում սբ.Աստվածածին եկեղեցին (1914թ.) և "Կենաց ծառ" մատուռը (17-18դդ.), իսկ 1,2 կմ հս-արմ.՝ "Լուսաղբյուր" մատուռը (19-20դդ.):

**ԱՐԱԳԱԾ**- գյուղ Արագածոտնի մարզում, Թալինի տարածաշրջանում, տե՛ս **Արագածավան**:

**ԱՐԱԳԱԾ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 915 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 20 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 192, 1873-ին՝ 541, 1914-ին՝ 997, 1922-ին՝ 818, 1959-ին՝ 1448, 1970-ին՝ 1914, 1979-ին՝ 2038, 2001-ին՝ 3013, 2004-ին՝ 3000 բնակիչ, որոնց նախնիները Պարսկահայքի Խոյի գավառից եկել ու այստեղ են հաստատվել 1828-29թթ.: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և խոզաբուծությամբ: Գյուղում կա 19դ. 70-ական թթ. սբ. Ստեփանոս եկեղեցի, իսկ շրջակայքում պահպանվել են նախնադարյան ժամանակներից մնացած բնակավայրերի, բերդաշենի և դամբարանների մնացորդներ:

**ԱՐԱԳԱԾԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 71 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1255 մ: **Ա.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1873թ. ուներ 95, 1922-ին՝ 126, 1939-ին՝ 678, 1959-ին՝ 2468, 1970-ին՝ 4739, 1979-ին՝ 4820, 2001-ին՝ 5383, 2004-ին՝ 6020 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և երկրագործությամբ (**Արագած**):

**ԱՐԱԳԱԾՈՏՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, հեռավորությունը մարզ-

կենտրոնից՝ 17 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1060 մ: Բնակչությունը՝ 1831թ.-28, 1897թ.-351, 1926թ.-330, 1939թ.-492, 1959թ.-388, 1989թ.-849, 2004թ.-1049 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ:

**ԱՐԱԳԱԾՈՒ ԳՅՈՒՂ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Ծաղկաշեն**:

**ԱՐԱԳՅՈՒՂ**- գյուղ Կոտայքի մարզում, Արայի լեռան արլ. ստորոտում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1630 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 30 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 162, 1886-ին՝ 699, 1914-ին՝ 1005, 1922-ին՝ 847, 1959-ին՝ 811, 1970-ին՝ 724, 1979-ին՝ 733, 1989-ին՝ 876, 2001-ին՝ 1025, 2004-ին՝ 1041 բնակիչ, որոնց մի զգալի մասի նախնիները 1878 և 1914-22թթ. եկել են Արմ. Հայաստանի Բայազետի Արծափ գյուղից, Կարսից և Իգդիրից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, ծխախոտագործությամբ, այգեգործությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղում կան “Թուխ Մանուկ” (1890թ.), սբ. Աստվածածին (5դ.) և “Ծաղկավանք” (13-14դդ.) եկեղեցիներ: Գյուղից հս. պահպանվում են “Օձուտ” բնակավայրի ավերակները, հվ-արմ.՝ “Կարմիր Ավերակ” և “Եզրագյուղ” բնակավայրերի ավերակները (**Սնավեր**):

**ԱՐԱՋԱՓ**- գյուղ Արմավիրի մարզում, Արաքս գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 15 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: 1829-32թթ. ուներ 142, 1873-ին՝ 492, 1914-ին՝ 746, 1931-ին՝ 750, 1959-ին՝ 876, 1970-ին՝ 882, 2001-ին՝ 1042, 2004-ին՝ 1400 բնակիչ, որոնց մի մասը գաղթել են Պարսկահայաստանի Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, հացահատիկի մշակությամբ, թռչնաբուծությամբ, բանջարաբուծությամբ և խոզաբուծությամբ: Գյուղի եկեղեցին կոչվում է սբ. Աստվածածին:

**ԱՐԱՋԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Երասխահուն**:

**ԱՐԱԼԵԶ**- գյուղ Արարատի մարզում, Արարատյան դաշտի եզրին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 850 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 49, 1897-ին՝ 575, 1926-ին՝ 532, 1939-ին՝ 780, 1959-ին՝ 1181, 1970-ին՝ 1794, 1979-ին՝ 1942, 2001-ին՝ 2493, 2004-ին՝ 2254 բնակիչ, որոնց նախնիները եկել են Ռստանից, Վանից, Շատախից, Բայազետից, Իրանից և Լիբանանից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղից 25 կմ արլ. գտնվում է “Հնաբերդ” գյուղատեղին (10-13դդ.):

**ԱՐԱՄՈՆՔ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Արամուս**:

**ԱՐԱՄՈՒՍ**- գյուղ Կոտայքի մարզում, Գետառի ձախափնյակում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 43 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 228, 1873-ին՝ 803, 1907-ին՝ 1241, 1914-ին՝ 1780, 1922-ին՝ 1853, 1931-ին՝ 1770, 1959-ին՝ 1620, 1970-ին՝ 2242, 1979-ին՝ 2492, 1989-ին՝ 3118, 2001-ին՝ 3320, 2004-ին՝ 3491 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Պարսկահայաստանի Խոյ գավառի Կըռս և Շաբանլու գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, ծխախոտի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: **Ա**-ի

կենտրոնում են գտնվում սբ. Խաչ և սբ. Հակոբ (1863թ.) եկեղեցիները: Մոտակա բարձունքի վրա են գտնվում Մարիամ Աստվածածին եկեղեցին և 17դ. գերեզմանոցը (**Արամոնք**, **Երամոնս**):

**ԱՐԱՅԻ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան արլ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 13,5 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: Բնակչությունը՝ 1831թ.-182, 1873թ.-451, 1914թ.-843, 1922թ.-562, 1939թ.-592, 1959թ.-385, 1970թ.-382, 1979թ.-338, 2001թ.-368, 2004թ.-320 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Ալաշկերտի, Բուլանըխի, Մուշի գավառներից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: **Ա**-ում է գտնվում 1885թ. սբ. Աստվածածին եկեղեցին, իսկ 1,3 կմ հվ-արմ.՝ 17-18դդ. "Թուխ Մանուկ" մատուռը:

**ԱՐԱՎԵՏ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1990 մ, Ալվար գյուղից 3 կմ հս-արլ.: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1886թ. ուներ 137, 1897-ին՝ 206, 1926-ին՝ 160, 1939-ին՝ 261, 1959-ին՝ 283, 1970-ին՝ 507, 1979-ին՝ 547, 1989-ին՝ 250 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ (**Չայքասար**):

**ԱՐԱՎՈՒՍ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից՝ 89 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ: Բնակչությունը՝ 1831թ.-16, 1873թ.-68, 1907թ.-108, 1922թ.-198, 1959թ.-251, 1970թ.-200, 1979թ.-117, 1989թ.-325, 2001թ.-168, 2004թ.-156 բնակիչ, որոնց նախնիները 18դ. գաղթել են Արցախի Արավուս (Քաբագլուխ) գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ և դաշտավարությամբ: Գյուղում կան 18դ. սբ. Սարգիս եկեղեցի և սբ. Հռիփսիմե մատուռ:

**ԱՐԱՏԵՍ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Վարդենիսի լեռների հվ. լանջերին, Այսասի գետի հովտում, ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա, Հերմոնից 4 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 219, 1897-ին՝ 311, 1926-ին՝ 184, 1939-ին՝ 326, 1959-ին՝ 232, 1979-ին՝ 353 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում գտնվում են Սյունիքի Արատեսի վանքը (7դ.), սբ. Աստվածածին (10-11դդ.), սբ. Կարապետ (11-12դդ.) եկեղեցիները, 5 մատուռ-դամբարան (7դ.) և 12դ. խաչքարեր (**Այսասի**):

**ԱՐԱՐԱՏ**- քաղաք Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 16 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 818 մ: Հիմնադրվել է 1920թ., իսկ 1933թ., ցեմենտի գործարանի կառուցումից հետո, **Ա.** արագ աճեց: 20.10.1938թ. հրամանագրով դասվեց ք.տ.ա-ների դասին, իսկ 1962թ.՝ քաղաքների դասին: **Ա.** է վերանվանվել 10.04.1947թ.: 1926թ. ուներ 45, 1939-ին՝ 2329, 1952-ին՝ 5412, 1976-ին՝ 15000, 2001-ին՝ 20480, 2004-ին՝ 20500 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: **Ա.** գտնվում են ոսկու կորզման ֆաբրիկան և ցեմենտի գործարանը (**Ցեմզավոդ**):

**ԱՐԱՐԱՏ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 15 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 820 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: Բնակչությունը՝ 1831թ.-661, 1873թ.-2176, 1897թ.-3367, 1926թ.-1894, 1939թ.-2515, 1959թ.-4240, 1970թ.-5625, 1979թ.-6227, 2001թ.-6974, 2004թ.-7500 բնակիչ,

որոնց նախնիները գաղթել են Մակու գավառից և Սալմաստի Ասլանիկ , Դիրիշկ և Զեվաջուկ գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 35 կմ հս-արլ. գտնըվում է "Ջերմանիս" գյուղատեղին: **Ա.** հվ-արլ. մասում է գտնվում սբ. Հակոբ եկեղեցին (1866թ.):

**ԱՐԱՔՍ**- գյուղ Արմավիրի մարզում, Արմավիրի տարածաշրջաքնում, մարզկենտրոնից 9 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 905 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 04.04.1946թ.: 1926թ. ուներ 122, 1959-ին՝ 892, 1970-ին՝ 1424, 1979-ին՝ 1456, 2001-ին՝ 1607, 2004-ին՝ 1600 բնակիչ, որոնք այստեղ են տեղափոխվել տարբեր ժամանակներում, Վայքի, Շիրակի, Արագածոտնի, Աշոցքի գյուղերից, Բոգդանովկայից, Իրանից և Սիրիայից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ (**№ 5 սովխոզին կից**):

**ԱՐԱՔՍ**- գյուղ Արմավիրի մարզում, Վաղարշապատի տարածաշրջանում, Մեծամոր գետի աջափնյակում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 825 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 39 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 318, 1897-ին՝ 586, 1922-ին՝ 358, 1959-ին՝ 520, 1970-ին՝ 856, 1979-ին՝ 1078, 2001-ին՝ 1582, 2004-ին՝ 1600 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1915-20թթ. այստեղ են գաղթել Երևանի նահանգի Սուրմալու գավառից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ, հացահատիկի և բոստանային կուլտուրաների մշակությամբ:

**ԱՐԱՔՍԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, այգեպատ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 8-9 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 827 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: Բնակչությունը՝ 1831թ.-474, 1897թ.-1000, 1926թ.-303, 1939թ.-297, 1959թ.-138, 1970թ.-502, 1979թ.-637, 2001թ.-819, 2004թ.-748 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և դաշտավարությամբ:

**ԱՐԲԱԹ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 27 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 850 մ: Գյուղը հիմնադրվել է 1830թ.: 1831թ. ուներ 391, 1897-ին՝ 671, 1926-ին՝ 555, 1939-ին՝ 726, 1959-ին՝ 911, 1970-ին՝ 1274, 1979-ին՝ 1329, 2001-ին՝ 1993, 2004-ին՝ 1549 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է պտուղ-բանջարեղենի մշակությամբ (**Արպատ**):

**ԱՐԳԱՎԱՆԴ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդանի աջ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 877 մ,: Բնակչությունը՝ 1873թ.-136, 1897թ.-165, 1926թ.-386, 1939թ.-469, 1970թ.-917, 1979թ.-1047, 2001թ.-1734, 2004թ.-1243 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1873թ., իսկ 04. 04.1946թ. վերանվանվել է **Ա.**: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղում գտնվում է դամբարան (1413թ.): Գյուղի գերեզմանատանը դեռ մնում է 5-6դդ. կառուցված սբ. Հարություն և 1894թ. սբ. Սարգիս եկեղեցիները (**Կավակերտ**, **Ջրարփի**):

**ԱՐԳԱՎԱՆԴ**- գյուղ Արմավիրի մարզում, Արաքսի ձախ կողմում: Բնակա-

վայրը գտնվում է ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 13 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 146 բնակիչ, որոնցից 66-ը (10 տուն)՝ տեղացիներ, իսկ 80-ը (17 տուն)՝ Սալմաստից գաղթածներ: 1897թ. ուներ 902, 1926-ին՝ 651, 1939-ին՝ 872, 1959-ին՝ 1162, 1979-ին՝ 1603, 2001-ին՝ 2191, 2004-ին՝ 2365 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Ունեցել է սբ. Աստվածածին եկեղեցի, որն այժմ ավերվել է:

**ԱՐԳԵԼ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 29 կմ հվ-արմ.: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1897թ. ուներ 544, 1914-ին՝ 816, 1926-ին՝ 607, 1931-ին՝ 699, 1939-ին՝ 654, 1980-ին՝ 2275, 1989-ին՝ 3199, 1991-ին՝ 3500, 2001-ին՝ 2894, 2004-ին՝ 3290 բնակիչ: **Ա**-ի մոտակայքում կան հանքային աղբյուր և կավճի հանք: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում կա սբ. Գևորգ եկեղեցի (1890թ.), իսկ գյուղից արլ.՝ "Կարենիսի" վանքն է (7դ.) (**Լուսակերտ**):

**ԱՐԳԻՆԱ**- գյուղ Արմավիրի մարզում: Ծովի մակերևույթից 1255 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 38 կմ հս-արմ.: 1989թ. ուներ 498, 2001-ին՝ 547, 2004-ին՝ 500 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնաբուծությամբ: Գյուղի տարածքում պահպանվել են մ.թ.ա. 3-րդ հզմ. "Մոխրաբլուր- Արևիկ" բնակատեղին և մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. կիկլոպյան ամրոցի ավերակներ:

**ԱՐԴԵՆԻՍ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճից 10-11 կմ արլ., Ախուրյան գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 2050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 46 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1897թ.-284, 1926թ.-316, 1939թ.-416, 1959թ.-470, 1970թ.-698, 1979թ.-757, 1989թ.-358, 2001թ.-132, 2004թ.-149 բնակիչ: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի տարածքում պահպանվել են հայկական հին ամրոցի և եկեղեցու հետքեր (**Գյոլլի**):

**ԱՐԴՈՍ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Գեղարդ**:

**ԱՐԴՎԻ** - գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45 կմ հս-արլ.: Բնակչությունը՝ 1873թ.-37, 1914թ.-584, 1922թ.-274, 1959թ.-279, 1970թ.-236, 1979թ.-188, 2001թ.-213, 2004թ.-156 բնակիչ: Վերջին ժամանակներում այստեղ են եկել նորաբնակներ Արցախից և Բերդից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում է գտնվում "Կարմիր վանք" վանքը (10-11դդ.), սբ. Հարություն եկեղեցին (10դ.), սբ. Կիրակի մատուռը (10-14դդ.), իսկ գյուղից արևելք՝ Օձունի սբ. Հովհաննես վանքը (8դ.):

**ԱՐԵԳ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Թաթուլ**:

**ԱՐԵԳՆԱԴԵՄ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից՝ 22 կմ հս-արմ., ծովի մակերևույթից ՝ 1850 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 17դ. վերջերին, իսկ 03.04. 1991թ. վերանվանվել է **Ա.**: Բնակչությունը՝ 1897թ.-440, 1926թ.-625, 1939թ.-774, 1959թ.-803, 1970թ.-1442, 1980թ.-1490, 1989թ.-128, 2001թ.-407, 2004թ.-410 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է

հացահատիկի, ճակնդեղի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա նորակառույց “Սրբատեղ” մատուռ, իսկ շրջակայքում պահպանվել է “Բաղնոց” գյուղատեղին (**Ազիզբեկով**):

**ԱՐԵԳՈՒՆԻ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների ստորոտին, Սևանա լճի արլ. ափի մոտ, մարզկենտրոնից 100 կմ արլ.: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 132, 1897-ին՝ 299, 1926-ին՝ 331, 1939-ին՝ 481, 1959-ին՝ 562, 1979-ին՝ 823, 1989-ին՝ 96, 2001-ին՝ 375, 2004-ին՝ 337 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղի տարածքում կան հին խաչքարեր: Հնում ունեցել է պահակատուն և եղել է ճանապարհային կայան (**Սատանախաչ, Գյունեյ**):

**ԱՐԵՆԻ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ ափին, մարզկենտրոնից 15 կմ արմ., ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 1946թ.: 1831թ. ուներ 63, 1873-ին՝ 294, 1922-ին՝ 513, 1959-ին՝ 1094, 1970-ին՝ 1370, 1979-ին՝ 1351, 2001-ին՝ 1794, 2004-ին՝ 1752 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և շերամապահությամբ: Այստեղ պահպանվել են եռակամար կամուրջը (1265-1287թթ.), սբ. Աստվածածին եկեղեցին (1321թ.), 13դ. ամրոցը, մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. կիկլոպյան ամրոցը և 10-16դդ. խաչքարեր (**Արփա**):

**ԱՐԵՎԱԲՈՒՅՐ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 16 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: Բնակչությունը՝ 1831թ.-183, 1897թ.-202, 1926թ.-164, 1939թ.-206, 1959թ.-314, 1970թ.-268, 1979թ.-696, 2001թ.-1117, 2004թ.-1013 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, խաղողագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ԱՐԵՎԱԴԱՇՏ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 900 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 16 կմ հվ-արմ.: **Ա.** է վերանվանվել 26.09.1948թ.: 1989թ. ուներ 317, 2001-ին՝ 375, 2004-ին՝ 305 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Բնակատեղիի հս. մասում կան հնություններ՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. բնակատեղի և դամբարանադաշտ (**№ 3 սովխոզին կից**):

**ԱՐԵՎԱՑԱԳ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի ստորին հոսանքի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1270 մ, հեռավորությունը մարզկենտրոնից 36 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 209, 1914-ին՝ 550, 1923-ին՝ 532, 1959-ին՝ 1029, 1970-ին՝ 1003, 1979-ին՝ 894, 2001-ին՝ 960, 2004-ին՝ 772 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի արմ. կողմում, Ձորագետի ձախ ափին, մի բարձր լեռան վրա, եղել է պաշտպանական ամրոց, որից մնացել են հիմքերը: Գյուղն ունի փոքրիկ եկեղեցի:

**ԱՐԵՎԱՇԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 36 կմ արլ., ծովի մակերևույթից 853 մ բարձրության վրա: Նախկին բնակիչները գաղթել են 1828-29թթ. Խոյից և Սալմաստից: 1831թ. ուներ 61, 1873-ին՝ 236, 1914-ին՝ 441, 1922-ին՝ 614, 1959-ին՝ 912, 1970-ին՝ 1103, 1979-ին՝ 1150, 2001-ին՝ 1508, 2004-ին՝ 1685 բնակիչ: Բնակչությունը

զբաղվում է խաղողագործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի մոտ է գտնվում Արևաշատի ջրհան կայանը, գյուղում կա սբ.Աստվածածին եկեղեցի (1905-1907թթ.):

**ԱՐԵՎԱՇՈՂ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1930 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1906թ.-987, 1970թ.-2375, 1979թ.-2503, 2001թ.-2779, 2004թ.-3054 բնակիչ, որոնց նախնիները եկել են Մակուից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ և դաշտավարությամբ: Գյուղի շրջակայքում կան 2 գյուղատեղիների և մեկ բերդի ավերակներ: Գյուղում են գտնվում եկեղեցիներ՝ “Արևշողի ժամ” (19դ.), սբ. Աստվածածին, ինչպես նաև ՝ սբ. Սահակ և սբ. Գրիգոր մատուռները:

**ԱՐԵՎԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 7 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 140, 1873-ին՝ 508, 1914-ին՝ 747, 1922-ին՝ 739, 1959-ին՝ 1204, 1970-ին՝ 1573, 1979-ին՝ 1761, 2001-ին՝ 2525, 2004-ին՝ 2686 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների և հացահատիկի մշակությամբ: **Ա**-ից Արմավիր գյուղ տանող ճանապարհի վրա գտնվող բլրի պեղումներից (1962-66թթ.) հայտնաբերվել են մ.թ.ա. 3-րդ հզմ. շինության հետքեր:

**ԱՐԵՎԻԿ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1530 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հվ-արլ.: Բնակչությունը՝ 1831թ.-159, 1873թ.-625, 1914թ.-1232, 1922թ.-1498, 1959թ.-1489, 1970թ.-1532, 1979թ.-1455, 1989թ.-1908, 2001թ.-1749, 2004թ.-1652 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1810-15թթ. Ալաշկերտից և Բասենից գաղթած հայերի կողմից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճա-կընդեղի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ, պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Ունի նոր շըր-ջանում կառուցված սբ. Գրիգոր եկեղեցի և սբ. Հակոբ մատուռ:

**ԱՐԵՎԻՍ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջակողմյան վտակ Սիսիան գետի ձախ օժանդակ Կամըրջաձոր գետակի ձախ ափին, մարզկենտրոնից 120 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 19, 1873-ին՝ 168, 1914-ին՝ 300, 1922-ին՝ 151, 1959-ին՝ 478, 1970-ին՝ 551, 1979-ին՝ 476, 2001-ին՝ 102, 2004-ին՝ 111 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և հացահատիկի մշակությամբ: Շրջակայքում կան մոլիբդենի և պղնձի հանքավայրեր: Գյուղից 3-4 կմ հվ. գտնվում են Թանահատի վանքի ավերակները, իսկ 4-5 կմ հս-արմ.՝ ավերակ գյուղատեղի:

**ԱՐԵՎՇԱՏ**- գյուղ Արարատի մարզում, Ազատ գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերե-վույթից՝ 930 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 217, 1873-ին՝ 426, 1914-ին՝ 661, 1922-ին՝ 636, 1959-ին՝ 1519, 1970-ին՝ 1770, 1979-ին՝ 1909, 2001-ին՝ 2225, 2004-ին՝ 2123 բնակիչ: Գյուղի բնակիչները Սալմաստից և Խոյից գաղթածներն են: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Այստեղ է սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (19դ.):

**ԱՐԵՎՇԱՏ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից 23 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: 1831թ ուներ 206, 1878-ին՝ 661, 1914-ին՝ 1153, 1922-ին՝ 1371, 1959-ին՝ 1166, 1970-ին՝ 1296, 1979-ին՝ 1290, 2001-ին՝ 1785, 2004-ին՝ 2017 բնակիչ, որոնց նախնիները 1828-30թթ. գաղթել են Կարսի Բվիկ, Ջամուշլու գյուղերից, մասամբ էլ Սարիղամիշից և Կարինից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, ծխախոտագործությամբ և ճակնդեղագործությամբ: Գյուղում կան 14-15դդ. եկեղեցի (վերանորոգված 1873թ.), “Կարմիր Ավետարան”, “Սոլոյենց սուրբ” և “Մարինենց սուրբ” մատուռներ:

**ԱՐԵՎՈւՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արտենի լեռան հվ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 57 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1475 մ: 1897թ. ուներ 37, 1926-ին՝ 213, 1939-ին՝ 408, 1959-ին՝ 178, 1970-ին՝ 259, 1979-ին՝ 295, 2001-ին՝ 167, 2004-ին՝ 248 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից: **Ա.** է վերանվանվել 04.07.2006թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ (**Բարոժ**):

**ԱՐԶԱԿԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Պալար գետի ափին, Ծաղկունյաց լեռների հվ. ստորոտին, մարզկենտրոնից 21 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 233, 1897-ին՝ 1130, 1926-ին՝ 1179, 1939-ին՝ 1445, 1959-ին՝ 1354, 1970-ին՝ 1946, 1979-ին՝ 2168, 1989-ին՝ 5343, 2001-ին՝ 2881, 2004-ին՝ 2996 բնակիչ, որոնց նախնիները 1828-30թթ. գաղթել են Մակուից, Խոյից, Բայազետից, մասամբ նաև Մուշից և Թիֆլիսից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: **Ա.** տարածքում կան մարմարի, խճաքարի, օխրայի շահագործվող հանքավայրեր, հանքային ջրեր և բազմաթիվ աղբյուրներ: ՈՒնի երկու եկեղեցի. մեկը՝ սբ. Գևորգ (10դ.) գյուղի գերեզմանատան մեջ, մյուսը՝ սբ. Ստեփանոս, որը գտնվում է հին գյուղի տարածքում: Գյուղից 3 կմ հս-արմ. գտնվում է Նեղուցի սբ. Աստվածածին վանքը: **Ա.**-ից 3 կմ հվ-արլ., Հրազդանի ձախ ափին կան գյուղի ավերակներ, ըստ տեղացիների հին Արտավազդականի կամ Արտազականի ավերակներն են (**Արտավազդական**):

**ԱՐԶՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի ձախափնյա սարավանդի վրա, մարզկենտրոնից 29 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1340 մ բարձրության վրա:1873թ. ուներ 262, 1897-ին՝ 658, 1926-ին՝ 932, 1939-ին՝ 1342, 1989-ին՝ 5390, 1991-ին՝ 3500, 2004-ին՝ 3265 բնակիչ: **Ա.** առողջավայր է, հայտնի է իր հանքային ջրերով: **Ա**-ի առողջարանները կառուցված են նաև Հրազդանի կիրճում, գետի երկու ափերին: Գյուղից ոչ հեռու գտնվում է Արզնի ՀԷԿ-ը, **Ա.**-ում կա թանկարժեք քարերի մշակման գործարան: Գյուղի մեջ կան եկեղեցիներ՝ սբ. Կարապետ (17-18դդ.), սբ. Մարիամ Աստվածածին (19դ.), սբ.Պողոս-Պետրոս (18-19դդ.), **Ա**-ում կա նաև 6դ. եռախորան կանգուն եկեղեցի: Ասորիները ունեն իրենց եկեղեցին: Գյուղի տարածքում հայտնաբերվել են հին քարե դարի և նեոլիթի նյութեր (**Արծնի**, **Արզնի Ասորիք**):

**ԱՐԶՆԻ**- նախկինում գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Բյուրեղավան**:

**ԱՐԶՆԻ ԱՍՈՐԻՔ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Արզնի**:

**"ԱՐԶՆԻ" ՀԷԿ-ԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Նոր Հաճն**:

**ԱՐԹԻԿ**- քաղաք Շիրակի մարզում, Արագած լեռան հս-արմ. ստորոտին: Մարզկենտրոնից 20 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 647, 1873-ին՝ 2359, 1897-ին՝ 2950, 2001-ին՝ 17561, 2004-ին՝ 17500 բնակիչ, որոն նախնիները 1829-30թթ. ներգաղթել են Կարսից և Կարինից: Գործում են "Արթիկտուֆ" կոմբինատը (1927թ.) և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Տնտեսության կարևոր ճյուղերից է գյուղատնտեսությունը: Բը-նակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնաբուծությամբ: **Ա.** շրջակայքը հարուստ է հայկական մշակույթի հուշարձաններով: Հայտնաբերվել են դամբարանադաշտեր, կավանոթների, զարդերի, զենքերի հնագույն նմուշներ (մ.թ.ա.14-րդ-9-րդ դդ.): Պահպանվել են սբ. Գևորգ (6դ.), սբ. Աստվածածին (սբ. Մարինե, 5դ.), սբ.Ստեփանոս (Լմբատավանք, 6-7դդ.) եկեղեցիները: Քաղաքը հարուստ է միջնադարյան ժողովրդական ճարտարապետության նմուշներով՝ տուփաշեն հսկայական ջրատար խողովակներով, ջրաղացների, գմբեթածածկ բնակելի տներով:

**ԱՐԻՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, ծովի մակերևույթից 1630 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 22 կմ հվ-արլ.: Բնակիչների մի մասը եկել է Ազատեկ գյուղից: 1873թ. ուներ 87, 1897-ին՝ 126, 1926-ին՝ 143, 1939-ին՝ 201, 2001-ին՝ 264, 2004-ին՝ 255 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, ծխախոտագործությամբ և այգեգործությամբ: Պահպանվել են ՝ 19դ. ավերակ մատուռ, քարի դարի "Փեթակ" քարայր:

**ԱՐԾՆԻ**- գյուղ Լոռու մարզում, Լոքի լեռնանցքի մոտ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 55 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 102, 1926-ին՝ 409, 1939-ին՝ 548, 1959-ին՝ 577, 1979-ին՝ 931, 2001-ին՝ 371, 2004-ին՝ 296 բնակիչ: 03.04.1991թ. գյուղը վերանվանվել է **Ա.**: Բնակչությունը զբաղվում է կերային կուլտուրաների մշակությամբ (**Ղզըլդաշ**):

**ԱՐԾՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Արզնի**:

**ԱՐԾՎԱԲԵՐԴ**- գյուղ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 65 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1290 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 293, 1897-ին՝ 1353, 1926-ին՝ 2338, 1939-ին՝ 3315, 1950-ին՝ 3622, 1970-ին՝ 4285, 1979-ին՝ 3541, 1989-ին՝ 3284, 2001-ին՝ 3320, 2004-ին՝ 3070 բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ է գաղթել Արցախից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղի մեջ է "Զորավար" եկեղեցին, հվ. մասում՝ "Սեպրիկ" ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.), 10 կմ հվ-արմ.՝ "Քոլագիր" գյուղատեղին (13-18դդ.), իսկ 3 կմ հվ-արլ.՝ "Ներքին Շեն" գյուղատեղին և 14-19դդ. գերեզմանոցը:

**ԱՐԾՎԱՆԻԿ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների ճյուղերից մեկի լանջին, մարզկենտրոնից 12 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 143, 1897-ին՝ 933, 1926-ին՝ 779, 1939-ին՝ 861, 1959-ին՝ 667, 1970-ին՝ 712, 1979-

ին՝ 639, 2001-ին՝ 652, 2004-ին՝ 552 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ, ծխախոտագործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում են գտնվում "Ազրավի տապան" մջնդ. կառույցը և մ.թ.ա. 4րդ-1-ին դդ. ամրոցի ավերակները: Գյուղից 3 կմ հս-արլ. գտնվում է Երիցավանքը՝ իր հարակից եկեղեցիով (6դ.) և "Ճգնավորի" (6դ.) մատուռով, որոնք կիսավեր են, 1 կմ արմ.՝ 11դ. փոքրիկ եկեղեցի իր խաչքարերով և 991թ. եկեղեցի (վերանորոգված 1032թ.): Հնություններից է փոշնի ծառը (450-500 տարեկան) (**Երիցվանք**, **Կարմիր վանք**):

**ԱՐԾՎԱՆԻՍՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ափամերձ հարթավայրում, Կաթիկ գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 53 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950մ բարձրության վրա: 1897թ. ուներ 1253, 1926-ին՝ 1530, 1939-ին՝ 1662, 1959-ին՝ 1819, 1970-ին՝ 2596, 1979-ին՝ 2497, 1989-ին՝ 2524, 2001-ին՝ 3064, 2004-ին՝ 3233 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: **Ա.**-ի հվ-արլ. ծայրամասում կանգուն է Վանեվան վանքը (10դ.), որի համալիրի մեջ է մտնում սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (903թ.): Գյուղից 3 կմ հվ. կա ավերակ գյուղատեղի, ուր գտնվում են Հնեվանքը և Քոլատակի սբ. Աստվածածին եկեղեցին:

**ԱՐԾՎԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 94 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1859թ.: 1873թ. ուներ 1015, 1897-ին՝ 1847, 1926-ին՝ 2909, 1939-ին՝ 4280, 1959-ին՝ 4112, 1970-ին՝ 3368, 1979-ին՝ 2771 բնակիչ, որոնց նախնիների մեծ մասը Արցախից էին, կան նաև Տավուշի Չորաթան գյուղից եկածներ: Բնակչությունը զբաղվում էր այգեգործությամբ, կարտոֆիլի, ծխախոտի, հացահատիկի մշակությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի տարածքում կա սբ. Մինաս եկեղեցի (1872թ.), գերեզմանոց իր "Գորգ երեցի" (9-10դդ.), "Սարգիս քահանայի" (12-13դդ.) և "Հակոբի" (15-16դդ.) խաչքարերով: **Ա.** գտնվում է Ադրբեջանի զինված ուժերի հսկողության ներքո:

**ԱՐՃԻՍ**- գյուղ Տավուշի մարզում, Դեբեդ գետից արլ., նրա փոքրիկ վտակի ափին, մարզկենտրոնից 63 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 740 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 178, 1897-ին՝ 530, 1926-ին՝ 842, 1959-ին՝ 1193, 1964-ին՝ 1500, 1970-ին՝ 1333, 1979-ին՝ 1220, 1989-ին՝ 1519, 2001-ին՝ 1287, 2004-ին՝ 1143 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և ծխախոտի մշակությամբ: Գյուղում կա 18-19դդ. եկեղեցի, գերեզմանոց և մատուռ: Գյուղից 1 կմ հվ. պահպանվել է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Արճիս" դամբարանադաշտը:

**ԱՐՃԻՍԻ ՍՈՎԽՈԶԻ 2-ՐԴ ՄԱՍԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Դեղձավան**:

**ԱՐՄԱՆԻՍ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1520 մ, հեռավորությունը Ստեփանավան ք-ից՝ 4 կմ արմ.: 1897թ. ուներ 202, 1926-ին՝ 334, 1939-ին՝ 528, 1959-ին՝ 580, 1970-ին՝

574, 2001-ին՝ 436 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, այգեգործությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում պահպանվել են մի անշուք եկեղեցու ավերակներ:

**ԱՐՄԱՇ**- գյուղ Արարատի մարզում, Արաքսի ձախափնյա արգավանդ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: Գյուղը հիմնադրվել է 1925թ.: 1926թ. ուներ 324, 1939-ին՝ 228, 1959-ին՝ 1144, 1970-ին՝ 1867, 1979-ին՝ 2082, 2001-ին՝ 2532, 2004-ին՝ 2459 բնակիչ, որոնց նախնիները եկել են Պոլսից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղից 6 կմ հս. կա ամրոց (10-18դդ.) և բնակատեղի (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 4,5 կմ հս-արլ.՝ "Աննի" գյուղատեղի (10-12դդ.) և սբ. Նշան եկեղեցի (10-12դդ.):

**ԱՐՄԱՎԻՐ**- քաղաք Արմավիրի մարզում, մարզի կենտրոն: Գտնվում է Արարատյան դաշտում, Երևանից 43 կմ արմ., արգավանդ հողերով շրջապատված ընդարձակ հարթավայրում: **Ա.** է վերանվանվել 07.11. 1995թ.: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա: Քաղաքը հս-արլ. կողմից պատված է 350 հա-ի հասնող անտառաշերտով: 1980թ. ք. ուներ 31575, 2001-ին՝ 32034, 2004-ին՝ 32500 բնակիչ, որոնց մի մասը հայրենադարձվել են Իրանից, Սիրիայից և Լիբանանից: Ք-ի համար կարևոր նշանակություն ունեն այստեղով անցնող Երևան-Գյումրի ավտոմայրուղին և Երևան-Թբիլիսի երկաթուղին: Արլ. Հայաստանը պարսկական լծից ազատագրվելու ժամանակ՝ 1827թ. ամռանը ռուսական զորքերը գրավեցին **Ա.** և վերացրեցին նրա բերդը: **Ա.** առաջընթացը սկսվեց 1927թ-ին, երբ այստեղ բնակություն հաստատեցին նոր բնակիչներ, իսկ 30-ական թթ. բնակավայրում արդեն կար 250 ընտանիք: Շրջկենտրոնը Ղուրդուղուլուց (այժմ՝ Արմավիր գ.) փոխադրվեց **Ա.**: Դրանից հետո, 15-17 տարվա ընթացքում, **Ա.** տնտեսական և մշակութային առումով հսկայական առաջընթաց է ապրում: Այդ ամենը հիմք դարձավ, որպեսզի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1947թ. հրամանագրով շրջկենտրոնին տրվի քաղաքի կարգավիճակ: 1930թ-ից **Ա.** վարչական շրջանի կենտրոնն է: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ (**Սարդարապատ**, **Հոկտեմբերյան**):

**ԱՐՄԱՎԻՐ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 9 կմ հվ.: Բնակիչների մեծ մասը գաղթել են Խոյից, Սուրմալուից, Մուշից, Սիրիայից և այլ վայրերից: 1897թ. ուներ 1316, 1926-ին՝ 1692, 1939-ին՝ 1733, 1959-ին՝ 2323, 1970-ին՝ 2670, 1979-ին՝ 2831, 2001-ին՝ 2910, 2004-ին՝ 2900 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի մոտ են գտնվում Հայաստանի առաջին մայրաքաղաքի՝ Արմավիրի (Արգիշտիխինիլի-Արմավիր) քաղաքի ավերակները: Գյուղում կա սբ. Աստվածածին եկեղեցի (**Ղուրդուղուլի**):

**ԱՐՇԱԼՈՒՅՍ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 14 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա: Բնակիչների նախնիները 1828-29թթ.

գաղթել են Խոյից, կան Երևանի շրջակայքից եկածներ: 1831թ. ուներ 419, 1897-ին՝ 1275, 1926-ին՝ 1216, 1939-ին՝ 1206, 1959-ին՝ 2102, 1970-ին՝ 2945, 1979-ին՝ 3032, 2001-ին՝ 4162, 2004-ին՝ 4200 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնաբուծությամբ: Ունի սբ. Աստվածածին եկեղեցի (կառ. 19դ. 70-ական թթ.): Գյուղից մոտ 2 կմ հվ. գտնվում է սբ. Կարապետ սրբավայրը:

**ԱՐՊԱՏ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Արբաթ**:

**ԱՐՋՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 574, 1926-ին՝ 823, 1939-ին՝ 1052, 1959-ին՝ 1295, 1970-ին՝ 2003, 1979-ին՝ 2172, 2001-ին՝ 1007, 2004-ին՝ 484 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում է զըտնըվում "Առաքելոց խաչ" մատուռը:

**ԱՐՋՈՒՏ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ, հեռավորությունը Արջուտ գյուղից՝ 1 կմ հվ.: 1939թ. ուներ 54, 1940-ին՝ 42, 2001-ին՝ 54 բնակիչ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ:

**ԱՐՏԱԲՈՒՅՆՔ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Եղեգիս գետի վտակներից մեկի աջ ափին, ծովի մակերևույթից 1540 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 17 կմ հս.: Գյուղի բնակիչների նախնիները 1829-30թթ. եկել են Խոյից: 1831թ. ուներ 172, 1897-ին՝ 530, 1926-ին՝ 780, 1939-ին՝ 1055, 1959-ին՝ 941, 1970-ին՝ 1107, 1979-ին՝ 1023, 2001-ին՝ 1077, 2004-ին՝ 1080 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղի շրջակայքում են գտնվում "Ցախացքար" վանքի համալիրը (11դ.), Սմբատաբերդը, "Չոփ" ժամտունը (13դ.) և խաչքարեր (9-13դդ.) (**Եղեգիս**):

**ԱՐՏԱՄԵՏ**- գյուղ Արմավիրի մարզում: 26.09.1984թ. վերանվանվել է **Ա.** և դասվել է ՀԽՍՀ գյուղերի շարքը: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 965 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 26 կմ հվ-արմ.: 1989թ. ուներ 1000, 2001-ին՝ 212, 2004-ին՝ 200 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և անասնապահությամբ (**№ 2 սովխոզին կից**):

**ԱՐՏԱՆԻՇ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի Արտանիշի ծոցի ափին, մարզկենտրոնից 72 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1975 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 119, 1897-ին՝ 788, 1926-ին՝ 1257, 1939-ին՝ 1643, 1959-ին՝ 1406, 1970-ին՝ 2034, 1979-ին՝ 2037, 1989-ին՝ 144, 2001-ին՝ 735, 2004-ին՝ 719 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի արմ. եզրին է գտնվում Արտանիշի (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), իսկ հվ. մասում՝ "Դաշալեռ" (մ.թ.ա. 1-ին հզմ.) կիկլոպյան ամրոցները: **Ա.**-ից ոչ հեռու կան երեք եկեղեցիներ (**Արտավուճ**, **Արտունջ**):

**ԱՐՏԱՇԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 9 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1630 մ: 1873թ. ուներ 286, 1897-ին՝ 485, 1926-ին՝ 602, 1939-ին՝ 548, 1959-ին՝ 331, 1970-ին՝ 493, 2001-ին՝ 624, 2004-ին՝ 688 բնակիչ: Բնակչությունը

զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղում են գտնվում 7դ. սբ. Ամենափրկիչ և 13դ. սբ. Թադևոս Առաքյալ եկեղեցիները, 17-18դդ."Թուխ Մանուկ" մատուռը: **Ա**-ից 2 կմ հս-արլ. գտնվում է "Գազանոց" ամրոցը (մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ.), 3 կմ հվ-արլ.՝ "Գնդաքար" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 1 կմ հս.՝ "Փոշտի դար" ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.), իսկ արլ. մասում՝ "Ճգնավոր" քարայր-կացարանը (մջնդ.) (**Որդկան**):

**ԱՐՏԱՇԱՏ**- քաղաք Արարատի մարզում, մարզկենտրոն, Ազատ գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ, հեռավորությունը Երևանից՝ 28 կմ հվ-արլ.: 1897թ. ուներ 833, 1926-ին՝ 2505, 1939-ին՝ 4148, 1959-ին՝ 7277, 1974-ին՝ 14905, 1976-ին՝ 16774, 2001-ին՝ 25066, 2004-ին՝ 25100 բնակիչ: Նախնիները եկել են Խոյից և Սալմաստից: Գյուղը հիմնադրվել է 1829թ., իսկ 1961թ.՝ դարձել քաղաք: **Ա.** ունի հյուրանոց, դպրոցներ, երաժշտական դպրոցներ, Ա. Խարազյանի անվան թատրոնը, գինու և պահածոների գործարաններ, կահույքի ֆաբրիկա: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և պտղաբուծությամբ: **Ա.** են գտնվում Թուխ Մանուկ մատուռը և նորակառույց եկեղեցին:

**ԱՐՏԱՇԱՐ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 13 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 843 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 406, 1926-ին՝ 129, 1939-ին՝ 308, 1959-ին՝ 509, 1970-ին՝ 605, 1979-ին՝ 589, 2001-ին՝ 966, 2004-ին՝ 1000 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ:

**ԱՐՏԱՎԱԶ**- գյուղ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի միջին հոսանքի ձախափնյակում, մարզկենտրոնից 20 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1831թ. ուներ 41, 1873-ին՝ 335, 1897-ին՝ 534, 1926-ին՝ 303, 1939-ին՝ 509, 1959-ին՝ 944, 1970-ին՝ 951, 1979-ին՝ 878,, 1989-ին՝ 721, 2001-ին՝ 575, 2004-ին՝ 487 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնաբուծությամբ: Գյուղի հվ-արմ. եզրին կա քանդված եկեղեցի: Մոտակայքում է գտնվում "Արտավազդիկ" վանքը (7դ.) (**Թաքյառլու**):

**ԱՐՏԱՎԱԶԴԱԿԱՆ**- պատմական գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Արզական**:

**ԱՐՏԱՎԱՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան վտակ Արտավան գետակի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1880 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 32 կմ հվ-արլ.: Բնակիչների նախնիները 1828-30թթ. գաղթել են Խոյից և Սալմաստից: 1897թ. ուներ 433, 1926-ին՝ 380, 1939-ին՝ 460, 1959-ին՝ 588, 1970-ին՝ 468, 1979-ին՝ 336, 2001-ին՝ 379, 2004-ին՝ 395 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտի և հացահատիկի մշակությամբ, պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Պահպանվել են 17-19դդ. եկեղեցիներ, 13-14դդ. և 19դ. մատուռներ, խաչքարեր (11-15դդ., 17-18դդ.) (**Աջողբ**):

**ԱՐՏԱՎՈՒՃ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Արտանիշ**:

**ԱՐՏԵՆԻ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 63 կմ արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1200 մ: Բնակչությունը՝ 1926թ.-59, 1939թ.-49, 1959թ.-1325, 1970թ.-2932, 1979թ.-3180, 2001թ.-3386, 2004թ.-3484

բնակիչ, որոնք եկել են Արթիկի, Թալինի և Կարսի զանազան գյուղերից: **Ա.** է վերանվանվել 31.08.1950թ.: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և պտղաբուծությամբ (**Բողութլու կայարանին կից**):

**ԱՐՏԻՄԵՏ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 23 կմ արլ.: **Ա.** է վերանվանվել 08.08. 1991թ.: Բնակիչները գաղթել են Իգդիրից, Վանից 1915-20թթ., Իրանից 1946թ., Սիսիանից, Աշտարակից, Ապարանից և Սպիտակից: 1831թ. ուներ 129, 1897-ին՝ 642, 1914-ին՝ 720, 1919-ին՝ 840, 1926-ին՝ 558, 1939-ին՝ 518, 1959-ին՝ 758, 1970-ին՝ 1161, 1979-ին՝ 1234, 1989-ին՝ 1619, 2001-ին՝ 1638, 2004-ին՝ 1600 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղում կա 1876թ. սբ. Աստվածածին եկեղեցի և 12-13դդ. խաչքարեր: (**Սոցարշավ**, **Աթարբեկյան**):

**ԱՐՏՈՒՆՋ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Արտանիշ**:

**ԱՐՈՒՃ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից 29 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերե-վույթից 1220մ: Բնակչությունը՝ 1897թ.-636, 1926թ.-383, 1939թ.-658, 1959թ.-657, 1970թ.-801, 1979թ.-881, 2001թ.-1016, 2004թ.-1131 բնակիչ, որոնց մի մասը գաղթել է Բայազետի գյուղերից: **Ա.** է վերանվանվել 11.11. 1970թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ և դաշտավարությամբ: **Ա.** է գտնվում սբ. Գրիգոր (Արուճի կաթողիկե) եկեղեցական համալիրը (5-7դդ.) և 19դ. սբ.Աստվածածին եկեղեցին: Գյուղից 1 կմ արլ. գտնվում է "Ջրի բերդ" ամրոցը (մ.թ.ա. 3-րդ հզմ.), 1 կմ հս.՝ "Արուճի մեծ" դամբարանը (մ.թ.ա. 2-րդ հզմ.) և "Արուճ" քարավանատունը (**Թալիշ**):

**ԱՐՓԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Արենի**:

**ԱՐՓԵՆԻ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 24 կմ հս., ծովի մակերևույթից 1920 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 598, 1926-ին՝ 479, 1970-ին՝ 404, 1980-ին՝ 369, 2001-ին՝ 373, 2004-ին՝ 454 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղն ունի 19դ. եկեղեցի: Այստեղ է գտնըվում "Ալբերդ" ամրոցը (մ.թ.ա. 5-րդ-3-րդ դդ.):

**ԱՐՓԻ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի աջ ափին: Ծովի մակերևույթից 1060 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 8 կմ հվ-արմ.: Հիմնադրվել է 1965թ.: 1970թ. ուներ մոտ 1360, 1979-ին՝ 928, 2001-ին՝ 1138, 2004-ին՝ 1103 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Մոտակայքում են գտնվում "Մոզրովի" և "Արջի" քարանձավները (**Արփիավան**, **Արփնի**):

**ԱՐՓԻԱՎԱՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Արփի**:

**ԱՐՓՆԻ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Արփի**:

**ԱՐՓՈՒՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների փեշերին, Մասրիկ գետի վերին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 95 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2060 մ բարձրության վրա: **Ա.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1831թ. ուներ 166, 1897-ին՝ 671, 1926-ին՝ 414, 1939-ին՝ 758, 1959-ին՝ 583, 1970-ին՝ 891, 1979-ին՝ 955, 1989-ին՝ 693, 2001-ին՝ 458, 2004-ին՝ 328 բնակիչ:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ (**Բահար**):

**ԱՓՆԱԳՅՈՒՂ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1810 մ: 1831թ. ուներ 376, 1897-ին՝ 907, 1926-ին՝ 725, 1939-ին՝ 692, 1959-ին՝ 358, 1970-ին՝ 435, 1979-ին՝ 444, 2001-ին՝ 490, 2004-ին՝ 508 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ալաշկերտից, Մուշից և Արծափից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղում են զըտ-նըվում սբ. Գրիգոր (1862թ.) և “Ձորավոր” (13-14դդ.) եկեղեցիները: **Ա**-ից 1 կմ հվ-արլ. մնացել են մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. “Կարմիր դարեր” դամբարանադաշտի ավերակները:

**ԱՔՈՐԻ**- գյուղ Լոռու մարզում, Լալվար լեռան հվ-արլ. ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 52 կմ հս-արլ.:Բնակչությունը՝ 1897թ.-824, 1926թ.-1169, 1939թ.-1816, 1959թ.-1701, 1970թ.-2309, 1979թ.-2235, 2001թ.-2617, 2004թ.-2682 բնակիչ, որոնց մի մասը եկել է Թիֆլիսից և Ստեփանավանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնաբուծությամբ, պտղաբուծությամբ և հողագործությամբ: Գյուղից 3 կմ հս-արմ. գտնվում է “Բզավոր” գյուղատեղին (10-14դդ.) իր համանուն եկեղեցիով: Գյուղում են գտնվում սբ. Գրիգոր (10-12դդ.), “Ազեղցի” (10-13դդ.) եկեղեցիները, իսկ 4 կմ հվ-արլ՝ ձորի մեջ, գտնվում է սբ. Գևորգ եկեղեցին:

# Բ

**ԲԱԳԱՐԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, Ախուրյանի գետաբերանի մոտ, շրջապատված բլուրներով, մարզկենտրոնից 39 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 990 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 332, 1897-ին՝ 483, 1926-ին՝ 355, 1939-ին՝ 418, 1959-ին՝ 578, 1970-ին՝ 691, 1979-ին՝ 596, 2001-ին՝ 652, 2004-ին՝ 646 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պըտ-ղաբուծությամբ, դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա 1901թ. սբ. Աստվածածին եկեղեցի, իսկ արլ. մասում՝ մ.թ.ա. 3-րդ հզմ.-մ.թ. 14դ. բնակատեղի (**Ոստան**, **Սարական**):

**ԲԱԳՐԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 41 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1460 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 185, 1897-ին՝ 439, 1926-ին՝ 598, 1939-ին՝ 948, 1959-ին՝ 856, 1970-ին՝ 779, 1979-ին՝ 816, 2001-ին՝ 818, 2004-ին՝ 802 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Ալաշկերտի, Բասենի և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում կան եկեղեցի և խաչքարեր (**Բուղդաշեն**):

**ԲԱԳՐԱՏԱՇԵՆ**- գյուղ Տավուշի մարզում, Դեբեդ գետի ափին, մարզկենտրոնից 73 կմ հս-արմ., ծովի մա-

կերևույթից 450 մ բարձրության վրա: **Բ.** է վերանվանվել 23.02.1972թ.: 1831թ. ուներ 11, 1897-ին՝ 385, 1926-ին՝ 986, 1939-ին՝ 1289, 1959-ին՝ 1151, 1970-ին՝ 2733, 1979-ին՝ 1821, 1989-ին՝ 2555, 2001-ին՝ 3023, 2004-ին՝ 2990 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և գինեգործությամբ: Ունի մի ընդարձակ (8 հա) մշակույթի ու հանգստի զբոսայգի՝ մերձարևադարձային դեկորատիվ ծառերով ու թփերով (**Դեբետաշեն**):

**ԲԱԳՐԱՏԱՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գորայք**:

**ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղի աջակողմյան Շաղվարդ գետակի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1140 մ: 1831թ. ուներ 155, 1897-ին՝ 635, 1926-ին՝ 417, 1939-ին՝ 522, 1959-ին՝ 587, 1970-ին՝ 672, 1979-ին՝ 681, 2001-ին՝ 950, 2004-ին՝ 1037 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի Մուշի, Խութի և Խլաթի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և ծխախոտի մշակությամբ: Գյուղից 2,5 կմ հս. գտնվում է "Բուրավետ" գյուղատեղին (11-19դդ.) և "Բազմակն" քաղաքատեղին (մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ.), իսկ 0,5 կմ հվ.՝ "Թաքիա" ամրոցը (մ.թ.ա. 7-րդ հզմ.):

**ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ակունք**:

**ԲԱԶՄԱՎԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Նոր Գեղի**:

**ԲԱԶՈՒՄ**- գյուղ Լոռու մարզում, Բազումի լեռների հր. մեղմաթեք լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից 1615մ, հեռավորությունը մարզկենտրոնից 3 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1873թ.-232, 1897թ.- 452, 1926թ.-636, 1939թ.-803, 1959թ.-691, 1970թ.-638, 1979թ.-887, 2001թ.-1285, 2004թ.-984 բնակիչ: Նախնիները եկել են Իջևանից և Եղվարդից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Գյուղից 1-2 կմ հս- արլ.՝ Բերդատեղ վայրում, կան բերդի ավերակներ: Գյուղի հվ. մասում են գտնվում 12-13դ. եկեղեցի, "Կամակատար" մատուռը (19 դ.) և 13-19 դդ. մեկ այլ մատուռ:

**ԲԱԹՈՒԻՆՋ**- պատմական գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Ոսկեհատ**:

**ԲԱԼԱՀՈՎԻՏ**- գյուղ Կոտայքի մարզում, Երևան-Սևան մայրուղուց աջ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1420 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 40 կմ հվ-արմ.: **Բ.** է վերանվանվել 26.12.1968թ.: 1831թ. ուներ 50, 1897-ին՝ 133, 1926-ին՝ 296, 1939-ին՝ 501, 1959-ին՝ 926, 1970-ին՝ 1619, 1979-ին՝ 2668, 1989-ին՝ 2543, 2001-ին՝ 3426, 2004-ին՝ 3869 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Նոր ժամանակներում **Բ**-ում են վերահաստատվել Վանաձորի ու Աբովյանի տարածաշրջաններից վերաբնակիչներ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում կա սբ. Աստվածածին եկեղեցի (19դ.), հվ-արմ.՝ մ.թ.ա. 3-րդ հզմ. քաղաքատեղի, իսկ գյուղի եզրին՝ հին դամբարաններ (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) (**Միուբ**):

**ԲԱԼԱՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ ափին, մարզկենտրոնից 116 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1680 մ բարձրության վրա: 1831թ ուներ 68, 1897-ին՝ 393, 1926-ին՝ 412, 1939-ին՝ 401, 1959-ին՝ 317, 1970-ին՝ 205, 1979-ին՝ 164, 2001-ին՝ 223, 2004-

ին՝ 236 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կա եկեղեցի (**Բլեկանց**):

**ԲԱԼԸԽԼԻ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ջորակերտ**:

**ԲԱՀԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Արփունք**:

**ԲԱՂԱՆԻՍ**- գյուղ Տավուշի մարզում, Բաղանիս գետի հովտում, մարզկենտրոնից 32 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 134, 1897-ին՝ 475, 1926-ին՝ 495, 1939-ին՝ 699, 1959-ին՝ 687, 1970-ին՝ 855, 1979-ին՝ 873, 1989-ին՝ 967, 2001-ին՝ 871, 2004-ին՝ 785 բնակիչ, որոնց նախնիների մի մասը Արցախից եկածներն են: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ, ծխախոտագործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի տարածքում կան հանքային աղբյուրներ: **Բ.** պահպանվել են 12-13դդ. փայտածածկ եկեղեցի և մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոց (**Բաղանիս Հայ**):

**ԲԱՂԱՆԻՍ ՀԱՅ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Բաղանիս**:

**ԲԱՂՐԱՄՅԱՆ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում, մարզկենտրոնից՝ 4 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 835 մ: Բնակչությունը՝ 1831թ.-175, 1897թ.-673, 1926թ.-558, 1939թ.-649, 1959թ.-1139, 1979թ.-1518, 2001թ.-1875, 2004թ.-2000 բնակիչ: Նախնիները եկել են Խոյից և Սալմաստից: Գյուղը հիմնադրվել է 1829թ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում է գտնվում սբ. Սարգիս եկեղեցին (19դ.):

**ԲԱՂՐԱՄՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, Բաղրամյանի տարածաշրջանում, մարզկենտրոնից 19 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1080 մ բարձրության վրա: 1989թ. ուներ 352, 1991-ին՝ 700, 2001-ին՝ 903, 2004-ին՝ 1008 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և խոզաբուծությամբ:

**ԲԱՂՐԱՄՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, Վաղարշապատի տարածաշրջանում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 945 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 38 կմ հս-արլ.: Հիմնադրվել է 1947թ.: 1970թ. ուներ 1831, 1979-ին՝ 2233, 1989-ին՝ 2629, 2001-ին՝ 2675, 2004-ին՝ 3007 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ և խաղողագործությամբ:

**ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Պտղունք**:

**ԲԱՄԲԱԿԱՇԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 4 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 1769, 1926-ին՝ 1591, 1939-ին՝ 1657, 1959-ին՝ 2457, 1970-ին՝ 2822, 1979-ին՝ 2970, 2001-ին՝ 3212, 2004-ին՝ 3680 բնակիչ, որոնց նախնիները 1842թ. գաղթել են Բիթլիսից, Սուրմալուից, Կողբից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Ունի 14դ. եկեղեցի:

**ԲԱՄԲԱԿԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Բյուրավան**:

**ԲԱՅԱՆԴՈՒՐ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1480 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 176, 1897-ին՝ 966, 1926-ին՝ 626, 1939-ին՝ 659, 1959-ին՝ 567, 1970-ին՝ 589, 1979-ին՝ 586, 1989-ին՝ 732, 2001-ին՝ 711, 2004-ին՝ 719 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից, Մուշից և Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, հացահատիկի և շաքարի ճակընդեղի մշակությամբ: Հին գյուղը եղել է Ախուրյանի ափին, որը 1926թ. երկրաշարժից ավերվել է , և այդ պատճառով էլ տեղափոխվել: Գյուղից հս-արմ. գտնվում են հայկական և հունական եկեղեցիներ: **Բ.** կան նաև սբ.Պապ և “Մարիամ մամ” մատուռներ:

**ԲԱՅԱՆԴՈՒՐ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վաղատուր**:

**ԲԱՅԴԱՇ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Խոտաձոր**:

**ԲԱՅԹԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Հովտուն**:

**ԲԱՅՍՋ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Օթևան**:

**ԲԱՆԴԻՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1940 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 28 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 213, 1897-ին՝ 806, 1914-ին՝ 1054, 1916-ին՝ 309, 1919-ին՝ 458, 1926-ին՝ 392, 1939-ին՝ 640, 1959-ին՝ 376, 1970-ին՝ 336, 1979-ին՝ 315, 1989-ին՝ 284, 2001-ին՝ 269, 2004-ին՝ 268 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և պտղաբուծությամբ: Շրջակայքում են գտնվում “Ներքին Բանդիվան” գյուղատեղին (մ.թ.ա. 1-ին հզմ.) իր համանուն դամբարանադաշտով և պատմական “Թագավորական” կամուրջը: Գյուղի տարածքում կան ամրոցներ և հնագույն բերդերի ավերակներ: **Բ.** կա 1909թ. սբ.Աստվածածին եկեղեցին:

**ԲԱՇ ԱԲԱՐԱՆ**- քաղաք Արագածոտնի մարզում, տե՛ս **Ապարան**:

**ԲԱՇԳՅՈՒՂ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 34 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 598, 1906-ին՝ 269, 1919-ին՝ 420, 1931-ին՝ 214, 1959-ին՝ 129, 1970-ին՝ 113, 1979-ին՝ 74, 2001-ին՝ 68, 2004-ին՝ 76 բնակիչ: Նախնիները գաղթել են Մուշից և Արմ. Հայաստանի այլ վայրերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Ունի կանգուն եկեղեցի, մատուռ և ամրոց:

**ԲԱՍԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյանի տարածաշրջանում, Փամբակի լեռների փեշերին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1645 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ հվ-արլ.: **Բ.** է վերանվանվել 04. 07.2006թ.: 1831թ. ուներ 512, 1897-ին՝ 1892, 1926-ին՝ 1394, 1939-ին՝ 1667, 1959-ին՝ 1439, 1970-ին՝ 1606, 1979-ին՝ 1420, 1989-ին՝ 1393, 2001-ին՝ 1744, 2004-ին՝ 1693 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասենի և Խնուսի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում կան “Ժամ” եկեղեցի, որը կառուցված է սրբատաշ տուֆից և վերանորոգված է 1842թ., “Սարավերի”

եկեղեցի և “Ավերք” մատուռ (**Մեծ Ախուրյան**, **Մուսայելյան**):

**ԲԱՎՐԱ**- գյուղ Շիրակի մարզում, բարձրադիր սարահարթի վրա, մարզկենտրոնից 46 կմ հս., ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 262, 1926-ին՝ 205, 1939-ին՝ 286, 1970-ին՝ 560, 1979-ին՝ 562, 2001-ին՝ 538, 2004-ին՝ 424 բնակիչ: Նախնիները 1860թ. այստեղ են գաղթել, Արդահանի գյուղերից: Բն-նակչությունը զբաղվում է կաթնաանասնաբուծությամբ: Գյուղից հվ-արմ. կան բնակավայրի և բերդի ավերակներ (19դ.), ինչպես նաև 1880թ. “Սուրբ վանք” սրբատեղի:

**ԲԱՏԻԿՅԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գանձակ**:

**ԲԱՐԳՈՒՇԱՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Սյունիք գյուղից 5 կմ հս., ծովի մակերևույթից 820 մ բարձրության վրա: **Բ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 26, 1897-ին՝ 123, 1926-ին՝ 60, 1939-ին՝ 87, 1959-ին՝ 95, 1970-ին՝ 447, 1979-ին՝ 294, 2004-ին՝ 74 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և բանջարաբուծությամբ (**Ներքին Գյոդակլու**):

**ԲԱՐԵԿԱՄԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Ոսկեպար լեռան փեշերին, մարզկենտրոնից 48 կմ հս.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 720 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 302, 1897-ին՝ 740, 1926-ին՝ 705, 1939-ին՝ 947, 1959-ին՝ 894, 1970-ին՝ 995, 1979-ին՝ 904, 1989-ին՝ 813, 2001-ին՝ 532, 2004-ին՝ 608 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղի շրջակայքում կան գյուղատեղիներ, մ.թ.ա. 1-ին հզմ. դամբարանադաշտ և գերեզմանոց:

**ԲԱՐԵՊԱՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Բարեբեր գետի ափին, Իջևան-Ճամբարակ խճուղուց հվ., Կալավան գյուղից 2 կմ հս.: **Բ.** է վերանվանվել 03.04.1991թ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 111, 1926-ին՝ 91, 1939-ին՝ 102, 1959-ին՝ 205, 1989-ին՝ 28, 2001-ին՝ 111, 2004-ին՝ 63 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ (**Բարիաբաղ**):

**ԲԱՐԻԱԲԱՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Բարեպատ**:

**ԲԱՐՁԱՓԻ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Կոտայք**:

**ԲԱՐՁՐԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, Ազատ գետի աջ կողմում, սարահարթում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ: Գյուղը հիմնադրվել է 1830թ.: Բնակչությունը՝ 1897թ.-246, 1926թ.-136, 1939թ.-301, 1959թ.-370, 1970թ.-384, 1979թ.-963, 2001թ.-1411, 2004թ.-1135 բնակիչ: Նախնիները եկել են Արմ. Հայաստանից և Նախիջևանից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղից 7 կմ հս-արմ գտնվում են “Բարձրաշեն” գյուղատեղին (18-20դդ.) և “Թուխ Մանուկ” մատուռը (14-15դդ.):

**ԲԱՐՁՐԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Իսահակյանից 4 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: Բնակիչների նախնիները գաղթել են 1860թ. Արցախից, 1915-20թթ. Մուշից ու Բուլանըխից: 1873թ. ուներ 366, 1914-ին՝ 630, 1922-ին՝ 505, 1931-ին՝ 793, 1970-ին՝ 327, 1979-ին՝ 338,

2001-ին՝ 64 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղի տարածքում կան սև կարծր տուֆի և կրաքարի պաշարներ: Պահպանվել են սբ. Աստվածածին եկեղեցին (7դ.) և Պողոս-Պետրոս մենաստանը (10-13դդ.), որը կիսականգուն է: Կան հին բնակավայրի ավերակներ:

**ԲԱՐՁՐԱՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Մուցք**:

**ԲԱՐՁՐԱՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 57 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ: Բնակչությունը՝ 1897թ.-244, 1926թ.-349, 1939թ.-406, 1959թ.-299, 1970թ.-218, 1979թ.-144, 1989թ.-162, 2001թ.-168, 2004թ.-171 բնակիչ, որոնց մի մասը 1866թ. եկել է Շինուհայրից: 1931թ. Զանգեզուրի աղետաբեր երկրաշարժի հետևանքով հին գյուղը ամբողջովին ավերվել է: Նոր գյուղը կառուցվել է սարավանդի վրա: **Բ.** է վերանվանվել 1940թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում և շրջակայքում կան հին գյուղատեղիներ, "Բղենո Նորավանք" վանքը (936թ.) և Քրատակի սբ. Մինաս եկեղեցին (**Երիցաթումբ**):

**ԲԱՐՁՐՈՒՆԻ**- գյուղ Վայոց ձորի մարզում: Գտնվում է Վայոց ձորի լեռների հարավահայաց լանջին, ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 41 կմ հվ-արլ.: Բնակիչների նախնիները հիմնականում գաղթել են Սալմաստից 1829թ.: 1897թ. ուներ 809, 1926-ին՝ 623, 1939-ին՝ 1050, 1959-ին՝ 557, 1970-ին՝ 556, 1979-ին՝ 495, 2001-ին՝ 437, 2004-ին՝ 397 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է մեղվաբուծությամբ, դաշտավարությամբ, անասնաբուծությամբ և այգեգործությամբ: Այստեղ պահպանվել են 1884թ. և 13-14դդ. եկեղեցիներ, 19դ. մատուռներ, 13-17դդ. խաչքարեր, իսկ 1 կմ հվ-արլ.՝ սբ. Գևորգ եկեղեցի:

**ԲԱՐՈԺ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Արևուտ**:

**ԲԵՆԴԻԿ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ , հեռավորությունը ք.Շամլուղից՝ 2 կմ հվ-արմ.: 1897թ. ուներ 178, 1926-ին՝ 229, 1939-ին՝ 301, 2004-ին՝ 67 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ:

**ԲԵՆԻԱՄԻՆ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1540 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12 կմ հվ.: 1897թ. ուներ 561, 1926-ին՝ 442, 1939-ին՝ 604, 1959-ին՝ 546, 1970-ին՝ 531, 1979-ին՝ 500, 1989-ին՝ 751, 2001-ին՝ 702, 2004-ին՝ 711 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղում են զըտ-նըվում "Ժամ" եկեղեցին և "Թուխ Մանուկ" մատուռը:

**ԲԵՆՏՈՆԻՏԱՅԻՆ ԿԱՎԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Ազատամուտ**:

**ԲԵՐԴ**- քաղաք Տավուշի մարզում, Տավուշ գետի հովտում, մարզկենտրոնից 54 կմ արլ.: Բնակավայրը գըտնըվում է ծովի մակերևույթից 930 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 293, 1897-ին՝ 1345, 1926-ին՝ 2358, 1939-ին՝ 4422, 1959-ին՝ 5845, 1976-ին՝ 8520, 1989-ին՝ 10368, 1991-ին՝ 11200, 2001-ին՝ 8810, 2004-ին՝ 8700 բնակիչ: **Բ**-ում զարգացած է սննդի արդյունաբերությունը: Բնակչությունը զբաղվում է նաև անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ, խաղողագործությամբ, ծխախոտի և

կարտոֆիլի մշակությամբ: Քաղաքից հվ., Տավուշ գետի ձախ ափին, գտնվում են Կյուրիկյան թագավորության Տավուշ բերդի (10-14դդ.) ավերակները: 3 կմ արմ. գտնվում է “Մայր Վանք” եկեղեցին (1236թ.), հս-արմ.մասում՝ սբ.Սարգիս և “Քույր Խաթուն” (12-20դդ.) եկեղեցիները (**Ոլորուտ**, **Բերդագյուղ**):

**ԲԵՐԴԱԳՅՈՒՂ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Բերդավան**:

**ԲԵՐԴԱԳՅՈՒՂ**- նախկինում գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Բերդ**:

**ԲԵՐԴԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 2020 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 38կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1886թ.-363, 1897թ.-509, 1926թ.-269, 1939թ.-414, 1964թ.-558, 1970թ.-772, 1979թ.-871, 1989թ.-180, 2001թ.-218, 2004թ.-252 բնակիչ: **Բ.** է վերանվանվել 08.08.1991թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Բ.** ունի պանրի գործարան: Գյուղում է գտնվում “Ավազնոց” վանական կառույցը (մջնդ.) (**Թափարլու**):

**ԲԵՐԴԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Կողբ գետի ափին, մարզկենտրոնից 54 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 650 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 1078, 1897-ին՝ 1038, 1926-ին՝ 1384, 1939-ին՝ 1874, 1959-ին՝ 2427, 1970-ին՝ 2780, 1979-ին՝ 3011, 1989-ին՝ 3531, 2001-ին՝ 3287, 2004-ին՝ 3392 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 18-19դդ. գաղթել է Արցախից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Գյուղը նախկինում գտնվել է 1,5 կմ հվ-արլ. ընկած “Թխաձոր” կոչված վայրում, իսկ 1898թ. տեղափոխվել և գրավել է այժմյան տարածքը: Նախկին տեղում կան մի փոքրիկ բերդի ավերակներ, որի անունով էլ գյուղն անվանվել է Բերդա, Բերդագյուղ: Գյուղի տարածքում կան մ.թ.ա. 2-րդ հզմ. “Հալնջաքար” և 13դ. “Չիթհանքի” ամրոցներ, 18-19դդ. սբ. Նշան եկեղեցի, մատուռ և գերեզմանոց (**Բերդագյուղ**):

**ԲԵՐԴԻԿ**- գյուղ Արարատի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 860 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հս-արլ.: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 137, 1897-ին՝ 341, 1926-ին՝ 172, 1939-ին՝ 273, 1959-ին՝ 622, 1970-ին՝ 736, 1979-ին՝ 790, 2001-ին՝ 917, 2004-ին՝ 1000 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյից և Սալմաստից, իսկ ավելի ուշ՝ Բիթլիսից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, դաշտավարությամբ և պտղաբուծությամբ:

**ԲԵՐԴԿԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Ձորագյուղ**:

**ԲԵՐԴԿՈՒՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հս-արմ. ափին, մարզկենտրոնից 14 կմ հս-արմ.: Բընակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1930 մ բարձրության վրա: 2001թ. ուներ 253, 2004-ին՝ 265 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղի հս-արլ. մասում է գտնվում “Սպիտակ բերդ” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), գյուղի մեջ կա 11-12դդ. եկեղեցի, շուրջը գերեզմանոց (12-20դդ.), տապանաքարեր (16-17դդ.) (**Ազատ**):

**ԲԵՐՔԱԲԵՐ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստևի ձախակողմյան վտակ Ոսկեպար գետի ձորում, մարզկենտրոնից 22 կմ հս.: Բնակավայրը գտնվում է ծովի

մակերևույթից 700 մ բարձրության վրա: **Բ.** է վերանվանվել 25.01. 1978թ.: Հին հայաբնակ գյուղ է, հիշատակվել է նաև որպես ավան: 1831թ. ուներ 312, 1897-ին՝ 276, 1926-ին՝ 281, 1939-ին՝ 357, 1959-ին՝ 478, 1970-ին՝ 505, 1979-ին՝ 501, 1989-ին՝ 526, 2001-ին՝ 491, 2004-ին՝ 452 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և ծխախոտագործությամբ: Ունի ազգագրական թանգարան: Գյուղի և ջրամբարի միջև կա մ.թ.ա. 3-րդ հզմ. դամբարանադաշտ (**Պիպիս**, **Ջողազ**):

**ԲԵՐՔԱՆՈՒՇ**- գյուղ Արարատի մարզում, այգեզարդ հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 835 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 2 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1829թ.: 1831թ. ուներ 145, 1897-ին՝ 580, 1926-ին՝ 510, 1939-ին՝ 546, 1959-ին՝ 1126, 1970-ին՝ 1345, 1979-ին՝ 1507, 2001-ին՝ 1808, 2004-ին՝ 1772 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և դաշտավարությամբ: Գյուղի մեջ կա 20դ. եկեղեցի և սբ. Կարապետ մատուռ (19դ.):

**ԲԵՐՔԱՇԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 19 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 900 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1928թ.: 1939թ. ուներ 220, 1959-ին՝ 349, 1970-ին՝ 475, 1979-ին՝ 481, 2001-ին՝ 544, 2004-ին՝ 599 բնակիչ: Բնակիչների նախնիները հիմնականում 1926-28թթ. Թուրքիայից (Կոստանդնուպոլսից) և Հունաստանից ներգաղթածներ են: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, դաշտավարությամբ և անասնապահությամբ:

**ԲԵՐՔԱՌԱՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան արմ. ստորոտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 54 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2090 մ: 1897թ. ուներ 501, 1926-ին՝ 873, 1939-ին՝ 1131, 1959-ին՝ 949, 1970-ին՝ 853, 1979-ին՝ 824, 2001-ին՝ 925, 2004-ին՝ 1029 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղն ունի 19դ. եկեղեցի:

**ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ**- գյուղ Լոռու մարզում, Լոռիգետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1615 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45 կմ հս-արմ.: 1926թ. ուներ 317, 1939-ին՝ 271, 1959-ին՝ 257, 1970-ին՝ 266, 1979-ին՝ 328, 2001-ին՝ 243, 2004-ին՝ 256 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի մոտ կան մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոցի ավերակներ:

**ԲԼԵԿԱՆՑ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Բալաք**:

**ԲԼԽԵՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Շենավան**:

**ԲՅՈՒՐԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ակունք**:

**ԲՅՈՒՐԱԿԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արլ. լանջին, Ամբերդ գետակի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1475 մ: 1831թ. ուներ 40, 1897-ին՝ 1354, 1926-ին՝ 2123, 1939-ին՝ 2606, 1959-ին՝ 2435, 1970-ին՝ 3185, 1979-ին՝ 3344, 2001-ին՝ 4312, 2004-ին՝ 4606 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղաբու-

ծությամբ: Գյուղն ունի 10դ. սբ. Հովհաննես, 5-6դդ. "Արտավազդիկ" և 1026թ. սբ. Աստվածածին եկեղեցիներ: Այստեղ է գտնվում նաև "Հայկաշեն" կաթողիկոսարան-առանձնատունը (1972թ.) և "Բյուրականի աստղադիտարան" համալիրը (1945թ.): **Բ**-ից 3 կմ հս. գտնվում է "Այծաբերդ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), մի փոքր դեպի հվ.՝ "Անտառուտ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 2 կմ հվ-արմ.՝ "Սոփանես" (10-18դդ.) և "Փոս" (10-18դդ.) գյուղատեղիները, 2 կմ հս.՝ "Ճգնավոր" քարայր-կացարանը (13-19դդ.) և "Ցից քար" զոհարանը (մ.թ.ա. 2-րդ հզմ.):

**ԲՅՈՒՐԱԿՆ**- գյուղ Շիրակի մարզում, Շիրակի դաշտի հս-արմ. ծայրամասում, Ախուրյանի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1730 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս-արմ.: **Բ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1886թ. ուներ 673, 1897-ին՝ 958, 1926-ին՝ 1142, 1939-ին՝ 1388, 1959-ին՝ 1529, 1970-ին՝ 2459, 1979-ին՝ 2580, 1989-ին՝ 305, 2001-ին՝ 781, 2004-ին՝ 890 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի տարածքում կան եկեղեցու և հայկական հին բնակավայրի ավերակներ (**Գյուլլիբուլաղ**):

**ԲՅՈՒՐԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 865 մ, մարզկենտրոնից՝ 8 կմ հս-արմ., բարեբեր հարթավայրում: Գյուղը հիմնադրվել է 1829թ., իսկ 25.01.1978թ. վերանվանվել է **Բ.**: 1831թ. ուներ 342, 1897-ին՝ 192, 1926-ին՝ 206, 1939-ին՝ 417, 1959-ին՝ 826, 1970-ին՝ 915, 1979-ին՝ 958, 2001-ին՝ 1336, 2004-ին՝ 1338 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղն ունի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (19դ.) (**Բամբակավան**):

**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ**- քաղաք Կոտայքի մարզում, Աբովյան-Արզնի խճուղուց դեպի աջ, Հրազդանի ձորաբերանին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 27 կմ հվ-արմ.: Հիմնադրվել է 1945թ., որպես Արզնիի ապակու տարաների գործարանի բանավան և կոչվել է Արզնի բանավան, 1974թ. դարձել է քաղաքատիպ ավան, 04.12.1995թ.՝ քաղաք: 1979թ. ուներ 6000, 1989-ին՝ 10373, 1991-ին՝ 10800, 2001-ին՝ 8152, 2004-ին՝ 8002 բնակիչ: **Բ**-ի "Արզնի" հանքային ջրերի աղբյուրները ունեն 15 լ/վրկ ելք: Քաղաքում գործում են բյուրեղապակու, Նուռնուսի քարի մշակման և այլ գործարաններ (**Արզնի**):

**ԲՆՈՒՆԻՍ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան վտակ Սիսիան գետի օժանդակ Այրիգետի ձախ կողմում, մարզկենտրոնից 114 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1820 մ բարձրության վրա: Գյուղը վերաշինվել է 1866թ. Ախլաթյան և Նախիջևանի Լաքաթաղ գյուղերից տեղափոխված բնակիչների ձեռքով: 1873թ. ուներ 199, 1897-ին՝ 334, 1926-ին՝ 556, 1939-ին՝ 419, 1959-ին՝ 288, 1970-ին՝ 160, 1979-ին՝ 138, 2001-ին՝ 163, 2004-ին՝ 193 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի մշակությամբ և մեղվաբուծությամբ: 1931թ. երկրաշարժից ավերվել է 13դ. կոթող-հուշարձանը՝ նվիրված Մանկիկ իշխանին: Գյուղի հս-արմ. ծայրին պահպանվել են Օրբելյան իշխանի մահարձանը (1321թ.) և ավե-

րակ եկեղեցու մնացորդները: **Բ.** կան 14դ. եկեղեցի խաչքարերով և մի քանի գյուղատեղիներ:

**ԲՈԳԴԱՆՈՎԿԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Նորաշեն**:

**ԲՈՋԻԳԵՂ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Մարգահովիտ**:

**ԲՈՂՈւԹԼՈւ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արագածոտնի մարզում, տե՛ս **Արտենի**:

**ԲՈՎԱՁՈՐ**- գյուղ Լոռու մարզում, Լեջան լեռան ստորոտում, Ուռուտ գետի ստորին հոսանքի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1415 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 31 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1831թ.-18, 1897թ.-278, 1926թ.-362, 1939թ.-427, 1959թ.-277, 1970թ.-309, 1979թ.-301, 1989թ.-192, 2001թ.-326, 2004թ.-297 բնակիչ: Նախնիները եկել են Ռուսաստանի Սարատովի և Կուրսկի նահանգներից: 08.08.1991թ. վերանվանվել է **Բ.**: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ (**Մաքսիմ Գորկի**):

**ԲՈՐԻՍՈՎԿԱ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Շրուկ**:

**ԲՋՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի աջ ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1610 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 14 կմ հվ-արմ.: 1829-30թթ. ուներ 364, 1873-ին՝ 1056, 1931-ին՝ 2074, 1959-ին՝ 1589, 1970-ին՝ 1918, 1979-ին՝ 1738, 1989-ին՝ 2393, 2001-ին՝ 2882, 2004-ին՝ 2889 բնակիչ, որոնց մի մասի նախնիները այստեղ են հաստատվել 1915-20թթ. հին Բայազետի Արծափ գյուղից, Վանից և Պոլսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և թռչնաբուծությամբ: Խմելու սառնորակ ջրից բացի, **Բ.** հայտնի է նաև “Բջնի” հանքային ջրով: Գյուղի կենտրոնում են գտնը-վում սբ. Գևորգ (13դ.) և սբ. Աստվածածին (1031թ.) եկեղեցիները, իսկ հս-արլ. կողմում՝ սբ. Սարգիս եկեղեցին (7դ.):

**ԲՌՆԱԿՈԹ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ կողմում, մարզկենտրոնից 109 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 263, 1873-ին՝ 1213, 1922-ին՝ 2200, 1959-ին՝ 1823, 1970-ին՝ 1981, 1979-ին՝ 1931, 2001-ին՝ 2103, 2004-ին՝ 2327 բնակիչ, որոնց մի մասի նախնիները տեղափոխվել են Արցախի գավառներից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, անասնապահությամբ, թռչ-նաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կան սբ. Գրիգոր (1704թ.) և սբ. Աստվածածին եկեղեցիներ, “Կրո”, “Ծաղկավան”, “Կիլեվանց”, “Գյունեյ”, “Կրփաձոր”, “Քարայր” և “Խաչեր” գյուղատեղիներ:

**ԲՌՈւՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ակներ**:

**ԲՈւԺԱԿԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Ծաղկունյաց լեռների հվ. լանջին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 34 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 72, 1873-ին՝ 268, 1922-ին՝ 384, 1939-ին՝ 1190, 1959-ին՝ 1008, 1970-ին՝ 1298, 1979-ին՝ 1201, 2001-ին՝ 1724, 2004-ին՝ 1763 բնակիչ, որոնց մի մասի նախնիները, սկսած 1829թ-ից այստեղ են գաղթել Բիթլիսից, Արծափից, Ալաշկերտից, Մուշից, Սասունից, ինչպես նաև Խոյից ու Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղից 3 կմ հս., անտառում է

գտնվում “Թեղենյաց” վանքի համալիրը (7-15դդ.); 7դ. “Կաթողիկե” և 10դ. եկեղեցիները, արլ. կողմում՝ “Թեղենիս” գյուղատեղին (7դ.) իր 7դ. եկեղեցիով:

**ԲՈՒՐԱՍՏԱՆ**- գյուղ Արարատի մարզում, Ազատ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 4,5 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 261, 1916-ին՝ 1440, 1923-ին՝ 891, 1939-ին՝ 1226, 1959-ին՝ 1459, 1970-ին՝ 1761, 1979-ին՝ 1853, 2001-ին՝ 2206, 2004-ին՝ 1791 մարդ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի հվ. մասում է գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (19դ.), հվ-արմ.՝ սբ.Հակոբ եկեղեցին (1642թ.):

# Գ

**ԳԱԳԱՐԻՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Հրազդան գետի ձախափնյակում, Սևան քաղաքից 9 կմ արմ.: Երևան-Սևան երկաթուղու վրա, ավտոմայրուղու ձախ կողմում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: Կազմակերպվել է իբրև բանավան Աթարբեկյանի ՀԷԿ-ին կից 1955-ին և հետագայում կոչվել է Գագարինավան: 1961թ.-ից մինչև 04.12.1995թ. համարվել է քտա: 1979թ. ուներ 953, 1989-ին՝ 1643, 1991-ին՝ 1400, 2001-ին՝ 1498 բնակիչ (**Աթարբեկյանի ՀԷԿ-ին կից**, **Գագարինավան**):

**ԳԱԳԱՐԻՆԱՎԱՆ**- նախկինում ավան Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գագարին**:

**ԳԱԶԱՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԸՆ-ՏԵՍՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ** - գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Անտառաշեն**:

**ԳԱՅ**- գյուղ Արմավիրի մարզում, Մեծամոր գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 39 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 834 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 870, 1897-ին՝ 301, 1926-ին՝ 354, 1939-ին՝ 395, 1959-ին՝ 596, 1970-ին՝ 2541, 1979-ին՝ 2705, 2001-ին՝ 3470, 2004-ին՝ 3662 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. գաղթել է Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և խոզաբուծությամբ: Ունի սբ. Սարգիս եկեղեցի (1894թ.): Գյուղի տարածքում նշմարվում են մ.թ.ա. 3-րդ հզմ. բնակավայրի մնացորդներ:

**ԳԱՅԼԱԲԵՐԴ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գեղանուշ**:

**ԳԱՆՁԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գավառագետի աջ ափին, մարզկենտրոնից 3 կմ հվ-արմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 08.08.1991թ.: 1831թ. ուներ 489, 1897-ին՝ 1515, 1926-ին՝ 1883, 1939-ին՝ 2206, 1959-ին՝ 2306, 1970-ին՝ 2878, 1979-ին՝ 3392, 2001-ին՝ 4237, 2004-ին՝ 4595 բնակիչ, որոնց նախնիները ներգաղթել են Բայազետի, Մուշի, Ալաշկերտի գյուղերից: Բնաչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ, բանջարաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղում կան սբ. Աստվածածին (4-5դդ.) և սբ. Գևորգ (9-րդ դ.) եկեղեցիներ, գյուղի արլ. եզրին է

“Խաչեր” գերեզմանոցը (9-20դդ.) (**Բատիկյան**):

**ԳԱՆՁԱՔԱՐ**- գյուղ Տավուշի մարզում, Ուրթիջուր գետի ափին, մարզկենտրոնից 5 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 327, 1897-ին՝ 1524, 1926-ին՝ 1942, 1939-ին՝ 2458, 1959-ին՝ 2445, 1970-ին՝ 2961, 1989-ին՝ 2967, 2001-ին՝ 3451, 2004-ին՝ 3424 բնակիչ, որոնք եկել են նույն մարզի Ներքին Աղդան գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղի հվ-արլ. մասում են գտնվում “Թանիկ” ամրոցը (վաղ մջնդ.), “Խոջաբլուր” գյուղատեղին, սբ. Գևորգ եկեղեցին (12-20դդ.), մատուռ և խաչքարերով գերեզմանոց (մջնդ.): Տեսիլք լեռան լանջին է զըտ-նըվում “Բուղուրի եղցի” եկեղեցին (12դ.), 4 կմ հվ.՝ “Գմբեթ” եկեղեցին (12-13դդ.), 6 կմ արմ.՝ “Աղջկա բերդ” ամրոցը (10-13դդ.), 2 կմ արլ.՝ սբ. Կիրակի մատուռը (1286թ.):

**ԳԱՌՆԱՀՈՎԻՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 63 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2150 մ: 1831թ. ուներ 70, 1897-ին՝ 669, 1926-ին՝ 636, 1939-ին՝ 916, 1959-ին՝ 637, 1970-ին՝ 692, 1979-ին՝ 503, 2001-ին՝ 440, 2004-ին՝ 508 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղն ունի 7դ. սբ. Հովհաննես եկեղեցի, 1,5 կմ հվ-արմ. գտնվում է 17-18դդ. “Ծաղկոց” գյուղատեղին, գյուղի մոտ՝ “Գառնիհովիտ” հին բերդատեղին (մ.թ.ա. 2-րդ հզմ.) իր եկեղեցիով, 1 կմ արլ.՝ 10-13դդ. սբ.Հովհաննես եկեղեցին:

**ԳԱՌՆԱՌԻՃ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճի հս-արմ. ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 37 կմ հս-արմ.: 08.08.1991թ. վերանվանվել է **Գ.**: 1886թ. ուներ 222, 1897-ին՝ 382, 1926-ին՝ 463, 1939-ին՝ 577, 1959-ին՝ 546, 1970-ին՝ 856, 1979-ին՝ 996, 1989-ին՝ 700, 2001-ին՝ 260, 2004-ին՝ 221 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի տարածքում գտնվում է 6-10դդ. կիսավեր եկեղեցի: Գյուղի մոտակայքում են գտնվում “Սեպ” ամրոցը և “Կարմրաշեն” գյուղատեղին (**Կուզիքենդ**):

**ԳԱՌՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, Ազատ գետի աջ ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 63 կմ հվ.: Ավերվել է 1679թ. աղետաբեր երկրաշարժից և նորից վերականգնվել է 1828-29թթ.՝ Պարսկահայաստանից գաղթած հայերի կողմից: 1897թ. ուներ 1507, 1926-ին՝ 2812, 1939-ին՝ 3083, 1959-ին՝ 3176, 1970-ին՝ 4554, 1979-ին՝ 5016, 2001-ին՝ 7215, 2004-ին՝ 7678 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Ամրոցից ու 1-ին դ. հեթանոսական տաճարից բացի, այստեղ են գտնվում 4դ. միանավ եկեղեցու ավերակները, սբ. Պողոս-Պետրոս (12-13դդ.) և սբ. Սարգիս (11դ.) եկեղեցիները, 12դ. կենտրոնագմբեթ Մաշտոց Հայրապետի եկեղեցին, “Թուխ Մանուկ” և սբ. Սարգիս (9դ.) մատուռները, Գառնիի կամուրջը (11դ.):

**ԳԱՎԱՌ**- քաղաք Գեղարքունիքի մարզում, մարզի կենտրոնն է: Գտնվում է Գավառագետի ափին՝ Սևանա լիճ նրա թափվելու տեղից 8 կմ հեռու: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1985 մ, հեռավորությունը Երևանից՝ 92 կմ: Հին ժամանակներից քաղաքը հայտնի է Գավառ անունով: **Գ.** ամայանում է Շահ-Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթի հետևանքով: Նա նորից վերակենդանանում է 19-րդ դ., երբ այստեղ բնակություն հաստատեցին 1829-30թթ. Բայազետից ներգաղթած 240 ընտանիք, որոնք բնակավայրը կոչեցին Նոր Բայազետ: 04. 12.1995թ. վերանվանվել է **Գ.**: Քաղաք է 1924թ.-ից: Բնակչությունը՝ 1831թ.-1346, 1897թ.-8751, 1974թ.-21382, 1989թ.-31234, 1991թ.-32300, 2001թ.-26621, 2004թ.-26000 բնակիչ: Քաղաքում զարգացած է արդյունաբերությունը: Ք-ի գյուղատնտեսության ճյուղերից են՝ դաշտավարությունը, անասնաբուծությունը և թռչնաբուծությունը: **Գ.** բխում են հանքային բուժիչ (ածխաթթվային) առատ աղբյուրներ, շրջակայքում տարածված են բազալտներ, որոնց պաշարները գործնականում անսպառ են: Հացառատ թաղամասի կենտրոնում է գտնվում եկեղեցական համալիր՝ Հացառատի սբ. Աստվածածին և սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները (7-19դդ.): Ք-ի մեջ կան սբ. Աստվածածին (1902-1905թթ.) և սբ.Հովհաննես (1848թ.) եկեղեցիները (**Գեղարքունի**, **Նոր Բայազետ**, **Կամո**):

**ԳԱՐԳԱՌ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 158, 1886-ին՝ 1005, 1926-ին՝ 1600, 1939-ին՝ 1523, 1959-ին՝ 1313, 1970-ին՝ 1431, 1979-ին՝ 1395, 2001-ին՝ 1546, 2004-ին՝ 1318 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, կարտոֆիլի և հացահատիկի մշակությամբ: Գյուղի մոտ են գտնվում սբ.Ամենափրկիչ մատուռը (12-13դդ.) և սբ. Հովհաննես եկեղեցին (19-20դդ.):

**ԳԵՂԱԴԻՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հս. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 59 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2025 մ: 1873թ. ուներ 141, 1897-ին՝ 257, 1914-ին՝ 290, 1926-ին՝ 250, 1939-ին՝ 464, 1959-ին՝ 457, 1979-ին՝ 500, 2001-ին՝ 649, 2004-ին՝ 668 բնակիչ, որոնց նախնիները 1928-30թթ. գաղթել են Արմ. Հայաստանի և Կարսի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում կա 19դ. եկեղեցի: Գյուղից դեպի հվ-արմ. պահպանվում են հին բերդի ավերակներ, դեպի արլ.՝ Տրդատ թագավորի աղջկա գերեզմանը:

**ԳԵՂԱԴԻՐ**- գյուղ Կոտայքի մարզում, Ողջաբերդի լեռների արմ. լանջին, Երևան-Գառնի մայրուղու վրա, մարզկենտրոնից 54 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1880 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 141, 1897-ին՝ 257, 1914-ին՝ 290, 1926-ին՝ 250, 1939-ին՝ 464, 1959-ին՝ 457, 1979-ին՝ 500, 1989-ին՝ 589, 2001-ին՝ 676, 2004-ին՝ 835 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1917-18թթ. այստեղ են գաղթել Վանի, Ռշտունիքի, Խիզանի, Աբաղայի, Մոկսի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Գյուղից 1 կմ հվ-արմ. կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. կիկլոպյան ամրոցի ավերակներ և մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտ:

**ԳԵՂԱԿԵՐՏ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 18 կմ հս-արլ.: **Գ.** է վերանվանվել 14.12.2004թ.: 1831թ. ուներ 400, 1897-ին՝ 1180, 1926-ին՝ 1222, 1939-ին՝ 1211, 1959-ին՝ 1507, 1970-ին՝ 2570, 1979-ին՝ 2070, 2001-ին՝ 2458, 2004-ին՝ 2517 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829թ. գաղթել է Խոյի Սամաղար գյուղից, որոշ թվով էլ Մակուից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա սբ. Հարություն եկեղեցի (**Սամաղար**):

**ԳԵՂՀՈՎԻՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մարտունի գետի աջ ափին, մարզկենտրոնից 37 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 2060 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 303, 1914-ին՝ 2131, 1926-ին՝ 2273, 1939-ին՝ 2762, 1959-ին՝ 2861, 1970-ին՝ 4246, 1979-ին՝ 4279, 1989-ին՝ 4866, 2001-ին՝ 5425, 2004-ին՝ 6184 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-30-ական թթ. այստեղ են գաղթել Արմ. Հայաստանի Ալաշկերտի, Մուշի և այլ շըր-ջանների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտի, կարտոֆիլի, բանջարեղենի և հացահատիկի մշակությամբ: Գյուղի շրջակայքում կան բազմաթիվ հնավայրեր՝ արմ. մասում “Ալբերդ” ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.- մ.թ. 9-րդ դ.), հվ-արլ. կողմում՝ “Զոջ կող” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.): Գյուղի մեջ է սբ. Գևորգ (15-16դդ.), հվ.՝ սբ. Ստեփանոս (13դ.) եկեղեցիները, “Թուխ Մանուկ” մատուռը, 3 կմ արմ.՝ “Քռա” վայրում՝ հին գյուղատեղին (**Վերին Կզնուտ**):

**ԳԵՂԱՁՈՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 55 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2190 մ: 1831թ. ուներ 68, 1897-ին՝ 618, 1914-ին՝ 894, 1926-ին՝ 623, 1939-ին՝ 1059, 1959-ին՝ 694, 1970-ին՝ 908, 1979-ին՝ 847, 2001-ին՝ 1099, 2004-ին՝ 1192 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշի շրջանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և բանջարեղենի մշակությամբ: Գյուղում է գտնվում 1927թ. սբ. Գևորգ եկեղեցին:

**ԳԵՂԱՄԱԲԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Վարդենիս-Սոթք ճանապարհից աջ, մարզկենտրոնից 83 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2025 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1897թ. ուներ 219, 1926-ին՝ 242, 1939-ին՝ 408, 1959-ին՝ 371, 1970-ին՝ 522, 1979-ին՝ 663, 1989-ին՝ 37, 2001-ին՝ 115, 2004-ին՝ 142 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, ծըխախոտի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղից արլ. կա քարայր-կացարանների համալիր (17-18դդ.) (**Ղայաբաշ**):

**ԳԵՂԱՄԱՍԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների ստորոտին, Գեղամասար գետի ափին, մարզկենտրոնից 101 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա: 08.08. 1991թ. վերանվանվել է **Գ.**: 1831թ. Ուներ 251, 1897-ին՝ 113, 1926-ին՝ 612, 1939-ին՝ 1076, 1959-ին՝ 1426, 1970-ին՝ 2187, 1979-ին՝ 2291, 2001-ին՝ 1080, 2004-ին՝ 2050 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, ծխախոտագործությամբ և անասնապահու-

թյամբ: Գյուղից հս. կա եկեղեցի և խաչքարերով գերեզմանոց (15-17դդ.), 4 կմ հվ-արմ.՝ “Սպիտակ Վանք” եկեղեցի (13դ.) (**Շիշկայա**):

**ԳԵՂԱՄԱՎԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Հրազդան գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 37 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 422, 1897-ին՝ 1410, 1926-ին՝ 1730, 1939-ին՝ 1798, 1959-ին՝ 1137, 1970-ին՝ 1396, 1979-ին՝ 1915, 1989-ին՝ 2080, 2001-ին՝ 1773, 2004-ին՝ 1876 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. այստեղ է գաղթել Պարսկահայաստանի Մակուի գավառի Անձուկ և Արմ. Հայաստանի Ալաշկերտի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի հվ-արմ. մասում կա սբ.Հովհաննես եկեղեցի, արմ. կողմում՝ սբ.Աստվածածին մատուռ:

**ԳԵՂԱՆԻՍՏ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 870 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 200, 1897-ին՝ 235, 1926-ին՝ 471, 1939-ին՝ 715, 1970-ին՝ 1602, 1979-ին՝ 1877, 2001-ին՝ 2471, 2004-ին՝ 2106 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և ծաղկաբուծությամբ:

**ԳԵՂԱՆԻՍՏ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 19 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 117, 1897-ին՝ 825, 1926-ին՝ 1171, 1939-ին՝ 1213, 1959-ին՝ 771, 1970-ին՝ 944, 1979-ին՝ 964, 2001-ին՝ 1150, 2004-ին՝ 1115 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. և 1918թ. գաղթել են Մուշից, Խնուսից, Ալաշկերտի գավառի Բաղնոց ու Վերին Բասենի շրջանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղն ունի 1711թ. “Ժամ” և 1852թ. մեկ այլ եկեղեցի; “Հմայիլ”, “Իրիցտան Ավետարան”, “Բավոյի սուրբ” և Գրիգոր Նարեկացի մատուռներ:

**ԳԵՂԱՆՈՒՇ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրու լեռների ճյուղավորումներից մեկի լանջին, մարզկենտրոնից 4 կմ հվ., ծովի մակերևույթից 900 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 1949թ.: 1831թ. ուներ 5, 1897-ին՝ 695, 1926-ին՝ 882, 1939-ին՝ 885, 1959-ին՝ 388, 1970-ին՝ 362, 1979-ին՝ 242, 2001-ին՝ 280, 2004-ին՝ 222 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և դաշտավարությամբ: Գյուղում կան սբ. Հռիփսիմե և 15-16դդ. կառուցված եկեղեցիներ, շրջակայքում՝ “Սրահակ”, “Իշխանագահ”, “Սագալիճ” բնակավայրերի ավերակներ (**Գայլաբերդ**, **Գըթգոմ**):

**ԳԵՂԱՇԵՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Գեղամա լեռների արմ. փեշերին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 50 կմ հվ: **Գ.** է վերանվանվել 21.10.1967թ.: 1831թ. ուներ 69, 1897-ին՝ 1085, 1926-ին՝ 1759, 1939-ին՝ 2351, 1959-ին՝ 2451, 1970-ին՝ 2829, 1979-ին՝ 2959, 1989-ին՝ 3352, 2001-ին՝ 4020, 2004-ին՝ 4176 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-30թթ. այստեղ են գաղթել Ալաշկերտի, Մուշի, ինչպես նաև Խոյի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ,

ծխախոտագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ:Գյուղում կա 1863թ. եկեղեցի և մատուռ “Կապույտ խաչ” խաչքարով (10դ.), մոտ 3 կմ արլ.՝ “Քյամալ” գյուղատեղի, 3 կմ հվ.՝ սբ. Սարգիս մատուռը (17դ.) (**Ճաթղռան**, **Հրազդան**):

**ԳԵՂԱՍԱՐ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 73, 1897-ին՝ 628, 1926-ին՝ 895, 1939-ին՝ 932, 1959-ին՝ 981, 1979-ին՝ 957, 2001-ին՝ 842, 2004-ին՝ 974 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասենի Ասվանջա գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, պտղաբուծությամբ և ճակնդեղագործությամբ: Գյուղում է գտնվում սբ. Սարգիս եկեղեցին (19դ.), իսկ 2 կմ հեռու՝ սբ. Աստվածածին սրբավայրը:

**ԳԵՂԱՎԱՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի ձախ ափին, Գեղի գյուղից 5 կմ արլ., ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա: **Գ.** վերանվանվել է 1991թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Ներքին Փիրլու**):

**ԳԵՂԱՏԱՓ**- գյուղ Տավուշի մարզում, Խաչարձան գետի վերնագավառում, Խաչարձան գյուղից 2 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1897թ. ուներ 43, 1926-ին՝ 103, 1939-ին՝ 190, 1959-ին՝ 129, 1970-ին՝ 175, 1979-ին՝ 174, 1989-ին՝ 35, 2001-ին՝ 24 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Չիչակբուլաղ**):

**ԳԵՂԱՐԴ**- գյուղ Կոտայքի մարզում, Գեղամա լեռների լանջին, Ազատ գետի ակունքի մոտ: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 74 կմ հվ-արլ.: **Գ.** է վերանվանվել 04. 04.1946թ.: 1873թ. ուներ 221, 1897-ին՝ 426, 1926-ին՝ 184, 1939-ին՝ 356, 1959-ին՝ 191, 1970-ին՝ 221, 1979-ին՝ 218, 1989-ին՝ 231, 2001-ին՝ 337, 2004-ին՝ 463 բնակիչ, որոնց նախնիները 1915-18թթ. գաղթել են Վանի, Բերկրիի և Կարսի գյուղերից, մի մասն էլ 1933թ. այստեղ են տեղափոխվել Գավառի տարածաշրջանի Սարուխան գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Գյուղում կա 9դ. եկեղեցի, գյուղից արլ.՝ ձորամիջում, Գեղարդի վանքը (10-17դդ.), 1,5 կմ հս.՝ “Քոզ քյուսա” գյուղատեղին և հին ջրմուղի հետքեր (**Արդոս**):

**ԳԵՂԱՐՈՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 50 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 2060 մ: 1873թ. ուներ 218, 1897-ին՝ 283, 1926-ին՝ 604, 1939-ին՝ 768, 1959-ին՝ 504, 1970-ին՝ 595, 1979-ին՝ 482, 2001-ին՝ 547, 2004-ին՝ 590 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ.Հայաստանի տարբեր շրջաններից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղում կա 1892թ. սբ. Գրիգոր եկեղեցի: **Գ**-ից 1 կմ արլ. գտնվում է “Տաթևի գյուղ” գյուղատեղին (7-20դդ.), 1,5 կմ հս.՝ “Աշոտ Երկաթ” և “Պոլոզ սար” ամրոցները (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.):

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻ**- պատմ. բնակավայր Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գավառ**:

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԲԵՐԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Հայրավանք**:

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գեղարքունիք գետի ափին, մարզկենտրոնից 8 կմ հվ., ծովի մակե-

րնույթից 2075 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 178, 1897-ին՝ 797, 1926-ին՝ 1040, 1939-ին՝ 1533, 1959-ին՝ 1437, 1970-ին՝ 1614, 1979-ին՝ 1647, 1989-ին՝ 1732, 2001-ին՝ 1880, 2004-ին՝ 2060 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Ալաշկերտի, Բուլանըղի և Մուշի գյուղերից, հիմնականում 1829-30թթ. և 1914-19թթ.: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա սբ. Գևորգ (17դ.) եկեղեցի: **Գ.** արմ. կողմում են գըտ-նըվում սբ. Հակոբ մատուռը, կիկլոպյան ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.), "Ձոր ավերակներ" բնակատեղին (մ.թ.ա. 2-րդ հզմ.): Գերեզմանոցում պահպանվել են 16դ. մի քանի խաչքարեր:

**ԳԵՂԱՔԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 81 կմ հվ-արլ.: **Գ.** է վերանվանվել 01.04. 1991թ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 180, 1897-ին՝ 306, 1926-ին՝ 210, 1939-ին՝ 265, 1959-ին՝ 334, 1979-ին՝ 468, 1989-ին՝ 286, 2001-ին՝ 129, 2004-ին՝ 147 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խոշոր եղջրավոր անասնաբուծությամբ և դաշտավարությամբ: Գյուղի մոտ կան կարմիր տուֆի հանքեր: **Գ.** արլ. մասում կա քանդակազարդ խաչքարերով ու արձանագիր տապանաքարերով հայկական գերեզմանոց (15-17դդ.) (**Սուբաթան**):

**ԳԵՂԻ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի միջին հոսանքի աջ ափին, մարզկենտրոնից 26 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1580 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 131, 1897-ին՝ 215, 1926-ին՝ 313, 1939-ին՝ 491, 1959-ին՝ 570, 1970-ին՝ 923, 1979-ին՝ 1115, 2001-ին՝ 227, 2004-ին՝ 113 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Այստեղ է գտնվում Սյունիք աշխարհի նշանավոր "Գեղի" բերդը, որի ավերակները հազիվ են նշմարվում, կան 10դ. եկեղեցու և գերեզմանոցի հետքեր:

**ԳԵՏԱԶԱՏ**- գյուղ Արարատի մարզում, Ազատ գետի աջ ափին, արգավանդ հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 930 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12 կմ հս.: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 28.05.1967թ. վերանվանվել է **Գ.**: 1831թ. ուներ 105, 1897-ին՝ 275, 1926-ին՝ 347, 1939-ին՝ 760, 1959-ին՝ 1290, 1970-ին՝ 1483, 1979-ին՝ 1569, 2001-ին՝ 2059, 2004-ին՝ 1949 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղից 1 կմ հս. գտնվում է "Տիկնունի" (Թագավորի պալատ) բնակատեղին (4-17դդ.): Գյուղի կենտրոնում է գըտնըվում սբ. Աստվածածին եկեղեցին (1841թ.), իսկ արլ. մասում՝ սբ. Սարգիս եկեղեցին (19դ.) (**Գետաշեն**):

**ԳԵՏԱԹԱՂ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան վտակ Լորաձորի ձախ ափին, մարզկենտրոնից 108 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1520 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 43, 1897-ին՝ 362, 1926-ին՝ 338, 1939-ին՝ 394, 1959-ին՝ 293, 1970-ին՝ 225, 1979-ին՝ 203, 2001-ին՝ 194, 2004-ին՝ 205 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Արցախի, Նախիջևանի, Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղն ունի 1702թ. սբ. Աստվածածին եկեղեցի և "Երեմիս", "Պղնձաշեն" գյուղատեղիներ:

**ԳԵՏԱՀՈՎԻՏ**- գյուղ Տավուշի մարզում, Սառնաջուր գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 2 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 700 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 118, 1897-ին՝ 559, 1926-ին՝ 665, 1939-ին՝ 893, 1959-ին՝ 1015, 1970-ին՝ 1331, 1979-ին՝ 1487, 1989-ին՝ 1778, 2001-ին՝ 2088, 2004-ին՝ 1937 բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ է փոխադրվել մոտակա Հին Թալա գյուղից և Արցախի Խաչեն ու Ջրաբերդ գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարեղենի, հացահատիկի և ծխախոտի մշակությամբ: Գյուղից 1,5 կմ հս-արլ. գտնվում է "Մրգաշեն" գյուղատեղին (12-13դդ.), որտեղ նշմարվում են եկեղեցիների և գերեզմանոցի ավերակներ, իսկ 11 կմ արմ.՝ "Կըռանա-Տուխտ" գյուղատեղին (12-13դդ.):

**ԳԵՏԱՄԵՋ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդանի կիրճում, գետի ձախ ափին, մարզկենտրոնից 40 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1340 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 21.06. 1948թ.: 1831թ. ուներ 27, 1897-ին՝ 285, 1926-ին՝ 238, 1939-ին՝ 600, 1970-ին՝ 583, 1979-ին՝ 608, 1989-ին՝ 697, 2001-ին՝ 712, 2004-ին՝ 801 բնակիչ, որոնց մի զգալի մասի նախնիները 1915-20թթ. այստեղ են գաղթել Արճեշի, Բիթլիսի, Մանազկերտի, Մուշի և Վանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և դաշտավարությամբ: Գյուղի մեջ կա 14դ. եկեղեցի (**Կեթրոն**):

**ԳԵՏԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Գետազատ**:

**ԳԵՏԱՇԵՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 13 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 171, 1897-ին՝ 779, 1926-ին՝ 1018, 1939-ին՝ 1190, 1959-ին՝ 1569, 1970-ին՝ 1917, 1979-ին՝ 1992, 2001-ին՝ 2205, 2004-ին՝ 2570 բնակիչ, որոնց նախնիները 1917-18թթ. գաղթել են Խոյից, Սալմաստից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, դաշտավարությամբ, թռչնաբուծությամբ և խորդենու մշակությամբ: Գյուղում կա սբ. Հովհաննես եկեղեցի:

**ԳԵՏԱՇԵՆ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Կիրանց**:

**ԳԵՏԱՎԱՆ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1470 մ, հեռավորությունը Սարատովկա գ-ից՝ 2 կմ հվ-արլ.: 1926թ. ուներ 32, 1939-ին՝ 237, 1959-ին՝ 151, 1970-ին՝ 137, 1979-ին՝ 105, 2001-ին՝ 84, 2004-ին՝ 80 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղից 3 կմ հվ-արլ. կան 10-11դդ. ամրոց և մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. բնակատեղի:

**ԳԵՏԱՐԳԵԼ**- գյուղ Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 40 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1970թ. ուներ 455, 1989-ին՝ 687, 2001-ին՝ 761, 2004-ին՝ 853 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ (**Ռադիոկայանին կից**):

**ԳԵՏԱՓ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ախուրյանի ձախ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 71 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1315 մ: 1873թ. ուներ 181, 1897-ին՝ 416, 1926-ին՝ 217, 1939-ին՝ 360, 1959-ին՝ 310, 2001-ին՝ 183, 2004-ին՝ 233 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և

պտղաբուծությամբ: Գյուղից դեպի արմ., ձորալանջին, կա կարմիր քարից շինված հին եկեղեցի, որը տեղացիները անվանում են “Կարմիր վանք”:

**ԳԵՏԱՓ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Գետափնյա**:

**ԳԵՏԱՓ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 24 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 84, 1897-ին՝ 503, 1926-ին՝ 640, 1939-ին՝ 674, 1959-ին՝ 654, 1970-ին՝ 661, 1979-ին՝ 606, 2001-ին՝ 819, 2004-ին՝ 822 բնակիչ, որոնց նախնիները 1828-30թթ. գաղթել են Ալաշկերտից, Մանազկերտից և Կարսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան 1862թ “Ժամ” եկեղեցի, “Ոռումների” վանք, “Թուխ Մանուկ” և “Կոժկուն ավետարան” սրբատեղիներ, “Ծակքար” մատուռ:

**ԳԵՏԱՓ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփայի աջակողմյան վտակ, Եղեգիս գետի ստորին հոսանքի աջ ափին, ծովի մակերևույթից 1170 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 4 կմ արմ.: **Գ.** է վերանվանվել 1935թ.: 1831թ. ուներ 201, 1897-ին՝ 771, 1926-ին՝ 765, 1939-ին՝ 1112, 1959-ին՝ 1160, 1976-ին՝ 1528, 1979-ին՝ 1504, 2001-ին՝ 1980, 2004-ին՝ 2328 բնակիչ: Նախնիները այստեղ են գաղթել Սալմաստից 1828-30թթ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի հին եկեղեցին 20դ. սկզբին դեռևս կանգուն էր: Այժմ նրա տեղում կառուցված է աղբյուր-հուշարձան: Գյուղից 2 կմ հս-արլ. կան “Գոմավանք” եկեղեցու ավերակներ հին արձանագրություններով (**Կոթուր**):

**ԳԵՏԱՓՆՅԱ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 860 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրրվել է 1897թ., իսկ 25.01.1978թ. վերանվանվել է **Գ.**: Բնակչությունը՝ 1897թ.-200, 1926թ.-355, 1939թ.-497, 1979թ.-1435, 2001թ.-1292, 2004թ.-1076 բնակիչ: Նախնիները եկել են Սուրմալուի գավառից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և այգեգործությամբ (**Գետափ**):

**ԳԵՏԻԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 82 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: 1888թ. ուներ 95 տուն, 1907-ին՝ 897, 1926-ին՝ 461, 1939-ին՝ 662, 1959-ին՝ 761, 1970-ին՝ 624, 1979-ին՝ 496, 1989-ին՝ 570, 2001-ին՝ 495, 2004-ին՝ 494 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արծվաշենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի շրջակայքում նշմարվում են (մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ.) մեգալիթյան հուշարձանների մնացորդներ, ինչպես նաև կիկլոպյան “Մուղնու խաչ” ամրոցի (մ.թ.ա. 1-ին հզմ.) ավերակներ և խաչքարերով գերեզմանոց:

**ԳԵՏԻԿՎԱՆՔ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Գետիկվանք գետակի ձորահովտում: Ծովի մակերևույթից՝ 2210 մ բարձրության վրա, Վարդահովտից՝ 4 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 142, 1886-ին՝ 201, 1922-ին՝ 71, 1931-ին՝ 171, 1959-ին՝ 313, 1970-ին՝ 396, 1979-ին՝ 537 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Այստեղ են

գտնվում “Գետիկ” վանքը, 1271թ. եկեղեցիներ, 13-14դդ. խաչքարեր:

**ԳԵՏԻՇԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի աջ ափին, Նոր Աստղաբերդ գյուղից 2 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1625 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 42, 1897-ին՝ 134, 1926-ին՝ 147, 1939-ին՝ 151, 1959-ին՝ 213, 1970-ին՝ 239, 1979-ին՝ 176, 1989-ին՝ 150, 2001-ին՝ 96, 2004-ին՝ 33 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Չայքենդ**):

**ԳԵՏՆԱՓՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ձորագյուղ**:

**ԳԵՏՔ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1460 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 9 կմ հվ-արմ.: 1897թ. ուներ 711, 1926-ին՝ 475, 1939-ին՝ 673, 1959-ին՝ 589, 1970-ին՝ 477, 1979-ին՝ 441, 1989-ին՝ 1204, 2001-ին՝ 574, 2004-ին՝ 684 բը-նակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Գյուղում են “Ամենափրկիչ” և սբ. Հռիփսիմե մատուռները:

**ԳԸԹԳՈՄ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գեղանուշ**:

**ԳԻՆԵՎԵՏ**- գյուղ Արարատի մարզում: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 865 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հվ-արլ.: 1970թ. ուներ 450, 2001-ին՝ 627, 2004-ին՝ 600 բնակիչ: Կազմավորվել է 1970թ., իսկ 14.12.2004թ. վերանվանվել է **Գ.**: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և գինեգործությամբ (**Վեդու Գինու Գործարանին կից**):

**ԳԻՆԵՎԵՏ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Մուսալեռ**:

**ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արարատի մարզում, տե՛ս **Նոր Ուղի**:

**ԳԼԱՁՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Եղեգիս գետի ձախ կողմում, ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 4 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 128, 1897-ին՝ 703, 1926-ին՝ 812, 1939-ին՝ 1255, 1959-ին՝ 1364, 1970-ին՝ 1878, 1979-ին՝ 2105, 2001-ին՝ 2259, 2004-ին՝ 2489 բնակիչ, որոնց նախնիները 1828-30թթ. ներգաղթել են Խոյից և Սալմաստից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Այստեղ են գըտնըվում “Սպիտակավոր”, սբ. Աստվածածին, սբ. Հրեշտակապետաց 1692թ. եկեղեցիները, 12-14դդ. խաչքարեր իսկ գյուղից հվ-արմ.՝ “Վարդանի” բերդը (9դ.):

**ԳՅԱԼԹՈ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Կանչ**:

**ԳՅՈՋԱԼԴԱՐԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ազնվաձոր**:

**ԳՅՈԼԼԻ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Արդենիս**:

**ԳՅՈԼՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Այգուտ**:

**ԳՅՈՅՍՈՒ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ավազան**:

**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջակողմյան, Գարգառ վտակի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 17կմ հս-արմ: Բնակչությունը՝ 1831թ.-102,1897թ.-1149,1926թ.-2045,1939թ.-2299, 1959թ.-2054, 1970թ.-1980, 1979թ.-2160, 2001թ.-2346, 2004թ.-2014 բնակիչ: Նախնիները եկել են Սպիտակի տարածաշրջանի գյուղերից:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղից 2 կմ հվ. գտնվում է Տորմակադուռ գյուղատեղին իր "Տորմակ" եկեղեցիով (6դ.), 2 կմ արմ.՝ սբ.Գևորգ մատուռը (4-5դդ.):

**ԳՅՈՒԼԼԻԲՈՒԼԱՂ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Բյուրակն**:

**ԳՅՈՒԼԼԻԴՈՒԶ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Վարդահովիտ**:

**ԳՅՈՒԼԼԻՋԱ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ծաղկուտ**:

**ԳՅՈՒԼԼՈՒԴԱՐԱ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1950 մ, հեռավորությունը Հալավար գյուղից՝ 4 կմ հվ-արլ.: 1916թ. ուներ 167, 1926-ին՝ 156, 1939-ին՝ 201, 1959-ին՝ 118, 1970-ին՝ 188, 1979-ին՝ 190 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

**ԳՅՈՒԼՍՏԱՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Նոր Ազնաբերդ**:

**ԳՅՈՒՄՐԻ**- քաղաք Շիրակի մարզում, մարզկենտրոն, Ախուրյան գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550, Երևան քաղաքից 135 կմ հեռավորության վրա: 1831թ. ուներ 3444, 1897-ին՝ 30616, 1926-ին՝ 42313, 1939-ին՝ 67729, 1959-ին՝ 108446, 1980-ին՝ 209676, 1984-ին՝ 220400, 1989-ին՝ 178251, 1991-ին՝ 204500, 2001-ին՝ 150917, 2004-ին՝ 149900 բնակիչ: **Գ.** է վերանվանվել 13.03.1992թ.: Բնակչությունը զբաղվում է սննդի, թեթև և մեքենաշինական արդյունաբերությամբ: Քաղաքի ամենամեծ կառույցը 1834թ. բերդ-ամրոցն է: 19դ. կառույցներից առանձնապես հայտնի են թվով 5 եկեղեցիները որոնցից 4-ը հայկական են, իսկ մեկը՝ ռուսական: Զարդը համարվում է սբ. Փրկիչ, կամ "Ամենափրրկիչ" եկեղեցին (1858-76թթ.), որը նման է Անիի "Կաթողիկե" տաճարին (**Կումայրի**, **Ալեքսանդրապոլ**, **Լենինական**):

**ԳՅՈՒՄՈՒՇ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Կարենիս**:

**ԳՅՈՒՆԱՇԼԻ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Կուտական**:

**ԳՅՈՒՆԵՅ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Արեգունի**:

**ԳՆԴԵՎԱԶ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան սարավանդի վրա, ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 35 կմ արլ.: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Խոյից և Սալմաստից: 1873թ. ուներ 303, 1897-ին՝ 605, 1926-ին՝ 810, 1939-ին՝ 1184, 1959-ին՝ 938, 1970-ին՝ 963, 1979-ին՝ 863, 2001-ին՝ 1008, 2004-ին՝ 990 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Գյուղի ջրանցքը կառուցվել է 11-րդ դ.: Գյուղից 2 կմ հվ-արմ. է գտնվում "Գնդեվանք"-ի համալիրը (10-17դդ.) և իջևանատունը (10-13դդ.), գյուղի հս. մասում՝ 17-18դդ. պարիսպը, 1 կմ հս.՝ սբ.Խաչ մատուռը (19դ.), ավերակ եկեղեցին (17-18դդ.), բերդի ավերակներ (ուշ մջնդ.) և 11-19դդ. խաչքարեր (**Գնդեվանք**):

**ԳՆԴԵՎԱՆՔ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Գնդեվազ**:

**ԳՆԻՇԻԿ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան վտակ՝ Գնիշիկ գետի ակունքների մոտ, ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 22 կմ հվ.: 1831թ. ուներ 31, 1897-ին՝ 485, 1926-ին՝ 760, 1939-ին՝ 914, 1959-ին՝ 754, 1970-ին՝ 372, 2001-ին՝ 39, 2004-ին՝ 69 բնակիչ: Այստեղ են գտնվում "Քարկոփ"-ի եկեղեցին, մատուռի ավերակներ և 9-

18դդ. խաչքարեր: Գյուղից մոտ 10 կմ հս-արլ., Հարսնասարի վրա, գտնվում են Հրասեկաբերդի ավերակները (**Գնիշկաձոր**):

**ԳՆԻՇԿԱՁՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Գնիշիկ**:

**ԳՈԳԱՎԱՆ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը Ձորամուտ գյուղից՝ 4 կմ հս-արլ.: **Գ.** է վերանվանվել 03.04.1991թ-ից: 1897թ. ուներ 89, 1926-ին՝ 128, 1939-ին՝ 181, 1959-ին՝ 159, 1970-ին՝ 203, 1979-ին՝ 200, 2001-ին՝ 84, 2004-ին՝ 91 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ (**Դեմուրչիլար**):

**ԳՈԳԱՐԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Բազումի լեռների հվ. ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 30 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1831թ.-52, 1873թ.-672, 1922թ.-1280, 1959թ.-1396, 1970թ.-1472, 1979թ.-1379, 2001թ.-1204, 2004թ.-1129 բնակիչ: Նախնիները գաղթել են Արցախից, Մուշից, Էջմիածնի և Աշտարակի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ճակընդեղի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մեջ է գտնվում սբ.Աստվածածին (4դ.) և 5-րդ դ. այլ եկեղեցի, սբ.Ծիրանավոր, "Թուխ Մանուկ", սբ.Սարգիս մատուռները և "Պատվար" ամրոցը: Գյուղի շրջակայքում պահպանվել են Խորոզ և այլ գյուղատեղիներ:

**ԳՈԳՀՈՎԻՏ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 24 կմ հս., ծովի մակերևույթից 1840 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 153, 1922-ին՝ 393, 1970-ին՝ 438, 1979-ին՝ 359, 2001-ին՝ 396, 2004-ին՝ 359 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է կաթնաանասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա 1860թ. սբ.Աստվածածին եկեղեցի:

**ԳՈՂԹ**- գյուղ Կոտայքի մարզում, Գեղամա լեռների հվ. ստորոտին, Ազատ գետի աջափնյակում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 68 կմ հվ-արլ.: 1873թ. ուներ 220, 1897-ին՝ 438, 1939-ին՝ 805, 1959-ին՝ 817, 1979-ին՝ 1232, 1989-ին՝ 1642, 2001-ին՝ 1931, 2004-ին՝ 1983 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բայազետի գյուղերից 1829-30թթ.: 1940-50թթ. **Գ.**-ին են միացել և սրա թաղերը դարձել Ներքին և Վերին Գողթ գյուղերը: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի մոտ են գտնվում "Հավուց թառ" վանքի ավերակները, Գեղարդի վանքը և Պորտիք գյուղատեղին (**Գողոթ**):

**ԳՈՂԹԱՆԻԿ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Թեքսարի ստորոտին, Եղեգիս գետի հովտում, ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 29 կմ հս-արլ.: 1897թ. ուներ 566, 1926-ին՝ 217, 1939-ին՝ 451, 1959-ին՝ 414, 1976-ին՝ 642, 1979-ին՝ 726, 2001-ին՝ 209, 2004-ին՝ 252 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: 19դ. վերջին քառորդում ունեցել է մի փոքրիկ կամարակապ եկեղեցի:

**ԳՈՂՈԹ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Գողթ**:

**ԳՈՄԱՐԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրու լեռների համակարգին պատկանող մի փոքրիկ սարավանդի վրա, Ողջի գետի աջ ափին, Գեղանուշ գյուղից 2 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 158, 1926-ին՝ 52, 1939-ին՝ 91, 1959-ին՝ 97, 1970-ին՝ 183, 1979-ին՝ 163, 2001-

ին՝ 76, 2004-ին՝ 85 բնակիչ, որոնք զբաղվում են անասնապահությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ:

**ԳՈՄՈՒՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Գոմք**:

**ԳՈՄՔ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան լեռնալանջի վրա, ծովի մակերևույթից 1880 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 32 կմ հվ-արլ.: **Գ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1831թ. ուներ 27, 1897-ին՝ 353, 1926-ին՝ 200, 1939-ին՝ 386, 1959-ին՝ 381, 1970-ին՝ 590, 1979-ին՝ 745, 2001-ին՝ 232, 2004-ին՝ 198 մարդ, որոնց նախնիների մի մասը 1828թ. գաղթել են Խոյի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, պտղաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Այստեղ կան 1263թ. մատուռ, 16-17դդ. եկեղեցի և 11-17դդ. խաչքարեր (**Գոմուր**):

**ԳՈՇ**- գյուղ Տավուշի մարզում, Գոշ գետի հովտում, մարզկենտրոնից 30 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1080 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 157, 1897-ին՝ 325, 1926-ին՝ 560, 1939-ին՝ 836, 1959-ին՝ 832, 1970-ին՝ 803, 1979-ին՝ 825, 1989-ին՝ 938, 2001-ին՝ 1127, 2004-ին՝ 1151 բնակիչ, որոնց մի մասը այստեղ են տեղափոխվել մարզի Բարեկամավան և Կոթի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, պտղաբուծությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղում և նրա շրջակայքում կան պատմաճարտարապետական արժեքավոր հուշարձաններ, որոնց կենտրոնը Գոշավանքի համալիրն է սբ. Աստվածածին (1191-1196թթ.), սբ. Գրիգոր (1231թ.) և սբ. Գևորգ (1254թ.) եկեղեցիներով: Գյուղում է գտնվում նաև սբ. Հռիփսիմե գմբեթակիր փոքրածավալ եկեղեցին: Այստեղ է հանգչում միջնադարի հայ մեծ մտածող, առակագիր Մխիթար Գոշի (1130-1213թթ.) աճյունը, որի գերեզմանին կանգնեցված խաչքարը իր տեսակի մեջ բացառիկ արվեստի մի հրաշալի կոթող է (**Գոշավանք**):

**ԳՈՇԱՎԱՆՔ**- պատմական գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Գոշ**:

**ԳՈՌԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, Վեդի գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 925 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19 կմ հվ-արլ.: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 59, 1897-ին՝ 330, 1926-ին՝ 548, 1939-ին՝ 851, 1959-ին՝ 801, 1970-ին՝ 1277, 1979-ին՝ 1703, 2001-ին՝ 2470, 2004-ին՝ 2458 մարդ: Նախնիները գաղթել են Մուշի, Շատախի և Վանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, հացահատիկի, ծխախոտի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղի հվ. մասում է գտնըվում մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտը:

**ԳՈՌԳՈՉ**- գյուղ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի աջ ափին, Մեղրաձոր գյուղից 3 կմ հվ-արմ., շրջապատված անտառներով: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: **Գ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1832թ. ուներ 82, 1897-ին՝ 279, 1926-ին՝ 21, 1939-ին՝ 324, 1959-ին՝ 75, 1979-ին՝ 217, 1989-ին՝ 91, 2001-ին՝ 32, 2004-ին՝ 92 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ (**Կորչլու**):

**ԳՈՐԱՅՔ**- պատմական բնակավայր Սյունիքի մարզում, տե՛ս **Գորիս**:

**ԳՈՐԱՅՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի վերին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 131 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 2100 մ բարձ-

րության վրա: Գյուղը 1877թ. հիմնադրել են Արցախի Շուշիի շրջանի Բալուջա գյուղից գաղթածները: 1886թ. ուներ 469, 1897-ին՝ 631, 1926-ին՝ 1176, 1939-ին՝ 1822, 1959-ին՝ 1222, 1970-ին՝ 843, 1979-ին՝ 548, 2001-ին՝ 632, 2004-ին՝ 657 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղից մոտ 3 կմ հվ-արմ.՝ գտնվում է "Ավերակ" գյուղատեղին: Սպանդարյանի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է մոտ 3 կմ հս-արմ.: Որոտանի վերին հոսանքի շրջանում կա 1850-1860թթ. ջրանցք (**Վասակակերտ**, **Բազրատավան**, **Ակունք**):

**ԳՈՐԻՍ**- քաղաք Սյունիքի մարզում, Որոտան գետի Գորիս վտակի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 69 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ: 1870թ. ուներ 1000, 1897-ին՝ 2400, 1976-ին՝ 17400, 1989-ին՝ 23795, 1991-ին՝ 18700, 2001-ին՝ 23260, 2004-ին՝ 23200 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Քաղաքում է գտնվում սբ.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (1903թ.): Քիչ արլ., Գորիս գետի ձախ ափին, գտնվում է 13դ. "Հին Գորիս" գյուղը (**Գոռայք**):

**ԳՏԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1860 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արմ.: **Գ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1886թ. ուներ 309, 1908-ին՝ 480, 1922-ին՝ 312, 1959-ին՝ 557, 1970-ին՝ 983, 1979-ին՝ 925, 1989-ին՝ 139, 2001-ին՝ 378, 2004-ին՝ 356 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում է գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (**Մաղարաջուղ**):

**ԳՐԱՄՓԱ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Ծիածան**:

**ԳՐԱՆԻՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Լոռու մարզում, տե՛ս **Քարկոփ**:

**ԳՐԻԲՈՅԵԴՈՎ**- գյուղ Արմավիրի մարզում, Մեծամոր գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 24 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 284, 1873-ին՝ 676, 1897-ին՝ 886, 1926-ին՝ 647, 1939-ին՝ 742, 1959-ին՝ 1085, 1970-ին՝ 1502, 1979-ին՝ 1693, 2001-ին՝ 2003, 2004-ին՝ 2104 բնակիչ: 1950-ական թթ. այստեղ հաստատվել են ՀԽՍՀ Կարմիրի, Մարտունու և Արցախի գյուղերից եկած վերաբնակիչները: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղից հս-արլ. կա մի հնավայր, որտեղ հայտնաբերվել են խեցեղեն և այլ իրեր:

**ԳՐԿԻՔ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Հերմոն**:

**ԳՈՒԳԱՐՔ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1325 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 2 կմ հվ-արլ.: **Գ.** է վերանվանվել 25.05. 1983թ.: Բնակչությունը՝ 1831թ.-105, 1873թ.-643, 1897թ.-1125, 1919թ.-1360, 1926թ.-1507, 1931թ.-1600, 1939թ.-1943, 1959թ.-1901, 1965թ.-2236, 1979թ.-3206, 2001թ.-5665, 2004թ.-5594 բնակիչ, որոնց մի մասի նախնիները եկել են Արցախից և Իջևանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարեղենի և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղում է գտնվում սբ. Սարգիս եկեղեցին (19դ.): Գյուղի շրջա-

կայքում պահպանվել են հին գյուղատեղիներ (**Մեղրուտ**):

**ԳՈՒԴԵՄՆԻՍ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 70 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1425 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 48, 1886-ին՝ 317, 1914-ին՝ 481, 1922-ին՝ 364, 1970-ին՝ 205, 1979-ին՝ 125, 2001-ին՝ 66, 2004-ին՝ 49 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կա եկեղեցի, 4 կմ արլ.՝ հին բնակավայրի ավերակներ: Գյուղի մոտ են գտնվում միջին դարերի հայտնի Կաքավաբերդի ավերակները (**Ուջանապաս**):

**ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 21 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 138, 1897-ին՝ 1466, 1926-ին՝ 1062, 1939-ին՝ 1433, 1959-ին՝ 1207, 1970-ին՝ 978, 1979-ին՝ 876, 2001-ին՝ 898, 2004-ին՝ 1061 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. այստեղ են գաղթել Ալաշկերտի, Բասենի և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում կան 11դ. եկեղեցի, 12-13դդ. կառույցներ, նախնադարյան, ուրարտական "Դիտանոց" բերդը, կիկլոպյան շինությունների հետքեր, մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Արքայաբլուր", "Բերդալանջ" և "Արքայից" ամրոցներ:

# Դ

**ԴԱԼԱՐ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 835 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 200, 1897-ին՝ 891, 1926-ին՝ 903, 1939-ին՝ 1168, 1959-ին՝ 1985, 1970-ին՝ 2444, 1979-ին՝ 2634, 2001-ին՝ 2844, 2004-ին՝ 2673 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի կենտրոնում է գտնվում սբ.Աստվածածին եկեղեցին (1890թ.): Ճարտարապետական առումով նշանակալի գործ է երեք աղջիկների բազալտակերտ բարձրաքանդակ- հուշաղբյուրը:

**ԴԱԼԱՐԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, մարզկենտրոնից 21 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1005 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1901թ., երկաթուղու շինարարության ժամանակ: **Դ.** է վերանվանվել 21.01. 1965թ.: 1922թ. ուներ 45, 1959-ին՝ 493, 1970-ին՝ 2413, 1979-ին՝ 3227, 2001-ին՝ 3580, 2004-ին՝ 4345 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ (**Մաստարա**):

**ԴԱՆՈՒՇԱՎԱՆ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Այգեհատ**:

**ԴԱՇՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 27 կմ հս-արլ.: Գտնվում է Օշականի հանդամասում, ծովի մակերևույթից 945 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1926թ.: Բնակիչները եկել են Օշականից: 1926թ. ուներ 40, 1939-ին՝ 228, 1959-ին՝ 394, 1970-ին՝ 500, 1979-ին՝

497, 2001-ին՝ 723, 2004-ին՝ 700 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղի մոտակայքում են գտնվում տեղացիների կողմից "Արդար Դավիթ" կոչված կիկլոպյան ամրոցի ավերակները (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) (**Փոքր Օշական**):

**ԴԱՇՏԱԴԵՄ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արտենի լեռան հվ. ստորոտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 52 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ: **Դ.** է վերանվանվել 1979թ.: 1897թ. ուներ 420, 1926-ին՝ 301, 1939-ին՝ 484, 1959-ին՝ 412, 1970-ին՝ 642, 1979-ին՝ 547, 2001-ին՝ 613, 2004-ին՝ 701 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Արմ. Հայաստանի տարբեր գավառներից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղից 2 կմ հվ-արմ. գըտ-նըվում է 7-18դդ. "Քաշենի" գյուղատեղին իր 10դ. եկեղեցիով, 2,5 կմ հվ-արմ.՝ 7դ. "Քրիստափոր" եկեղեցին (**Քաղին**, **Ներքին Թալին**):

**ԴԱՇՏԱԴԵՄ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1660 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 53 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 75, 1897-ին՝ 301, 1916-ին՝ 479, 1926-ին՝ 488, 1931-ին՝ 565, 1939-ին՝ 653, 1959-ին՝ 852, 1965-ին՝ 1037, 1979-ին՝ 1213, 2001-ին՝ 216, 2004-ին՝ 208 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ:

**ԴԱՇՏԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախ կողմում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 28 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: Գյուղը հիմնադրվել է 1897թ.: 1897թ. ուներ 1630, 1926-ին՝ 716, 1939-ին՝ 759, 1959-ին՝ 687, 1970-ին՝ 1292, 1979-ին՝ 1570, 2001-ին՝ 2013, 2004-ին՝ 1907 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղից հս-արլ. կա մ.թ.ա. 4-րդ-3-րդ հզմ. բնակատեղի:

**ԴԱՇՏԱՎԱՆՔ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Նոր Գյուղ**:

**ԴԱՇՏԱՔԱՐ**- գյուղ Արարատի մարզում, Վեդի գետի աջ կողմում, հարթավայրում, երեք կողմից շրջապատված ոչ բարձր, աղքատ բուսականությամբ լեռներով: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 970 մ: Գյուղը հիմնադրվել է 1897թ.: 1897թ. ուներ 184, 1926-ին՝ 161, 1939-ին՝ 273, 1959-ին՝ 182, 1970-ին՝ 298, 1979-ին՝ 409, 2001-ին՝ 555, 2004-ին՝ 558 բնակիչ, որոնց նախնիները եկել են Վանից, Մուշից և Շատախից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ:

**ԴԱՇՏՈՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Տաշտուն**:

**ԴԱՇՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Այրք**:

**ԴԱՍՏԱԿԵՐՏ**- քաղաք Սյունիքի մարզում, Սիսիան գետի օժանդակ Այրի գետակի ակունքի մոտ, մարզկենտրոնից 122 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: 1908թ. ուներ 555, 1922-ին՝ 358, 1959-ին՝ 2405, 1976-ին՝ 3655, 2001-ին՝ 287, 2004-ին՝ 300 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Քաղաքից մոտ 2 կմ հս., "Վարդապետի քար" կոչված ժայռաբեկորի վրա, կա վիմագիր արձանագրություն: Շրջակայքում են գտնվում մի շարք գյուղատեղիներ:

**ԴԱՎԹԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագածի հվ-արմ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1730 մ: 1897թ. ուներ 308, 1926-ին՝ 266, 1939-ին՝ 413, 1959-ին՝ 563, 1970-ին՝ 620, 1979-ին՝ 710, 2001-ին՝ 752, 2004-ին՝ 777 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և ծխախոտի մշակությամբ:

**ԴԱՎԻԹ ԲԵԿ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների հս. ստորոտում, Քաշունի գետի հովտում: Մարզկենտրոնից 28 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 714, 1926-ին՝ 761, 1939-ին՝ 859, 1959-ին՝ 815, 1970-ին՝ 931, 1979-ին՝ 800, 2001-ին՝ 809, 2004-ին՝ 771 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, ծխախոտի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի արլ. կողմում կա 10դ. կիսավեր մահարձան, նույն կողմում, 3 կմ հեռ. վրա, "Տախն" եկեղեցին է համանուն ավերակ գյուղում, որի բնակիչները **Դ.Բ.** են տեղափոխվել 19դ.:

**ԴԱՐԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Դարանակ**:

**ԴԱՐԱԿԵՐՏ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախ կողմում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 840 մ: Գյուղը հիմնադրվել է 1829թ., իսկ 1978թ. վերանվանվել է **Դ.**: 1829թ. ուներ 445, 1906-ին՝ 1079, 1959-ին՝ 1728, 1979-ին՝ 1955, 2001-ին՝ 2493, 2004-ին՝ 2115 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղից 300 մ հվ-արմ. գտնվում է "Դարակերտ" բնակատեղին (մ.թ.ա. 3-րդ հզմ.) (**"Մասիս" սովխոզին կից**):

**ԴԱՐԱՆԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների ստորոտին, լճափից ոչ հեռու, Հավսաթաղք գետի հովտում, մարզկենտրոնից 99 կմ արլ.: **Դ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: 1939թ. ուներ 235, 1959-ին՝ 320, 1970-ին՝ 364, 1979-ին՝ 411, 1989-ին՝ 92, 2001-ին՝ 170, 2004-ին՝ 162 բնակիչ: **Դ.** հիմնադրել են 1921թ-ին նույն տարածաշրջանի Փամբակ գյուղից տեղափոխվածները: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և ծխախոտագործությամբ: Գ-ից արլ. կա Հին Դարանակ գյուղատեղին (13-16դդ.) (**Դարա**):

**ԴԱՐԱՆԻ**- պատմական ավան Կոտայքի մարզում,տե՛ս **Աբովյան**:

**ԴԱՐԲԱՍ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան վտակ Լոր գետի ձախ ափին, նրա ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 107 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: Գյուղի առաջին հիշատակությունը 844 թ-ից է: 1897թ. ուներ 971, 1926-ին՝ 622, 1939-ին՝ 879, 1959-ին՝ 873, 1970-ին՝ 965, 1979-ին՝ 806, 2001-ին՝ 698, 2004-ին՝ 799 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում են գտնվում 13դ. սբ. Աստվածածին եկեղեցու ավերակները, սբ. Ստեփանոս փոքր եկեղեցին (փլված է), 14-15դդ. խաչքարեր:

Գյուղից հվ., Որոտանի վրա, կա 1675թ. "Արզումանի" կամուրջ: Այստեղ է գտնվում Շամբի ջրամբարը (**Ըղվերծ**):
**ԴԱՐԲՆԻԿ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդանի աջ ափին, այգեվետ հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1880թ.: 1926թ. ուներ 426, 1939-ին՝ 626, 1959-ին՝ 654, 1970-ին՝ 560, 1979-ին՝ 1200, 1989-ին՝ 1748, 2001-ին՝ 1071, 2004-ին՝ 1226 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պըտ-ղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:
**ԴԱՐԻԿ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճից 4 կմ հս-արլ: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 2200 մ, Զորակերտ գյուղից 4 կմ հս.: **Դ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1897թ. ուներ 96, 1907-ին՝ 153, 1926-ին՝ 243, 1939-ին՝ 311, 1959-ին՝ 147, 1970-ին՝ 241, 1979-ին՝ 264, 1989-ին՝ 100, 2001-ին՝ 12, 2004-ին՝ 31 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**Օքսյուզ**):
**ԴԱՐՊԱՍ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 1 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 406, 1926-ին՝ 620, 1939-ին՝ 641, 1959-ին՝ 642, 1970-ին՝ 971, 1979-ին՝ 1307, 2001-ին՝ 2188, 2004-ին՝ 1494 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում է գտնվում "Կոտրած եղցի" եկեղեցին:
**ԴԴՄԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արջանոցի լեռների հվ. ստորոտին, Հրազդան գետի աջ ափին, մարզկենտրոնից 46 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: 1829թ. ուներ 468, 1897-ին՝ 1929, 1926-ին՝ 2201, 1939-ին՝ 2565, 1959-ին՝ 1774, 1970-ին՝ 2138, 1979-ին՝ 2164, 1989-ին՝ 2267, 2001-ին՝ 2443, 2004-ին՝ 2750 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. ներգաղթել է Մակուից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի կենտրոնում, բարձունքի վրա, գտնվում է սբ. Թադևոս Առաքյալ եկեղեցին (7դ.): Շրջակայքում են գտնվում "Բերդալանջ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և "Դեմդեմաշեն" բնակատեղին (մ.թ. ա. 2-րդ-1-ին հզմ.- մ.թ. 9-17դդ.):
**ԴԴՄԱՍԱՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 61 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1380 մ: **Դ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1873թ. ուներ 35, 1897-ին՝ 46, 1926-ին՝ 150, 1939-ին՝ 216, 1959-ին՝ 327, 1970-ին՝ 391, 1979-ին՝ 460, 2001-ին՝ 161, 2004-ին՝ 280 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ (**Ղաբաղթափա**):
**ԴԵԲԵՏ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի աջ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արլ.: Բնակչությունը՝ 1873թ.-307, 1897թ.-531,1926թ.-1008, 1939թ.-1271, 1959թ.-1105, 1970թ.-1156, 1979թ.-920, 2001թ.-945, 2004թ.-978 բնակիչ: Գյուղը հիմնադրել են 1857թ.՝ Մարց գ-ից եկած բնակիչները: 1935թ. վերանվանվել է **Դ.**: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, թռչնաբուծությամբ, հացահատիկի և բան-

ջարեղենի մշակությամբ: Գյուղում կան 12-13դդ. խաչքարեր (**Խաչիգյուղ**):

**ԴԵԲԵՏԱՇԵՆ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Բագրատաշեն**:

**ԴԵԲԵՏԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Դեբեդ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 77 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 430 մ բարձրության վրա: **Դ.** է վերանվանվել 25.01. 1978թ.: 1989թ. ուներ 185, 2001-ին՝ 763, 2004-ին՝ 656 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ և անասնապահությամբ (**Լալվարի սովխոզի 2-րդ մասին կից**):

**ԴԵՂՁԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Դեբեդ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 75 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 430 մ բարձրության վրա: **Դ.** է վերանվանվել 25.01. 1978թ.: Հիմնադրվել է 1978թ. Արճիսի ձմեռանոցի արտադրական տեղամասի հիման վրա: 1979թ. ուներ 221, 1989-ին՝ 238, 2001-ին՝ 286, 2004-ին՝ 268 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և բանջարաբուծությամբ (**Արճիսի սովխոզի 2-րդ մասին կից**):

**ԴԵՂՁՈՒՏ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 10 կմ հս., ծովի մակերևույթից՝ 895 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1897թ.: 1897թ. ուներ 257, 1926-ին՝ 300, 1939-ին՝ 409, 1959-ին՝ 623, 1970-ին՝ 748, 1978-ին՝ 849, 2001-ին՝ 989, 2004-ին՝ 972 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1920թ. գաղթել են Արմ. Հայաստանից: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ:

**ԴԵՄՈՒՐՉԻԼԱՐ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Գոգավան**:

**ԴԵՐԲՆ**- պատմական բնակավայր Վայոց ձորի մարզում, տե՛ս **Սարավան**:

**ԴԵՐԵԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Ճարճակիս**:

**ԴԻԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից 37 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ: 1831թ. ուներ 32, 1897-ին՝ 304, 1926-ին՝ 233, 1939-ին՝ 319, 1959-ին՝ 365, 1970-ին՝ 204, 1979-ին՝ 110, 2001-ին՝ 151, 2004-ին՝ 142 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

**ԴԻԼԻՋԱՆ**- քաղաք Տավուշի մարզում, Աղստև գետի ափին, մարզկենտրոնից 36 կմ հվ-արմ.: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: 1976թ. ուներ 24056, 1989-ին՝ 30433, 1991-ին՝ 30400, 2001-ին՝ 16202, 2004-ին՝ 16100 բնակիչ: **Դ.** լեռնակլիմայական առողջարան է: Ք-ում գործում են տասնյակ հանգստյան տներ և առողջարաններ: Այստեղ են գտնվում կոմպոզիտորների ստեղծագործական և հանգստյան տունը, "Դիլիջան" մանկական հակատուբերկուլյոզային հանգստյան տունը: **Դ**-ում առավել զարգացած են առողջարաններին սպասարկող արդյունաբերության ճյուղերը: Իբրև առողջարանային քաղաք **Դ**-ի համար կենսական նշանակություն ունի նաև գյուղատնտեսությունը, հատկապես անասնաբուծությունը և բանջարաբուծությունը: Ք-ի մոտակայքում տարածվող անտառահատվածում 1958թ. ստեղծվել է հանրապետության արգելանոցներից մեկը՝ Դիլիջանի արգելանոցը: 1932թ. շահագործման է հանձնվել ՀԷԿ-ը, 1949 թ-ին շարք մտավ քաղաքի այժմյան արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից՝ "Դիլիջան" հանքային ջրերի գործարանը: Քաղաքի կենտրոնական մասում պահպանվում են 20դ. սկզբին կառուցված ու ազգագրական արժեք

ներկայացնող տներ, որոնք կազմում են մի փոքրիկ հին թաղամաս: Ք-ից արմ. են գըտ-նըվում "Ջուխտակ" վանքը և "Մաթոսավանքը":

**ԴԻՄԻՏՐՈՎ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից 5 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 840 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 85, 1897-ին՝ 735, 1926-ին՝ 507, 1939-ին՝ 616, 1959-ին՝ 913, 1970-ին՝ 1231, 1979-ին՝ 1285, 2001-ին՝ 1353, 2004-ին՝ 1026 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պըտղաբուծությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների, հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղի հվ-արմ. եզրին է գըտ-նըվում սբ. Աստվածածին եկեղեցին (1868թ.), հս. եզրին՝ "սբ. Օջախ" մատուռը (19-20դդ.), գյուղի մեջ՝ սբ. Կիրիլ աստրական եկեղեցին (1840թ.):

**ԴԻՏԱԿ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 15 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 900 մ: 1931թ. ուներ 196, 139-ին՝ 208, 1959-ին՝ 373, 1970-ին՝ 529, 1979-ին՝ 587, 2001-ին՝ 691, 2004-ին՝ 657 բնակիչ: Գյուղը 1927թ. հիմնադրել են շրջակա գյուղերից եկածները: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մը-շակությամբ: Գյուղի մոտ է գտնվում համանուն հնավայրը:

**ԴԻՏԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստև գետի աջ կողմում, մարզկենտրոնից 14 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 770 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 51, 1897-ին՝ 242, 1926-ին՝ 271, 1939-ին՝ 365, 1959-ին՝ 486, 1970-ին՝ 480, 1979-ին՝ 331, 1989-ին՝ 440, 2001-ին՝ 429, 2004-ին՝ 392 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղից 2 կմ հվ-արմ. գտնվում են մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Ճգնավորի քար" ամրոցը, "Հացուտի" եկեղեցին և 12-13դդ. խաչքարերով գերեզմանոց:

**ԴԻՑՄԱՅՐԻ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախ կողմում, Սյունիք գյուղից 1 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: **Դ.** է վերանվանվել 1991թ.: 1897թ. ուներ 47, 1926-ին՝ 154, 1939-ին՝ 235, 1959-ին՝ 198, 1979-ին՝ 231, 2004-ին՝ 106 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Ղարաչիման**):

**ԴՈՂՍ**- գյուղ Արմավիրի մարզում, Արագածի ստորոտում, Քասաղ գետի մոտ, հարթավայրում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 915 մ բարձրության վրա, մարզկենտրոնից՝ 21 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 111, 1897-ին՝ 669, 1926-ին՝ 408, 1939-ին՝ 528, 1959-ին՝ 584, 1970-ին՝ 878, 1979-ին՝ 981, 2001-ին՝ 1267, 2004-ին՝ 1435 բնակիչ, որոնց մի մասը 1915-16թթ. գաղթել է Ալաշկերտից, Խնուսից, Մուշից, Վանից, Արծկեից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղում կա 19դ. սբ. Ստեփանոս եկեղեցի (**Դողք**):

**ԴՈՂՔ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Դողս**:

**ԴՈՍՏԼՈՒՂ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Հայանիստ**:

**ԴՈՎԵՂ**- գյուղ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 50 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 720 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 201, 1897-ին՝ 351, 1926-ին՝ 370, 1939-ին՝ 506, 1959-ին՝ 514, 1970-ին՝ 525, 1979-ին՝ 576, 1989-

ին՝ 642, 2001-ին՝ 602, 2004-ին՝ 590 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Արցախից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և մասամբ այգեգործությամբ: Գյուղի տարածքում կան ֆելզիտի հանքավայրեր: Գյուղից 4 կմ հվ-արլ. գտնվում է 16-19դդ. սբ. Սարգիս վանական համալիրը, իսկ 6 կմ հվ.՝ 16-17դդ. "Արի գեղ" գյուղատեղին:

**ԴՈՎՐՈւՍ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Տավրուս**:

**ԴՊՐԱԲԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գետիկի ստորին հոսանքի ձախ ափին, մարզկենտրոնից 97 կմ հս.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1240 մ բարձրության վրա: 03.04.1991թ. վերանվանվել է իր նախկին **Դ.** անվամբ: Հիմնադրվել է 1778թ.: 1897թ-ին ուներ 754, 1926-ին՝ 713, 1939-ին՝ 893, 1959-ին՝ 809, 1979-ին՝ 1112, 1989-ին՝ 508, 2001-ին՝ 654, 2004-ին՝ 544 բնակիչ: Բնակիչների մի մասը եկել է Ղազախից և Արցախից: 1990-ական թթ. այստեղ են վերաբնակվել Բաքու, Գանձակ, Սումգայիթ քերից, Արցախի և Արծվաշեն գյուղի բռնագաղթածները: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: **Դ.** տանող ճանապարհից դեպի աջ կա 19դ. կամուրջ: Գյուղից 4 կմ հվ-արմ., անտառի մեջ, "Այրիջուր" կոչված հանդամասում, կան գյուղատեղի, խաչարձան, խաչքարեր՝ 12-13դդ. արձանագրություններով: Գյուղն ունի կիսավեր եկեղեցի (17-18դդ.) (**Չայքենդ**):

**ԴՊՐԵՎԱՆՔ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից 27 կմ արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1200 մ: 2001թ. ուներ 58, 2004-ին՝ 158 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:

**ԴՍԵՂ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջ ափին, Փամբակի գետաբերանի մոտ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1225 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 473, 1897-ին՝ 1231, 1926-ին՝ 2655, 1939-ին՝ 3482, 1959-ին՝ 2990, 1970-ին՝ 3114, 1979-ին՝ 2554, 2001-ին՝ 2573, 2004-ին՝ 2149 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, ծխախոտագործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում են գտնվում "Քառասուն Մանկունք" վանքը (10-15դդ.), Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (6-19դդ.), սբ. Սարգիս մատուռը (12-13դդ.), Բարձրաքաշ սբ. Գրիգոր վանքը, "Ծաղկախաչ" մատուռը և Մամիկոնյան իշխանների 7դ. հիմնադրած եկեղեցիները:

**ԴՎԻՆ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 9 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 925 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 19.04.1950թ. վերանվանվել է **Դ.**: 1831թ. ուներ 183, 1897-ին՝ 700, 1926-ին՝ 661, 1939-ին՝ 876, 1959-ին՝ 1470, 1970-ին՝ 2177, 1979-ին՝ 2376, 2001-ին՝ 2997, 2004-ին՝ 2695 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, թռչնաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի մոտ է գտնվում համանուն հնավայրը (**Դվին Հայկական**):

**ԴՎԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Դվին:**

**ԴՐԱԽՏԻԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների հվ. լանջին, Սևանա լճի ավազանի Դրախտիկ

գետի ափին, մարզկենտրոնից 61 կմ հս-արլ., 03.04.1991թ. վերանվանվել է իր հին՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Սոթք գավառում հիշատակվող **Դ.** անվամբ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: 1829թ. ուներ 296, 1897-ին՝ 935, 1926-ին՝ 1417, 1931-ին՝ 1723, 1939-ին՝ 1840, 1959-ին՝ 1528, 1970-ին՝ 2469, 1979-ին՝ 2664, 2001-ին՝ 1044, 2004-ին՝ 871 բն-նակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղի մոտակայքում կան հին եկեղեցու ավերակներ, մի քանի խաչքար, գյուղատեղի և գերեզմանոց (15-19դդ.) (**Թոխլուջա**):

**ԴՈՒԶՔԵՆԴ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ալվար**:

# Ե

**ԵԹԵՐԱՅՈՒՂԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Նոր Կեսարիա**:

**ԵԼԵՆՈՎԿԱ**- նախկինում գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Սևան**:

**ԵԼՓԻՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Ելփին գետի ափին, Երևան-Եղեգնաձոր ավտոճանապարհին, ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 26 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 135, 1897-ին՝ 708, 1926-ին՝ 582, 1939-ին՝ 1046, 1959-ին՝ 1147, 1970-ին՝ 1296, 1979-ին՝ 1209, 2001-ին՝ 1324, 2004-ին՝ 1402 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել է Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, ծխախոտի մշակությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղում կան խաչքարեր և "Թուխ Մանուկ" սրբավայր: **Ե.**-ից 5-6 կմ հս-արմ. է գտնվում "Մոխրուտ", 8 կմ հս.՝ "Խնձորուտ" ավերակ գյուղերը:

**ԵՂԵԳ**- գյուղ Սյունիքի մարզում, Աճանան գետի ձախ կողմում, լեռնալանջի վրա, մարզկենտրոնից 19 կմ հս., ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: 03.04.1991թ. վերանվանվել է **Ե.**: 1897թ. ուներ 109, 1926-ին՝ 56, 1939-ին՝ 75, 1959-ին՝ 45, 2001-ին՝ 166, 2004-ին՝ 87 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Եղինգ**, **Շաբաղին**):

**ԵՂԵԳԻՍ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Եղեգիս գետի միջին հոսանքի աջափնյակում: Ծովի մակերևույթից 1580 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 19 կմ հս.: 1914թ. ուներ 524, 1919-ին՝ 97, 1959-ին՝ 499, 1970-ին՝ 884, 1979-ին՝ 963, 2001-ին՝ 513, 2004-ին՝ 507 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է ծխախոտագործությամբ, անասնապահությամբ և դաշտավարությամբ: Հս-արմ. մասում գտնվում են "Եղեգիս" բերդի ավերակները (Սմբատաբերդ, 9դ.), արլ. մասում՝ սբ. Ստեփանոս (Զորաց) (13դ.), արմ. մասում՝ սբ. Աստվածածին (վերանորոգված 1703թ.), հվ.մասում՝ սբ. Նշան (Կարապետ) (11-13դդ.) եկեղեցին, 11-16դդ. խաչքարեր:

**ԵՂԵԳԻՍ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Արտաբույնք**:

**ԵՂԵԳՆԱԳՅՈՒՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Լիճք**:

**ԵՂԵԳՆԱՁՈՐ**- քաղաք Վայոց ձորի մարզում, մարզկենտրոն, Արփա գետի աջ կողմում, Երևանից մոտ 120 կմ հվ-

արլ., ծովի մակերևույթից 1240 մ բարձրության վրա: Գրավում է Վայքի գոգավորության արմ. մասը: 1831թ. ուներ 332, 1897-ին՝ 1307, 1926-ին՝ 1583, 1939-ին՝ 2567, 1959-ին՝ 3567, 1980-ին՝ 7053, 2001-ին՝ 8178, 2004-ին՝ 8200 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. այստեղ են գաղթել Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և անասնաբուծությամբ: Քաղաքի մոտ են գտնվում Արփայի հին կամուրջներից մեկը՝ Ազարակաձորի կամուրջը (13դ.), 12-16դդ. խաչքարեր, 4դ. ամրոց, 17դ. եկեղեցի (վերակառուցված 19դ.) (**Միկոյան**):

**ԵՂԵԳՆԱՁՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Աղավնաձոր**:

**ԵՂԵԳՆԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 12 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 810 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 03.04.1991թ. այն վերանվանվել է **Ե.**: 1831թ. ուներ 263, 1897-ին՝ 992, 1926-ին՝ 607, 1939-ին՝ 548, 1959-ին՝ 526, 1970-ին՝ 1351, 1979-ին՝ 1526, 1989-ին՝ 1531, 2001-ին՝ 1321, 2004-ին՝ 1098 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղից 30 կմ հս-արլ., Մանկուք գետի աջ ափին, կան մի ամրոց “Կոծոնք” անունով (10-13դդ.) և նույնանուն գյուղատեղի (13-17դդ.) (**Շիդլու**):

**ԵՂԵԳՆՈՒՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 11 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 360, 1926-ին՝ 375, 1939-ին՝ 364, 1959-ին՝ 497, 1970-ին՝ 636, 1979-ին՝ 670, 2001-ին՝ 1867, 2004-ին՝ 2031 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ:

**ԵՂԵԳՆՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի աջ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1000 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21 կմ հս-արլ.: Հիմնադրվել է 1857թ.: 1897թ. ուներ 421, 1926-ին՝ 1084, 1939-ին՝ 1427, 1959-ին՝ 1200, 1970-ին՝ 1319, 1979-ին՝ 998, 2001-ին՝ 1164, 2004-ին՝ 820 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում և շրջակայքում նշմարվում են զանազան հնություններ և գյուղատեղիներ: Գյուղից 2-3 կմ հս. գտնվում է սբ. Կիրակի մատուռը (18-19դդ.), “Բերդակ” ամրոցը (մ.թ.ա. 3-րդ հզմ.), “Թևավոր խաչ” և “սբ. Սարգիս” խաչքարերը:

**ԵՂԻՆԳ**- պատմական գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Եղեգ**:

**ԵՂԻՊԱՏՐՈՒՇ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 27 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 2000 մ: Բնակչությունը՝ 1831թ.-252, 1897թ.-1091, 1926թ.-1070, 1939թ.-1170, 1959թ.-672, 1970թ.-795, 1979թ.-677, 2001թ.-739, 2004թ.-725 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկաստանից և Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մեջ է գտնվում 13դ. սբ. Աստվածածին եկեղեցին, իսկ դեպի արլ.՝ 7-8դդ. Եղիպատրուշի վանքը (**Մռավյան**):

**ԵՂԻՏԱՆՔ**- պատմական գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Յաղդան**:

**ԵՂՆԱՋՈՒՐ**- գյուղ Շիրակի մարզում, Եղնաջուր գետակի ափին, Արփի լճից հս-արմ.: Գառնառիճ գյուղից 4 կմ հս-

արմ., ծովի մակերևույթից ՝ 2125 մ բարձրության վրա: **Ե.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1926թ. ուներ 295, 1939-ին՝ 349, 1959-ին՝ 301, 1970-ին՝ 522, 1979-ին՝ 566, 1989-ին՝ 67, 2001-ին՝ 28, 2004-ին՝ 19 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**Չիվինլի**):

**ԵՂՆԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից 49 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մ: 1831թ. ուներ 36, 1897-ին՝ 769, 1926-ին՝ 413, 1939-ին՝ 711, 1959-ին՝ 590, 1970-ին՝ 479, 1979-ին՝ 412, 2001-ին՝ 452, 2004-ին՝ 656 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղից 2 կմ հս-արլ. գտնվում է 10-12դդ. "Եղանց" գյուղատեղին, որտեղ էլ գտնվում է 1866թ. սբ. Նշան եկեղեցին:

**ԵՂՎԱՐԴ**- քաղաք Կոտայքի մարզում, Արայի լեռան հվ. ստորոտին, Եղվարդի դաշտում, Արզնի-Շամիրամ ջրր-անցքի հատման տեղում, մարզկենտրոնից 39 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1330 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 279, 1897-ին՝ 2144, 1926-ին՝ 2865, 1939-ին՝ 3021, 1959-ին՝ 3940, 1970-ին՝ 5398, 1974-ին՝ 6050, 2001-ին՝ 11627, 2004-ին՝ 11700 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Քաղաքից արմ. գտնվում են "Սեղանասար" գյուղատեղին (մ.թ.ա. 20-18դդ.) և համանուն դամբարանադաշտը (մ.թ.ա. 2-րդ հզմ.), 3 կմ հս-արլ.՝ սբ. Զորավար (7դ.), իսկ քաղաքի կենտրոնում՝ սբ. Աստվածածին եկեղեցիները: Ճարտարապետական մեծ նշանակություն ունեն 7-8դդ. մահարձանը և 5դ. դահլիճ-եկեղեցին:

**ԵՂՎԱՐԴ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների լանջին, մարզկենտրոնից 13 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 383, 1897-ին՝ 759, 1926-ին՝ 439, 1939-ին՝ 651, 1959-ին՝ 455, 1970-ին՝ 330, 1979-ին՝ 307, 2001-ին՝ 270, 2004-ին՝ 268 բնակիչ, որոնց մի մասը 1828-29թթ. այստեղ են գաղթել Պարսկաստանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղի 1700թ. սբ. Աստվածածին եկեղեցին կանգուն է: Գյուղի մոտ են գտնվում "Սպիտակ Աղբյուրի Խաչ" եկեղեցին, 10-19դդ. խաչքարերով գերեզմանոց: 2 կմ արլ.՝ "Շինատեղ", 3 կմ արմ.՝ "Խաչի Խութ" գյուղատեղիները: 1 կմ հվ. գտնվում են "Ծավիկ" հին բնակավայրի մնացորդները:

**ԵՆԳԻՋԱ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Միսավան**:

**ԵՆԻ ՅՈԼ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Աղվորիկ**:

**ԵՆԻՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Տրետուք**:

**ԵՆՈՔԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում,Սառնաջուր գետի ափին, մարզկենտրոնից 14 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 301, 1897-ին՝ 556, 1926-ին՝ 471, 1939-ին՝ 631, 1959-ին՝ 580, 1970-ին՝ 561, 1979-ին՝ 489, 1989-ին՝ 447, 2001-ին՝ 576, 2004-ին՝ 489 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են եկել ավելի քան 170 տարի առաջ Սնքար գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, բանջարաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղի մեջ է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Աստղի բլուր" դամբարանադաշտը: Շրջակայքում են սբ. Սարգիս

(13դ.), սբ. Հովհաննես (12-14դդ.), "սբ. Օկոնախաչ" (12-13դդ.) եկեղեցիները; սբ. Աստվածածին (13դ.) և սբ. Սարգիս (12-13դդ.) մատուռները:

**ԵՐԱԶԳԱՎՈՐՍ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյանի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ` 1480 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 13 կմ հվ-արմ.: Բնակչությունը՝ 1886թ.-300, 1897թ.-397, 1926թ.-925, 1939թ.-1282, 1959թ.-1070, 1970թ.-1100, 1979թ.-1103, 2001թ.-1489, 2004թ.-1446 բնակիչ, որոնց մի մասը 1921թ. գաղթել են պատմական Երազգավորս ավանից և Մուշի Արտոնք գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և ճակնդեղի մշակությամբ: Ունի մի եկեղեցի:

**ԵՐԱՄՈՒՍ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Արամուս**:

**ԵՐԱՆՈՍ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գեղարքունյաց շղթայի հվ-արլ. ստորոտին, Ձագ գետի ստորին հոսանքում, մարզկենտրոնից 25 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1831-ին ուներ 332, 1897-ին՝ 1794, 1926-ին 2676, 1939-ին՝ 3537, 1959-ին՝ 3277, 1970-ին՝ 4370, 1979-ին՝ 4509, 1989-ին՝ 4960, 2001-ին՝ 5306, 2004-ին՝ 6194 բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ էր եկել 1829-30թթ. Ալաշկերտի գյուղերից: Զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և ծխախոտի մշակությամբ: Գյուղի հս. մասում կա երկու ամրոց՝ "Նեղոցի" (մ.թ.ա. 3-րդ հզմ.) և "Շեն" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ): Գյուղում կա սբ. Հովհաննես անունով եկեղեցի-սրբավայր (1215թ.), "Թուխ Մանուկ", "Խոնարհված Սուրբ", սբ. Սոֆիա մատուռներ, դամբարաններ և 15-17դդ. խաչքարեր (**Վարդերես**, **Ձագ**):

**ԵՐԱՍԽ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 36 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 810 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 34; 1914-ին՝ 147, 1916-ին՝ 1194, 1931-ին՝ 185, 1959-ին՝ 372, 1970-ին՝ 519, 1979-ին՝ 817, 2001-ին՝ 729, 2004-ին՝ 803 բնակիչ, որոնց մեծ մասը գաղթականներ են: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ:

**ԵՐԱՍԽԱՀՈՒՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 14 կմ հվ-արլ., հարթավայրում: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 390, 1939-ին՝ 373, 1959-ին՝ 525, 1970-ին՝ 816, 1979-ին՝ 1013, 2001-ին՝ 1461, 2004-ին՝ 1679 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, թռչնաբուծությամբ, հացահատիկի և խորդենու մշակությամբ (**Արազիկ**):

**ԵՐԵՎԱՆ**- Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը, գտնվում է Արարատյան դաշտի հս-արլ. մասում, Երևանի գոգավորության վրա, Հրազդան գետի երկու ափերին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 850-1370 մ: 1897թ. ուներ 29006, 1926-ին՝ 64649, 1939-ին՝ 204214, 1959-ին՝ 509340, 1979-ին՝ 1019200, 1989-ին՝ 1201539, 1991-ին՝ 1234500, 2001-ին՝ 1103488, 2004-ին՝ 1102600 բնակիչ: ՀՀ խոշորագույն տնտեսական և մշակութային կենտրոնն է: Բնակչության հիմնական զբաղմունքը արդյունաբերական և սպասարկման ոլորտն է: **Ե.** է կազմավորվում երկրի համախառն արդյունքի առավելագույն մասը: Քաղաքը հիմնադրվել է մ.թ.ա. 782թ. Արգիշտի I թագավորի կողմից: Իր

գոյության 2787 տարվա ընթացքում **Ե.** բազմաթիվ անգամ դարձել է թեժ մարտերի և հայ ժողովրդի համար ճակատագրական իրադարձությունների թատերաբեմ: 19-րդ դարի I-ին կեսին **Ե.** դարձավ հայ ժողովրդի համախմբման այն կիզակետը, որի շուրջը հետագայում կազմավորվեց մեր նորագույն պետականությունը: **Ե.** հարուստ է տարբեր ժամանակաշրջանների պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ են զըտ-նըվում Շենգավիթի հնավայրը (մ.թ. ա. 4-րդ-2-րդ հզմ.), Կարմիր բլուրը, իր Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդի մնացորդներով (մ.թ.ա. 8-րդ-7-րդ դդ.), և Արին-Բերդը, Էրեբունի բերդով (մ.թ.ա. 8-րդ դ.): **Ե.** կան՝ սբ. Կաթողիկե (13դ.), սբ. Զորավոր (1705թ.), սբ. Հովհաննես (1710թ.), սբ. Սարգիս (1853թ.), սբ. Գրիգոր Լուսավորիչ (2001թ.) և այլ եկեղեցիներ: Քաղաքի տարածքում է գտնվում Կարմիր կամուրջը (1679թ.): **Ե**. հարուստ է 19-20դդ. քաղաքացիական շինություններով, որոնք պատկերացում են տալիս քաղաքի ոչ հեռու անցյալի մասին (**Էրեբունի**):

**ԵՐԻԶԱԿ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճի հվ. կողմում, սարալանջի վրա: Բարձրությունը ծովի մակերեվույթից ՝ 2120 մ, Զարիշատ գյուղից 3 կմ հվ.: Բնակչությունը՝ 1897թ.-118, 1926թ.-307, 1939թ.-278, 1959թ.-219, 1970թ.-400, 1980թ.-471, 1989թ.-101 բնակիչ: **Ե.** է վերանվանվել 03.04. 1991թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ (**Իբիշ**):

**ԵՐԻՑԱԹՈւՄԲ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Բարձրավան**:

**ԵՐԻՑՎԱՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Արծվանիկ**:

**ԵՐՆՋԱՏԱՓ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արայի լեռան հս. ստորոտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: Բնակչությունը՝ 1873թ.-589, 1897թ.-780, 1926թ.-816, 1939թ.-962, 1959թ.-488, 1970թ.-409, 1979թ.-286, 2001թ.-490, 2004թ.-484 բնակիչ: Գյուղը հիմնադըրվել է 1829-30թթ. Արմ. Հայաստանից եկած գաղթականների կողմից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում է գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (12-13դդ.): **Ե**-ից 1 կմ հս-արմ. գտնվում է “Երնջակ” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 2,5 կմ արմ.՝ “Դավոյի” գյուղատեղին (10-14դդ.), 3 կմ արմ.՝ “Լազգի աղբյուր” գյուղատեղին (1015դդ.), իսկ 2 կմ արմ.՝ “Աստվածընկալ” վանքը (5-13դդ.):

**ԵՐՎԱՆԴԱՇԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, Արաքս և Ախուրյան գետերի միախառնման անկյունում, մեղմաթեք սարավանդի վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 975 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 43 կմ հվ-արմ.: Բնակիչների մի մասը եկել է Անիի և Թալինի տարածաշրջաններից: 1831թ. ուներ 301, 1897-ին՝ 472, 1926-ին՝ 401, 1939-ին՝ 525, 1959-ին՝ 504, 1970-ին՝ 472, 2001-ին՝ 695, 2004-ին՝ 698 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Գյուղի մոտ պահպանված են Երվանդաշատ մայրաքաղաքի (մ.թ.ա. 3-րդ-2-րդ դդ.) ավերակները և 4-5դդ. բազիլիկ եկեղեցին:

# Զ

**ՁԱՀՄԵԹ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Խաչփառ**:

**ՁԱՆԳԱԿԱՏՈւՆ**- գյուղ Արարատի մարզում, Արաքսի ձախակողմյան Արածոգետ վտակի ձախ ափին, Գեղամա լեռների հվ. վերջավորության, լերկ ու բուսականությունից աղքատ լանջերին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1730 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 56 կմ հվ-արլ.: Գյուղը հիմնադրվել է 1831թ., 03.04. 1991թ. վերանվանվել է **Զ.**: Բնակչությունը՝ 1831թ.-209, 1897թ.-1129, 1926թ.-619, 1939թ.-1124, 1959թ.-814, 1979թ.-968, 1989թ.-972, 2001թ.-1142, 2004թ.-1159 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղից 3 կմ հս. զըտնըրվում է Հորթուն գյուղատեղին (9-20դդ.) իր համանուն եկեղեցիով (12-13դդ.) և "Սպիտակ Վանք" գյուղատեղին (13-17դդ.) եկեղեցական համալիրով (13դ.), իսկ 1 կմ հս.՝ սբ. Հովհաննես եկեղեցին (1811թ.) (**Չանախչի**, **Սովետաշեն**):

**ՁԱՆԳԻԼԱՐ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Զորակ**:

**ՁԱՌ**- գյուղ Կոտայքի մարզում, Հատիս լեռան հվ-արլ. լանջին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1670 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 47 կմ հվ.: 1831թ. ուներ 89, 1897-ին՝ 1143, 1926-ին՝ 895, 1939-ին՝ 1299, 1959-ին՝ 847, 1970-ին՝ 976, 1979-ին՝ 953, 1989-ին՝ 1386, 2001-ին՝ 1386, 2004-ին՝ 1522 բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել են Վանից, Մանազկերտից, ինչպես նաև Պոլսից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, դաշտավարությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղի հս-արմ. մասում կան մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոց, մ.թ.ա. 3-րդ-2-րդ հզմ. դամբարանադաշտ և եկեղեցի (վերականգնված 1977թ.):

**ՁԱՌԻԹԱՓ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ կողմում, ծովի մակերևույթից 1570 մ բարձրության վրա, մարզկենտրոնից՝ 27 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 98, 1897-ին՝ 721, 1926-ին՝ 815, 1939-ին՝ 1616, 1959-ին՝ 1554, 1970-ին՝ 1636, 1979-ին՝ 1509, 2001-ին՝ 1424, 2004-ին՝ 1286 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղում կան 19դ. եկեղեցի, ամրոցներ (17-18դդ.), հս-արլ. մասում՝ սբ. Վառվառա մատուռ (19դ.) (**Փշոնք**):

**ՁԱՌԻՆՋ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Ջարինջա**:

**ՁԱՌԻՎԵՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Կուտական գյուղից 1 կմ հվ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: **Զ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1829-32թթ. ուներ 192 բնակիչ, հետագայում լքվել է, իսկ 1960-ական թթ. նորից է բնակեցվել: 1970թ. ուներ 341, 1989-ին՝ 174 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և ծխախոտագործությամբ (**Զող սովխոզ**, **Աղյոխուշ**):

**ՁԱՌՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Կութ**:

**ՁԱՐԹՈՆՔ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 13 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: 1989թ. ուներ 2988, 2001-ին՝ 1883, 2004-ին՝ 2142 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, անասնաբուծությամբ և թռչնաբուծությամբ:

**ՁԱՐԻՆՋԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 67 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1660 մ: 1873թ. ուներ 268, 1897-ին՝ 514, 1926-ին՝ 585, 1939-ին՝ 815, 1959-ին՝ 589, 1979-ին՝ 508, 2001-ին՝ 646, 2004-ին՝ 704 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի հս. մասում է գտնվում սբ. Խաչ (Կարմիր վանք) եկեղեցին (7դ.), 3 կմ արլ.՝ "Կոնդ" գյուղատեղին (17-18դդ.) (**Զառինջ**):

**ՁԱՐԻՇԱՏ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճից 7-8 կմ հվ-արլ.: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 2050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ հս.: **Ձ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1897թ. ուներ 310, 1926-ին՝ 120, 1939-ին՝ 689, 1959-ին՝ 321, 1979-ին՝ 223, 1989-ին՝ 60, 2001-ին՝ 82, 2004-ին՝ 87 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է կերային կուլտուրաների և ճակնդեղի մշակությամբ (**Ղոնջալի**):

**ՁԵՂԵԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների հս. փեշերին, ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 17 կմ հվ-արլ.: 1991թ. վերանվանվել է **Ձ.**: 1831թ. ուներ 67, 1897-ին՝ 324, 1926-ին՝ 148, 1939-ին՝ 311, 1959-ին՝ 188, 1970-ին՝ 239, 1979-ին՝ 263, 2001-ին՝ 167, 2004-ին՝ 159 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, այգեգործությամբ և դաշտավարությամբ: Գյուղի տարածքում կան հին գյուղատեղիներ, խաչքարեր, մոտակայքում՝ Քարատակ գյուղատեղին (**Ձեյթա**):

**ՁԵՅԹԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Ձեղեա**:

**ՁՈՂ** - գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Սոթք**:

**ՁՈՂ ՍՈՎԽՈԶ**- նախկինում ավան Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ջառիվեր**:

**ՁՈԼԱԽԱՉ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տես՝ **Ձոլաքար**:

**ՁՈԼԱՔԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Ձոլաքար գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 45 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1985 մ բարձրության վրա: **Ձ.** է վերանվանվել 03.01. 1925թ.: 1829-32թթ. ուներ 46 տուն (298 շունչ) , 1897-ին՝ 2071, 1926-ին՝ 3139, 1939-ին՝ 3654, 1959-ին՝ 3527, 1970-ին՝ 4832, 1979-ին՝ 5172, 1989-ին՝ 5578, 2001-ին՝ 6205, 2004-ին՝ 6878 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Բայազետի Զիրոյ գյուղից: Զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ և դաշտավարությամբ: **Ձ.** կա սբ. Գևորգ եկեղեցի (վերակառ. 19դ.): Շրջակայքում են գտնվում "Թուխ Մանուկ" և սբ. Դավիթ (13դ.) սրբավայրերը: Պահպանվում են նաև այլ հնություններ (խաչքարեր, գերեզմաններ), որոնք վերաբերում են 14 և հետագա դդ.: Խաչքարերից աչքի է ընկնում հատկապես մեկը, որը սովորականից շատ խոշոր է՝ "Ձոլախաչ" (13դ.) (**Ակնախաչ**, **Ձոլախաչ**, **Ձորավոր խաչ**):

**ՁՈՎԱԲԵՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Հրազդան գետի վերին հոսանքի աջ ափին, մարզկենտրոնից 48 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 339, 1897-ին՝ 989, 1926-ին՝ 1133, 1939-ին՝ 1412, 1959-ին՝ 900, 1970-ին՝ 1230, 1979-ին՝ 1299, 1989-ին՝ 1422, 2001-ին՝ 1603, 2004-ին՝ 1660 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի տարբեր գավառներից և Պարսկահայաստանի Մակուի շրջանից 1829-30, 1878-79 և 1915-20թթ.:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի կենտրոնում է գտնվում սբ. Ստեփանոս (1860թ.) եկեղեցին, արմ. մասում է "Թուխ Մանուկ" (14-15դդ.), իսկ հվ-արլ. եզրին. "Սանդուխտ" (13-14դդ.) մատուռները:

**ԶՈՎԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Լանջազատ**:

**ԶՈՎԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Ուրցալանջ**:

**ԶՈՎԱՇԵՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Հատիս լեռան հս-արլ. փեշերին, մարզկենտրոնից 55 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 201, 1897-ին՝ 374, 1926-ին՝ 246, 1939-ին՝ 372, 1970-ին՝ 287, 1979-ին՝ 204, 1989-ին՝ 196, 2001-ին՝ 196, 2004-ին՝ 217 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-18թթ. այստեղ են գաղթել Վանի, Մուշի, Սասունի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղում կան 11-13դդ. եկեղեցի, 10-14դդ. խաչքարերով գերեզմանոց:

**ԶՈՎԱՍԱՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արմ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 61 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2100 մ: Բնակչությունը՝ 1873թ.-383, 1931թ.-819, 1959թ.-693, 1970թ.-661, 1979թ.-553, 2001թ.-596, 2004թ.-641 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Սասունի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի մեջ է գտնվում 19դ. "Զորավոր" եկեղեցին:

**ԶՈՎՈՒՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի աջ ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1185 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 45 կմ հվ-արմ.: **Զ.** է վերանվանվել 04.04.1972թ.: 1975թ. ուներ 2555, 1979-ին՝ 3154, 1989-ին՝ 4378, 2001-ին՝ 4964, 2004-ին՝ 5186 բնակիչ: Բնակիչների հիմնական մասը այստեղ է տեղափոխվել 1960-ական թթ. Ապարանի տարածաշրջանի Զովունի գյուղից, վերջինիս Ապարանի ջրամբարի ջրի տակ մնալու պատճառով: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի արլ. եզրին կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. կիկլոպյան ամրոց (**"Զովունի" սովխոզին կից**):

**"ԶՈՎՈՒՆԻ" ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Զովունի**:

**ԶՈՎՔ**- գյուղ Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 50 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 273, 1897-ին՝ 524, 1926-ին՝ 224, 1939-ին՝ 439, 1959-ին՝ 423, 1970-ին՝ 482, 1979-ին՝ 566, 1989-ին՝ 669, 2001-ին՝ 897, 2004-ին՝ 959 բնակիչ, որոնց մի մասը եկել են Արամուս գյուղից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարաությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղի մոտակայքում է զըտ-նըվում "Ճգնավոր" քարայրը:

**ԶՈՐԱԿ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախափնյա հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1712թ., իսկ 03. 04.1991թ. այն վերանվանվել է **Զ.**: 1831թ. ուներ 355, 1897-ին՝ 1077, 1926-ին՝ 499, 1939-ին՝ 738, 1959-ին՝ 868, 1970-ին՝ 1266, 1979-ին՝ 1472, 1989-ին՝ 2229, 2001-ին՝ 1631, 2004-ին՝ 1390 մարդ: Բնակչությունը զբաղվում է

այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում հայտնաբերվել է մ.թ.ա. 3-րդ հզմ. բնակատեղի (**Զանգիլար**):

**ԶՈՐԱԿԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 60 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 600 մ բարձրության վրա: **Զ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 43, 1897-ին՝ 403, 1926-ին՝ 564, 1939-ին՝ 746, 1959-ին՝ 817, 1970-ին՝ 1309, 1979-ին՝ 1321, 1989-ին՝ 1109, 2001-ին՝ 1089, 2004-ին՝ 978 բնակիչ, որոնց նախնիները Ղազախի շրջանի Շըխլը և այլ գյուղերից են: 1988-89թթ. Չարդախլու գյուղից այստեղ են բռնագաղթվել մեծ թվով հայեր: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից մոտ 5 կմ հս-արլ. կան հին ամրության ավերակներ (**Վերին Քյորփլու**):

**ԶՈՐԱԿԵՐՏ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճի հս-արլ. ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 2030 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 42 կմ հս-արմ.: Հիմնադրվել է 19դ. սկզբներին: **Զ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: Բնակչությունը՝ 1886թ.-205, 1922թ.-119, 1931թ.-205, 1964թ.-300, 1970թ.-440, 1979թ.-472, 1989թ.-212, 2001թ.-152, 2004թ.-109 բնակիչ, որոնք տեղափոխվել են ոչ հեռու գտնվող Խանջալլի գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ (**Բալըխլի**):

**ԶՈՐԱՎԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1583 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 35 կմ հվ-արմ.: **Զ.** հիմնվել է 1980թ., 1960-ական թթ. ապաբնակեցված Փոքրավանք գյուղի տեղում: **Զ.** է կոչվել խոշոր եղջերավոր անասունների մատղաշի աճեցման և բտման համալիրին կից բնակավայրը: 1873թ. ուներ 118, 1879-ին՝ 182, 1926-ին՝ 226, 1939-ին՝ 253, 1959-ին՝ 304, 1989-ին՝ 1361, 2001-ին՝ 1312, 2004-ին՝ 1583 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղից 1 կմ արլ. գտնվում են մ.թ.ա. 3-րդ հզմ.-մ.թ.13դ. "Զորավանք" ամրոցը և սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին (19դ.) (**Խաչոյի գյուղ**, **Կարգավանք**, **Փոքրավանք**):

**ԶՈՐԱՎՈՐ ԽԱՉ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Զոլաքար**:

**ԶՎԱՐՃԱԶՈՐ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Փանիկ**:

**ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Շիրակի մարզում, Քարախաչ լեռնանցքի արմ. կողմի լեռնալանջի ստորոտում: Հեռավորությունը մարզկենտրոնից 36 կմ հս., ծովի մակերևույթից 2010 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 311, 1897-ին՝ 549, 1926-ին՝ 499, 1939-ին՝ 709, 1959-ին՝ 500, 1970-ին՝ 365, 1979-ին՝ 330, 2001-ին՝ 417, 2004-ին՝ 419 բնակիչ, որոնց նախնիները 1878թ. այստեղ են գաղթել Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և խոտաբույսերի մշակությամբ: Գյուղում կա 19դ. քարաշեն կիսավեր եկեղեցի:

# Է

**ԷԼԱՌ**- նախկինում գյուղ Կոտայքի մարզում,տե՛ս **Արովյան**:
**ԷԼԼԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Լորասար**:
**ԷՋՄԻԱԾԻՆ**- քաղաք Արմավիրի մարզում, տե՛ս **Վաղարշապատ**:
**ԷՎԼՈւ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ձորամուտ**:
**ԷՐԵԲՈւՆԻ**- հնագույն քաղաք-ամրոց Երևանի տարածքում, տե՛ս **Երևան**:

# Ը

**ԸՂՆԱՁՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Աղավնաձոր**:
**ԸՂՎԵՐԾ**- պատմական գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Դարբաս**:
**ԸՆԿՂԱԿՈԹ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Անգեղակոթ**:

# Թ

**ԹԱԳԱՎՈՐԱՆԻՍՏ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Մարգահովիտ**:
**ԹԱՋԱԳՅՈւՂ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Այնթապ**:
**ԹԱՋԱԳՅՈւՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տես **Ծովասար**:
**ԹԱՋԱԳՅՈւՂ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Նոր Գյուղ**:
**ԹԱՋԱԳՅՈւՂ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Թասիկ**:
**ԹԱԹՈւԼ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արտենի լեռան հվ-արլ. ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 54 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1540 մ: Բնակչությունը՝ 1873թ.-156, 1914թ.-164, 1922թ.-457, 1959թ.-886, 1970թ.-746, 1973թ.-746, 1979թ.-720, 2001թ.-819, 2004թ.-923 բնակիչ: Նախնիները գաղթել են Կարսի մարզի Ծբնի, Նախիջևան, Ագրակ, Ջալալ, Մավրակ և Բագրան գյուղերից: **Թ**. է վերանվանվել 04.07.2006թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ (**Արեգ**):
**ԹԱԻՐՈՎ**- գյուղ Արմավիրի մարզում, Երևան-Վաղարշապատ ավտոմայրուղու վրա, Փարաքարից 1 կմ արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 875 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1921թ.: 1970թ. ուներ 1015, 1979-ին՝ 1627, 2001-ին՝ 2170, 2004-ին՝ 2773 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ (**№ 1 սովխոզին կից**, **Թաիրովի անվան սովխոզին կից**, **Թաիրովի անվան**):
**ԹԱԻՐՈՎԻ ԱՆՎԱՆ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Թաիրով**:
**ԹԱԻՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Թաիրով**:

**ԹԱԼԻՆ**- քաղաք Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1585 մ: Բնակչությունը՝ 1831թ.-166, 1873թ.-1025, 1897թ.-1438, 1914թ.-1558, 1926թ.-1091, 1939թ.-2255, 1959թ.-2469, 1979թ.-4227, 2001թ.-5614, 2004թ.-5600 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշի և Սասունի գյուղերից: **Թ.** է վերանվանվել 25.01.1978թ.: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Քաղաքի հս. մասում են գտնվում "Թալին" քաղաքատեղին (մ.թ.ա. 2-1 հզմ.) իր համանուն ամրոցով (մ.թ.ա. 4 հզմ.), Թալինի Կաթողիկե եկեղեցական համալիրը (4-20դդ.), "Կաթողիկե" (7դ.), սբ. Աստվածածին (613-615թթ.), սբ.Գևորգ (19դ.) եկեղեցիները և 19դ. "Սանդուխտ կույս" մատուռը: Արլ. եզրին է մ.թ.ա. 4-րդ-3-րդ հզմ. "Մեծ Թալին" դամբարանը (**Վերին Թալին**):

**ԹԱԼԻՇ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Արուճ**:

**ԹԱՂՏՈւՆ**- գյուղ Սյունիքի մարզում,տե՛ս **Վանանդ**:

**ԹԱՆԱՀԱՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի հովտում, մարզկենտրոնից 118 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1975 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 208, 1897-ին՝ 333, 1926-ին՝ 87, 1939-ին՝ 209, 1959-ին՝ 268, 1970-ին՝ 284, 1979-ին՝ 229, 1989-ին՝ 59, 2001-ին՝ 42, 2004-ին՝ 70 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում կան ավերակ եկեղեցի և գերեզմանոց: Մոտակայքում է գտնվում "Պըղըն" գյուղատեղին:

**ԹԱՌԱԹՈւՄԲ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփայի ավազանի Թառատուն գետի ափին, ծովի մակերևույթից 1640 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 24 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 56, 1914-ին՝ 383, 1931-ին՝ 465, 1970-ին՝ 641, 1979-ին՝ 487, 2001-ին՝ 555, 2004-ին՝ 464 բնակիչ, որոնց զգալի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Խոյի շրջանի Ղորուղ գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտա-գործությամբ և այգեգործությամբ: Գյուղում կան 10-12դդ. խաչքարեր:

**ԹԱՍԻԿ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան վտակ Սիսիան գետի ձախ օժանդակ Կամրջաձորի հովտում, մարզկենտրոնից 113 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1725 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 158, 1897-ին՝ 557, 1926-ին՝ 542, 1939-ին՝ 448, 1959-ին՝ 420, 1970-ին՝ 394, 1979-ին՝ 306, 2001-ին՝ 274, 2004-ին՝ 294 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են տեղափոխվել նույն շրջանի Հացավան գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, ծխախոտի մշակությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղից հվ. գտնվում են միջին դարերի հայտնի Թանահատ վանքը, սրբատեղի, ավերակ գյուղատեղիներ և այլ հնություններ (**Թազագյուղ**):

**ԹԱՎՇՈւՏ**- գյուղ Շիրակի մարզում, Ծաղկաշեն գետի աջափնյա շրջանում, մարզկենտրոնից 44 կմ հս., ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա: 1886թ. ուներ 125, 1897-ին՝ 166, 1926-ին՝ 224, 1939-ին՝ 406, 1959-ին՝ 387, 1970-ին՝ 352, 1979-ին՝ 356, 2001-ին՝ 370, 2004-ին՝ 420 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ: Գյուղում կան մատուռ, խաչքարեր և հին գերեզմաններ:

**ԹԱՓԱՔՅՈՅ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Բերդաշեն**:

**ԹԱՔՅԱՌԼՈւ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Արտավազ**:

**ԹԵԺԱՌՈւՅՔ**- պատմական գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Մեղրաձոր**:

**ԹԵՂԵՆԻՔ**- գյուղ Կոտայքի մարզում, Երևան-Աղվերան ավտոճանապարհից ոչ հեռու: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 26 կմ հվ-արմ.: **Թ.** է վերանվանվել 30.07. 1980թ.: 1831թ. ուներ 92, 1897-ին՝ 333, 1926-ին՝ 289, 1939-ին՝ 448, 1959-ին՝ 305, 1970-ին՝ 350, 1979-ին՝ 379, 1989-ին՝ 479, 2001-ին՝ 559, 2004-ին՝ 619 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Կարսի և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, հացահատիկի և բազմամյա կերաբույսերի մշակությամբ: Գյուղում կա 7դ. "Ծաղկեվանք" եկեղեցի, իսկ արմ. կողմում՝ "Թղիթ" հնավայրը (**Թղիթ**):

**ԹԵՂՈւՏ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջ վտակ՝ Շնողի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 750 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 70 կմ հս-արլ.: 1926թ. ուներ 288, 1939-ին՝ 475, 1959-ին՝ 762, 1964-ին՝ 861, 1979-ին՝ 639, 2001-ին՝ 746, 2004-ին՝ 693 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի շրջակայքում կան միջնադարյան պատմաճարտարապետական կոթողներ՝ "Մանստնի" մենաստանը (13դ.), Վարդան զորավար կոթողը (13-14դդ.), 10-17դդ. եկեղեցիներ, "Բայրել" (10-13դդ.), "Ձորի գյուղ" (14դ.) և "Ագեղցի" մատուռները:

**ԹԵՂՈւՏ**- գյուղ Տավուշի մարզում, Դիլիջան-Իջևան ճանապարհի վրա, Աղստև գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 28 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 267, 1959-ին՝ 613, 1970-ին՝ 770, 1987-ին՝ 1234, 2001-ին՝ 1353, 2004-ին՝ 1239 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարեղենի մշակությամբ: Գյուղից 5 կմ հս., "Ճեռի հողեր" հանդամասում, գտնվել են Հայոց թագավոր Արտաշես Ա-ի (189-160թթ.) թողած երկու սահմանաքարերը արամեերեն գրով:

**ԹԹՈւՋՈՒՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի ձախ կողմում, Ծաղկունյաց լեռների արմ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 37 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1910 մ: Բնակչությունը՝ 1831թ.-146, 1873թ.-380, 1926թ.-632, 1939թ.-661, 1959թ.-419, 1970թ.-436, 1979թ.-337, 2001թ.-356, 2004թ.-324 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ալաշկերտի և Մուշի շրջաններից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, բանջարեղենի մշակությամբ, թռչնաբուծությամբ և մեղվապահությամբ: Գյուղում է գտնվում 19դ. սբ.Հարություն եկեղեցին, իսկ հվ. մասում պահպանվել է 17դ. "Կարմիր վանք" մատուռը:

**ԹԹՈւՋՈՒՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գետիկի ափին, մարզկենտրոնից 79 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1740 մ բարձրության վրա: 1922թ. ուներ 608, 1931-ին՝ 1012, 1939-ին՝ 910, 1959-ին՝ 1185, 1970-ին՝ 1247, 1979-ին՝ 1081, 1989-ին՝ 1197, 2001-ին՝ 1069, 2004-ին՝ 1740 բնակիչ, որոնց մի մասը եկել է Բերդի տարածաշրջանի գյուղերից: Բնակչությունը ըզ-բաղվում է կարտոֆիլի և ծխախոտի մշակությամբ: Գյուղում կա ավերված եկեղեցի՝ "Կոտրած Եղցի" անունով

(10-12դդ.), մոտակայքում՝ Սարուկապ գյուղատեղի (17-18դդ.), մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտ : Գյուղից արմ. կա 19-րդ դ. կամուրջ:

**ԹԼԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 72 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1345 մ: 1873թ. ուներ 137, 1897-ին՝ 173, 1926-ին՝ 197, 1939-ին՝ 565, 1959-ին՝ 420, 1970-ին՝ 558, 1979-ին՝ 507, 2001-ին՝ 161, 2004-ին՝ 216 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ԹԽԿՈւՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրի գետի միջին հոսանքի ձախ ափին: Վարդանիձոր գյուղից 1 կմ հս., ծովի մակերևույթից 1200 մ բարձրության վրա: **Թ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 18, 1897-ին՝ 213, 1926-ին՝ 73, 1939-ին՝ 134, 1959-ին՝ 161, 1970-ին՝ 179, 1979-ին՝ 178, 2001-ին՝ 49, 2004-ին՝ 62 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի մոտ կա պղնձամոլիբդենային հանքավայր (**Վերին Վարդանաձոր**, **Մարալզամի**):

**ԹՂԻԹ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Թեղենիք**:

**ԹՈԽԼՈւՋԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Դրախտիկ**:

**ԹՈՎՈւՋ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Տավուշ**:

**ԹՈՐՈՍԳՅՈւՂ**- գյուղ Շիրակի մարզում, Հողմաջուր գետի միջին հոսանքի աջափնյակի շրջանում, մարզկենտրոնից 21 կմ հս., ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 180, 1873-ին՝ 435, 1897-ին՝ 589, 1919-ին՝ 977, 1926-ին՝ 461, 1931-ին՝ 511, 1939-ին՝ 648, 1959-ին՝ 321, 1979-ին՝ 287, 1980-ին՝ 316, 2001-ին՝ 325, 2004-ին՝ 313 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի սբ. Աստվածածին եկեղեցի (վերակառուցված 1865թ.), Նարեկ սրբատեղի (18դ.) և մատուռ:

**ԹՈւՉՆԱԲՈւԾԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Շահումյանի թռչնաֆաբրիկային կից**:

**ԹՈւՄԱՆՅԱՆ**- քաղաք Լոռու մարզում, Դեբեդ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 850 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 38 կմ հս-արլ.: 1926թ. ուներ 42, 1959-ին՝ 2640, 1964-ին՝ 2864, 1980-1881, 2001-ին՝ 1909, 2004-ին՝ 1900 բնակիչ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ, իսկ մի մասը նաև արդյունաբերությամբ (**Ջաղիձոր**):

**ԹՈւՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Հաղթանակ**:

# Ժ

**ԺԴԱՆՈՎ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Մայիսյան**:

**ԺԴԱՆՈՎԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻ 2-ՐԴ ՄԱՍԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մայիսյան**:

# Ի

**ԻԲԻՇ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Երիզակ**:

**ԻԳԱՀԱՏ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Այգեհատ**:

**ԻԾԱՔԱՐ**- գյուղ Տավուշի մարզում, Բերդ-Իջևան ճանապարհի վրա, մարզկենտրոնից 39 կմ արլ., ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 125, 1939-ին՝ 344, 1959-ին՝ 406, 1970-ին՝ 516, 1979-ին՝ 384, 2001-ին՝ 380, 2004-ին՝ 289 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ. Խաչ եկեղեցի (1903թ.), իսկ 7 կմ հվ-արմ.՝ 11-15դդ. եկեղեցի և խաչքարերով գերեզմանոց:

**ԻՇԽԱՆԱՍԱՐ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 99 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: **Ի.** է վերանվանվել 04.07.2006թ.:1897թ. ուներ 407, 1926-ին՝ 122, 1939-ին՝ 441, 1959-ին՝ 587, 1979-ին՝ 651, 2001-ին՝ 147, 2004-ին՝ 195 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Ղզըլջուղ**):

**ԻՋԵՎԱՆ**- քաղաք Տավուշի մարզում, մարզկենտրոն: Գտնվում է Աղստև գետի ափին, Երևանից 124 կմ հեռու է: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 700 մ բարձրության վրա: Քաղաք է 1961 թ-ից: 1831թ. ուներ 440, 1873-ին՝ 1016, 1897-ին՝ 1790, 1926-ին՝ 2261, 1939-ին՝ 4426, 1959-ին՝ 7639, 1976-ին՝ 15006, 1989-ին՝ 18681, 1991-ին՝ 19100, 2001-ին՝ 20223, 2004-ին՝ 20300 բնակիչ, որոնք հիմնականում աշխատում են քաղաքի և նրա մոտակայքի արդյունաբերական ձեռնարկություններում և զբաղվում են գյուղատնտեսությամբ: Քաղաքի արդյունաբերության մեջ որոշակի տեղ են զբաղվում գորգագործությունը և սննդի ձեռնարկությունները: Հին Քարվանսարան գտնվում էր այժմյան Իջևան քաղաքից 10 կմ հվ., Աղստևի ձախ ափին: Քաղաքի արմ. մասում է գտնվում 13դ. սբ. Հովհաննես եկեղեցին (**Քարվանսարա**):

**ԻՍԱՀԱԿՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ կողմում, մարզկենտրոնից 25 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1470 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 325, 1897-ին՝ 596, 1926-ին՝ 451, 1939-ին՝ 596, 1959-ին՝ 588, 1970-ին՝ 502, 1979-ին՝ 532, 2001-ին՝ 960, 2004-ին՝ 1065 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել է Ալաշկերտից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Այստեղ են գտնվում Ա. Իսահակյանի թանգարանը և արձանը, սբ. Հակոբ (1840թ.), Պողոս-Պետրոս (10-12դդ.), սբ. Աստվածածին (7դ.) եկեղեցիները և "Աննայի մասունք" մատուռը:

**ԻՐԻՆԴ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արմ. լանջին:

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 46 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մ: 1831թ. ուներ 29, 1873-ին՝ 179, 1897-ին՝ 352, 1926-ին՝ 288, 1931-ին՝ 403, 1939-ին՝ 497, 1959-ին՝ 679, 1970-ին՝ 735, 1979-ին՝ 762, 2001-ին՝ 840, 2004-ին՝ 850 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշի և Սասունի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և ծխախոտի մշակությամբ: Գյուղում է գտնվում 7դ. բազմաբսիդ հորինվածքով սբ. Գևորգ եկեղեցին:

# Լ

**ԼԱԼԻԳՅՈՒՂ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Վազաշեն**:

**ԼԱԼՎԱՐԻ ՍՈՎԽՈԶԻ 2-ՐԴ ՄԱՍԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Դեբետավան**:

**ԼԱՆՋԱԶԱՏ**- գյուղ Արարատի մարզում, Ազատ գետի հովտում, նրա ստորին հոսանքի աջ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 965 մ: 1831թ. ուներ 59, 1897-ին՝ 219, 1926-ին՝ 232, 1939-ին՝ 232, 1959-ին՝ 636, 1979-ին՝ 918, 2001-ին՝ 1460, 2004-ին՝ 1405 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյ և Սալմաստ գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարեղենի և բոստանային կուլտուրաների մշակությամբ (**Զովաշեն**):

**ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների արլ. լանջին, Գեղարքունիք գետի ափին, մարզկենտրոնից 7 կմ հվ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 266, 1926-ին՝ 1808, 1939-ին՝ 1626, 1959-ին՝ 1574, 1970-ին՝ 1688, 1979-ին՝ 1842, 1989-ին՝ 2047, 2001-ին՝ 2367, 2004-ին՝ 2415 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Բայազետի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, ծխախոտի մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կա սբ. Խաչ եկեղեցի, որի պատի մեջ ագուցված են եղել Հովհաննես վարպետի 1542 և 1551թթ. կերտած խաչքարերը: Գյուղից 1 կմ հս. “Պառավի դար” վայրում է գտնվում “Պառվի” կամ “Իլկա” վանքը (9-10դդ.) և սբ. Հակոբ եկեղեցին (17դ.): Գյուղի արմ. մասում կան դամբարաններ (մ.թ.ա. 2-ին-1-ին հզմ.), իսկ հվ. մասում՝ կիկլոպյան ամրոց (մ.թ.ա. 1-ին հզմ.):

**ԼԱՆՋԱՆԻՍՏ**- գյուղ Արարատի մարզում, Շաղափի հեղեղատի վերնագավառում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 43 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1815 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 45, 1897-ին՝ 588, 1926-ին՝ 377, 1939-ին՝ 604, 1959-ին՝ 362, 1970-ին՝ 263, 2001-ին՝ 216, 2004-ին՝ 138 բնակիչ: Նախնիները եկել են Պարսկահայաստանի Ղարադաղի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ: Գյուղից 3 կմ հվ-արմ. կա 9-13դդ. գյուղատեղի , 7 կմ հս.՝ “Երանոս” (9-16դդ.), 1

կմ հս.՝ “Հին գյուղատեղ” (13-19դդ.), 7 կմ հս-արլ.՝ Ներքին Արմիկ (10-15դդ.), 1,5 կմ հս-արմ.՝ “Սպիտակ վանք” (13-17դդ.) գյուղատեղիներ: “Սպիտակ վանք” գյուղատեղիում կա համանուն եկեղեցի (1301թ.), “Ներքին Արմիկ” գյուղատեղիում Արմիկի սբ. Ստեփանոս եկեղեցական համալիրը (13-14դդ.), “Հին գյուղատեղ” գյուղատեղիում՝ սբ. Աստվածածին մատուռը (17-19դդ.):

**ԼԱՆՋԱՌ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 55 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ: Գյուղը հիմնադրվել է 1873թ.: 1873թ. ուներ 404, 1897-677, 1926-ին՝ 202, 1939-ին՝ 421, 1959-ին՝ 215, 1970-ին՝ 264, 1979-ին՝ 246, 2001-ին՝ 240, 2004-ին՝ 214 բնակիչ, որոնց նախնիները ներգաղթել են Խոյ և Սալմաստ գավառներից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղից 1 կմ հվ-արմ կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոց:

**ԼԱՆՋԻԿ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 35 կմ հվ., ծովի մակերևույթից 1960 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 411, 1897-ին՝ 664, 1926-ին՝ 663, 1939-ին՝ 719, 1959-ին՝ 699, 1970-ին՝ 837, 1979-ին՝ 777, 2001-ին՝ 924, 2004-ին՝ 1012 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել են Ալաշկերտի, Բասենի և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղում կա սբ. Աստվածածին եկեղեցի և սբ. Խաչ մատուռ:

**ԼԵՀՎԱԶ**- գյուղ Սյունիքի մարզում, Վահրավար և Մեղրի գետերի միախառնման աջափնյա մեղմաթեք սարալանջի վրա: Մարզկենտրոնից 61 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 930 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 15, 1897-ին՝ 346, 1926-ին՝ 270, 1939-ին՝ 414, 1959-ին՝ 724, 1970-ին՝ 898, 1979-ին՝ 1055, 2001-ին՝ 541, 2004-ին՝ 543 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղի մոտ է գտնվում Վերին Լեհվազ լքված բնակավայրը, “Այգեձոր”, “Բողաքար” և “Թեյ” գյուղատեղիները (**Լեվազոձոր**):

**ԼԵՆԻՆԱԿԱՆ**- քաղաք Շիրակի մարզում, տե՛ս **Գյումրի**:

**ԼԵՆՈւՂԻ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 7 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 890 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1920թ.: 1959թ. ուներ 1364, 1970-ին՝ 1561, 1979-ին՝ 1549, 2001-ին՝ 1583, 2004-ին՝ 1669 բնակիչ: 1940-50թթ. այստեղ վերաբնակվել են Եգիպտոսից, Իրանից և այլ երկրներից ներգաղթած տասնյակ ընտանիքներ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պըտ-ղաբուծությամբ և անասնապահությամբ (**№ 6 սովխոզին կից**, **Ստալինի անվան սովխոզին կից**):

**ԼԵՆՈւՂԻ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Խորոնք**:

**ԼԵՋԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Լեջանջուր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1475 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 32 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1886թ.-587, 1897թ.-698, 1926թ.-1347, 1939թ.-1549, 1959թ.-1250, 1979թ.-868, 2001թ.-896, 2004թ.-713 բնակիչ: Նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի տարբեր գավառներից և Կարսի մարզից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում

“Կարմիր վանք” եկեղեցին (1892թ.) և “Գարոյի” վանքը:

**ԼԵՌՆԱԳՅՈՒՂ**- գյուղ Շիրակի մարզում, Հողմաջուր գետի հովտում, մարզկենտրոնից 25 կմ հս., ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 28, 1897-ին՝ 520, 1926-ին՝ 366, 1939-ին՝ 539, 1959-ին՝ 135, 1979-ին՝ 66, 2001-ին՝ 42, 2004-ին՝ 53 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից և Բասենից: Բընակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Պահպանվել է սբ.Հովհաննես եկեղեցին (վերակառուցված 1866թ.) և “Մանուկ Ավետարան” մատուռը:

**ԼԵՌՆԱԳՈԳ**- գյուղ Արմավիրի մարզում, Արտենի լեռան լանջին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1035 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 25 կմ հս-արմ.: Կառուցվել է խոզաբուծական պետական տնտեսության բանվոր-ծառայողների համար: **Լ.** է վերանվանվել 25.01. 1978թ.: 1981թ. ուներ 1100, 1989-ին՝ 2415, 2001-ին՝ 2171, 2004-ին՝ 2112 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ և խոզաբուծությամբ (**Խոզաբուծական սովխոզին կից**):

**ԼԵՌՆԱԿԵՐՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արգիճի գետի ափին, Գեղհովիտ գյուղից 4 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2125 մ բարձրության վրա: **Լ.** է վերանվանվել ՀՍՍՀ Գերագույն խորհրդի 07.12.1945թ. հրամանագրով: 1914թ. ուներ 77, 1959-ին՝ 257, 1979-ին՝ 261, 1989-ին՝ 235, 2001-ին՝ 298, 2004-ին՝ 243 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղին մոտ կան բազալտի հանքեր: Գյուղի գերեզմանոցի կենտրոնում կան կիսաքանդ եկեղեցի՝ սբ. Աստվածածին (11-13դդ.), խաչքարեր (11-15դդ.), իսկ 3-4 կմ հվ.՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտ (**Աղտաշեն**):

**ԼԵՌՆԱԿԵՐՏ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 28 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 320, 1897-ին՝ 1602, 1931-ին՝ 1619, 1970-ին՝ 1466, 1979-ին՝ 1200, 2001-ին՝ 1449, 2004-ին՝ 1450 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1915-18թթ. գաղթել են Ալաշկերտից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է կաթնաանասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:Գյուղի մոտակայքում կան 5դ. բազիլիկ եկեղեցի, Պողոս-Պետրոս մահարձան 12-13դդ. խաչքարերով, կիկլոպյան “Հոխեի Բերդ” և “Սիմոյի Բերդ” ամրոցներ, “Թուխ Մանուկ” մատուռ:

**ԼԵՌՆԱՀՈՎԻՏ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ հս-արմ.: 04.12.1995թ. գյուղը վերանվանվել է Լեռնիհովիտ **Լ.**: 1897թ. ուներ 715, 1926-ին՝ 1411, 1939-ին՝ 1978, 1959-ին՝ 1642, 1970-ին՝ 2110, 1979-ին՝ 1882, 2001-ին՝ 1623, 2004-ին՝ 1571 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի Ալաշկերտի, Մուշի և Կարինի գավառներից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի “Ժամ” եկեղեցի (12-13դդ.) (**Լեռնիհովիտ**):

**ԼԵՌՆԱՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 24 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 53, 1897-ին՝ 357, 1939-ին՝ 411, 1959-ին՝ 386, 1970-ին՝ 556, 1979-ին՝ 435, 2001-ին՝ 416, 2004-ին՝ 329

բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է կաթնաանասնապահությամբ: Այստեղ են գտնվում “Շլորուտ”, “Սարատուն”, “Դալարձոր”, “Աթկըզ”, “Փխրուտ”, “Կաթնառատ”, “Ընչաձոր”, “Քոլի Գեղցի” գյուղատեղիները, “Բաղաբերդ” և “Ջնու” բերդերի ավերակները, 17-18դդ. սբ. Գևորգ եկեղեցին: Գյուղի դիմաց՝ Ողջիի աջ ափին է գտնվում 5-6դդ. սբ. Կաթողիկե եկեղեցին (**Քրդիկանց**):

**ԼԵՌՆԱՄԵՐՁ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 25 կմ. հս-արլ., ծովի մակերևույթից 975 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 38, 1897-ին՝ 355, 1926-ին՝ 57, 1939-ին՝ 226, 1959-ին՝ 221, 1979-ին՝ 363, 2001-ին՝ 405, 2004-ին՝ 504 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բիթլիսի և Սասունի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Շրջակայքում կա մ.թ.ա. 3-րդ հզմ. “Օձաբլուր” բնակատեղի և մ.թ.ա. 3-րդ հզմ. ժայռապատկերներ:

**ԼԵՌՆԱՆԻՍՏ**- գյուղ Կոտայքի մարզում, Մենակսար լեռան հս., կանաչապատ ու ծաղկաշատ լանջին, մարզկենտրոնից 5 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: **Լ.** է վերանվանվել 25.01.1978թ.: 1831թ. ուներ 349, 1897-ին՝ 1624, 1926-ին՝ 2442, 1939-ին՝ 3028, 1959-ին՝ 748, 1970-ին՝ 2300, 1979-ին՝ 2447, 2001-ին՝ 2920, 2004-ին՝ 3168 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. գաղթել է Խոյի, Մակուի ու Սալմաստի գյուղերից : Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կան սբ. Աստվածածին եկեղեցի (1906թ.) և սբ. Հակոբ մատուռ (1893-1902թթ.) (**Կոթգորան**, **Վերին Ախտա**):

**ԼԵՌՆԱՆՑՔ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19 կմ արմ.: **Լ.** է վերանվանվել 19.04.1950թ.: 1873թ. ուներ 316, 1897-ին՝ 604, 1926-ին՝ 880, 1931-ին՝ 847, 1959-ին՝ 880, 1970-ին՝ 1043, 1979-ին՝ 1131, 2001-ին՝ 1305, 2004-ին՝ 1716 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից, Բիթլիսի և Մուշի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է շաքարի ճակնդեղի, հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղից 2 կմ հեռու կա գյուղատեղի “Բակեր” անունով, իսկ գյուղում՝ սբ. Մինաս եկեղեցի (1910թ.), Մարիամ Աստվածածին և “Թուխ Մանուկ” մատուռները (**Սպիտակ**):

**ԼԵՌՆԱՆՑՔ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Փոքրաշեն**:

**ԼԵՌՆԱՇԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Շենաթաղ**:

**ԼԵՌՆԱՊԱՏ**- գյուղ Լոռու մարզում, Լեռնաջուր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հս-արմ.: Գյուղը **Լ.** է վերանվանվել 26.10.1957թ.: 1831թ. ուներ 143, 1897-ին՝ 1253, 1926-ին՝ 1457, 1939-ին՝ 1680, 1959-ին՝ 1462, 1970-ին՝ 1748, 1978-ին՝ 1727, 2001-ին՝ 2030, 2004-ին՝ 1789 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և պտուղ-բանջարեղենի մշակությամբ: Գյուղում են գտնվում 1861թ. բազիլիկ եկեղեցին և սբ. Սարգիս մատուռը (19դ.) (**Մակարաշեն**):

**ԼԵՌՆԱՊԱՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Փամբակի լեռների հվ. լան-

ջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 57 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2140 մ: 1831թ. ուներ 323, 1897-ին՝ 577, 1926-ին՝ 834, 1939-ին՝ 1092, 1959-ին՝ 644, 1970-ին՝ 668, 1979-ին՝ 485, 2001-ին՝ 534, 2004-ին՝ 553 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի մի եկեղեցի, որը կառուցված է 1866թ.: Գյուղից 1,3 կմ հվ-արլ. գտնըվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Բերդի լանջ" ամրոցը:

**ԼԵՌՆԱՎԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Որդնավ գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1775 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ հվ-արմ.: Բնակչությունը՝ 1831թ.-59, 1897թ.-780, 1926թ.-1029, 1939թ.-1100, 1959թ.-848, 1970թ.-1321, 1979թ.-1307, 2001թ.-1590, 2004թ.-2590 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Բասենի և Մուշի գավառներից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան "Ժամ" եկեղեցի (1884թ.), սբ. Նարեկ և "Նոր Սուրբ" ուխտատեղիներ:

**ԼԵՌՆԱՎԱՆՔ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Կապուտան**:

**ԼԵՌՆԱՐՈՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1725 մ: Բնակչությունը՝ 1831թ.-38, 1897թ.-296, 1939թ.-316, 1959թ.-526, 1970թ.-294, 1979թ.-288, 2001-ին՝ 343, 2004թ.-335 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշից և Սասունի Գելեգուզան, Հեթինք, Սպղանք և այլ գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և երկրագործությամբ: Գյուղից հվ. գտնվում է "Խուչեր" գյուղատեղին (մջնդ.) համանուն ամրոցով (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 3 կմ հս.՝ "Դիտվան" գյուղատեղին (վաղ մջնդ.), իսկ 1 կմ հս.՝ "Աղրիկ" գյուղատեղին (14-17դդ.): Կան նաև քարայր-կացարաններ՝ "Բադոյի քարանձավ" (16-18դդ.) և "Սյունով քարափ" (16-18դդ.):

**ԼԵՌՆՀՈՎԻՏ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Լեռնահովիտ**:

**ԼԵՌՆՈՒՏ**- գյուղ Շիրակի մարզում, Շիրակի լեռների փեշերին: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1830 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 221, 1897-ին՝ 592, 1926-ին՝ 299, 1939-ին՝ 374, 1959-ին՝ 186, 1970-ին՝ 175, 1979-ին՝ 113, 2001-ին՝ 181, 2004-ին՝ 186 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի Խնուսի Խաչալույս գյուղից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակընդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում է գտնվում 19դ. "Ժամ" եկեղեցին:

**ԼԵՎԱՋՈՂՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Լեհվազ**:

**ԼԵՐՄՈՆՏՈՎՈ**- գյուղ Լոռու մարզում, Աղստև գետի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1825մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11 կմ հվ-արլ.: Բնակչությունը՝ 1873թ.-724, 1897թ.-587, 1926թ.-836, 1939թ.-1120, 1959թ.-1222, 1970թ.-1297, 1979թ.-1149, 2001թ.-914, 2004թ.-933 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ռուսաստանի Սարատովի և Տամբովի նահանգներից: **Լ.** է վերանվանվել 05.07.1941թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկի և կերային

կուլտուրաների մշակությամբ (**Վոսկրեսենկա**):

**ԼԻՃՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճից հվ-արմ., Գավառ-Մարտունի ավտոմայրուղու մոտ, մարզկենտրոնից 30 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա: **Լ.** է վերանվանվել ՀՍՍՀ Գերագույն խորհրդի 26.04.1946թ. հրամանագրով: 1831թ. ուներ 273, 1897-ին՝ 1371, 1926-ին՝ 2231, 1939-ին՝ 2716, 1959-ին՝ 2355, 1970-ին՝ 3395, 1979-ին՝ 3386, 1989-ին՝ 4071, 2001-ին՝ 5037, 2004-ին՝ 5153 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829-30թթ. եկել են Արմ. Հայաստանի Ալաշկերտի ու Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի, ծխախոտի մշակությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: **Լ.** մոտ պահպանվել են մ.թ.ա. 2-րդ հզմ. դամբարանադաշտ, սբ. Աստվածածին եկեղեցին, "Ծաղկավանք" մատուռը (9դ.), որի արմ. կողմում կան խաչքարեր (16-17դդ.), իսկ շրջակայքում՝ խաչքարերով գերեզմանոց (9-20դդ.) (**Լճատեղ**, **Եղեգնագյուղ**):

**ԼԻՃՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրի գետի վերին հոսանքում, մարզկենտրոնից 49 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1780 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 244, 1897-ին՝ 455, 1926-ին՝ 724, 1939-ին՝ 706, 1959-ին՝ 639, 1970-ին՝ 509, 1979-ին՝ 355, 2001-ին՝ 201, 2004-ին՝ 192 բնակիչ, որոնք բնիկ տեղացիներ են: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի հնություններից են՝ Մեղրի գետի վրա գտնվող 17դ. կամուրջը և 17դ. "Ջվարավանք" եկեղեցին: Գյուղի շրջակայքում են "Ջվար", "Թաղամայրի", "Մուլք" գյուղատեղիները և "Խաչ ծառ" մատուռը:

**ԼԾԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ կողմում, մարզկենտրոնից 106 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1520 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 68, 1897-ին՝ 314, 1926-ին՝ 415, 1939-ին՝ 509, 1959-ին՝ 460, 1970-ին՝ 435, 1979-ին՝ 142, 2001-ին՝ 157, 2004-ին՝ 169 բնակիչ, որոնց մի մասը 1828-29թթ. գաղթել են Խոյի գավառից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, պտղաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան կանգուն սբ. Ստեփանոս եկեղեցի և 1347թ. մատուռ: Գյուղից հվ-արլ. սբ. Խաչ ուխտատեղին է:

**ԼՃԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների հս. թեք լանջին, մարզկենտրոնից 31 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1925 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 375, 1897-ին՝ 1719, 1926-ին՝ 2810, 1939-ին՝ 3441, 1959-ին՝ 3362, 1970-ին՝ 3846, 1979-ին՝ 3554, 1989-ին՝ 3864, 2001-ին՝ 4313, 2004-ին՝ 4573 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: **Լ.**-ի միջնադարյան կառույցներից են Գանձավանքը (10-13դդ.) և սբ. Հռիփսիմե եկեղեցին (7-10դդ.): Գյուղի հվ-արլ. է գտնվում Կարմիր վանք վանական համալիրը (9-20դդ.), "Թուխ Մանուկ" մատուռը (19-20դդ.): Սևան- Գավառ հին ճանապարհի ձախ կողմում է Լճաշենի դամբարանադաշտը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), **Լ.** է հայտնաբերվել ուրարտական թագավոր Արգիշտի 1-ի

(786-767թթ.) սեպագիր արձանագրությունը:

**ԼՃԱՎԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Կարճաղբյուր գետի աջափնյակում, մարզկենտրոնից 65 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2040 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 121, 1897-ին՝ 985, 1926-ին՝ 541, 1939-ին՝ 979, 1959-ին՝ 423, 1970-ին՝ 513, 1979-ին՝ 463, 1989-ին՝ 454, 2001-ին՝ 580, 2004-ին՝ 620 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Պարսկահայաստանի գավառներից, Կարսի մարզից և Մուշի ու Բուլանըխի գյուղերից՝ 1918-20թթ.: Բնակչությունը ըզ-բաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղից 1 կմ հվ-արմ. կա Գթաշեն գյուղատեղի (15-17դդ.), հվ. կան սրբավայրեր՝ Մայր Աստվածածին և սբ. Սարգիս Ատենահաս: Գյուղի շրջակայքում կա մեկ ավերված եկեղեցի (13-14դդ.), միջնադարյան խաչքարեր ու գերեզմաններ, 3 կմ հվ.՝ “Սարի Սուրբ” մատուռ (15-17դդ.):

**ԼՃԱՏԵՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Լիճք**:

**ԼՃԱՓ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևան-Գավառ ավտոմայրուղու վրա, մարզկենտրոնից 20 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1930 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 108, 1897-ին՝ 696, 1926-ին՝ 441, 1939-ին՝ 867, 1959-ին՝ 816, 1970-ին՝ 857, 1979-ին՝ 842, 1989-ին՝ 954, 2001-ին՝ 1107, 2004-ին՝ 1222 բնակիչ, որոնց մի մասը այստեղ է տեղափոխվել Վերին և Ներքին Գետաշեն գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Սևան-Գավառ խճուղուց աջ տեղադրված 3 բլուրների վրա կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. և վաղ միջնդ. ամրոցների համալիր: Գյուղից արլ. կա մատուռ, իսկ շուրջը՝ 16-18դդ. “Խաչեր” գերեզմանոց:

**ԼՃԿԱՁՈՐ**- գյուղ Տավուշի մարզում, Դեբեդ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 62 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 600 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 67, 1897-ին՝ 154, 1926-ին՝ 220, 1939-ին՝ 319, 1959-ին՝ 394, 1970-ին՝372, 1979-ին՝ 377, 1989-ին՝ 392, 2001-ին՝ 457, 2004-ին՝ 356 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29 թթ. գաղթել է Խոյի գավառից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղից 3 կմ արլ. կա 18դ. “Խեչի ձոր” մատուռ, 1 կմ հս-արլ. գտնվում են մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. “Դանիելի “ ամրոցը և մ.թ.ա. 1-ին հզմ. դամբարանադաշտը, իսկ հս-արմ. կողմում՝ “Արքունի” ամրոցը (մ.թ.ա. 3-րդ հզմ.) (**Աչքաձոր**, **Ճալագեղ**):

**ԼՈԿ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վարդանիձոր**:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1375 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 29 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 20, 1897-ին՝ 298, 1926-ին՝ 218, 1939-ին՝ 527, 1959-ին՝ 373, 1979-ին՝ 398, 2001-ին՝ 450, 2004-ին՝ 344 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի մոտ են գտնվում պատմական Լոռե Բերդի ավերակները և Լոռու կամուրջը (10-13դդ.):

**ԼՈՌՊԼԵՄՍՈՎԽՈԶ**- նախկինում ավան Լոռու մարզում, տե՛ս **Կաթնառատ**:

**ԼՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Լորաձոր գետի ձախ ափին, մարզկենտրոնից 109 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1630 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 50, 1897-ին՝ 438, 1926-ին՝ 503, 1939-ին՝ 514, 1959-ին՝ 506, 1970-ին՝ 514, 1979-ին՝ 409, 2001-ին՝ 355, 2004-ին՝ 311 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղը առաջին անգամ հիշատակվում է 839 թ-ին: Այստեղ է գտնվում "Սպիտակ խաչ" կամ "Լորիկի խաչ" խաչքար-կոթողը զույգ խաչքարերով (1271թ.), գյուղից դեպի հվ.՝ Ծառու սբ. Հովհաննես եկեղեցին (1686թ.), 1423թ. խաչքար, դեպի հվ-արմ.՝ սբ Խաչ կամ "Սարգսի խաչեր" մատուռը (1345թ.), իսկ դեպի հվ-արլ.՝ "Տոնապատ" մատուռը, սբ. Գևորգ (1666թ.) և սբ. Աստվածածին եկեղեցիները, 12-13դդ. արձանագրություններ (**Լորա գյուղ**):

**ԼՈՐԱ ԳՅՈՒՂ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Լոր**:

**ԼՈՐԱՍԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճի հս. կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2170 մ, Ծաղկուտ գյուղից 3 կմ հս-արմ.: 08.08. 1991թ. վերանվանվել է **Լ.**: 1897թ. ուներ 361, 1914-ին՝ 437, 1926-ին՝ 284, 1931-ին՝ 317, 1959-ին՝ 165, 1970-ին՝ 305, 1980-ին՝ 352, 1989-ին՝ 140 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ (**Էլլար**):

**ԼՈՐՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում, Մարց գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ հս-արլ.: 1897թ. ուներ 621, 1926-ին՝ 1330, 1959-ին՝ 1367, 1970-ին՝ 1333, 1979-ին՝ 1076, 2001-ին՝ 1126, 2004-ին՝ 980 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, կարտոֆիլի, ծը-խախոտի և պտուղ- բանջարեղենի մշակությամբ: Գյուղում է գտնվում "Ժամ" մատուռը: **Լ**-ի մոտ է գտնվում 13դ. գիտնական Վանական Վարդապետի քարայրապաստարանը, իսկ Լորուտ գետի վրա՝ երկու միջնադարյան կամուրջ:

**ԼՈւԿԱՇԻՆ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 5 կմ հս-արմ.: Հիմնադրվել է 1922թ., **Լ.** է վերանվանվել 30.12.1957թ.: 1931թ. ուներ 281, 1959-ին՝ 1405, 1979-ին՝ 2830, 2001-ին՝ 2346, 2004-ին՝ 2474 բնակիչ, որոնք եկել են Ախուրյանի, Ապարանի, Գորիսի, Թալինի, Ղափանի, Սպիտակի տարածաշրջաններից, ինչպես նաև՝ Իրանից, Լիբանանից և Սիրիայից: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ (**Կարմիրբանակային**, **№ 3 սովխոզին կից**, **Միկոյանի անվան սովխոզին կից**):

**ԼՈւՍԱԳՅՈՒՂ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ծաղկունյաց լեռների փեշին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 34 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1970 մ: 1831թ. ուներ 157, 1897-ին՝ 501, 1926-ին՝ 628, 1939-ին՝ 746, 1959-ին՝ 620, 1979-ին՝ 673, 2001-ին՝ 803, 2004-ին՝ 717 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Վանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մը-շակությամբ: Գյուղում է սբ. Աստվածածին եկեղեցին (1887թ.), 2 կմ հս.՝ "Ավեր բերդ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 1,5 կմ հս-արլ.՝ "Թուխ Մանուկ" ("Վերի վանք") եկեղեցին (7դ.), 1 կմ արլ.՝

“Կարմիր վանք” եկեղեցական համալիրը (5-11դ.) (**Ճանճիկ**):

**ԼՈՒՍԱԳՅՈՒՂ**- գյուղ Արմավիրի մարզում, Մեծամոր գետի աջ ափին, մարզկենտրոնից 35 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 835 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 128, 1939-ին՝ 192, 1959-ին՝ 331, 1979-ին՝ 576, 2001-ին՝ 930, 2004-ին՝ 1046 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-20թթ. գաղթել են Սուրմալուի Բահարլու գյուղից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և բանջարաբուծությամբ:

**ԼՈՒՍԱԿԵՐՏ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Նշավան**:

**ԼՈՒՍԱԿԵՐՏ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 16 կմ հվ., ծովի մակերևույթից 1540 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 126, 1897-ին՝ 416, 1926-ին՝ 425, 1939-ին՝ 644, 1959-ին՝ 608, 1979-ին՝ 712, 2001-ին՝ 713, 2004-ին՝ 667 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1915-20թթ. գաղթել է Արմ. Հայաստանի տարբեր գավառներից և Կարսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, շաքարի ճակնդեղի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի 17-19դդ. սբ. Աստվածածին եկեղեցի: Շրջակայքում կան մ.թ.ա. 2-րդ հզմ. վերաբերող դամբարաններ և հնություններ:

**ԼՈՒՍԱԿԵՐՏ**- նախկինում քաղաքատիպ ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Արգել**:

**ԼՈՒՍԱԿՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 61 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1120 մ: 08.08.1991թ. վերանվանվել է **Լ.**: 2001թ. ուներ 198, 2004-ին՝ 264 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ (**№ 3 սովխոզին կից**):

**ԼՈՒՍԱԿՈՒՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 76 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 224, 1897-ին՝ 355, 1926-ին՝ 446, 1939-ին՝ 640, 1959-ին՝ 858, 1970-ին՝ 1169, 1979-ին՝ 1160, 1989-ին՝ 507, 2001-ին՝ 1377, 2004-ին՝ 1497 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Մուշի գավառից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղի հվ. մասում կան՝ սբ. Աստվածածին եկեղեցի (17-18դդ.), 10-20դդ. գերեզմանոց 10-20դդ. և 12-13դդ. խաչքարեր:

**ԼՈՒՍԱՀՈՎԻՏ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստև գետի անտառապատ հովտի աջ լանջին, մարզկենտրոնից 6 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա: **Լ.** է վերանվանվել 25.01.1978թ.: 1926թ. ուներ 149, 1939-ին՝ 231, 1959-ին՝ 286, 1979-ին՝ 319, 1989-ին՝ 507, 2001-ին՝ 363, 2004-ին՝ 392 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղի մեջ է գտնվում 7-13դդ. “Մորո-Ձորո” վանքը (**Ծովիգ**):

**ԼՈՒՍԱՁՈՐ**- գյուղ Տավուշի մարզում, Մթնաձոր գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 6 կմ հս., ծովի մակերևույթից 720 մ բարձրության վրա: **Լ.** է վերանվանվել 03.01. 1935թ.: 1831թ. ուներ 105, 1897-ին՝ 164, 1926-ին՝ 245, 1939-ին՝ 338, 1959-ին՝ 398, 1979-ին՝ 433, 1987-ին՝ 110, 1989-ին՝ 350, 2001-ին՝ 624, 2004-ին՝ 636 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արցախի Խաչեն և Ջրաբերդ գավառներից: Բնակչությունը զբաղվում է

անասնապահությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղի արմ. մասում է գտնվում սբ. Գևորգ եկեղեցին (19դ.), իսկ 2 կմ հվ-արմ.՝ Խավարաձոր գյուղատեղին (մջնդ.) (**Խավարաձոր**):

**ԼՈւՍԱՂԲՅՈւՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արտաշավան գյուղից՝ 2 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1780 մ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում են գտնվում 19դ. եկեղեցին և 20դ. "Լուսաղբյուր" մատուռը:

**ԼՈւՍԱՂԲՅՈւՐ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 39 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1831թ.-152, 1897թ.-1210, 1926թ.-941, 1939թ.-1350, 1959թ.-1210, 1979թ.-1056, 2001թ.-998, 2004թ.-1110 բնակիչ, որոնց մի մասը գաղթել է Բասենի, Մուշի և Վանի շրջանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և շաքարի ճակնդեղի մշակությամբ:

**ԼՈւՍԱՂԲՅՈւՐ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 22 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1470 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 225, 1897-ին՝ 1128, 1926-ին՝ 693, 1939-ին՝ 947, 1959-ին՝ 698, 1979-ին՝ 556, 2001-ին՝ 567, 2004-ին՝ 505 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել է Մուշից և Բասենից, 1878թ.՝ Կարսից և 1915-18թթ. այլ տեղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Շրջակայքում տարածված են կրաքարերի, պեմզայի, սև տուֆի, ավազի և բազալտի պաշարներ: Այստեղ են գտնվում "Անձավաձոր" քարանձավը և "Սրբատեղ" մատուռը:

**ԼՈւՍԱՇՈՂ**- գյուղ Արարատի մարզում, տեղադրված Վեդի գետի ձախակողմյան վտակի մեղմաթեք ու գեղատեսիլ ափին, շրջապատված ոչ բարձր, կանաչապատ լեռներով: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 25.01.1978թ. վերանվանվել է **Լ.**: 1831թ. ուներ 94, 1897-ին՝ 1005, 1926-ին՝ 289, 1939-ին՝ 598, 1959-ին՝ 371, 1970-ին՝ 432, 1979-ին՝ 419, 2001-ին՝ 601, 2001-ին՝ 601, 2004-ին՝ 544 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: **Լ.** 12 կմ հս. գտնվում է Աղձվան (13-20դդ.), 5կմ հս.՝ Շամամ (9-17դդ.), 10 կմ հս.՝ Վերին Արմիկ գյուղատեղիները (17-19դդ.): Գյուղի մոտ են գտնվում՝ Հովհաննու սբ.Կարապետ վանական համալիրը (14դ.), սբ.Աստվածածին (Սպիտակավոր) (1301թ.), սբ.Հովհաննես (Զանգակատուն) եկեղեցիները (17-19դդ.), իսկ "Մոշաղբյուր" գյուղատեղիում՝ սբ. Սարգիս եկեղեցին (19դ.) և 19դ. մատուռ (**Ղարախաչ**):

**ԼՈւՍԱՌԱՏ**- գյուղ Արարատի մարզում, մերձարաքսյան դաշտավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 815 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 246, 1873-ին՝ 649, 1897-ին՝ 720, 1926-ին՝ 173, 1939-ին՝ 336, 1970-ին՝ 1752, 1979-ին՝ 1835, 2001-ին՝ 2349, 2004-ին՝ 2151 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: **Լ.** հվ. մասում է գտնվում Արտաշատ քաղաքատեղին (մ.թ.ա. 185թ.), Խոր Վիրապ

վանական համալիրը (17-19դ.), սբ. Աստվածածին (17դ.) և սբ. Գևորգ (16դ.) եկեղեցիները (**Խորվիրապ**):

**ԼՈՒՍԱՎԱՆ**- քաղաք Կոտայքի մարզում, տե՛ս **Չարենցավան**:

# Խ

**ԽԱԼԱՋ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Աճանան**:

**ԽԱԼԻՍԱ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Նոյակերտ**:

**ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մերձավան**:

**ԽԱՆՋՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 7 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1957թ.: 1981թ. ուներ 1580, 1989-ին՝ 1856, 2001-ին՝ 1880, 2004-ին՝ 1993 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և բանջարաբուծությամբ (**Խանջյանի անվան սովխոզին կից**):

**ԽԱՆՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Խանջյան**:

**ԽԱՇԹԱՌԱԿ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստև գետի աջ ափին, մարզկենտրոնից 6 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 750 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 214, 1897-ին՝ 786, 1926-ին՝ 1090, 1939-ին՝ 1450, 1959-ին՝ 1387, 1970-ին՝ 2035, 1981-ին՝ 1620, 1989-ին՝ 1861, 2001-ին՝ 1929, 2004-ին՝ 1674 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արցախի Ջրաբերդի և Գյուլիստանի գավառներից: Բնակչությունը զբաղվում է ծխախոտագործությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղն ունի 5-7դդ. "Եղեգնի" գյուղատեղի և համանուն եկեղեցի (**Խաչդարակ**, **Սարիատու**):

**ԽԱՉԱՁՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Աստղաձոր**:

**ԽԱՉԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 76 կմ հվ-արլ.: 03.04.1991թ. վերանվանվել է **Խ.**: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 212, 1897-ին՝ 1204, 1926-ին՝ 1160, 1939-ին՝ 1820, 1959-ին՝ 1108, 1979-ին՝ 1502, 2001-ին՝ 1183, 2004-ին՝ 1313 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-18թթ. գաղթել են Արմ. Հայաստանի Մուշի, Վանի, Բասենի գյուղերից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և ծխախոտի մշակությամբ: Մոտակայքում կան Քոեր բնակատեղի (մ.թ.ա. 1-ին հզմ.-10-18դդ.) և Մուրադ խաչ ամրոցը (մ.թ.ա. 4-րդ-մ.թ. 5 դդ.) իսկ հվ. մասում սբ. Բեթղեհեմ եկեղեցի (վրկնգ. 9դ.) (**Սովետակերտ**, **Չախըրլու**):

**ԽԱՉԱՐՁԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Խաչարձան գետի գետաբերանի մոտ, մարզկենտրոնից 30 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: **Խ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1873թ. ուներ 290, 1897-ին՝ 220, 1926-ին՝ 362, 1939-ին՝ 565, 1959-ին՝ 543, 1970-ին՝ 755, 1979-ին՝ 750, 1989-ին՝ 195, 2001-ին՝ 383, 2004-ին՝ 331 բնակիչ, որոնց մի մասը 1988թ. այստեղ է գաղթել Ադրբեջանի Ղազախի շրջանից: Բնակչությունը զբաղվում է

անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի հվ. մասում կա “Խաչի տափ” մատուռ, իսկ 1 կմ հս.՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտ (**Փոլադ**):

**ԽԱՉԱՓԱՐԱԽ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Խաչփառ**:

**ԽԱՉԴԱՐԱԿ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Խաշթառակ**:

**ԽԱՉԻԳՅՈւՂ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Դեբետ**:

**ԽԱՉԻԳՅՈւՂ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Շահումյան**:

**ԽԱՉԻԴՈւՌ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ծաղկաշատ**:

**ԽԱՉԻԿ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ կողմում, Նախիջևանի սահմանից ոչ հեռու, ծովի մակերևույթից 1860 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 40 կմ հեռավորության վրա: Բնակչության նախնիների մի մասը գաղթել է Խոյից 1829թ: 1831թ. ուներ 110, 1897-ին՝ 968, 1926-ին՝ 1068, 1939-ին՝ 1381, 1959-ին՝ 1222, 1979-ին՝ 1062, 2001-ին՝ 978, 2004-ին՝ 1103 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ և անասնաբուծությամբ: Գյուղում է գտնվում 1681թ. սբ. Աստվածածին եկեղեցին, 2 կմ հս-արմ.՝ Քարկոփ կամ Խոտակերաց վանքի (10-14դդ.) ավերակները և 9-14դդ. խաչքարեր:

**ԽԱՉՈՅԻ ԳՅՈւՂ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Ջրառատ**:

**ԽԱՉՓԱՌ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի աջ ափի հարթավայրում, թաղված այգիների մեջ: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 847 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 03.04.1991թ. վերանվանվել է **Խ.**: 1831թ. ուներ 326, 1897-ին՝ 1059, 1926-ին՝ 677, 1939-ին՝ 783, 1959-ին՝ 1273, 1970-ին՝ 1984, 1978-ին՝ 2018, 1989-ին՝ 2424, 2001-ին՝ 1887, 2004-ին՝ 1395 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ և բանջարաբուծությամբ (**Խաչափարախ**, **Ջահմեթ**):

**ԽԱՎԱՐԱՁՈՐ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Լուսաձոր**:

**ԽԱՐԲԵՐԴ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Նոր Խարբերդ**:

**ԽԱՐԿՈՎ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Նորշեն**:

**ԽԴՐԱՆՑ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների ճյուղերից մեկի լանջին, մարզկենտրոնից 9 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 27, 1897-ին՝ 331, 1926-ին՝ 266, 1939-ին՝ 216, 1959-ին՝ 105, 1970-ին՝ 98, 1979-ին՝ 79, 2001-ին՝ 68, 2004-ին՝ 56 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կա 1892թ. ավերակ եկեղեցի, գյուղից 2 կմ արլ.՝ Չորեքդռնի ավերակ վանքը, 1 կմ հս-արմ.՝ խաչքարեր և գերեզմաններ (**Խոտորանց**):

**ԽԼԱԹԱՂ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ջրաստան**:

**ԽՃՈւՂԱԿԱՅԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Կայան**:

**ԽՄԱՅՃ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Աճանան**:

**ԽՆԱԾԱԽ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից՝ 89 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1460 մ: 1831թ. ուներ 107, 1897-ին՝ 1221, 1926-ին՝ 1234, 1939-ին՝ 1252, 1959-ին՝ 1336, 1970-ին՝ 1473, 1979-ին՝

1166, 1989-ին՝ 1005, 2001-ին՝ 1021, 2004-ին՝ 1086 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և մեղվաբուծությամբ: **Խ**-ի եկեղեցին կառուցված է 1610թ., ունի երկու մատուռ: Գյուղից մի փոքր հեռու զբտնըվում է "Խաչի հող" կամ "Ցիցքար" գյուղատեղին, շրջապատի բարձրությունների վրա կան խաչքարեր:

**ԽՆԿՈՅԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 32 կմ հս-արմ.: **Խ.** է վերանվանվել 24.04.1946թ.: 1831թ. ուներ 69, 1897-ին՝ 692, 1926-ին՝ 487, 1939-ին՝ 831, 1959-ին՝ 624, 1970-ին՝ 580, 1979-ին՝ 372, 2001-ին՝ 414, 2004-ին՝ 255 բնակիչ: Նախնիները գաղթել են Մուշից և Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ճակնդեղի մշակությամբ, մեղվաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում է գտնվում "Ժամ" ավերակ եկեղեցին:

**ԽՆՁՈՐԵՍԿ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից՝ 82 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1350 մ: 1831թ. ուներ 1342, 1939-ին՝ 2980, 1959-ին՝ 1992, 1979-ին՝ 1820, 1989-ին՝ 1828, 2001-ին՝ 1992, 2004-ին՝ 2027 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի և բանջարեղենի մշակությամբ: **Խ**-ում և շրջակայքում են գտնվում սբ. Թադևոս (17դ.), սբ. Հռիփսիմե (1663թ.) եկեղեցիները, "Անապատ" դպրոցեկեղեցին, հին գյուղատեղիներ: Նրա նշանավոր հնություններից է Խնձորեսկի 16դ. բերդը:

**ԽՆՁՈՐԵՍԿ ԵՐԿՐՈՐԴ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ներքին Խնձորեսկ**:

**ԽՆՁՈՐՈւՏ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Նախիջևան գետի աջակողմյան վտակ Ճահուկի վերնագավառում, ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 45 կմ հվ-արլ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և ծխախոտագործությամբ: 1831թ. ուներ 115, 1970-ին՝ 618, 2001-ին՝ 526, 2004-ին՝ 501 բնակիչ: Ունի 19դ. եկեղեցի, գյուղից մոտ 2 կմ հվ. ընկած են Խնձորուտ գյուղի ավերակները իսկ նրանից հս-արմ. գտնվում են Աղոպեն գյուղի ավերակները:

**ԽՆՈՔ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Աշոտավան**:

**ԽՆՈւՍԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ավան գյուղից՝ 3 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1975 մ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

**ԽՈՋԱԲՈւԾԱԿԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Լեռնագոգ**:

**ԽՈԶՆԱՎԱՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Խոզնավար գետակի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 90 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ: 1897թ. ուներ 688, 1926-ին՝ 474, 1939-ին՝ 562, 1959-ին՝ 582, 1981-ին՝ 484, 1989-ին՝ 359, 2001-ին՝ 458, 2004-ին՝ 426 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ, ծխախոտի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի 1675թ. կառուցված սբ. Մինաս եկեղեցի:

**ԽՈՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 67 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույ-

թից` 1470 մ: 1831թ. ուներ 173, 1873-ին` 739, 1897-ին` 938, 1926-ին` 788, 1939-ին` 675, 1959-ին` 600, 1970-ին` 739, 1979-ին` 830, 1989-ին` 855, 2001-ին` 890, 2004-ին` 961 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ և դաշտավարությամբ: Հին գյուղի տեղում է գտնվում 1700թ. "Մրգաձորի խաչ" եկեղեցին, նրա հարլ. մասում, բարձր ձորափին, գտնվում է Խոտի վանքը (5-6դդ.): Հին գերեզմանոցում պահպանված է 12դ. "Կարմիր" եկեղեցու ավերակները:

**ԽՈՏԱՎԵՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Շենավան**:

**ԽՈՏՈՐԱՆՑ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Խդրանց**:

**ԽՈՐԱԿԵՐՏ**- պատմական գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ջիլիզա**:

**"ԽՈՐԴԵՆԻ" ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Նոր Կեսարիա**:

**ԽՈՐՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Սյունիք գյուղից 4 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 750 մ բարձրության վրա: **Խ.** է վերանվանվել 1991թ.: 1897թ. ուներ 87, 1926-ին` 27, 1939-ին` 42, 1959-ին` 60: Գյուղը գտնվում է բարձր լեռան ձորալանջին, ձմեռանոց է (**Բայդաշ**):

**ԽՈՐՈՆՔ**- գյուղ Արմավիրի մարզում, Քասաղ գետի ձախ ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 21 կմ հվ-արլ.: **Խ.** է վերանվանվել 08.08.1991թ.: 1831թ. ուներ 175, 1897-ին` 534, 1926-ին` 614, 1939-ին` 818, 1959-ին` 1157, 1979-ին` 1680, 1989-ին` 2058, 2001-ին` 2274, 2004-ին` 2629 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Վանի, Բայազետի, Արճեշի գավառներից ու Արծափից 1829-30թթ.: Բնակչությունը ըզ-բաղվում է խաղողագործությամբ և անասնապահությամբ:Գյուղում է գտնվում 1870թ. կառուցված սբ. Նշան եկեղեցին, իսկ մոտակայքում հայտնաբերվել են անտիկ և միջնադարյան բնակատեղիներ (**Լենուղի**):

**ԽՈՐՎԱՏԵՂ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Հորբատեղ**:

**ԽՈՐՎԻՐԱՊ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Լուսառատ**:

# Ծ

**ԾԱԹԵՐ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից` 1200 մ, հեռավորությունը մարզկենտրոնից` 37 կմ հսարլ.: 1831թ. ուներ 90, 1897-ին` 254, 1926-ին` 444, 1939-ին` 624, 1959-ին` 560, 1970-ին` 557, 1979-ին` 475, 2001-ին` 489, 2004-ին` 432 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, ծխախոտի, կարտոֆիլի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում է գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (10-20դդ.):

**ԾԱԿՔԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճից հվ-արմ., Ծակքար գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 29 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1960 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 127, 1897-ին` 731, 1926-ին` 1147, 1939-ին` 1280, 1959-ին` 1164, 1970-ին` 1547, 1979-ին` 1750, 1989-ին` 2028, 2001-ին` 2412, 2004-ին` 2556 բնակիչ:

Հիմնադրվել է 1828թ. Մուշից և Ալաշկերտի Հասան-փաշա, Քարաձոր, Մազկերտ և այլ գյուղերից գաղթածների կողմից: Բնակչությունը զբաղվում է ոչխարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, հացահատիկի, ծխախոտի և բանջարաբոստանային կուլտուրաների մը-շակությամբ: Ունի 1884թ.-ին վերանորոգված սբ. Աստվածածին եկեղեցի: **Ծ**-ի մեջ կա գերեզմանոց և խաչքարեր (9-20դդ.), Ծակքարի բնական կամուրջ, Չիթհան (14-15դդ.), "Թուխ Մանուկ" մատուռ (16-17դդ.), գետի աջ և ձախ ափերին՝ ջրաղացների համալիր (**Կոռքար**):

**ԾԱՂԿԱԲԵՐ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1750 մ, հեռավորությունը մարզկենտ-րոնից՝ 37 կմ հվ-արմ.: Բնակչությունը՝ 1831թ.-133, 1897թ.-1332, 1926թ.-1653, 1939թ.-1732, 1959թ.-1288, 1970թ.-1530, 1979թ.-1196, 2001թ.-1343, 2004թ.-1375 բնակիչ: Նախնիները գաղթել են Մուշի և Բասենի գյուղերից: 21.10.1967թ. գյուղը վերանվանվել է **Ծ.**: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ճակնդեղի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի "Ժամ" ավերակ եկեղեցի, սբ. Նարեկ և սբ.Հովհաննես մատուռներ (**Ծաղկաշեն**):

**ԾԱՂԿԱԼԱՆՋ**- գյուղ Արմավիրի մար-զում, ծովի մակերևույթից 885 մ բարձ-րության վրա, մարզկենտրոնից 19 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 102, 1897-ին՝ 356, 1926-ին՝ 423, 1939-ին՝ 467, 1959-ին՝ 518, 1970-ին՝ 514, 1979-ին՝ 1032, 2001-ին՝ 1323, 2004-ին՝ 1567 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. գաղթել է Մակուից, մի մասը՝ 1915-16թթ. Կարսից և Կաղզվանից: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, այգեգործու-թյամբ և բանջարաբոստանային կուլ-տուրաների մշակությամբ: Ունի սբ. Գևորգ եկեղեցի (19դ. 70-ական թթ.): Գյուղի հս-արլ. կողմում կա Ամենա-փրկիչ անունով հնավայր՝ հին գերեզ-մանոցով:

**ԾԱՂԿԱՀՈՎԻՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռնազանգվածի հս. ստորոտին, Ծաղկահովիտ գետի ափին: Հեռավորությունը մարզկենտ-րոնից՝ 51 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2100 մ: Բնակչու-թյունը՝ 1873թ.-298, 1897թ.-535, 1926թ.-1145, 1939թ.-1241, 1959թ.-1016, 1970թ.-811, 1979թ.-1279, 2001թ.-1706, 2004թ.-2209 բնակիչ: 1850-ական թթ. գյուղը հիմնադրել են Անիի շրջակա գյու-ղերից եկածները: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրա-ների մշակությամբ: Գյուղում է գտնը-վում սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղե-ցին (19դ.) և "Թուխ Մանուկ" մատուռը (19-20դդ.): **Ծ**-ի հվ-արլ. մասում պահպանվել է մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. "Ծաղկահովիտ" քաղաքատեղին:

**ԾԱՂԿԱՁՈՐ**- քաղաք Կոտայքի մար-զում, Ծաղկունյաց լեռների հս-արլ. անտառապատ փեշերին: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1710 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 6 կմ հս-արմ.: Նախկինում գյուղ-ա-մառանոցավայր էր, ապա՝ ավան, 1958թ.-ից՝ քաղաքատիպ ավան: ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի 16.02. 1984թ. հրամանագրով **Ծ.** դասվել է քա-ղաքների կարգին: 1873թ. ուներ 169, 1897-ին՝ 345, 1926-ին՝ 618, 1939-ին՝ 654, 1959-ին՝ 1029, 1976-ին՝ 2000, 1989-ին՝ 3350, 1991-ին՝ 2900, 2001-ին՝ 1618, 2004-ին՝ 1600 բնակիչ: **Ծ.** լեռնակլիմայական առողջավայր է: Այստեղ են գտնվում մարզական բա-զան, ք-ից Թեղենիսի գագաթը տանող 6

կմ երկարությամբ ճոպանուղին, մանկական առողջարանը, հանգստյան տները և տուրիստական բազաները: Քաղաքի մեջ է գտնվում Կեչառիս վանական համալիրը (11-15դդ.) իր Կաթողիկե (15դ.), սբ. Նշան (11դ.) և սբ. Գրիգոր Լուսավորիչ (1003թ.) եկեղեցիներով, համալիրից 200 մ արմ.՝ սբ. Հարություն եկեղեցին (1228թ.) (**Կոնստանտինովկա**):

**ԾԱՂԿԱՇԱՏ**- գյուղ Լոռու մարզում, Գուգարաց լեռների արմ. լանջերին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 60 կմ հս-արլ.: 1926թ. ուներ 167, 1939-ին՝ 319, 1959-ին՝ 345, 1970-ին՝ 354, 1979-ին՝ 194, 2001-ին՝ 273, 2004-ին՝ 180 բնակիչ: **Ծ.** է վերանվանվել 03.01.1935թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և դաշտավարությամբ: Գյուղի շրջակայքում են գտնըվում Կաղմախուտ (10-14դդ.) և "Խաչ" մատուռները (**Խաչիդուռ**):

**ԾԱՂԿԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագածի արլ. ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1950 մ: Բնակչությունը՝ 1831թ.-118, 1897թ.-427, 1926թ.-565, 1939թ.-629, 1959թ.-388, 1970թ.-457, 1979թ.-503, 2001թ.-600, 2004թ.-596 բնակիչ: Գյուղը 1829թ. հիմնադրել են Ալաշկերտից և Դիադինից գաղթածները: 1870-ական թթ. այստեղ են բնակություն հաստատել Մուշի և Սասունի գաղթականները: Բընակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի արլ. մասում է գտնվում 12-13դդ. սբ. Աստվածածին եկեղեցին (**Արագածու գյուղ**):

**ԾԱՂԿԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Մրգավետ**:

**ԾԱՂԿԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների արլ. փեշերին, Գելյիձոր գետի ափին, մարզկենտրոնից 5 կմ հվ-արմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2160 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 289, 1897-ին՝ 526, 1926-ին՝ 785, 1939-ին՝ 787, 1959-ին՝ 424, 1970-ին՝ 448, 1979-ին՝ 384, 1989-ին՝ 453, 2001-ին՝ 551, 2004-ին՝ 575 բնակիչ, որոնց նախնիների մեծ մասը գաղթել է Ալաշկերտի Արծափ գյուղից, մընացածները՝ Գանձակից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: **Ծ**-ի արմ. մասում կա սբ. Հովհաննես եկեղեցի (9-10դդ.), 9-16դդ. խաչքարերով գերեզմանոց: Գյուղից 3 կմ հվ-արմ. գտնվում են "Ուխտավեր" գյուղատեղին (13-17դդ.) և համանուն մատուռը (13-14դդ.) (**Վերին Գանձակ**):

**ԾԱՂԿԱՇԵՆ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ծաղկաբեր**:

**ԾԱՂԿԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Միգավետ**:

**ԾԱՂԿԱՇԵՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Հերհեր**:

**ԾԱՂԿԱՍԱՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ծաղկասար լեռան հվ-արմ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 61 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1990 մ: Բնակչությունը՝ 1873թ.-224, 1898թ.-319, 1926թ.-212, 1939թ.-332, 1959թ.-128, 1970թ.-91, 1979թ.-80, 2001թ.-112, 2004թ.-125 բնակիչ, որոնց նախնիները 1831թ. տեղափոխվել են Մուշի, Կապանի և Ալաշկերտի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ: Գյուղից 1,5 կմ արլ. գտնվում է մ.թ.ա. 4-րդ-3-րդ հզմ. "Ծաղկասար"

բնակատեղին, գյուղի արլ. մասում՝ 17-18դդ. սբ. Թադևոս Առաքյալ մատուռը:

**ԾԱՂԿԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Բերդի տարածաշրջանում, Վարագաջուր գետի ափին, մարզկենտրոնից 41 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 750 մ բարձրության վրա: 1922թ. ուներ 501, 1926-ին՝ 650, 1939-ին՝ 1105, 1959-ին՝ 1011, 1970-ին՝ 1233, 1979-ին՝ 1100, 1989-ին՝ 914, 2001-ին՝ 996, 2004-ին՝ 1034 բնակիչ, որոնց նախնիները 1920թ. այստեղ են տեղափոխվել հարևան Վարագավան գյուղից: Բընակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, այգեգործությամբ, հացահատիկի և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղից 6 կմ հվ-արմ., ձորալանջին, անտառի մեջ է գտնվում Շխմուրադի սբ. Աստվածածին վանական համալիրը (12-13դդ.): Գյուղի շրջակայքում պահպանվել են մ.թ.ա. 1-ին հզմ. "Պախրախաչ", մ.թ.ա. 6-րդ-5-րդ դդ. "Բերդաքար" և մ.թ.ա. 1-ին հզմ. "Կալքար" ամրոցները; 13-17դդ. "Քարագլուխ", "Հախսու" և "Ճաքած գյուղ" գյուղատեղիները:

**ԾԱՂԿԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Իջևանի տարածաշրջանում, Քարահան գետի աջափնյակում, մարզկենտրոնից 22 կմ հս-արմ.: Բընակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: **Ծ.** է վերանվանվել 02.03.1940թ.: 1831թ. ուներ 168, 1897-ին՝ 427, 1926-ին՝ 561, 1939-ին՝ 722, 1959-ին՝ 588, 1970-ին՝ 596, 1979-ին՝ 552, 1989-ին՝ 600, 2001-ին՝ 576, 2004-ին՝ 568 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, ծխախոտի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Ծ.** շրջակայքում պահպանվել են 13-17դդ. "Քոլեր" գյուղատեղին, 12-13դդ. եկեղեցին և 13դ. խաչքարերով գերեզմանոցը (**Մելիքգյուղ**):

**ԾԱՂԿՈՒՆՔ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 21 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 875 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 144, 1897-ին՝ 301, 1926-ին՝ 354, 1939-ին՝ 395, 1959-ին՝ 596, 1970-ին՝ 777, 1979-ին՝ 872, 2001-ին՝ 1141, 2004-ին՝ 1221 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում է սբ. Աստվածածին եկեղեցին:

**ԾԱՂԿՈՒՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Հրազդան գետի աջափնյակում, մարզկենտրոնից 40 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 512, 1897-ին՝ 1457, 1926-ին՝ 1561, 1939-ին՝ 1675, 1959-ին՝ 846, 1970-ին՝ 871, 1979-ին՝ 836, 1989-ին՝ 1057, 2001-ին՝ 1014, 2004-ին՝ 1096 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մակուից, Խոյից և Վանից 1828-29թթ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղում պահպանվել է սբ. Հարություն եկեղեցին (19դ.), իսկ արմ. մասում միջնադարի զարդաքանդակ խաչքարեր:

**ԾԱՂԿՈՒՏ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2060 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45 կմ հս-արմ.: **Ծ.** է վերանվանվել 08.08. 1991թ.: 1886թ. ուներ 193, 1897-ին՝ 288, 1926-ին՝ 559, 1939-ին՝ 624, 1959-ին՝ 594, 1979-ին՝ 985, 1989-ին՝ 378, 2001-ին՝ 209, 2004-ին՝ 232 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

Գյուղում կա մի սրբատեղի "Աղոթաքար" անունով, իսկ 2 կմ արլ. կան "Սնբերդ" և Լոռուքար ամրոցների ավերակներ (**Գյուլլիջա**):

**ԾԱՌԱՁՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Վերին Գետաշեն**:

**ԾԱՎ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրու լեռների ճյուղերից մեկի լանջին, Ծավ գետի ափին: Մարզկենտրոնից 36 կմ հվ., ծովի մակերևույթից 1070 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 97, 1926-ին՝ 398, 1939-ին՝ 305, 1959-ին՝ 297, 1970-ին՝ 236, 1979-ին՝ 203, 2001-ին՝ 157, 2004-ին՝ 116 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղում կան գերեզմանոցի և եկեղեցու հետքեր, "Մթնաձոր", "Ծանա", "Նավս", "Կեմանց", "Սոսուտ", "Հրաշեն" և "Թնջումնանց" գյուղատեղիները:

**ԾԱՓԱԹԱՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների հվ-արմ. լանջին, Տանձուտ գետի գետաբերանի շրջանում, մարզկենտրոնից 87 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: **Ծ.** է վերանվանվել 1991թ.: 1873թ. ուներ 107, 1897-ին՝ 244, 1926-ին՝ 345, 1939-ին՝ 522, 1959-ին՝ 600, 1970-ին՝ 839, 1979-ին՝ 1140, 1989-ին՝ 32, 2001-ին՝ 275, 2004-ին՝ 271 բնակիչ, որոնց մի մասը 1988-89թթ. Բաքու և Գանձակ քաղաքներից բռնագաղթածներն են: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտի և հացահատիկի մշակությամբ: Գյուղից 3 կմ արլ. կա դամբարանադաշտ (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 1,5 կմ հվ-արլ.՝ խաչքարերով գերեզմանոց (14-18դդ.) (**Կզըլքենդ**):

**ԾԻԱԾԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, Քասաղի աջափնյա հարթավայրում, մարզկենտրոնից 21 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա: 25.01. 1978թ. վերանվանվել է **Ծ.**: 1831թ. ուներ 115, 1897-ին՝ 530, 1926-ին՝ 440, 1939-ին՝ 512, 1959-ին՝ 587, 1970-ին՝ 825, 1979-ին՝ 872, 2001-ին՝ 1110, 2004-ին՝ 1155 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Պահպանվում են 19դ. սբ. Աստվածածին եկեղեցու ավերակները (**Գրամփա**):

**ԾԻԼՔԱՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 52 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 2150 մ: 1873թ. ուներ 369, 1897-ին՝ 567, 1926-ին՝ 790, 1939-ին՝ 920, 1959-ին՝ 444, 1970-ին՝ 544, 1979-ին՝ 494, 2001-ին՝ 562, 2004-ին՝ 567 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ծիլքար լեռան գագաթին է գտնվում մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Ծիլքար" ամրոցը:

**ԾՂՈՒԿ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի ձախ կողմում, մարզկենտրոնից 120 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1914թ. ուներ 229, 1922-ին՝ 393, 1931-ին՝ 627, 1959-ին՝ 846, 1970-ին՝ 313, 1979-ին՝ 323, 2001-ին՝ 427, 2004-ին՝ 383 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղից 1 կմ հս-արլ. "Կալեր" կոչված վայրում կան հին բնակավայրերի հետքեր: Սպանդարյանի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է 1,5 կմ հս-արլ. (**Հայկավան**, **Բորիսովկա**):

**ԾՈՎԱԳՅՈՒՂ** - գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հս-արմ. մասում, մարզկենտրոնից 46 կմ հս-արմ.:

Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 845, 1987-ին՝ 1808, 1926-ին՝ 2354, 1939-ին՝ 2647, 1959-ին՝ 2005, 1970-ին՝ 2886, 1979-ին՝ 3221, 1989-ին՝ 3412, 2001-ին՝ 4018, 2004-ին՝ 4030 բնակիչ, որոնց նախնիները եկել են Բայազետի Արծափ գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի և կաղամբի մշակությամբ: Գյուղի մեջ կան "Քանդած ժամ" (16-17դդ.) եկեղեցի և սբ. Գևորգ մատուռ (19դ.), իսկ 6 կմ հվ. սբ. Մաշտոց մատուռ (17դ.): Գյուղից 1 կմ արլ. գտնվում է Ավազով աղբյուր գյուղատեղին (13-18դդ.), 2 կմ արմ. պահպանվել է սբ. Աստվածընկալ եկեղեցին (17դ.) (**Ճապոտիկ**):

**ԾՈՎԱԶԱՐԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հվ-արմ. ափից մոտ 2 կմ հեռավորությամբ, Սևան-Գավառ ավտոճանապարհի վրա, մարզկենտրոնից 18 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1920 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 887, 1926-ին՝ 802, 1939-ին՝ 1307, 1959-ին՝ 1374, 1970-ին՝ 1525, 1979-ին՝ 1572, 1989-ին՝ 1836, 2001-ին՝ 2025, 2004-ին՝ 2195 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են Արմ. Հայաստանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են դամբարաններ (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), եկեղեցի (17-18դդ.), 12-15դդ. Արձանագրություններով խաչքարեր և գերեզմանոց:

**ԾՈՎԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լճափնյա հարթավայրում, Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհի վրա, մարզկենտրոնից 64 կմ հվ-արլ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1920 մ բարձրության վրա: 1878թ. ուներ 521, 1897-ին՝ 843, 1926-ին՝ 1005, 1939-ին՝ 1341, 1959-ին՝ 1683, 1970-ին՝ 2315, 1979-ին՝ 2324, 1989-ին՝ 2393, 2001-ին՝ 2623, 2004-ին՝ 2705 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է ծխախոտագործությամբ, անասնապահությամբ, կարտոֆիլի և հացահատիկի մշակությամբ: Գյուղում պահպանվել են 19-րդ դ. սբ. Աստվածածին եկեղեցի, 11-րդ և հետագա դդ. բազմաթիվ խաչքարեր, որոնցից 7-ը մի շարքի վրա են և կոչվում են "Յոթ եղբայր" (1013թ.): Գյուղից 1,5 կմ հս-արլ. կա "Ավերք" գյուղատեղի (մջնդ.), արմ. մասում՝ "Թուխ Մանուկ" մատուռ և գերեզմանոց: Շրջակայքում կան կիկլո-պյան ամրոց-բնակավայր (մ.թ.ա. 1-ին հզմ.), Սարդուր II-ի սեպագիր արձա-նագրությունը (մ.թ.ա. 8-րդ դ.):

**ԾՈՎԱՍԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Ծակքար գետի ափին, սա-րահարթի վրա, մարզկենտրոնից 32 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: **Ծ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 77, 1897-ին՝ 903, 1926-ին՝ 1393, 1939-ին՝ 1567, 1959-ին՝ 1584, 1970-ին՝ 2138, 1979-ին՝ 2056, 1989-ին՝ 2069, 2001-ին՝ 2559, 2004-ին՝ 2713 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829 և 1878թթ. եկել են Ալաշկերտի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և ծխախոտի մշակությամբ: Այստեղ կան եկեղեցիներ՝ սբ.Գրիգոր Լուսավորիչ (9դ.) և սբ. Աստվածածին (1814թ.): Շրջակայքում կան 9-17դդ. գյուղատեղիներ, որոնցից մեկը՝ "Պողոսի գեղ" անունով գյուղատեղին

է, որտեղ նշմարվում են շինու-թյունների հետքեր, գերեզմաններ ու խաչքարեր (**Նորագյուղ**, **Թազագյուղ**):

**ԾՈՎԻՆԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ափից 1 կմ հեռավորությամբ, մարզկենտրոնից 50 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 763, 1897-ին՝ 1398, 1926-ին՝ 2097, 1939-ին՝ 2402, 1959-ին՝ 2650, 1970-ին՝ 3838, 1979-ին՝ 3804, 1989-ին՝ 4030, 2001-ին՝ 4489, 2004-ին՝ 5076 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, ծխախոտի և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղից 1 կմ արլ. գտնվում է "Օձաբերդ" կիկլոպյան ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 3 կմ հվ-արմ.՝ "Կարմիր խաչեր" գյուղատեղի և պատմական Վաղվեր գյուղը իր սբ. Պողոս-Պետրոս եկեղեցիով (13դ.): Գյուղից անմիջապես հս. կան հին բնակավայրի ավերակներ՝ Փառկանք (10-17դդ.):

**ԾՌՎԻՉ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Լուսահովիտ**:

# Կ

**ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 42 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մ: 1831թ. ուներ 75, 1897-ին՝ 681, 1926-ին՝ 456, 1939-ին՝ 910, 1959-ին՝ 940, 1970-ին՝ 1220, 1979-ին՝ 1374, 2001-ին՝ 1347, 2004-ին՝ 1580 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունից, Խնուսից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում 17դ. սբ. Տիգրան եկեղեցին և 19դ. սբ. Գրիգոր Լուսավորիչ մատուռը, իսկ 1,5 կմ հվ-արլ.՝ պահպանվել է 3-5դդ. "Զաքարի բերդ" ամրոցը:

**ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 39 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1897թ.-333, 1926թ.-1262, 1939թ.-1635, 1959թ.-1500, 1970թ.-1324, 1979թ.-582, 2001թ.-998, 2004թ.-855: Նախնիները գաղթել են Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 44 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 160, 1897-ին՝ 169, 1926-ին՝ 279, 1939-ին՝ 285, 1959-ին՝ 228, 1970-ին՝ 330, 1979-ին՝ 400, 2001-ին՝ 577, 2004-ին՝ 637 բնակիչ: Նրանց նախնիների մի մասը գաղթել է Բայազետի շրջանից: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ և ծաղկաբուծությամբ: Գյուղում կա 19դ. սբ. Աստվածածին քարաշեն եկեղեցու ավերակներ, իսկ արլ. կողմում՝ խաչքարերով գերեզմանոց (8-15դդ.) (**Աղաձոր**):

**ԿԱԹՆԱՋՈՒՐ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 31 կմ արմ.: Բնակչությունը՝ 1831թ.-108, 1897թ.-1165, 1926թ.-1528,

1939թ.-1548, 1959թ.-1620, 1970թ.-1867, 1979թ.-1726, 2001թ.-1899, 2004թ.-1990 բնակիչ: Նախնիները գաղթել են Մուշից, Կարսից և այլ շրջաններից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, շաքարի ճակնդեղի և հացահատիկի մշակությամբ: Գյուղն ունի սբ. Հովհաննես եկեղեցի (1866թ.) և սբ. Կիրակի մատուռ:

**ԿԱԹՆԱՌԱՏ**- գյուղ Լոռու մարզում, Խոնավ լեռների արլ. ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1540 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 42 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադըրվել է 1923թ.: 1926թ. ուներ 67, 1939-ին՝ 694, 1959-ին՝ 1117, 1970-ին՝ 725, 1979-ին՝ 972, 2001-ին՝ 1036, 2004-ին՝ 979 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**Լոռպլեմսովխոզ**):

**ԿԱԼԱՍԱՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Վարդենիսի լեռների հվ. լանջին, Արփայի աջակողմյան վտակ Եղեգիս գետի հովտում, ծովի մակերևույթից 1990 մ բարձրության վրա, Հերմոն գյուղից 4 կմ հս-արմ.: 1873թ. ուներ 108, 1897-ին՝ 184, 1926-ին՝ 104, 1939-ին՝ 195, 1959-ին՝ 140, 1970-ին՝ 222, 1979-ին՝ 252 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում կա 9դ. եկեղեցի:

**ԿԱԼԱՎԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Բարեբեր գետի ափին, մարզկենտրոնից 101 կմ հս.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1897թ. ուներ 161, 1926-ին՝ 216, 1939-ին՝ 295, 1959-ին՝ 343, 1970-ին՝ 712, 1979-ին՝ 720, 1989-ին՝ 70, 2001-ին՝ 170, 2004-ին՝ 100 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղի շրջակայքում կան՝ դամբարանադաշտ (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), խաչքարերով գերեզմանոց (14-17դդ.), իսկ 2,5 կմ հվ. կա քարի դարի բացօդյա կայան (**Ամրխեր**):

**ԿԱԼԻՆԻՆԻ ԱՆՎԱՆ**- նախկինում ավան Արարատի մարզում, տե՛ս **Նորամարգ**:

**ԿԱԼԻՆԻՆՈ**- քաղաք Լոռու մարզում, տե՛ս **Տաշիր**:

**ԿԱԽԱԿՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների արլ. հատվածի հվ. ստորոտին: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 2200 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 92 կմ հվ-արլ.: Գյուղը **Կ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1831թ. ուներ 207, 1897-ին՝ 775, 1926-ին՝ 535, 1939-ին՝ 819, 1959-ին՝ 564, 1979-ին՝ 823, 1989-ին՝ 115, 2001-ին՝ 432, 2004-ին՝ 506 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ, ծխախոտագործությամբ և դաշտավարությամբ: Գյուղում պահպանվել է 15-16դդ. եկեղեցի (**Սովետաքենդ**):

**ԿԱԿԱՂՍ**- պատմական գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Քաղսի**:

**ԿԱՀՈւՐԴ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Քարունտ**:

**ԿԱՂՆՈւՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնաճյուղերից մեկի լանջին, մարզկենտրոնից 28 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1530 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 1949թ.: 1897թ. ուներ 205, 1926-ին՝ 308, 1939-ին՝ 363, 1959-ին՝ 242, 1970-ին՝ 184, 1979-ին՝ 151, 2001-ին՝ 117, 2004-ին՝ 117 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Իրանի Ղարադաղի գավառից: Բնակչությունը զբաղվում է

անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա "Նոր Խաչիտափ" սրբատեղի, իսկ շրջակայքում պահպանվել են միջնադարյան կիսավեր Անապատ եկեղեցին, գերեզմանոցներ, Հոնապատ բնակավայրի մնացորդներ (**Մողես**):

**ԿԱՃԱՃԿՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում, Լալվարի հվ-արլ ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1425 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 58 կմ հս-արլ.: 1897թ. ուներ 29, 1926-ին՝ 391, 1939-ին՝ 663, 1959-ին՝ 653, 1970-ին՝ 701, 1979-ին՝ 483, 2001-ին՝ 537, 2004-ին՝ 408 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և դաշտավարությամբ: Գյուղի շրջակայքում պահպանվել են Սեղվի գյուղատեղին (10-13դդ.) և ամրոցի մնացորդները (13-14դդ.): Այստեղ են գտնըվում նաև Սեղվու սբ. Նշան վանքը (13-14դդ.) և 13-14դդ. մատուռը:

**ԿԱՄԱՐԱԿՈՒՅՍ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Կամարիս**:

**ԿԱՄԱՐԻՍ**- գյուղ Կոտայքի մարզում, Գեղամա լեռների արմ. ստորոտին, մարզկենտրոնից 47 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 199, 1897-ին՝ 1097, 1926-ին՝ 1617, 1939-ին՝ 1545, 1959-ին՝ 1068, 1970-ին՝ 1392, 1979-ին՝ 1592, 2001-ին՝ 2195, 2004-ին՝ 2518 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, ծխախոտագործությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղում կա սբ. Հակոբ եկեղեցի (17դ.), հվ. մասում՝ սբ. Աստվածածին մատուռ (1258թ.) և մ.թ.ա. 1-ին հզմ. կիկլոպյան ամրոց: Գյուղի նոր գերեզմանոցում է գտնվում 15-17դդ. "Կիրակնամուտ" մատուռը (**Կամարակույս**):

**ԿԱՄԽՈՒՏ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ, Գտաշեն գյուղից 2 կմ հվ-արմ.: **Կ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1886թ. ուներ 222, 1897-ին՝ 282, 1926-ին՝ 252, 1939-ին՝ 317, 1959-ին՝ 230, 1970-ին՝ 204, 1979-ին՝ 245, 1989-ին՝ 25, 2004-ին՝ 55 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում է գտնվում 7դ. սբ. Աստվածածին խաչաձև գմբեթավոր եկեղեցին (**Չախմախ**):

**ԿԱՄՈ**- քաղաք Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գավառ**:

**ԿԱՄՈ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 9 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 414, 1897-ին՝ 1422, 1926-ին՝ 1290, 1939-ին՝ 1489, 1959-ին՝ 1334, 1970-ին՝ 1375, 1979-ին՝ 1283, 2001-ին՝ 1519, 2004-ին՝ 1519 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշից 18դ. 70-ական թթ.: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի մշակությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի եկեղեցին, որ վերակառուցվել է 1878թ., կոչվում է սբ. Աստվածածին: Գյուղից հվ. գտնվում է "Խոռոչավեր" մ.թ.ա. 2-րդ հզմ.-մ.թ.3 դ. բնակատեղին, 3 դ. համանուն դամբարանադաշտով և "Արե" գյուղատեղին (մ.թ.ա. 4-րդ դ.-մ.թ. 10դ.):

**ԿԱՅԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Այգեհովիտ գյուղից 3 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 500 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 25.05. 1967թ.: 1981թ. ուներ 202, 1989-ին՝ 384, 2001-ին՝ 278, 2004-ին՝ 284 բը-նակիչ: Բնակչությունը զբաղվում է

այգեգործությամբ և պտղաբուծությամբ: Գյուղից 1 կմ հս-արլ. կա 10-13դդ. ամրոց-պահակակետ (**Խճուղակյան**, **Ուզունթալայի փոստին կից**):

**ԿԱՅՔ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 29 կմ հս.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: **Կ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 89, 1897-ին՝ 551, 1926-ին՝ 670, 1939-ին՝ 826, 1959-ին՝ 481, 1970-ին՝ 537, 1979-ին՝ 538, 2001-ին՝ 554, 2004-ին՝ 521 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ալաշկերտից, Մուշից, Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում պահպանվել է 16դ. սբ. Աստվածածին եկեղեցին (**Մուլքի**):

**ԿԱՆԱՉՈՒՏ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 8-9 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 870 մ: 1831թ. ուներ 315, 1897-ին՝ 477, 1926-ին՝ 432, 1939-ին՝ 650, 1959-ին՝ 822, 1970-ին՝ 926, 1979-ին՝ 1030, 2001-ին՝ 1262, 2004-ին՝ 1159 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում է գտնվում սբ. Գևորգ եկեղեցին (1908թ.):

**ԿԱՆԻԱՇԻՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հս-արլ. ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 49 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2070 մ: **Կ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 284, 1922-ին՝ 352, 1931-ին՝ 564, 1939-ին՝ 477, 1959-ին՝ 308, 1970-ին՝ 360, 1979-ին՝ 424, 1989-ին՝ 452, 2001-ին՝ 345, 2004-ին՝ 470 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Կարսի մարզի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում և շրջակայքում կան հին դամբարաններ (**Սանգյառ**):

**ԿԱՆՉ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արտենի լեռան արմ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 61 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1470 մ: **Կ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1873թ. ուներ 91, 1897-ին՝ 142, 1926-ին՝ 184, 1939-ին՝ 437, 1959-ին՝ 398, 1970-ին՝ 409, 1979-ին՝ 378, 2001-ին՝ 160, 2004-ին՝ 279 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ (**Գյալթո**):

**ԿԱՊԱՆ**- քաղաք Սյունիքի մարզում, մարզկենտրոն, Երևանից 320 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 910 մ բարձրության վրա, Ողջի գետի ափին, Խուստուփ լեռան հս. ստորոտին: Հվ-ից և հս-ից շրջափակված է Մեղրու և Բարգուշատի լեռներով: Քաղաքի տարածքում Ողջի գետը ընդունում է Վաչագան և Կավարտ վտակները: **Կ.** որպես քաղաք կազմավորվել է 1928թ.: 1831թ. ուներ 196, 1897-ին՝ 2272, 1926-ին՝ 2658, 1939-ին՝ 8511, 1959-ին՝ 19315, 1976-ին՝ 36351, 2001-ին՝ 45711, 2004-ին՝ 45600 բնակիչ: Արդյունաբերական կենտրոն է: Տարածքը հարուստ է գունավոր մետաղների, պղնձի պաշարներով: Հատկապես զարգացած է պղնձարդյունաբերությունը: Բնակչությունը զբաղվում է նաև գյուղատնտեսությամբ: Նախկին “Կատար” բնակավայրի տարածքում կանգուն է “Կատարի վանք” եկեղեցին (**Ղափան**):

**ԿԱՊՍ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին, Շիրակի դաշտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11 կմ հս-արմ.: Բնակչությունը՝ 1831թ.-166, 1897թ.-457, 1926թ.-449, 1939թ.-542, 1959թ.-428,

1970թ.-539, 1979թ.-535, 2001թ.-720, 2004թ.-697 բնակիչ: Հիմնադրել են Բայազետից եկածները 1820-ական թթ.: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում են գտնվում “Ժամ” եկեղեցին, “Սրբի սար” և “Սրբատեղ” մատուռները:

**ԿԱՊՈՒՅՏ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփայի ձախակողմյան Կապույտ վտակի վերին հոսանքի շրջանում, ծովի մակերևույթից 1840 մ բարձրության վրա, Գոմքից 3 կմ հվ-արլ.: **Կ.** է վերանվանվել 1968թ.: 1831թ. ուներ 35, 1897-ին՝ 159, 1926-ին՝ 125, 1939-ին՝ 143, 1959-ին՝ 226, 1970-ին՝ 348, 1979-ին՝ 414 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում պահպանվել են 10-15դդ. խաչքարեր (**Այափոր**, **Մազրա**):

**ԿԱՊՈՒՏԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Հատիս լեռան ստորոտին, մարզկենտրոնից 47 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 03.01.1935թ.: 1873թ. ուներ 660, 1897-ին՝ 1003, 1926-ին՝ 1110, 1939-ին՝ 1574, 1959-ին՝ 1119, 1970-ին՝ 1073, 1979-ին՝ 1050, 2001-ին՝ 1312, 2004-ին՝ 1374 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի և բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ: Շրջակայքում կան կապույտ գույնի շինաքարեր, որի պատճառով էլ գյուղը ստացել է **Կ.** անունը: Գյուղում կան 7դ. սբ. Հովհաննես և 14դ. Կապտավանք՝ կապույտ բազալտից կառուցված, եկեղեցիները: Գյուղի հս-արմ. եզրում կա խաչքարերով գերեզմանոց (7-20դդ.), “Կապույտ խաչ” խաչքար (12-13դդ.) (**Լեռնավանք**):

**ԿԱՌՆՈՒՏ**- գյուղ Շիրակի մարզում, Փամբակի լեռների ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1570 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հս-արլ.: 1831թ.ուներ 151, 1897-ին՝ 965, 1926-ին՝ 1149, 1939-ին՝ 1136, 1959-ին՝ 783, 1970-ին՝ 719, 1979-ին՝ 667, 2001-ին՝ 992, 2004-ին՝ 965 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Դերջանի և Կարսի գավառներից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, պտղաբուծությամբ, թռչնաբուծությամբ, շաքարի ճակնդեղի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 1 կմ հս., սարի կատարին, պահպանված են մ.թ.ա. 8-րդ-7-րդ դդ. ջրամբարի մնացորդները: Գյուղի հս-արլ. կողմում պահպանվում է կիսավեր եկեղեցի, որը նախկինում եղել է մեհյան, իսկ 4-5դդ. վերածվել եկեղեցու և 10դ. վերակառուցվել: **Կ**-ում կան “Լույս աղբյուր” և սբ. Մինաս մատուռներ:

**ԿԱՎԱԿԵՐՏ**- պատմական գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Արգավանդ**:

**ԿԱՎՃՈՒՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի Գեղի վտակի աջափնյա ձորալանջին, Լեռնաձորից 8 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1525 մ բարձրության վրա: 1991թ. վերանվանվել է **Կ.**: 1897թ. ուներ 163, 1926-ին՝ 109, 1939-ին՝ 135, 1959-ին՝ 203, 1979-ին՝ 357, 2001-ին՝ 112, 2004-ին՝ 96 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Ղովշուտ**):

**ԿԱՐԲԻ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջափնյակում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 2 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1310 մ: 1831թ. ուներ 694,

1897-ին՝ 1148, 1926-ին՝ 1629, 1939-ին՝ 1645, 1959-ին՝ 1852, 1970-ին՝ 2314, 1979-ին՝ 2505, 2001-ին՝ 3624, 2004-ին՝ 3995 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բայազետի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Կ.** են գտնվում սբ. Աստվածածին (1691-1693թթ.), սբ. Գևորգ (սբ. Կիրակի, 10-13դդ.), սբ. Գրիգոր (17-19դդ.), "Թուխ Մանուկ" (13-14դդ.), "Ծիրանավոր" (13-14դդ.) և "Սողոյենց ժամ" (11-13դդ.) եկեղեցիները: Գյուղի շրջակայքում են գտնվում Հին Կարբի (4-5դդ.), Ապարանք (11-19դդ.), "Փշավան" (13-19դդ.), Կալեր (16-18դդ.) գյուղատեղիները և 10-18դդ. Արենի գյուղատեղին իր համանուն ամրոցով:

**ԿԱՐԳԱՎԱՆՔ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Զորավան**:

**ԿԱՐԴ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի վտակ, Կարդ գետակի ձախ ափին, Գեղի գյուղից 5 կմ արմ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 60, 1926-ին՝ 71, 1939-ին՝ 170, 1959-ին՝ 250, 1970-ին՝ 295, 1979-ին՝ 61 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: **Կ.** 2-3 կմ հս-արմ. է գտնվել Վերին Կարդ գյուղը, որի ավերակները պահպանված են: Ունի 17դ. եկեղեցի, որի բեմի տակից բխում է հանքային աղբյուր:

**ԿԱՐԵՆԻՍ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի հովտում, մարզկենտրոնից 16 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1831թ. ուներ 48, 1897-ին՝ 311, 1906-ին՝ 439, 1926-ին՝ 221, 1939-ին՝ 432, 1959-ին՝ 312, 1979-ին՝ 570, 1989-ին՝ 594, 2001-ին՝ 813, 2004-ին՝ 952 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Ունի 7դ. միանավ բազիլիկ եկեղեցի և Մաթևոս Առաքյալի վանքը (15դ.), որը հայտնի է Կարենիս կամ Կարենավանք անվամբ (**Գյումուշ**):

**ԿԱՐԻՆ**- գյուղ Արագածոտնի մարզում: Հեռավորությունը Սասունիկ գյուղից՝ 0,5 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1080 մ: 2001թ. ուներ 334, 2004-ին՝ 579 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ:

**ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ափամերձ գոտում, Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհի վրա, մարզկենտրոնից 60 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: Գյուղը հիմնել են 1829-30թթ. Արմ. Հայաստանից եկած վերաբնակիչները : 1928թ. այստեղ հաստատվեցին նաև 1915թ. Վանից գաղթած մի քանի ընտանիք: 1830թ. ուներ 180, 1897-ին՝ 923, 1926-ին՝ 1433, 1939-ին՝ 1909, 1959-ին՝ 1892, 1970-ին՝ 2308, 1979-ին՝ 2116, 2001-ին՝ 2299, 2004-ին՝ 2153 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի մոտ են գտնըվում սբ. Աստվածածին, սբ. Սարգիս (10-15դդ.) մատուռները և "Քարե դուռ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ հզմ.վերջ-3դ.): **Կ.** կան "Ավերաժամ" (12-13դդ.) և սբ.Գևորգ (19դ.) եկեղեցիներ, "Թուխ Մանուկ" մատուռ (13դ.), "Ճգնի դար" (15-17դդ.) և "Ցեխձոր" (9-10դդ.) գերեզմանոցներ, իսկ 1 կմ արմ. է գտնվում է "Հայերի ավերակներ" բնակատեղին (մ.թ.ա. 3-րդ հզմ.-մ.թ.ա. 1 դ.):

**ԿԱՐՃԵՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 80 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 980 մ բարձրության վրա: Գյուղը հիշատակվում է 10-րդ դ-ից: 1831թ. ուներ 154, 1897-ին՝ 489, 1926-ին՝ 566, 1939-ին՝ 617, 1959-ին՝ 590, 1970-ին՝ 507, 1979-ին՝ 506, 2001-ին՝ 353, 2004-ին՝ 260 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Կարևոր դեր ունի **Կ.** ջրանցքը (երկարությունը 25 կմ): Գյուղում կա սբ. Աստվածածին եկեղեցի, հվ-արմ. մասում սբ. Ստեփանոս վանքը, ուներ իջևանատուն: Գյուղի մոտ են գտնվում Կարճևանի բերդի ավերակները:

**ԿԱՐՄԻՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Կարմիրգյուղ**:

**ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Կարմիրգյուղ**:

**ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1260 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 41 կմ հս-արլ.: Բնակչությունը՝ 1926թ.-70, 1959թ.-223, 1970թ.-209, 1979թ.-175, 2001թ.-214, 2004թ.-186 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արմ. Հայաստանից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի և ծխախոտի մշակությամբ: Գյուղի տարածքում պահպանվել են հին ամրոցի հետքեր և գյուղատեղի: Այստեղ է գտնվում “Աղեկ” անունով եկեղեցին:

**ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂ**- նախկինում գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ճամբարակ**:

**ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Արծվանիկ**:

**ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Լուկաշին**:

**ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գեղարքունիք գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 2 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1975 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 709, 1897-ին՝ 1744, 1926-ին՝ 2442, 1939-ին՝ 2895, 1959-ին՝ 3466, 1970-ին՝ 4389, 1979-ին՝ 4714, 1989-ին՝ 5600, 2001-ին՝ 5448, 2004-ին՝ 6271 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829-30թթ.գաղթել են Բայազետի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կան սբ. Աստվածածին (1674թ.) և սբ. Գրիգոր (15դ.) եկեղեցիներ: Գյուղից 3 կմ հվ-արլ. գտնվում են “Ծաղկավան” (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ ամրոցը, և սբ. Գևորգ եկեղեցին (13-14դդ.): Վերջինիս մոտ կան 13-17դդ. բազմաթիվ խաչքարեր: Մյուս հնություններից են սբ. Վառվառա (11-13դդ.) և “Թուխ Մանուկ” (19-20դդ.) մատուռները: Գյուղից 1 կմ հվ-արլ. կա “Կոչի տակ” (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտը (**Կարմիր**, **Կարմիր Աղբյուր**):

**ԿԱՐՄՐԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 56 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Բնակչությունը՝ 1831թ.-22, 1897թ.-790, 1926թ.-601, 1939թ.-860, 1959թ.-830, 1970թ.-616, 1979թ.-562, 2001թ.-634, 2004թ.-657 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Վանից, Ալաշկերտից, Կարսից և Սասունից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում սբ. Աստվածածին (1860թ.) և սբ.

Հովհաննես (10դ.) եկեղեցիները, "Խան-սուլի խաչ" սրբատեղին (11դ.): Գյուղից 3 կմ հվ-արմ. գտնվում է Միջնաձոր գյուղատեղին (18-20դդ.), 2 կմ հվ-արմ.՝ "Ճգնավորի ձոր" ջրաղացների համալիրը (17-20դդ.), իսկ 1,3 կմ հվ-արմ.՝ ժայռափոր մատուռը (11-12դդ.) և "Հովհաննեսի" խաչքարը (1223թ.):

**ԿԱՐՄՐԱՇԵՆ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Քարակերտ**:

**ԿԱՐՄՐԱՇԵՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Հերհեր գետի վերին հոսանքի շրջանում, ծովի մակերևույթից 2030 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 40 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 250, 1897-ին՝ 456, 1926-ին՝ 415, 1939-ին՝ 776, 1959-ին՝ 590, 1970-ին՝ 1157, 1979-ին՝ 870, 2001-ին՝ 318, 2004-ին՝ 250 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 1 կմ հվ-արլ. է գտնվում Պողոս-Պետրոս խաչքարը, կան 12-15դդ. խաչքարեր:

**ԿԱՐՄՐԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Աշոցք գետի ափին, մարզկենտրոնից 32 կմ հս., ծովի մակերևույթից 1990 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 255, 1897-ին՝ 350, 1959-ին՝ 232, 1970-ին՝ 237, 1979-ին՝ 208, 2001-ին՝ 223, 2004-ին՝ 242 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա Կարմրավանք եկեղեցի:

**ԿԱՐՄՐԱՔԱՐ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 8 կմ հս.: 1831թ. ուներ 162, 1897-ին՝ 388, 1926-ին՝ 236, 1939-ին՝ 364, 1959-ին՝ 285, 1970-ին՝ 131, 1979-ին՝ 50, 1989-ին՝ 34, 2001-ին՝ 52, 2004-ին՝ 86 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասենից (1829-30թթ.) և Աշոցքի Սալուտ գյուղից: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ, պտղաբուծությամբ և սերմնաբուծությամբ: Գյուղում կան՝ "Սուսոյի քար" սրբատեղի, "Սուրբ" և "Յոթ աղբյուր" մատուռներ, "Վերին Կալեր" եկեղեցի:

**ԿԱՔԱՎԱԲԵՐԴ**- գյուղ Արարատի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1610 մ, հեռավորությունը Բարձրաշենից՝ 29 կմ արլ.: 2004թ. ուներ 157 մարդ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Այստեղ է գտնըվում 8-9դդ. Կաքավաբերդի ամրոցը:

**ԿԱՔԱՎԱՁՈՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 38 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1675 մ: 1831թ. ուներ 18, 1897-ին՝ 410, 1926-ին՝ 338, 1939-ին՝ 585, 1959-ին՝ 679, 1970-ին՝ 802, 1979-ին՝ 796, 2001-ին՝ 1012, 2004-ին՝ 1095 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղից 500 մ հվ-արլ. գտնվում է "Յոթ աղբյուր" սրբատեղին:

**ԿԱՔԱՎԱՍԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, Չիչկան գետի վերին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 32 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1930 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 206, 1897-ին՝ 287, 1926-ին՝ 281, 1939-ին՝ 414, 1959-ին՝ 217, 1970-ին՝ 232, 1979-ին՝ 176, 2001-ին՝ 151, 2004-ին՝ 155 բնակիչ, որոնց նախնիները 1915-18թթ. գաղթել են Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում կա Կարմրավոր անունով կիսավեր եկեղեցի (միջնդ.), "Թուխ Մանուկ" մատուռ և կիկլոպյան ամրոցի հետքեր:

**ԿԵԹՐՈՆ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Գետամեջ**:

**ԿԵՉՈՒՏ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի վերին հոսանքում, նրա ձախ ափին: Ջերմուկ քաղաքից 3 կմ հվ., ծովի մակերևույթից 1970 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 362, 1897-ին՝ 631, 1926-ին՝ 708, 1939-ին՝ 939, 2004-ին՝ 1000 բնակիչ, որոնց մի մասի նախնիները տարբեր ժամանակներում այստեղ են տեղափոխվել Նախիջևանի՝ Զնաբերդ և Ջանգեզուրի տարբեր գյուղերից: Կեչուտի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է փոքր ինչ վերև: Տնտեսությունը զբաղվում է հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ:

**ԿԶԸԼՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ծափաթաղ**:

**ԿԻՐԱԿՈՍԻԿ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Աշոտավան**:

**ԿԻՐԱՆՑ**- գյուղ Տավուշի մարզում, Քարահան գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 24 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 720 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 25.01. 1978թ.: 1831թ. ուներ 171, 1897-ին՝ 273, 1926-ին՝ 227, 1939-ին՝ 336, 1959-ին՝ 265, 1970-ին՝ 335, 1979-ին՝ 310, 1989-ին՝ 295, 2001-ին՝ 329, 2004-ին՝ 295 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, ծխախոտագործությամբ և անասնապահությամբ: Ունի 1675թ. սբ. Աստվածածին եկեղեցի: Գյուղի մոտ են գտնըվում 13դ. Կիրանց և Դեղձնուտի վանքերը (**Գետաշեն**):

**ԿԻՐՈՎ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ամրակից**:

**ԿԻՐՈՎԱԿԱՆ**- քաղաք Լոռու մարզում, տե՛ս **Վանաձոր**:

**ԿԻՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արարատի մարզում, տե՛ս **Տափերական**:

**ԿԻՑՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի ձախակողմյան Կահուրդ վտակի վերնագավառում, Քարուտ գյուղից 2 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1886թ. ուներ 130, 1897-ին՝ 56, 1926-ին՝ 77, 1939-ին՝ 131, 1959-ին՝ 220, 1970-ին՝ 299, 1979-ին՝ 314 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Գյուղում կա ուշ շրջանի կանգուն եկեղեցի և 17դ. Արձանագրությամբ տապանաքար (**Քիրս**):

**ԿՈԹ**- պատմական բնակավայր Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ներքին Գետաշեն**:

**ԿՈԹԳՈՐԱՆ**- պատմական գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Լեռնանիստ**:

**ԿՈԹԻ**- գյուղ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 39 կմ հս., ծովի մակերևույթից 750 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1831թ.ուներ 777, 1897-ին՝ 1769, 1926-ին՝ 1889, 1939-ին՝ 2529, 1959-ին՝ 1950, 1970-ին՝ 2408, 1979-ին՝ 2311, 1989-ին՝ 3556, 2001-ին՝ 2225, 2004-ին՝ 2217 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 11 կմ արլ. գտնվում է Գեղատեղ գյուղատեղին, 9-18դդ. սբ. Սարգիս վանական համալիրը, 5 կմ արլ.՝ մ.թ.ա. 1-ին հզմ. "Աղի աղբյուր" ամրոցը (**Շավարշավան**):

**ԿՈԹՈՒՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Գետափ**:

**ԿՈՂԲ**- գյուղ Տավուշի մարզում, Կողբ գետի ափին, մարզկենտրոնից 52 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 750 մ

բարձրության վրա: 1831թ. ուներ 592, 1897-ին՝ 2008, 1926-ին՝ 2423, 1939-ին՝ 2970, 1959-ին՝ 3165, 1970-ին՝ 4142, 1979-ին՝ 4421, 1989-ին՝ 5063, 2001-ին՝ 4610, 2004-ին՝ 4436 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում և շրջակայքում կան բազմաթիվ հնություններ: **Կ**-ի հվ. մասում է "Վարդապետի" եկեղեցին (7դ.), 3 կմ արմ.՝ Տվարազեղցի գյուղատեղիում գտնվում են համանուն եկեղեցու ավերակները (7-17դդ.), 4 կմ հվ-արմ.՝ Մշկավանքը (12դ.), 13 կմ հվ-արմ.՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոց և "Կոնդոխավանք" եկեղեցին, 3 կմ հս-արլ.՝ սբ. Գևորգ եկեղեցին (14-15դդ.) (**Կողբաքար**):

**ԿՈՂԲԱՎԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 33 կմ արմ., ծովի մակերևույթից 1175 մ բարձրության վրա: Գերագույն խորհրդի նախագահության 26.09. 1984թ. հրամանագրով դասվել է ՀԽՍՀ գյուղերի կարգին և կոչվել **Կ.**: 1989թ. ուներ 40, 2001-ին՝ 114, 2004-ին՝ 145 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և պտղաբուծությամբ:

**ԿՈՂԲԱՔԱՐ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Կողբ**:

**ԿՈՂԵՍ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի Տուտկաջուր վտակի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1310 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ հս-արլ.: 1897թ. ուներ 639, 1926-ին՝ 438, 1939-ին՝ 684, 1959-ին՝ 461, 1970-ին՝ 338, 1979-ին՝ 374, 2001-ին՝ 401, 2004-ին՝ 365 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կան պատմական կոթողներ և համալիրներ, որոնցից են՝ Տուտիկ իշխանի մահարձանը (1241թ.) և 10-11դդ. կամուրջը: Գյուղում են գտնվում "Սուրբ" (13դ.) և սբ. Սարգիս մատուռները:

**ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԿԱ**- նախկինում գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Ծաղկաձոր**:

**ԿՈՇ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 18 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250 մ: 1831թ. ուներ 90, 1897-ին՝ 163, 1926-ին՝ 891, 1939-ին՝ 1218, 1959-ին՝ 1873, 1970-ին՝ 1911, 1978-ին՝ 1988, 2001-ին՝ 2756, 2004-ին՝ 3125 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի հս. մասում են գտնվում "Կուաշ" բնակատեղին (մ.թ.ա. 1-ին հզմ.) և "Աղջկա բերդ" ամրոցը (13-14դդ.), սբ. Գևորգ (1891թ.) և սբ.Գրիգոր Լուսավորիչ (13-14դդ.) եկեղեցիները, 13դ. "Թևավոր խաչ" խաչքարը: Գյուղից 1 կմ հս. գտնվում են "Բերդ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ հզմ.), սբ.Ստեփանոս եկեղեցին (7-17դդ.) և "Կապույտ խաչ" մատուռը (10դ.), 2 կմ արլ.՝ "Քարհանքի բերդ" ամրոցը (մ.թ.ա. 3-րդ հզմ.) (**Կուաշ**):

**ԿՈՌՆԻՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Կոռնիձոր գետի ձախ զառիթափ լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 93 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1190 մ: 1873թ. ուներ 491, 1897-ին՝ 1228, 1926-ին՝ 981, 1939-ին՝ 1049, 1959-ին՝ 1022, 1970-ին՝ 1279, 1979-ին՝ 1252, 1989-ին՝ 1147, 2001-ին՝ 1072, 2004-ին՝ 1207 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, պտղաբուծությամբ, դաշտավարությամբ, խաղողագործությամբ, բանջա-

րանոցային և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի սբ. Հովհաննես եկեղեցին 18-19դդ. կառույց է: **Կ**-ի շրջակայքում պահպանվել են քարայր-կացարաններ և գյուղատեղիներ:

**ԿՈՌՔԱՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ծակքար**:

**ԿՈՏԱՅՔ**- գյուղ Կոտայքի մարզում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 40 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 150, 1897-ին՝ 570, 1926-ին՝ 862, 1939-ին՝ 910, 1959-ին՝ 951, 1970-ին՝ 1181, 1979-ին՝ 1295, 2001-ին՝ 1627, 2004-ին՝ 1861 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, ծխախոտագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում պահպանվել են սբ. Նշան և Մարիամ Աստվածածին եկեղեցիները (**Բարձափի**):

**ԿՈՐԿՈՏԱՆ**- նախկինում գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Հրազդան**:

**ԿՈՐՈՏՅՈՒՆՔ**- պատմական գյուղ Վայոց Ձորի մարզում, տե՛ս **Հորադիս**:

**ԿՈՐՉԼՈՒ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Գողգոչ**:

**ԿՐԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Շիրակի լեռների հվ. փեշերին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1880 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 219, 1897-ին՝ 614, 1926-ին՝ 279, 1939-ին՝ 424, 1959-ին՝ 376, 1970-ին՝ 242, 1979-ին՝ 222, 1989-ին՝ 140, 2001-ին՝ 294, 2004-ին՝ 255 բնակիչ, որոնց նախնիները Կարինի Պզտի-Տույ գյուղից և Պարսկաստանից գաղթել և հիմնադրել են գյուղը: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, ճակնդեղի և բանջարեղենի մշակությամբ: Գյուղում կա 1859թ. սբ. Աստվածածին եկեղեցի:

**ԿՐԱՍԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին, մարզկենտրոնից 34 կմ հս., ծովի մակերևույթից 1995 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 311, 1926-ին՝ 349, 1939-ին՝ 604, 1959-ին՝ 350, 1970-ին՝ 387, 1979-ին՝ 352, 2001-ին՝ 512, 2004-ին՝ 548 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում կան եկեղեցի, մատուռ և քարավանատուն:

**ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿ**- նախկինում քաղաքատիպ ավան Գեղարքունիքի մարզում, տե՝ս **Ճամբարակ**:

**ԿՐՈՒԳԼԱՅԱ ՇԻՇԿԱ**- գյուղ Լոռու մարզում, Տաշիր գետի ձախ կողմում, Բոլորկոն լեռան ստորոտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ, հեռավորությունը Մեդովկա գ-ից՝ 3 կմ հս.: Գյուղը հիմնադրվել է 1930թ.: 1939թ. ուներ 179, 1959-ին՝ 237, 1970-ին՝ 243, 1979-ին՝ 230, 2001-ին՝ 119, 2004-ին՝ 140 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ:

**ԿՈՒԱՇ**- պատմական գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Կոշ**:

**ԿՈՒՋԻՔԵՆԴ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Գառնառիճ**:

**ԿՈՒԹ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Կութ գետի ափին, մարզկենտրոնից 87 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1831թ. ուներ 211, 1897-ին՝ 754, 1926-ին՝ 654, 1939-ին՝ 803, 1959-ին՝ 770, 1970-ին՝ 1202, 1979-ին՝ 1533,1989-ին՝ 94, 2001-ին՝ 226, 2004-ին՝ 264 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների, հացահատիկի և ծխախոտի մշակությամբ: **Կ.** և շրջակայքում կան հայկական գերեզմաններ (16-17դդ.), խաչքարեր

(15-16դդ.), գյուղից 2 կմ հվ-արլ՝ գյուղատեղի (15-17դդ.) (**Զառքենդ**):

**ԿՈւՄԱՅՐԻ**- պատմական քաղաք Շիրակի մարզում, տե՛ս **Գյումրի**:

**ԿՈւՅԲԻՇԵՎ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ուրասար**:

**ԿՈւՅԲԻՇԵՎ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Հաղարծին**:

**18-ՐԴ ԿՈւՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈւՄԱՐԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մուսալեռ**:

**ԿՈւՏԱԿԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների ստորոտին, մարզկենտրոնից 92 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: **Կ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1873թ. ուներ 245, 1897-ին՝ 442, 1926-ին՝ 335, 1939-ին՝ 339, 1959-ին՝ 337, 1979-ին՝ 589, 1989-ին՝ 13, 2001-ին՝ 254, 2004-ին՝ 229 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղի հվ. մասում կա 12-17դդ. խաչքարերով գերեզմանոց, իսկ գյուղի մեջ՝ 16-17դդ. տապանաքարեր (**Գյունաշլի**):

**ԿՈւՐԱՎԱՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Կուրիս**:

**ԿՈւՐԹԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1260 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 22 կմ hu-արլ.: 1831թ. ուներ 187, 1897-ին՝ 1159, 1926-ին՝ 1831, 1939-ին՝ 2297, 1959-ին՝ 2143, 1979-ին՝ 1818, 2001-ին՝ 2032, 2004-ին՝ 1910 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղից արլ., Հնեվանի ձորում է գտնվում Հնեվանքի համալիրը (10-14դդ.), սբ. Աստվածածին (6դ.), "Գտեվանք" (6-17դդ.), "Ճգնավոր" (11դ.) եկեղեցիները, "Սրբություն" և սբ. Կիրակի (10-20դդ.) մատուռները, իսկ 2 կմ հվ-արմ.՝ "Զրաշեն" եկեղեցին (9դ.):

**ԿՈւՐԻՍ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրի գետի աջ կողմում, լեռնաբազկի ընդարձակ գագաթին: Հեռավորությունը մարզկենտրոնից 71 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1375 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 12, 1897-ին՝ 194, 1926-ին՝ 281, 1939-ին՝ 239, 1959-ին՝ 303, 1970-ին՝ 297, 1979-ին՝ 234, 2001-ին՝ 112, 2004-ին՝ 77 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեպտղաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում պահպանվել է 15-17դ. սբ. Ամենափրկիչ եկեղեցին, գյուղից 1,5 կմ հվ-արլ.՝ նախկին Ագարակ գյուղի ավերակները և Կուրկուտախաչ հնավայրը: Գյուղի հվ-արլ. և արլ. կողմում կան գյուղատեղիներ, սառնորակ աղբյուրներ, այդ թվում նաև հանքային (**Կուրավանք**):

# Հ

**ՀԱԳՎԻ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1070 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ hu-արլ.: 1886թ. ուներ 225, 1897-ին՝ 298, 1926-ին՝ 509, 1939-ին՝ 669, 1959-ին՝ 533, 1970-ին՝ 612, 1979-ին՝ 516, 2001-ին՝ 543, 2004-ին՝ 428 բնակիչ: Բը-

նակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում են գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (12-13դ.) և "Խելի քար" գերեզմանոցը (14-20դդ.):

**ՀԱԼԱՎԱՐ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակի աջակողմյան վտակ Լեռնաջուր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 111, 1873-ին՝ 625, 1919-ին՝ 455, 1939-ին՝ 951, 1959-ին՝ 1020, 1970-ին՝ 1838, 1979-ին՝ 2181, 2001-ին՝ 98, 2004-ին՝ 135 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, դաշտավարությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ:

**ՀԱԼԻՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի ձախ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 69 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1350 մ: 1831թ. ուներ 58, 1897-ին՝ 584, 1926-ին՝ 615, 1939-ին՝ 657, 1959-ին՝ 577, 1970-ին՝ 518, 1979-ին՝ 482, 2001-ին՝ 602, 2004-ին՝ 625 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում է գտնվում 17դ. սբ. Մինաս եկեղեցին, ոչ հեռու՝ Հալիձորի սբ. Աստվածածին կամ "Կուսանաց անապատ" վանքը: Շրջակայքում կան մի քանի գյուղատեղիներ՝ "Կարմիր", "Հայկաշեն", Հալե, Հին Շենատեղ, "Հայկատափ" և այլն:

**ՀԱԿԿՈ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Հակո**:

**ՀԱԿՈ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 64 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1420 մ: **Հ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1873թ. ուներ 45, 1931-ին՝ 415, 1959-ին՝ 484, 1970-ին՝ 456, 1979-ին՝ 451, 2001-ին՝ 229, 2004-ին՝ 239 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**Հակկո**):

**ՀԱՂԱՐԾԻՆ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստև գետի ափին, Իջևան-Հրազդան երկաթուղու վրա, մարզկենտրոնից 27 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1815թ., **Հ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1873թ. ուներ 371, 1897-ին՝ 1304, 1926-ին՝ 2136, 1939-ին՝ 2655, 1959-ին՝ 2811, 1970-ին՝ 3357, 1989-ին՝ 4497, 2001-ին՝ 3842, 2004-ին՝ 3635 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խոզաբուծությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և բանջարեղենի մշակությամբ: Գյուղից 2 կմ արլ. է գտնվում Քոստանջրի գյուղատեղին և խաչքար, 3 կմ հս-արլ.՝ մեկ այլ գյուղատեղի, իսկ հս. մասում՝ "Ժամի թաղ" վանքը և սբ. Սարգիս մատուռը (**Ջարխեչ**, **Կույբիշև**):

**ՀԱՂԹԱՆԱԿ**- գյուղ Տավուշի մարզում, Դեբեդ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 62 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 600 մ բարձրության վրա: 1959թ. ուներ 326, 1970-ին՝ 921, 1979-ին՝ 987, 1989-ին՝ 1180, 2001-ին՝ 1274, 2004-ին՝ 1051 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 1,5 կմ հս. գտնվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Խրամաբերդ" ամրոցը (**Թումանյանի անվան սովխոզին կից**):

**ՀԱՂՊԱՏ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1000 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 61 կմ հվ-արլ.: 1886թ. ուներ 750, 1897-ին՝ 864, 1926-ին՝ 857, 1939-ին՝ 891, 1959-ին՝ 699, 1970-ին՝ 871, 1979-ին՝ 727,

2001-ին՝ 787, 2004-ին՝ 700 բը-նակիչ: Բնակչությունը զբաղվում է կերային կուլտուրաների, ծխախոտի և բանջարեղենի մշակությամբ: Գյուղում են գտնվում Կայան (Դսեվանք) ամրոցը (1233թ.), Հաղպատավանքը (10-13դդ.), սբ. Նշան (976-991թթ.), սբ. Գրիգոր (1025թ.), սբ. Աստվածածին (13դ.), Կուսանաց անապատ (10-20դդ.) և Զորավոր (13դ.) եկեղեցիները, "Տերունական" մատուռը (14-17դդ.): Գյուղի շրջակայքում կան հին գյուղատեղիներ և այլ հնություններ:

**ՀԱՄԶԱՉԻՄԱՆ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Մարգահովիտ**:

**ՀԱՅԱՆԻՍՏ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի աջ ափին, արգավանդ ու այգեվետ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 835 մ: Հիմնադրվել է 1831թ., իսկ 03.04. 1991թ. վերանվանվել է Հ.: 1831թ. ուներ 151, 1916-ին՝ 1052, 1931-ին՝ 850, 1959-ին՝ 1179, 1970-ին՝ 1843, 1979-ին՝ 1896, 2001-ին՝ 2144, 2004-ին՝ 2074 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղի արլ. մասում գտնվում է "Ոսկե Բլուր" բնակատեղին (մ.թ.ա. 3-րդ հզմ.) (**Ղոստլուղ**):

**ՀԱՅԴԱՐԼԻ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակի աջակողմյան վտակ Հալավար գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ, հեռավո-րությունը Հալավար գյուղից՝ 2 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 26, 1897-ին՝ 265, 1926-ին՝ 325, 1939-ին՝ 496, 1959-ին՝ 448, 1970-ին՝ 994 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ:

**ՀԱՅԹԱՂ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 15 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 875 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 339, 1897-ին՝ 1016, 1926-ին՝ 1141, 1939-ին՝ 1208, 1959-ին՝ 1499, 1970-ին՝ 2086, 1979-ին՝ 2052, 2001-ին՝ 2565, 2004-ին՝ 2703 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-31թթ. այստեղ է գաղթել Ուրմիայի գավառից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի 1863թ. եկեղեցի՝ սբ. Աստվածածին:

**ՀԱՅԿԱԶՈՐ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 37 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ: 1831թ. ուներ152, 1897-ին՝ 1052, 1926-ին՝ 840, 1939-ին՝ 856, 1959-ին՝ 596, 1970-ին՝ 483, 1979-ին՝ 413, 2004-ին՝ 517 բնակիչ որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել են Մուշից, Բասենից, Մանազկերտից և Բուլանըխից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի դիմաց, Ախուրյանի աջ ափին է գտնվում Հոռոմոսի վանքը, պահպանվել են սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (985թ.) և "Կարմիր" վանքը (5-20դդ.) (**Ղոշավանք**):

**ՀԱՅԿԱՇԵՆ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 830 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 40 կմ հվ-արլ.: 1873թ. ուներ 618, 1897-ին՝ 569, 1926-ին՝ 190, 1939-ին՝ 266, 1959-ին՝ 600, 1970-ին՝ 804, 1979-ին՝ 925, 2001-ին՝ 1197, 2004-ին՝ 1415 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և բանջարաբուծությամբ: Ըստ Ղ. Ալիշանի, այս

գյուղի մոտ հիշատակվում է "Աղզի-վար" բերդը:

**ՀԱՅԿԱՍԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 22 կմ հվ., ծովի մակերևույթից 1640 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 41, 1897-ին՝ 333, 1926-ին՝ 396, 1939-ին՝ 343, 1959-ին՝ 209, 1970-ին՝ 228, 1979-ին՝ 199, 2001-ին՝ 249, 2004-ին՝ 252 բնակիչ, որոնց նախնիները 1829-31թթ. Գաղթել են Ալաշկերտից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Այստեղ կան "Կարմիր ժամ" եկեղեցի և "Կարմիր Ավետարան" մատուռ:

**ՀԱՅԿԱՎԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 860 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 9 կմ հվ.: 1831թ. ուներ 81, 1897-ին՝ 673, 1926-ին՝ 679, 1939-ին՝ 717, 1959-ին՝ 1233, 1970-ին՝ 1292, 1979-ին՝ 1255, 2001-ին՝ 1328, 2004-ին՝ 1550 բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ է գաղթել Սուրմալուից և Իգդիրից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Այստեղ հայտնաբերվել են սեպագիր արձանագրություններ և հնագույն բնակավայրի մնացորդներ, ունի 1875թ. սբ. Աստվածածին եկեղեցի (**Փոքր Արմավիր**):

**ՀԱՅԿԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արմ.: 1886թ. ուներ 391, 1897-ին՝ 543, 1926-ին՝ 1042, 1939-ին՝ 1353, 1959-ին՝ 1398, 1970-ին՝ 1410, 1979-ին՝ 1348, 1989-ին՝ 1482, 2001-ին՝ 1419, 2004-ին՝ 1376 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Բասենից, Մուշից և Կարսից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, բանջարեղենի մշակությամբ և անասնապահությամբ:

**ՀԱՅԿԱՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ծղուկ**:

**ՀԱՅՐԱՎԱՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի արմ. ափին, մարզկենտրոնից 12 կմ հս-արմ.: Բընակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա: **Հ.** է վերանվանվել 08.08.1991թ.: 1831թ. ուներ 65, 1873-ին՝ 326, 1914-ին՝ 896, 1931-ին՝ 456, 1959-ին՝ 597, 1970-ին՝ 647, 1979-ին՝ 875, 1989-ին՝ 919, 2001-ին՝ 737, 2004-ին՝ 828 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կարտոֆիլի մշակությամբ: Հ-ից հս-արլ. գտնվում է Հայրավանքի վանական համալիրը (9-13դդ.), իսկ 1 կմ արմ.1274թ. "Աղջիկ տղի քար" խաչքարը (**Գեղարքունի բերդ**, **Այրիվան**):

**ՀԱՅՐԵՆՅԱՑ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 20 կմ հվ., ծովի մակերևույթից 1590 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 88, 1897-ին՝ 772, 1926-ին՝ 745, 1939-ին՝ 772, 1959-ին՝ 539, 1970-ին՝ 582, 1979-ին՝ 534, 2001-ին՝ 729, 2004-ին՝ 658 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կան 5-6դդ. "Կարմիր" վանքը, սբ. Աստվածածին (1881թ.) և Հովնան Օձնեցի (5-20դդ.) եկեղեցիները, մատուռ:

**ՀԱՆՔԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Հովիտ**:

**ՀԱՆՔԱՎԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի վերնազավառում, մարզկենտրոնից 33 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: **Հ.** է վերանվանվել 01.11.1949թ.: 1873թ. ուներ 96, 1897-ին՝ 190, 1926-ին՝ 292, 1939-ին՝ 401, 1959-ին՝ 551, 1970-

ին՝ 469, 1979-ին՝ 363, 2001-ին՝ 111, 2004-ին՝ 102 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել 18դ. և զբաղվել պղնձի հանույթով ու նախնական մշակմամբ: Բնակչությունը զբաղվում է նաև անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մեջ պահպանվել են եկեղեցի և 7դ. հուշակոթողներ (**Պղնձահանք**, **Միսխանա**):

**ՀԱՋԱԹԻՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ոչեթի**:

**ՀԱՌԻՃ**- գյուղ Շիրակի մարզում, Արագածի արմ. լանջին, մարզկենտրոնից 22 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 86, 1887-ին՝ 654, 1926-ին՝ 880, 1939-ին՝ 1035, 1959-ին՝ 1958, 1970-ին՝ 1096, 1979-ին՝ 1058, 2001-ին՝ 1123, 2004-ին՝ 1427 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասենից, Բաբերդից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի վարդագույն, սև և կարմիր տուֆի պաշարներ, շինարարական ավազ: Գյուղի հվ. գտնվում է բրոնզեդարյան բնակատեղի (մ.թ.ա. 3-րդ հզմ.- մ.թ. 10դ.), միջնադարյան Հառիճի վանքը (7-13դդ.), սբ. Հարություն (1116թ.), սբ. Գևորգ (7դ.), սբ. Աստվածածին (13դ.) եկեղեցիները, “Շիրիմներ” (7-8դդ.) և “Ճգնավոր” (4դ.) մատուռները:

**ՀԱՏԻՍ**- գյուղ Կոտայքի մարզում, Հատիս լեռան ստորոտին, ծովի մակերևույթից 2025 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 53 կմ հվ.: 1873թ. ուներ 548, 1897-ին՝ 740, 1926-ին՝ 597, 1939-ին՝ 1077, 1959-ին՝ 506, 1970-ին՝ 369, 1979-ին՝ 372, 2001-ին՝ 450, 2004-ին՝ 528 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում պահպանվել են 13-17դդ. բազմաթիվ միջնադարյան խաչքարեր:

**ՀԱՐԹԱԳՅՈՒՂ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1730 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 34 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 195, 1897-ին՝ 1514, 1926-ին՝ 969, 1939-ին՝ 1507, 1959-ին՝ 1620, 1970-ին՝ 1722, 1979-ին՝ 1344, 2001-ին՝ 1226, 2004-ին՝ 1500 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է ճակնդեղագործությամբ, հացահատիկի մշակությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Գյուղում կա “Նարեկ” եկեղեցի (19դ.), իսկ 1 կմ հվ. գտնվում է սբ. Հովհաննես մատուռը:

**ՀԱՐԹԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 34 կմ հս., ծովի մակերևույթից 2030 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 328, 1897-ին՝ 428, 1926-ին՝ 442, 1939-ին՝ 652, 1959-ին՝ 241, 1970-ին՝ 241, 1979-ին՝ 219, 2001-ին՝ 188, 2004-ին՝ 195 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղն ունի եկեղեցի:

**ՀԱՐԹԱՇԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից՝ 80 կմ հս-արլ., ծովի մակերևույթից՝ 1480 մ բարձրության վրա: 1970թ. ուներ 613, 1981-ին՝ 578, 2001-ին՝ 662, 2004-ին՝ 707 բնակիչ: Կազմավորվել է 1970-1974թթ. նախկին Ազատաշեն, Ջորաշեն և Այգեձոր լքված գյուղերի բնակիչներին այստեղ բնակեցնելով: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից հս-արլ. գտնվում է սբ. Հռիփսիմե եկեղեցին (Ազատաշեն գյուղում):

**ՀԱՐԹԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Գեղարոտ գետի ձախափնյակում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1870 մ: 1831թ. ուներ178, 1897-ին՝ 689, 1926-ին՝ 669, 1939-ին՝ 483, 1959-ին՝ 465, 1970-ին՝ 620, 1979-ին՝ 600, 2001-ին՝ 913, 2004-ին՝ 928 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում է գտնըվում սբ. Գրիգոր եկեղեցին (1861թ.), 13դ. "Թուխ Մանուկ" և 7դ. "Ավետարան" մատուռները: Հ-ից 4-5 կմ արլ. գտնվում են Աստվածընկալ գյուղատեղին (19-20դդ.) իր համանուն եկեղեցական համալիրով (5-13դդ.), սբ. Աստվածածին (5-6դդ.) և սբ. Նը-շան (Կաթողիկե, 1244թ.) եկեղեցիներով:

**ՀԱՐԺԻՍ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 79 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1730 մ: 1831թ. ուներ 79, 1886-ին՝ 419, 1922-ին՝ 848, 1931-ին՝ 1108, 1959-ին՝ 952, 1970-ին՝ 903, 1979-ին՝ 739, 1989-ին՝ 721, 2001-ին՝ 831, 2004-ին՝ 960 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի -եկեղեցին կոչվում է սբ. Մինաս: Հ. և շրջակայքում պահպանվել են քարայրներ, մ.թ.ա. 1-ին հզմ. դամբարաններ և 10-18դդ. եկեղեցիներ: Գյուղից հվ. գտնվում է հին գյուղատեղի և Հարժիսի եկեղեցին:

**ՀԱՑԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 59 կմ հս-արմ.: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1570 մ: 1873թ. ուներ 80, 1897-ին՝ 180, 1926-ին՝ 204, 1939-ին՝ 580, 1959-ին՝ 348, 1970-ին՝ 333, 1979-ին՝ 344, 2001-ին՝ 304, 2004-ին՝ 413 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 1 կմ հս-արլ. գտնվում է Օրոր գյուղատեղին:

**ՀԱՑԱՎԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 58 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 59, 1897-ին՝ 261, 1926-ին՝ 291, 1939-ին՝ 540, 1959-ին՝ 472, 1970-ին՝ 494, 1979-ին՝ 451, 2001-ին՝ 563, 2004-ին՝ 635 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղից հս., բարձունքի վրա, գտնվում են մ.թ.ա. 3-րդ հզմ.-մ.թ. 1 հզմ. ամրոցի ավերակներ:

**ՀԱՑԱՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի ավազանի Ջոհաջուր գետի ձախ ափին, մարզկենտրոնից 112 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1775 մ բարձրության վրա: Հ. է վերանվանվել 1940թ.: 1831թ. ուներ 34, 1897-ին՝ 795, 1926-ին՝ 201, 1939-ին՝ 336, 1959-ին՝ 341, 1970-ին՝ 368, 1979-ին՝ 262, 2001-ին՝ 262, 2004-ին՝ 255 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, ծըխախոտի մշակությամբ և անասնապահությամբ: Այստեղ պահպանվել են "Սիրունքար" գյուղատեղին, հին կամուրջը, "Բերդ" գյուղի ավերակները: Գյուղից հս-արմ. կան հին բերդի մնացորդներ (Սյունիք բերդ) (**Վերին Սխիան**):

**ՀԱՑԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 8 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա: Հ. է վերանվանվել 1991թ.: 1931թ. ուներ 43, 1959-ին՝ 1384, 1970-ին՝ 2163, 1979-ին՝ 2201, 2001-ին՝ 2567, 2004-ին՝

2710 բնակիչ, որոնց նախնիների մի մասը տեղափոխվել է Թալինի, Ջավախքի գյուղերից և հայրենադարձվել Իրանից, Լիբանանից ու Սիրիայից: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ (**Վորոշիլովի անվան**, **Նաիրի**):

**ՀԱՅԻԿ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 327, 1897-ին՝ 864, 1926-ին՝ 888, 1939-ին՝ 1068, 1959-ին՝ 879, 1970-ին՝ 894, 1979-ին՝ 820, 1989-ին՝ 925, 2001-ին՝ 1081, 2004-ին՝ 1163 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից մոտ 1 կմ հս-արլ. գտնվում է "Յոթ աղբյուր" մատուռը, իսկ գյուղում կա "Բլուկ" եկեղեցի (1890թ.):

**ՀԱՅԻԿԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1660 մ, հեռավորությունը Հացիկ գյուղից՝ 2 կմ հս-արմ.: Կայարանը կառուցվել է 1898թ.: 04.07. 2006թ. վերանվանվել է Հ.: 1926թ. ուներ 40, 1939-ին՝ 40, 1959-ին՝ 98, 1979-ին՝ 33, 2001-ին՝ 63 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**Մայիսյան կայարանին կից**):

**ՀԵՐՀԵՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի աջակողմյան վտակ Հերհեր գետի միջին հոսանքի աջ կողմում, ծովի մակերևույթից 1680 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 32 կմ արլ.: 1831թ. ուներ 213, 1837-ին՝ 1562, 1979-ին՝ 739, 2001-ին՝ 745, 2004-ին՝ 752 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում կան 10-15դդ. խաչքարեր, հվ. մասում՝ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (1296թ.), 1 կմ հս՝ սբ. Հովհաննես (10դ.), սբ. Աստվածածին (1282-83թթ.) եկեղեցիներ, սբ. Սիոն վանք (10-13դդ.), 2 կմ հվ.՝ գյուղատեղի և սբ. Գևորգ եկեղեցի (Չիչլի վանք, 1297թ.), 2 կմ արլ.՝ "Կապույտ բերդ" ամրոց (13-14դդ.), 3 կմ հս.՝ գյուղատեղի (**Ծաղկաշեն**):

**ՀԵՐՄՈՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփայի աջակողմյան վտակ Եղեգիս գետի վերին հոսանքի շրջանում, ծովի մակերևույթից 1720 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 26 կմ հս-արլ.: **Հ.** է վերանվանվել 03. 04.1991թ.: 1831թ. ուներ 96, 1897-ին՝ 233, 1926-ին՝ 262, 1939-ին՝ 391, 1959-ին՝ 455, 1970-ին՝ 671, 1979-ին՝ 636, 2001-ին՝ 203, 2004-ին՝ 193 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 3 կմ հվ-արմ. գտնվում են Կնեվանքը (9-15դդ.) և սբ. Գրիգոր եկեղեցին (16դ.) (**Գրկիք**, **Ղավուշուղ**):

**ՀՆԱԲԵՐԴ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռնազանգվածի հս. նախալեռներում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 57 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2150 մ: 1831թ. ուներ 182, 1897-ին՝ 1136, 1926-ին՝ 1457, 1939-ին՝ 1747, 1959-ին՝ 1394, 1970-ին՝ 1675, 1979-ին՝ 1617, 2001-ին՝ 1963, 2004-ին՝ 2169 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Հ.** է գտնվում 5-7դդ. "Թուխ Մանուկ" մատուռը: Գյուղից 2 կմ հվ-արլ., բերդասարի վրա, գըտնըվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. Հնա-

բերդ բնակատեղին, որտեղ կա 5-6դդ. կիսավեր եկեղեցի:

**ՀՆԱԲԵՐԴ**- գյուղ Արարատի մարզում, այգեվետ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 8 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 875 մ: Գյուղը հիմնադրըվել է 1831թ.: 1831թ. ուներ 40, 1897-ին՝ 333, 1926-ին՝ 180, 1939-ին՝ 286, 1959-ին՝ 411, 1970-ին՝ 1946, 1979-ին՝ 527, 2001-ին՝ 654, 2004-ին՝ 640 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի հս-արլ. մասում է գտնվում Դվին քաղաքատեղին: **Հ.** հս-արլ. մասում է գտնվում սբ. Գևորգ (Կաթողիկե) եկեղեցին (4-5դդ.- 7դ.):

**ՀՈԲԱՐՁԻ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջափնյակում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19 կմ հս-արմ: 1831թ. ուներ 31, 1897-ին՝ 413, 1926-ին՝ 633, 1939-ին՝ 778, 1959-ին՝ 709, 1970-ին՝ 744, 1979-ին՝ 694, 2001-ին՝ 814, 2004-ին՝ 763 բը-նակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա “Ժամ” կոչված եկեղեցի (6դ.):

**ՀՈԿՏԵՄԲԵՐ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Սարդարապատ**:

**ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ**- քաղաք Արմավիրի մարզում, տե՛ս **Արմավիր**:

**ՀՈՂՄԻԿ**- գյուղ Շիրակի մարզում, Հողմաջուր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 22 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 175, 1897-ին՝ 762, 1926-ին՝ 462, 1939-ին՝ 736, 1959-ին՝ 324, 1970-ին՝ 417, 1979-ին՝ 425, 1989-ին՝ 379, 2001-ին՝ 509, 2004-ին՝ 495 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Հ.** են գտնվում 1897թ. սբ.Աստվածածին և “Ավերքի Սուրբ” եկեղեցիները: Գյուղից հվ-արմ. գտնվում է մ.թ.ա. 1-ին հզմ.-մ.թ. 1 հզմ. “Խնիկ” դամբարանադաշտը:

**ՀՈՆՈւՏ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Այգեհովիտ**:

**ՀՈՌՈՄ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի ձախ ափին, մարզկենտրոնից 19 կմ հվ., ծովի մակերևույթից 1570 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 459, 1897-ին՝ 1939, 1926-ին՝ 1564, 1939-ին՝ 1867, 1949-ին՝ 1660, 1970-ին՝ 1949, 1979-ին՝ 1841, 2001-ին՝ 2166, 2004-ին՝ 1570 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել է Կարսից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղն ունի բազալտի պաշարներ: Հոռոմ և Վարդաքար գյուղերի միջև գտնվում է “Արծնաբերդ” կիկլոպյան ամրոցը: **Հ.** ունի սբ. Հռիփսիմե և սբ. Աստվածածին (1868թ.) եկեղեցիներ, 12-13դդ. “Թուխ Մանուկ” մատուռ:

**ՀՈՎԻՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Նիգավան**:

**ՀՈՎԻՏ**- գյուղ Շիրակի մարզում, Փամբակի լեռների փեշերին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1670 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 13 կմ հվ-արլ.: **Հ.** է վերանվանվել 07.12.1945թ.: 1831թ. ուներ 101, 1897-ին՝ 608, 1926-ին՝ 504, 1939-ին՝ 578, 1959-ին՝ 543, 1970-ին՝ 538, 1979-ին՝ 492, 1989-ին՝ 442, 2001-ին՝ 538, 2004-ին՝ 558 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են Կարսից: Բնակչությունը զբաղվում է հացահա-

տիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա 19դ. սբ. Աստվածածին եկեղեցի: Գյուղից 2 կմ արլ. պահպանվել է Քարաբներ գյուղատեղին, համանուն մատուռը (10-13դդ.) և ջրաղացը (10-13դդ.) (**Հանքաշեն**):

**ՀՈՎՆԱՆԱՁՈՐ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1440 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 39 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1867թ.: 1897թ. ուներ 313, 1926-ին՝ 466, 1939-ին՝ 483, 1959-ին՝ 133, 1970-ին՝ 182, 1979-ին՝ 59, 2001-ին՝ 116, 2004-ին՝ 84 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի հս-արմ. մասում է գտնվում սբ. Սարգիս մատուռը (19դ.): Գյուղից քիչ հեռու, ձորակի մեջ, կա հին հայկական գերեզմանոց:

**ՀՈՎՏԱՄԵՋ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 19 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 104, 1897-ին՝ 451, 1926-ին՝ 498, 1939-ին՝ 528, 1959-ին՝ 629, 1970-ին՝ 893, 1979-ին՝ 933, 2001-ին՝ 1068, 2004-ին՝ 1292 բնակիչ, որոնց նախնիները 1878-79թթ. գաղթել են պատմական Ռըշ-տունիք գավառից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղի եկեղեցին կոչվում է սբ. Աստվածածին:

**ՀՈՎՏԱՇԱՏ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 22 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 406, 1897-ին՝ 1824, 1926-ին՝ 1016, 1939-ին՝ 1300, 1959-ին՝ 1419, 1970-ին՝ 1843, 1979-ին՝ 2955, 2001-ին՝ 3674, 2004-ին՝ 3546 մարդ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 1 կմ հս. հայտնաբերվել է մ.թ.ա. 3-րդ-2-րդ հզմ. բնակատեղի:

**ՀՈՎՏԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի աջափնյակում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ մոտ 11 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 825 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 295, 1897-ին՝ 392, 1926-ին՝ 282, 1939-ին՝ 391, 1959-ին՝ 771, 1970-ին՝ 1017, 1979-ին՝ 995, 2001-ին՝ 1202, 2004-ին՝ 1113 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և անասնաբուծությամբ:

**ՀՈՎՏԱՇԵ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի աջ ափին, մարզկենտրոնից 20 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 37, 1897-ին՝ 192, 1926-ին՝ 255, 1939-ին՝ 275, 1959-ին՝ 213, 1970-ին՝ 251, 1979-ին՝ 238, 2001-ին՝ 321, 2004-ին՝ 300 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնաբուծությամբ: Գյուղը 1830թ. հիմնել են Կարսից գաղթածները: Գյուղում կան եկեղեցի և սբ. Մինաս մատուռ 17դ.:

**ՀՈՎՏՈՒՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36 կմ հս-արմ.: **Հ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1831թ. ուներ 27, 1897-ին՝ 220, 1926-ին՝ 352, 1939-ին՝ 477, 1959-ին՝ 236, 1970-ին՝ 207, 1979-ին՝ 253, 1989-ին՝ 238, 2001-ին՝ 190, 2004-ին՝ 198 բնակիչ, որոնց նախնիները 1918-20թթ. գաղթել են Կարսի Գյոզլյրան գյուղից: Բնակչությունը զբաղվում է

անասնապահությամբ և դաշտավարությամբ: Հ. ունի “Քանդված ժամ” (սբ. Սարգիս) եկեղեցի և կաթոլիկ մատուռ: Գյուղի մոտակայքում է գտնվում “Բերդեր” ամրոցը (**Բայթար**):

**ՀՈՎՈւՆԻ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1750 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 332, 1926-ին՝ 165, 1939-ին՝ 331, 1959-ին՝ 412, 1970-ին՝ 455, 1979-ին՝ 475, 1989-ին՝ 688, 2001-ին՝ 687, 2004-ին՝ 644 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1829-31թթ. գաղթել են Արմ. Հայաստանից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում կան 3 մատուռ՝ “Սրբի Սար”, “Նարեկ”, “Սրբատեղ” և մեկ “Կարմիր կող Ավետարան” եկեղեցի:

**ՀՈՎՔ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստևի հովտի ձախափնյա լանջին, մարզկենտրոնից 17 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1190 մ բարձրության վրա: Հ. է վերանվանվել 03.04. 1991թ.: 1873թ. ուներ 188, 1897-ին՝ 385, 1922-ին՝ 306, 1926-ին՝ 390, 1931-ին՝ 431, 1939-ին՝ 578, 1959-ին՝ 707, 1970-ին՝ 869, 1979-ին՝ 748, 1989-ին՝ 189, 2001-ին՝ 499, 2004-ին՝ 481 բնակիչ, որոնց մի մասը այստեղ է գաղթել Ադրբեջանից 1988թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և ծխախոտագործությամբ (**Վուրդուն**):

**ՀՈՐԱԴԻՍ**- գյուղ Վայոց ձորի մարզում, ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա, Ջառիթափից 12 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 167, 1897-ին՝ 703, 1926-ին՝ 578, 1939-ին՝ 801, 1959-ին՝ 399, 1970-ին՝ 55 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղում պահպանվել է մի եկեղեցի (1668թ.), 2 կմ հվ-արլ.՝ “Թուխ Մանուկ” մատուռը (17-18դդ.), 500 մ արմ.՝ 19դ. Ջառավանք-ը (**Կորուտյունք**):

**ՀՈՐԲԱՏԵՂ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Վարդենիսի լեռների հվ. փեշերին, Արտաբուն գետի ափին: Ծովի մակերևույթից 1880 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 20 կմ հս.: 1831թ. ուներ 35, 1897-ին՝ 406, 1926-ին՝ 160, 1939-ին՝ 402, 1959-ին՝ 252, 1970-ին՝ 244, 1979-ին՝ 210, 2001-ին՝ 280, 2004-ին՝ 291 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում պահպանվել են սբ.Հրեշտակապետաց եկեղեցին (1692թ.) և 13-14դդ. խաչքարեր (**Խորվատեղ**):

**ՀՈՐՍ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Սելիմագետի աջակողմյան Հորս վտակի ափին, Սելիմագետ և Եղեգիս գետերի գետախառնուրդից 6-7 կմ հս-արմ.: Ծովի մակերևույթից 1660 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 24 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 219, 1897-ին՝ 1136, 1926-ին՝ 551, 1939-ին՝ 938, 1959-ին՝ 649, 1970-ին՝ 607, 1979-ին՝ 474, 2001-ին՝ 317, 2004-ին՝ 298 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ և ծխախոտագործությամբ: Պահպանվել են 13-14դդ. Խաչքարեր, 14դ. եկեղեցի:

**ՀՐԱԶԴԱՆ**- քաղաք Կոտայքի մարզում, մարզկենտրոն, Հրազդան գետի վերին հոսանքի շրջանում, Երևանից 41 կմ հեռու: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1760 մ բարձրության վրա: Քաղաք է 1959թ.-ից, 1950-59թթ. եղել է քաղաքատիպ ավան, մինչ այդ՝ գյուղ: Հ. է վերանվանվել 30.06.1959թ.:

1959թ. ուներ 7630, 1976-ին՝ 35137, 1989-ին՝ 23903, 1991-ին՝ 25600, 2001-ին՝ 52808, 2004-ին՝ 52700 բնակիչ: Բնակչությունը արագ աճել է մանավանդ 1970-76թթ.: Նրա հին բնակիչները 1828-29թթ. եկել են Մակուից և Սալմաստից, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ Սասունից և Կարսից, իսկ խորհրդային ժամանակաշրջանում՝ շրջակայքի գյուղերից, Վանաձորից, հարևան հանրապետություններից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից: 1930-1995թթ. ՀՍՍՀ Հրազդանի վարչական շրջանի կենտրոնն էր: 04.12.1995թ. Հրազդանի շրջանը լուծարվել է, տարածքը մտել է Կոտայքի մարզի մեջ և **Հ.** դարձել է մարզկենտրոն: Քաղաքի շրջակայքում կան արդյունաբերական հումքերի, հատկապես նեֆելինային սիենիտների, կրաքարերի, կավի և երկաթի պաշարներ: **Հ.** առաջին հերթին էներգետիկ մեծ հանգույց է , այստեղ կառուցված են ՀԷԿ և երկու ՋԷԿ-եր: Բնակչությունը զբաղվում է նաև բանջարաբուծությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ: **Հ.** շրջակայքում կան եկեղեցիներ՝ “Մաքրավանք”, սբ. Աստվածածին (13դ.), սբ. Աստվածածին (1853թ.), սբ. Ամենափրկիչ (10դ.) (**Կորկոտան**, **Ախտա**):

**ՀՐԱԶԴԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Գեղաշեն**:

**ՀՈՒՇԱԿԵՐՏ**- գյուղ Արմավիրի մարզում, Արաքս գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 11 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 900 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 59, 1897-ին՝ 161, 1926-ին՝ 119, 1939-ին՝ 171, 1959-ին՝ 386, 1970-ին՝ 617, 1979-ին՝ 743, 2001-ին՝ 877, 2004-ին՝ 1200 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, խաղողագործությամբ, պտղ-դաբուծությամբ և անասնաբուծությամբ (**Շավառուտ**):

# Ձ

**ՁԱԳ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տես՝ **Երանոս**:

**ՁԱՂԻՁՈՐ**- նախկինում գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Թումանյան**:

**ՁԵՐԺԻՆՍԿԻ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Այգեվան**:

**ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Այգեվան**:

**ՁԻԹՀԱՆՔՈՎ**- գյուղ Շիրակի մարզում, Արագած լեռան արմ. ստորոտին, մարզկենտրոնից 37 կմ հվ., ծովի մակերևույթից 1740 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 633, 1897-ին՝ 1065, 1906-ին՝ 1260, 1926-ին՝ 1406, 1939-ին՝ 1708, 1959-ին՝ 1580, 1970-ին՝ 1372, 1979-ին՝ 1259, 2001-ին՝ 1332, 2004-ին՝ 1420 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Պահպանվել են սբ. Աստվածածին (կաթոլիկ, 19դ.) և սբ. Խաչ (10-20դդ.) եկեղեցիները:

**ՁՅՈՒՆԱՇՈՂ**- գյուղ Լոռու մարզում, Սառնաղբյուր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1590 մ, հե-

ռավորությունը մարզկենտրոնից՝ 52 կմ հս-արմ.: **Զ.** է վերանվանվել 08. 08.1991թ.: 1897թ. ուներ 237, 1926-ին՝ 507, 1939-ին՝ 746, 1959-ին՝ 873, 1979-ին՝ 1334, 1989-ին՝ 868, 2001-ին՝ 274, 2004-ին՝ 239 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ճակնդեղի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ (**Ղզըլշաֆակ**):

**ԶՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Աստղաձոր**:

**ԶՈՐԱԲԵՐԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Զորագլուխ**:

**ԶՈՐԱԳԵՏ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետ գետի հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1000 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26 կմ հս-արլ.: 1931թ. ուներ 1200, 1939-ին՝ 426, 2001-ին՝ 325, 2004-ին՝ 271 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ:

**ԶՈՐԱԳԼՈՒԽ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ծաղկունյաց լեռների արմ. լանջին, Քասաղ գետի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 39 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2025 մ: 1897թ. ուներ 703, 1926-ին՝ 771, 1939-ին՝ 796, 1959-ին՝ 489, 1970-ին՝ 459, 1979-ին՝ 356, 2001-ին՝ 366, 2004-ին՝ 325 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Զ.** կա 19դ. սբ.Հովհաննես եկեղեցի: Գյուղից 1,5 կմ հս-արլ. գտնվում է 10-12դդ. "Կարմիր վանք" եկեղեցին, 2 կմ հս-արլ.՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Խազնաքար" ամրոցը, իսկ 0,7 կմ հս-արլ.՝ մ.թ.ա. 10-ից-8-րդ դդ. "Բերդի գլուխ" ամրոցը (**Զորբերան**):

**ԶՈՐԱԳՅՈՒՂ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան արմ. փեշերին: Հեռավորությունը Մաստարա գյուղից՝ 2 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մ: 1873թ. ուներ 65, 1897-ին՝ 150, 1926-ին՝ 127, 1939-ին՝ 104, 1959-ին՝ 127, 1970-ին՝ 69, 1979-ին՝ 22 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ (**Բերդկան**):

**ԶՈՐԱԳՅՈՒՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների արլ. փեշերին, մարզկենտրոնից 28 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 322, 1897-ին՝ 1590, 1926-ին՝ 2409, 1939-ին՝ 2541, 1959-ին՝ 2331, 1970-ին՝ 3154, 1979-ին՝ 3319, 1989-ին՝ 3656, 2001-ին՝ 4355, 2004-ին՝ 4644 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են Շողազավանք վանական համալիրը (5-17դդ.), "Մասրուց անապատ" (9-10դդ.) և սբ. Պողոս-Պետրոս (877-886թթ.) եկեղեցիները: Գյուղից 1,7 կմ արմ. կա "Պատվար" ամրոց (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և սբ. Խաչ մատուռ (9-13դդ.), իսկ 1,4 կմ հվ-արմ.՝ "Սելգնա" բնակատեղի (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) (**Գետնափոր**):

**ԶՈՐԱԳՅՈՒՂ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի և Փամբակ գետերի միախառնման անկյունում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 31 կմ հս-արլ.: **Զ.** հիմնադրվել է 1804թ. Փոքր աղբյուրի ձորում, իսկ 1829թ. տեղափոխվել են ներկա բնակատեղին: 1831թ. ուներ 39, 1897-ին՝ 426, 1926-ին՝ 940, 1939-ին՝ 1636, 1959-ին՝ 743, 1970-ին՝ 610, 1979-ին՝ 472, 2001-ին՝ 423, 2004-ին՝ 361 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ,

հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան երկու եկեղեցի, մեկը՝ (12-13դդ.), մյուսը՝ (1906թ.): Զորագետի աջ ափին է գտնվում "Քիր ու ախպեր" ամրոցը (10-13դդ.):

**ԶՈՐԱԿ**- գյուղ Սյունիքի մարզում: Հեռավորությունը Շուռնուխ գյուղից՝ 13 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1320 մ: **Զ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1970թ. ուներ 195, 1981-ին՝ 55 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ (**Փայտամշակման գործարանին կից**):

**ԶՈՐԱԿԱՊ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 28 կմ հվ., ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 182, 1897-ին՝ 836, 1926-ին՝ 962, 1939-ին՝ 908, 1959-ին՝ 658, 1970-ին՝ 878, 1979-ին՝ 961, 2001-ին՝ 1039, 2004-ին՝ 1168 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Կարսի Օղուզլու գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Պահպանվել են բնակատեղիների հետքեր, 7-14դդ. գերեզմանոցներ, սբ. Աստվածածին եկեղեցին (1869թ.) և "Հալիվոր պապ" մատուռը:

**ԶՈՐԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 46 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա: **Զ.** է վերանվանվել 04.04.1946թ.: 1873թ. ուներ 379, 1897-ին՝ 604, 1926-ին՝ 949, 1939-ին՝ 1045, 1959-ին՝ 914, 1970-ին՝ 1132, 1979-ին՝ 1505, 2001-ին՝ 2133, 2004-ին՝ 2270 բնակիչ: Նրանց նախնիների մի մասը 1828-30թթ. գաղթել է Խոյից և Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: **Զ**-ի շրջակայքում պահպանվել են "Պատվար" ամրոցի ավերակները (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և սբ.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (18-19դդ.) (**Տաճարաբակ**):

**ԶՈՐԱՄՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 52 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 245, 1926-ին՝ 338, 1939-ին՝ 440, 1959-ին՝ 577, 1970-ին՝ 738, 1979-ին՝ 851, 2001-ին՝ 320, 2004-ին՝ 320 բնակիչ: Գյուղը հիմնադրվել է 1896թ., իսկ 03. 04.1991թ. վերանվանվել է **Զ.**: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ և պտղաբուծությամբ (**Էվլու**):

**ԶՈՐԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Չիչկան գետի ձախափնյակում, մարզկենտրոնից 39 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1970 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 323, 1897-ին՝ 712, 1926-ին՝ 764, 1959-ին՝ 295, 1970-ին՝ 336, 1979-ին՝ 304, 2001-ին՝ 256, 2004-ին՝ 278 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում պահպանվել են 1863թ. վերակառուցված եկեղեցին, 12-րդ-13-րդ դդ. սբ.Ստեփանոս վանքը և հին բերդի մնացորդները:

**ԶՈՐԱՍՏԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 22 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: **Զ.** է վերանվանվել 01.06. 1940թ.: 1831թ. ուներ 28, 1897-ին՝ 266, 1926-ին՝ 382, 1939-ին՝ 409, 1959-ին՝ 150, 1970-ին՝ 92, 1979-ին՝ 74, 2001-ին՝ 115, 2004-ին՝ 76 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է կաթնաանասնապահությամբ, կերային կուլտուրաների և բանջարեղենի մշակությամբ: Գյուղի շրջակայքում պահպանվել են միջնադարյան ամրոցի և բնակավայրերի մնացորդներ, 17դ. գե-

րեզմանոցներ և եկեղեցու ավերակներ, կան նաև 1830թ. սբ. Աստվածածին եկեղեցի և “Կոտրած եղցի” սրբատեղի (**Խլաթաղ**):

**ՁՈՐԱՎԱՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գետիկի ձախափնյակում, մարզկենտրոնից 99 կմ հս.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1160 մ բարձրության վրա: **Ձ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1897թ. ուներ 215, 1908-ին՝ 248, 1926-ին՝ 169, 1939-ին՝ 242, 1959-ին՝ 365, 1970-ին՝ 425, 1979-ին՝ 335, 1989-ին՝ 112, 2001-ին՝ 223, 2004-ին՝ 164 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղից 1,5 կմ հվ-արմ. կան՝ գյուղատեղի (10-12դդ.), եկեղեցի (10-13դդ.) և խաչքարերով գերեզմանոց (10-18դդ.) (**Ղարաղալա**):

**ՁՈՐԱՓ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Աղձք**:

# Ղ

**ՂԱԲԱՂԹԱՓԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Դդմասար**:

**ՂԱՁԱՆՉԻ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 41 կմ հս., ծովի մակերևույթից 2030 մ բարձրության վրա: Գյուղի բնակիչների մի մասը 1852թ. գաղթել է Ալաշկերտից և 1880 թ-ին Կարինից: 1873թ. ուներ 351, 1897-ին՝ 786, 1926-ին՝ 1152, 1939-ին՝ 1408, 1959-ին՝ 828, 1970-ին՝ 558, 1979-ին՝ 564, 2001-ին՝ 571, 2004-ին՝ 525 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի շրջակայքում կան Քարավերակ գյուղատեղի, հին եկեղեցու ավերակներ և այլ հնություններ (**Աշոցք**):

**ՂԱՁԱՐԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արլ. ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1200 մ: 1831թ. ուներ 194, 1873-ին՝ 331, 1897-ին՝ 467, 1926-ին՝ 299, 1939-ին՝ 294, 1959-ին՝ 346, 1970-ին՝ 339, 1979-ին՝ 367, 2001-ին՝ 477, 2004-ին՝ 558 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշի, Խլաթի, Բուլանըխի գյուղերից: **Ղ.** է վերանվանվել 1991թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և ծխախոտագործությամբ: Այստեղ է պահպանվել “Ղազրևանի” եկեղեցին (19դ.): Գյուղից դեպի հս., Շաղվարդ գետի ափին գտնվում է “Ղազրևան” քաղաքատեղին (մ.թ.ա. 2-րդ հզմ.) (**Նազրվան**):

**ՂԱՅԱԲԱՇ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գեղամաբակ**:

**ՂԱՎՈւՇՈւՂ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Հերմոն**:

**ՂԱՐԱԲՈւԼԱՂ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Շաղիկ**:

**ՂԱՐԱԻՍԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Մեղվահովիտ**:

**ՂԱՐԱԽԱՉ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Լուսաշող**:

**ՂԱՐԱՂԱԼԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ձորավանք**:

**ՂԱՐԱՂԱԼԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Նորամուտ**:

**ՂԱՐԱՂԱՅԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Սևաժայռ**:

**ՂԱՐԱՉԻՄԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Դիցմայրի**:
**ՂԱՐԱՏՂԱ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վանեք**:
**ՂԱՐԱՔԻԼԻՍԱ**- քաղաք Լոռու մարզում, տե՛ս **Վանաձոր**:
**ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափից ոչ հեռու: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1470 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հվ-արմ.: **Ղ.** է վերանվանվել 03.01.1935թ.: 1908թ. ուներ 202, 1926-ին՝ 345, 1939-ին՝ 539, 1959-ին՝ 667, 1970-ին՝ 674, 1979-ին՝ 595, 1989-ին՝ 954, 2001-ին՝ 953, 2004-ին՝ 954 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ (**Ալեքսանդրովկա**):
**ՂՉԸԼԴԱՇ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Արծնի**:
**ՂՉԸԼՇԱՖԱԿ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Չյունաշող**:
**ՂՉԼՇԱՖԱԿ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Տորունիք**:
**ՂՉԸԼՋՈւՂ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Իշխանասար**:
**ՂՈՆՋԱԼԻ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ջաջուռ**:
**ՂՈՇԱԲՈւԼԱՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Շատջրեք**:
**ՂՈՇԱՎԱՆՔ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Հայկաձոր**:
**ՂՈՎՇՈւՏ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Կավճուտ**:

**ՂՈւԿԱՍԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 845 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 150, 1897-ին՝ 379, 1926-ին՝ 385, 1939-ին՝ 468, 1959-ին՝ 1843, 1970-ին՝ 1270, 1979-ին՝ 1467, 2001-ին՝ 2168, 2004-ին՝ 2120 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: **Ղ.** կա սբ. Աստվածածին եկեղեցի (19դ.):
**ՂՈւԿԱՍԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ամասիա**:
**ՂՈւԿԱՍՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Աշոցք**:
**ՂՈւՐԴՂՈւԼԱՂ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վանանդ**:
**ՂՈւՐԴՈւՂՈւԼԻ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Արմավիր**:
**ՂՈւՐՍԱԼԻ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1580 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 15 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 81, 1897-ին՝ 713, 1926-ին՝ 966, 1939-ին՝ 1215, 1959-ին՝ 1271, 1970-ին՝ 1998, 1978-ին՝ 2002, 2001-ին՝ 496, 2004-ին՝ 599 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, շաքարի ճակընդեղի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Ղ.** պահպանվել է սբ. Գևորգ եկեղեցին (7 դ.):

# Ճ

**ՃԱԹՂՌԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Աբովյանի տարածաշրջանում, տե՛ս **Գեղաշեն**:

**ՃԱԹՂՌԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Եղվարդի տարածաշրջանում, տե՛ս **Նոր Գեղի**:

**ՃԱԼԱԳԵՂ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Լճկաձոր**:

**ՃԱԿԱՏԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրու լեռների արլ. լանջին, մարզկենտրոնից 10 կմ հվ., ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 78, 1897-ին՝ 479, 1926-ին՝ 641, 1939-ին՝ 596, 1959-ին՝ 237, 1970-ին՝ 231, 1979-ին՝ 188, 2001-ին՝ 190, 2004-ին՝ 143 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի շրջակայքում պահպանվել են սբ. Հռիփսիմե եկեղեցին (10դ.), մատուռներ, 17դ. կամուրջը, "Շենաթաղ", "Եկեղեցուխութ", "Երեզիք" և այլ գյուղատեղիներ:

**ՃԱՄԲԱՐԱԿ**- քաղաք Գեղարքունիքի մարզում: Գտնվում է Գետիկի վերին հոսանքի շրջանում, Արեգունի և Միափորի լեռների միջև: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 71 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1900մ բարձրության վրա: Ճ. հիմնադրել են Ռուսաստանի Սամարայի և Սարատովի նահանգներից եկած ռուսները (1835-1840թթ.): Ճ. է վերանվանվել 03.04.1991թ.: Բնակչությունը՝ 1873թ. - 1273, 1897թ.-1511, 1926թ.-2086, 1939թ.-2741, 1959թ.-2974, 1970թ.-3082, 1980թ.-6324, 1989թ.-7234, 1991թ.-7300, 2001թ.-6405, 2004թ.-7400 բնակիչ: Ճ. կան կաթնաանասնապահական և կարտոֆիլի մշակման մանր տնտեսություններ, որոնք զբաղվում են նաև հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Ունի արդյունաբերական փոքր ձեռնարկություններ (**Միխայլովկա, Կարմիր գյուղ**, **Կրասնոսելսկ**):

**ՃԱՆՃԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Լուսագյուղ**:

**ՃԱՊԿՈւՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների հս. լանջին, Գետիկի ձախ կողմում, Այգուտ գյուղից 6 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1720 մ բարձրության վրա: Ճ. է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 80, 1926-ին՝ 125, 1931-ին՝ 132, 1959-ին՝ 283, 1970-ին՝ 365, 1979-ին՝ 360 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ (**Ջիվիխլու**):

**ՃԱՊՌՏԻԿ**- պատմական գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ծովագյուղ**:

**ՃԱՐՃԱԿԻՍ**- պատմական գյուղ Արագածոտնի մարզում, Փամբակի լեռների լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2180 մ: Ճ. է վերանվանվել 04.07.2006թ.: 1831թ. ուներ 48, 1873-ին՝ 441, 1959-ին՝ 512, 1970-ին՝ 631, 1979-ին՝ 579, 2001-ին՝ 470, 2004-ին՝ 532 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում կա 5դ. մի ավերակ եկեղեցի (**Դերեկ**):

**ՃԵՐՄԱԿ ՎԱՆՔ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Քուչակ**:

**ՃԵՐՄԱԿԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Գետիկի հովտի ձախափնյա լանջին, Խաչարձան գյուղից 11 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա: Ճ. է վերանվանվել 03.04.1991թ.: 1989թ. ուներ 40 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի մեջ է գտնվում Ճերմակավան գյուղատեղին, 10-14դդ. եկեղեցին և գերեզմանոցը (**Աղքիլիսա**):

**ՃԻԼ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ջիլ**:

**ՃՌՃԿԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի ձախ կողմում, Վիրահայոց լեռների հվ. մասում: Բարձրությունը ծովի

մակերևույթից՝ 740 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 71 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 501, 1897-ին՝ 646, 1926-ին՝ 1071, 1939-ին՝ 1401, 1959-ին՝ 1337, 1970-ին՝ 1822, 1979-ին՝ 1819, 2001-ին՝ 1907, 2004-ին՝ 1654 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում են գտնվում "Ագեղցի" մատուռը (16-17դդ.) և 1886թ. եկեղեցին, իսկ շրջակայքում պահպանվել են "Նահատակի վանք" կոչված մատուռը (1612թ.), Շփրթնավանքը (17դ.) և որմնափակ խաչարձանը (13դ.):

**ՃՉԵՎԱՆՔ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Ջուջևան**:

# Մ

**ՄԱԴԱՆ**- քաղաք Սյունիքի մարզում, տե՛ս **Կապան**:

**ՄԱԴԻՆԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արգիճի գետի միջին հոսանքի ձախափնյակում, մարզկենտրոնից 42 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 2175 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 346, 1926-ին՝ 85, 1939-ին՝ 517, 1959-ին՝ 799, 1970-ին՝ 1034, 1979-ին՝ 861, 1989-ին՝ 833, 2001-ին՝ 1055, 2004-ին՝ 1161 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1922թ. տեղափոխվել են նույն տարածաշրջանի Ներքին Գետաշեն գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղից հս., սարալանջին է գտնվում, Մադինա ՀԷԿ-ը, որն աշխատում է համանուն ջրանցքով բերվող Արգիճի գետի ջրով: **Մ**-ի արլ. մասում է գտնվում "Մադինա-1" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), իսկ 16 կմ հվ-արմ. "Մադինա-2" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.-9-17դդ.) ամրոցները: Գյուղից 6 կմ հվ-արմ. կան Քարեճի բնակատեղի և համանուն ամրոց (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 3 կմ հվ-արլ.՝ Շենիգոմեր գյուղատեղի (9-17դդ.):

**ՄԱԶՐԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Կապույտ**:

**ՄԱԼԴԱՇ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Քաշունի**:

**ՄԱԼԻՇԿԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփայի աջակողմյան Մալիշկա վտակի ափին: Ծովի մակերևույթից 1200 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 4 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 261, 1897-ին՝ 1281, 1926-ին՝ 1808, 1939-ին՝ 2368, 1959-ին՝ 2715, 1970-ին՝ 3538, 1979-ին՝ 3980, 2001-ին՝ 4591, 2004-ին՝ 5128 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, ծխախոտագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ, դաշտավարությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կան սբ. Գևորգ եկեղեցի (1850թ.), իսկ 3 կմ հվ-արլ. պատմական Մոզ քաղաքի ավերակները (7-15դդ.), 7-րդ դ. ամրոց, 9-14դդ. խաչքարեր: Գյուղի շըր-ջակայքում են գտնվում "Բերդաջուր" և "Ահեկաբերդ" միջնադարյան ամրոցները, իսկ 1,5 կմ արլ., 18դ. Կամուրջ:

**ՄԱԿԱՐԱՇԵՆ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Լեռնապատ**:

**ՄԱՂԱՐԱՋՈՒՂ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Գտաշեն**:

**ՄԱՅԱԿՈՎՍԿԻ**- գյուղ Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 40 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 134, 1897-ին՝

532, 1926-ին՝ 767, 1939-ին՝ 938, 1959-ին՝ 904, 1970-ին՝ 1143, 1979-ին՝ 1609, 2001-ին՝ 1830, 2004-ին՝ 2143 բնակիչ, որոնց նախնիները հիմնականում գաղթել են 1829-30թթ. Սալմաստի գավառի Հիջվազ գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մեջ կա սբ. Գևորգ գմբեթավոր եկեղեցի (1828թ.) (**Շահապ**):

**ՄԱՅԻՍՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մեղմաթեք բլրի վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 880 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 6 կմ արլ.: Հիմնադրել են 1932թ. Ախուրյանի, Թալինի և այլ տարածաշրջաններից եկածները: **Մ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1966թ. ուներ 1101, 1970-ին՝ 1404, 1979-ին՝ 1304, 2001-ին՝ 1653, 2004-ին՝ 1995 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և խաղողագործությամբ (**№ 2 սովխոզին կից**, **Ժդանովի անվան սովխոզի 2-րդ մասին կից**, **“Մայիսյան” սովխոզի 2-րդ մասին կից**, **Ժդանով**):

**ՄԱՅԻՍՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1660 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 231, 1897-ին՝ 677, 1926-ին՝ 774, 1939-ին՝ 967, 1959-ին՝ 1004, 1970-ին՝ 1065, 1979-ին՝ 1210, 1989-ին՝ 1412, 2001-ին՝ 1653, 2004-ին՝ 1689 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: **Մ.** կենտրոնում է գտնվում 7դ. Տիրանավոր սբ. Աստվածածին եկեղեցին և սբ. Ավետարան մատուռը:

**ՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Հացիկավան**:

**“ՄԱՅԻՍՅԱՆ” ՍՈՎԽՈԶԻ 2-ՐԴ ՄԱՍԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մայիսյան**:

**ՄԱՍԻՍ**- քաղաք Արարատի մարզում, Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ ափին, այգիներով ծածկված հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: 1831թ. ուներ 1737, 1897-ին՝ 2800, 1926-ին՝ 2098, 1939-ին՝ 1195, 1959-ին՝ 3138, 1970-ին՝ 4961, 1975-ին՝ 8142, 1980-ին՝ 13248, 2001-ին՝ 21376, 2004-ին՝ 21400 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: **Մ.** ունի նորակառույց եկեղեցի:

**ՄԱՍԻՍ**- գյուղ Արարատի մարզում, այգեվետ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 3 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 840 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 176, 1897-ին՝ 543, 1926-ին՝ 473, 1939-ին՝ 587, 1959-ին՝ 935, 1970-ին՝ 1382, 1979-ին՝ 1437, 2001-ին՝ 1656, 2004-ին՝ 1279 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկահայաստանի Խոյ և Սալմաստ գավառներից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի հվ. եզրին են գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (19դ.) և սբ. Թադևոս Առաքյալ մատուռը (16դ.):

**“ՄԱՍԻՍ” ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արարատի մարզում, տե՛ս **Դարակերտ**:

**ՄԱՍՏԱՐԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագածի հվ-արմ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 58 կմ հս-արմ., բարձրությունը ծովի

մակերևույթից՝ 1750 մ: 1831թ. ուներ 561, 1897-ին՝ 1884, 1926-ին՝ 1428, 1939-ին՝ 2532, 1959-ին՝ 2144, 1970-ին՝ 2400, 1979-ին՝ 2289, 2001-ին՝ 2581, 2004-ին՝ 2812 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Մուշի, Ալաշկերտի, Սասունի, Բասենի, Կարսի, Խոյի և այլ գավառներից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Մ.** են գտնվում սբ. Հովհաննես (6դ.) և սբ.Ստեփանոս (17դ.) եկեղեցիները, սբ. Ամենափրկիչ (16-17դդ.), սբ. Գրիգոր (17դ.), սբ.Հակոբ (19դ.), սբ. Հովհաննես (19դ.), սբ. Մինաս (19դ.) և "Թուխ Մանուկ" (13դ.) մատուռները: Գյուղից 0,5 կմ հվ-արլ. գտնվում է Հին Մաստարա գյուղատեղին (13-16դդ.), իսկ 6 կմ հս. Շենիկ գյուղատեղին (4-20դդ.), որտեղ գտնվում են սբ. Ամենափրկիչ (5դ.) և սբ.Աստվածածին (6դ.) եկեղեցիները:

**ՄԱՍՏԱՐԱ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Դալարիկ**:

**ՄԱՐԱԼԶԱՄԻ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Թխկուտ**:

**ՄԱՐԱԼԻԿ**- քաղաք Շիրակի մարզում, մարզկենտրոնից 27 կմ հվ., ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 971, 1897-ին՝ 1302, 1926-ին՝ 1646, 1939-ին՝ 1882, 1959-ին՝ 2177, 1980-ին՝ 4443, 2001-ին՝ 5782, 2004-ին՝ 5800 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Կարսից, Խնուսից, Ալաշկերտից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ, զարգանում է նաև արդյունաբերությունը: Քաղաքում պահպանվել են 1903թ. փայտածածկ սբ. Աստվածածին (5-6դդ.) և կաթոլիկ սբ.Պողոս-Պետրոս (17-20դդ.) եկեղեցիները, "Կարմիր" (19-20դդ.) և սբ. Ստեփանոս վանքերը, կիկլոպյան ամրոցը և մեկ մատուռ:

**ՄԱՐԳԱՀՈՎԻՏ**- գյուղ Լոռու մարզում, ծովի մակերևույթից՝ 1750 մ, մարզկենտրոնից՝ 15 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 186, 1897-ին՝ 2117, 1926-ին՝ 3729, 1939-ին՝ 4064, 1959-ին՝ 3678, 1970-ին՝ 3543, 1979-ին՝ 3574, 2001-ին՝ 3873, 2004-ին՝ 3394 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, կերային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում սբ.Կարապետ (1872թ.) և սբ. Գրիգոր Լուսավորիչ (18-19դդ.) եկեղեցիները: Սարիսոփ բլրի վրա հայտնաբերվել է համանուն ամրոցը (մ.թ.ա. 3-րդ հզմ.) (**Թազավորանիստ, Համզաչիման**, **Բոզիգեղ**):

**ՄԱՐԳԱՐԱ**- գյուղ Արմավիրի մարզում, Արաքսի ձախափնյա հարթավայրում, մարզկենտրոնից 18 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 140, 1897-ին՝ 1092, 1926-ին՝ 843, 1939-ին՝ 948, 1959-ին՝ 974, 1970-ին՝ 1101, 1979-ին՝ 1174, 2001-ին՝ 1422, 2004-ին՝ 1468 բնակիչ, որոնց նախնիների մեծ մասը 1828-31թթ. գաղթել է Մուշից և Իգդիրից: Բնակչությունը ըզբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: **Մ.** մոտ է գտնվում Արաքսի գլխավոր կամուրջներից մեկը՝ Մարգարայի կամուրջը:

**ՄԱՐՄԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1620 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 109, 1897-ին՝ 396, 1926-ին՝ 743, 1939-ին՝ 1066, 1959-ին՝ 1334, 1970-ին՝ 1404, 1979-ին՝ 1341, 1989-ին՝ 1727, 2001-ին՝ 1876, 2004-ին՝

1954 բնակիչ, որոնց նախնիները 1828-30թթ. գաղթել են Կարսից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղից հվ. գտնըվում են Տիրաշեն բնակատեղին, համանուն ամրոցը և դամբարանադաշտը (մ.թ.ա. 2-րդ հզմ.-10դ.):

**ՄԱՐՄԱՐԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արմ.: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 855 մ: Գյուղը հիմնադրվել է 1897թ.: 1897թ. ուներ 793, 1926-ին՝ 658, 1939-ին՝ 671, 1959-ին՝ 1416, 1970-ին՝ 2128, 1979-ին՝ 2349, 2001-ին՝ 3112, 2004-ին՝ 3138 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ:

**ՄԱՐՄԱՐԻԿ**- գյուղ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի միջին հոսանքի աջափնյակում, մարզկենտրոնից 15 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 76, 1897-ին՝ 490, 1926-ին՝ 405, 1939-ին՝ 639, 1959-ին՝ 396, 1970-ին՝ 508, 1979-ին՝ 591, 2001-ին՝ 786, 2004-ին՝ 755 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի, ծխախոտի և կաղամբի մշակությամբ: Գյուղում պահպանվել է սբ. Հովհաննես եկեղեցին (9-10դդ.):

**ՄԱՐՏԻՐՈՍ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների հս. լանջին, ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 31 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 301, 1897-ին՝ 1022, 1926-ին՝ 1293, 1939-ին՝ 1876, 1959-ին՝ 1160, 1970-ին՝ 1241, 1979-ին՝ 799, 2001-ին՝ 662, 2004-ին՝ 633 բնակիչ: Նախնիների մի մասը գաղթել է Սալմաստի և Խոյի գյուղերից 1828թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի, կերային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից հվ-արլ. կան ֆելզիտի հանքեր: Մոտ 2 կմ հվ-արլ., Նազար լեռան լանջին, փառված են սբ. Աստվածածին վանքը (Մարտիրոսաց վանք, 1286թ.) և 13դ. խաչքարեր: Գյուղից մոտ 3 կմ արլ. կան 3 մատուռներ:

**ՄԱՐՏՈՒՆԱՇԵՆ**- քաղաք Լոռու մարզում, տե՛ս **Վանաձոր**:

**ՄԱՐՏՈՒՆԻ**- քաղաք Գեղարքունիքի մարզում: Նախկին **Մ.** վարչական շրջանի կենտրոնը: Գտնվում է Սևանա լճի հվ. ափին, Գավառ-Վարդենիս և Սևանի ավազան-Եղեգնաձոր ավտոճանապարհների հանգույցում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1930 մ բարձրության վրա: Քաղաքատիպ ավան է 1963թ-ից, մինչ այդ՝ գյուղ: Բնակչությունը՝ 1831թ.-389, 1897թ.-1534, 1926թ.-2499, 1939թ.-3783, 1959թ.-5520, 1981թ.-10400, 1989թ.-13571, 1991թ.-13300, 2001թ.-11756, 2004թ.-11700 բնակիչ: Զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի և ծխախոտի մշակությամբ: **Մ.** տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հնագույն բնակավայր է, հնում Ներքին Կզնուտ գյուղ՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Գեղարքունիք գավառում: **Մ.** պահպանվել են սբ. Աստվածածին եկեղեցին (1866թ.), 15-17դդ. խաչքարերով գերեզմանոց: Քաղաքի հվ. մասում կան “Շեն”, “Դաշտաձոր”, “Հերի բերդ” ամրոցները (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և Գոմեր գյուղատեղին (9-18դդ.), իսկ հվ.-արլ մասում՝ 13դ. սբ. Գևորգ մատուռը: **Մ.** 30 կմ հվ. գտնվում

է մ.թ.ա. 1-ին հզմ. Աղքատների առու ջրատար (**Ներքին Կզնուտ**):

**ՄԱՐՏՈՒՆԻ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գետիկի ափին, մարզկենտրոնից 83 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 457, 1939-ին՝ 602, 1959-ին՝ 867, 1970-ին՝ 711, 1979-ին՝ 673, 1989-ին՝ 606, 2001-ին՝ 696, 2004-ին՝ 680 բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ են գաղթել Արմ. Հայաստանից, մի մասը՝ 1921թ. ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր և Կարմիրաղբյուր գյուղերից: **Մ.** հս-արմ. կողմում, Կարմիր եղցի կոչվող վայրում, պահպանվել է համանուն եկեղեցական համալիրը (9-12դդ.), 3 կմ հս-արմ.՝ գյուղատեղի և ամրոց (10-13դդ.), իսկ 3 կմ հվ-արմ.՝ "Բերդալանջ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.):

**ՄԱՐՑ**- գյուղ Լոռու մարզում, Մարց գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 33 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 197, 1897-ին՝ 578, 1926-ին՝ 876, 1939-ին՝ 1037, 1959-ին՝ 937, 1970-ին՝ 896, 1979-ին՝ 671, 2001-ին՝ 652, 2004-ին՝ 492 բնակիչ: Նախնիները եկել են Արցախից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի շրջակայքում կան հին գյուղատեղիներ: Գյուղից 5 կմ հվ-արմ. գտնըվում է Իզատակի վանքը (1255թ.), գյուղի մեջ՝ "Տերտեր" եկեղեցին և13-14դդ. մատուռներ:

**ՄԱՔԵՆԻՍ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Կարճաղբյուր գետի հովտում, մարզկենտրոնից 67 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2200 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 564, 1926-ին՝ 502, 1939-ին՝ 816, 1959-ին՝ 468, 1970-ին՝ 596, 1979-ին՝ 493, 1989-ին՝ 231, 2001-ին՝ 511, 2004-ին՝ 555 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. այստեղ են գաղթել Վանի, Մուշի, Կարսի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղի եզրին, ձոր իջնող բլրալանջին է, հռչակավոր "Մաքենյաց վանք" վանական համալիրը (9-17դդ.):

**ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Բովաձոր**:

**ՄԵԴՈՎԱՅԱ ԳՈՐԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Մեղրովկա**:

**ՄԵԴՈՎԿԱ**- գյուղ Լոռու մարզում, Մեղրասար լեռան ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1525 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 44 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 8, 1939-ին՝ 390, 1959-ին՝ 405, 1970-ին՝ 380, 1979-ին՝ 385, 2001-ին՝ 427, 2004-ին՝ 302 բնակիչ: Նախնիները եկել են Տաշիրից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությամբ և բանջարաբուծությամբ (**Օբվալկա**, **Մեդովայա գորա**):

**ՄԵԼԻՔԳՅՈՒՂ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ծաղկունյաց լեռների հվ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2080 մ: 1831թ. ուներ 309, 1897-ին՝ 844, 1926-ին՝ 1120, 1939-ին՝ 1379, 1959-ին՝ 867, 1970-ին՝ 891, 1979-ին՝ 862, 2001-ին՝ 1122, 2004-ին՝ 1171 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ: **Մ.** պահպանվել է 1891թ. սբ. Հովհաննես եկեղեցին:

**ՄԵԼԻՔԳՅՈՒՂ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Ծաղկավան**:

**ՄԵԾ ԱԽՈՒՐՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Բասեն**:

**ՄԵԾ ԱՅՐՈՒՄ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 690 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 69 կմ հս-արմ.: 1886թ. ուներ 171, 1897-ին՝ 223, 1926-ին՝ 387, 1939-ին՝ 530, 1959-ին՝ 550, 1970-ին՝ 815, 2001-ին՝ 638, 2004-ին՝ 584 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և երկրագործությամբ:

**ՄԵԾ ՄԱԶՐԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Մեծ Մասրիկ**:

**ՄԵԾ ՄԱՆԹԱՇ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի հովտում, մարզկենտրոնից 29 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1960 մ բարձրության վրա: Բնակիչները գաղթել են հիմնականում Խնուսի Չավուրմա և Բասենի Խորասան գյուղերից: 1831թ. ուներ 208, 1897-ին՝ 1278, 1926-ին՝ 1882, 1939-ին՝ 1754, 1959-ին՝ 165, 1970-ին՝ 1834, 1979-ին՝ 1759, 2001-ին՝ 2253, 2004-ին՝ 2153 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի 1884թ. սբ.Աստվածածին եկեղեցի, "Սրբատեղ" և սբ. Սարգիս մատուռներ:

**ՄԵԾ ՄԱՍՐԻԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մասրիկի դաշտում, մարզկենտրոնից 86 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա: 03.04. 1991թ. վերանվանվել է **Մ.Մ**: 1831թ. ուներ 293, 1897-ին՝ 1652, 1926-ին՝ 1232, 1939-ին՝ 2110, 1959-ին՝ 2600, 1970-ին՝ 3446, 1979-ին՝ 3515, 1989-ին՝ 3048, 2001-ին՝ 2806, 2004-ին՝ 3420 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Հին հայկական բնակատեղի է՝ հայտնի 7 դ-ից: Այստեղ կան՝ 17դ. մի թաղածածկ եկեղեցու ավերակներ, տասնյակ խաչքարերով գերեզմանոցներ (15-17դդ.), 881թ. խաչքար և 12-13դդ. երկու մատուռ (**Մեծ Մազրա**):

**ՄԵԾ ՊԱՐՆԻ** - գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1680 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 33 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 505, 1897-ին՝ 2420, 1926-ին՝ 2760, 1939-ին՝ 2686, 1959-ին՝ 2313, 1970-ին՝ 2511, 1979-ին՝ 2153, 1989-ին՝ 785, 2001-ին՝ 2171, 2004-ին՝ 2313 բնակիչ, որոնց նախնիները եկել են Արցախից, Մուշից և Իրանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղում է գտնվում սբ. Սարգիս (19դ.) և Մեծ Պարնու եկեղեցիները (13-14դդ.):

**ՄԵԾ ՍԱՐԻԱՐ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1880 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 217, 1873-ին՝ 476, 1897-ին՝ 609, 1926-ին՝ 527, 1931-ին՝ 570, 1939-ին՝ 598, 1959-ին՝ 633, 1970-ին՝ 424, 1979-ին՝ 395, 1989-ին՝ 180, 2001-ին՝ 379, 2004-ին՝ 397 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասեն գավառի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ. Նշան (սբ. Խաչ) եկեղեցի (1907թ.): Գյուղում կա նաև "Գրիգոր Ավետարան" անունով մատուռ:

**ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, Կաթսայաջուր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1990 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 40 կմ հս.: 1831թ. ուներ 64, 1897-ին՝ 620, 1926-ին՝ 893, 1939-ին՝ 1161, 1959-ին՝ 761, 1978-ին՝ 846, 1989-ին՝ 930, 2001-ին՝ 900, 2004-ին՝ 926 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Ալաշկերտի գավառի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են զրտ-նըվում սբ. Ամենափրկիչ եկեղեցին (19-20դդ.) և հին եռակամար կամուրջը (1860թ.), իսկ գյուղից հս.՝ Դարի սուրբ գյուղատեղին համանուն մատուռով (19դ.):

**ՄԵԾԱՁՈՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից 51 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 2050 մ: **Մ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1873թ. ուներ 138, 1886-ին՝ 158, 1922-ին՝ 40, 1939-ին՝ 124, 1959-ին՝ 162, 1970-ին՝ 139, 1979-ին՝ 201, 2001-ին՝ 159, 2004-ին՝ 218 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղի մեջ է գտնվում “Աղջկա” մատուռը (**Ավթոնա**):

**ՄԵԾԱՄՈՐ**- քաղաք Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 6 կմ հվ-արլ.՝ շրջապատված մրգատու և խաղողի այգիներով: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1969թ. որպես Ատոմային էլեկտրակայանի շինարարությանը կից ավան, 1972թ. կազմավորվել է որպես քաղաքատիպ ավան, իսկ 04.12.1995թ. նախկին Մեծամոր քաղաքատիպ ավանը դասվել է ՀՀ քաղաքների շարքը: 1981թ. ուներ 8165, 1989-ին՝ 11959, 1991-ին՝ 11300, 2001-ին՝ 9870, 2004-ին՝ 9900 բնակիչ: **Մ**-ի մոտ է գտնվում ՀԱԷԿ-ը (**Ատոմային էլեկտրակայանի շինարարությանը կից**):

**ՄԵԾԱՄՈՐ**- գյուղ Արմավիրի մարզում, Մեծամոր գետի ձախ ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 830 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 38 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 127, 1897-ին՝ 408, 1926-ին՝ 288, 1939-ին՝ 386, 1959-ին՝ 533, 1970-ին՝ 657, 1979-ին՝ 724, 2001-ին՝ 1123, 2004-ին՝ 1256 բնակիչ, որոնց նախնիները 1918-20թթ. գաղթել են Սուրմալուից, Վանից, Բիթլիսից և այլ վայրերից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ:

**ՄԵԾԱՎԱՆ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1575 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 39 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 123, 1897-ին՝ 2049, 1926-ին՝ 3992, 1939-ին՝ 5160, 1959-ին՝ 5593, 1970-ին՝ 6433, 1979-ին՝ 6560, 2001-ին՝ 6126, 2004-ին՝ 6136 բնակիչ: Նախնիները այստեղ են գաղթել Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում գտնվում են “Ավերք” (12դ.) գյուղատեղին համանուն եկեղեցիով և սբ. Հովհաննես (13դ.) եկեղեցին:

**ՄԵՂՎԱՀՈՎԻՏ**- գյուղ Լոռու մարզում, Լոռիգետի հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1670 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 47 կմ հս-արմ.: 03.04.1991թ. գյուղը վերանվանվել է **Մ.**: 1926թ. ուներ 183, 1939-ին՝ 197, 1959-ին՝ 107, 1970-ին՝ 228, 1979-ին՝ 173, 2001-ին՝ 101, 2004-ին՝ 153 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագոր-

ծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղից արմ. պահպանվել են հին եկեղեցի և գերեզմանոց (**Ղարախս**):

**ՄԵՂՐԱՁՈՐ**- գյուղ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի միջին հոսանքի ձախափնյակում, մարզկենտրոնից 16 կմ հս-արմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 336, 1897-ին՝ 1322, 1926-ին՝ 2063, 1939-ին՝ 2670, 1959-ին՝ 1842, 1970-ին՝ 2087, 1979-ին՝ 2449, 1989-ին՝ 2521, 2001-ին՝ 2768, 2004-ին՝ 2900 բնակիչ: Նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել է Բայազետի գավառի Արծափ գյուղից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի և ծխախոտի մշակությամբ: **Մ**-ից հվ., գետակի աջ ափին, գտնվում է Թեժառույքի վանքը (13դ.) (**Թեժառույք**):

**ՄԵՂՐԱՇԱՏ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրիկ գետի վերին հոսանքի շրջանում: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1750 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ հս-արմ.: 1886թ. ուներ 329, 1897-ին՝ 457, 1939-ին՝ 442, 1959-ին՝ 425, 1970-ին՝ 329, 1979-ին՝ 283, 1989-ին՝ 292, 2001-ին՝ 371, 2004-ին՝ 483 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ճակնդեղի մշակությամբ: Գյուղից 10 կմ հս-արլ. գտնըվում է Ծորակ գյուղատեղին: **Մ.** Պահպանվել է 1868թ. կառուցված փայտաշեն եկեղեցին:

**ՄԵՂՐԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 15 կմ հվ հվ-արլ., ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 269, 1897-ին՝ 1018, 1926-ին՝ 1424, 1939-ին՝ 1244, 1959-ին՝ 1057, 1970-ին՝ 1061, 1979-ին՝ 1066, 2001-ին՝ 1272, 2004-ին՝ 1242 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են.Կարսից և Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, հացահատիկի, ճակնդեղի և կերային կուլտուրաների մշակությամբ: Պահպանվել են գյուղատեղիներ (վաղ մջնդ.) և "սբ. Լույսի գերեզմաններ" եկեղեցին:

**ՄԵՂՐԻ**- քաղաք Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 71 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 650 մ բարձրության վրա: Մեղրի գետի ստորին հոսանքում, ձգված նեղ գետահովտի երկարությամբ: Քաղաքի աջափնյա մասը ընկած է Սնքար լեռան ստորոտում, ձախափնյա մասը՝ Աչքար լեռան 3 ճյուղերի ձորաբերաններին: Բարեկարգվել և ընդարձակվել է 1950թ. հատակագծի համաձայն: 1831թ, ուներ 272, 1897-ին՝ 927, 1926-ին՝ 1161, 1939-ին՝ 1893, 1959-ին՝ 3095, 1980-ին՝ 4180, 2001-ին՝ 4805, 2004-ին՝ 4800 բնակիչ: Կան արդյունաբերական ձեռնարկություններ: 1937 թ-ից գործում է հիդրոկայանը: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Պաշտպանական մեծ դեր է կատարել Մեղրիի բերդը, որը գըտ-նըվում է հս-արլ. լեռների գագաթներին: Ունի սբ. Աստվածածին (17դ.) և սբ. Հովհաննես Մկրտիչ (17դ.) եկեղեցիներ: Քաղաքի արլ. մասում են սբ. Հովհաննես վանքը (11-13դդ.), Մեծ թաղի ձոր և Մկաց աղբյուր գյուղատեղիները, որտեղ հայտնաբերվել են բրոնզե և երկաթի դարաշրջանների նյութական մնացորդներ (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.): Քաղաքից արմ., Մեղրի գետի աջ ափին, Նորաշենք կոչված գյուղատեղին է, իսկ 14 կմ հս-արմ.՝ անտառապատ վայրում, Լիճքվազ գյուղատեղին:

**ՄԵՂՐՈւՏ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Գուգարք**:

**ՄԵՇԱՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Անտառամեջ**:

**ՄԵՐՁԱՎԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, թաղված այգիների մեջ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 945 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 40 կմ հս-արլ.: **Մ.** է վերանվանվել 27.01.1965թ.: 1947թ-ից եղել է ուսումնափորձարարական բազա, 1956թ. այստեղ հիմնադրվել է խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության հայկական գիտահետազոտական ինստիտուտը: 1970թ. ուներ 1624, 1979-ին՝ 2122, 2001-ին՝ 2938, 2004-ին՝ 3357 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ (**Խաղողագործության և գինեգործության ինստիտուտի փորձարարական բազային կից**):

**ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ**- գյուղ Լոռու մարզում, Տաշիր գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1530 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 47 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 391, 1926-ին՝ 908, 1939-ին՝ 947, 1959-ին՝ 770, 1979-ին՝ 989, 2001-ին՝ 840, 2004-ին՝ 695 բնակիչ: Նախնիները գաղթել են Ռուսաստանի Վորոնեժի և Սարատովի նահանգներից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ՄԻԽԱՅԼՈՎԿԱ**- նախկինում գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ճամբարակ**:

**ՄԻԿՈՅԱՆ**- քաղաք Վայոց ձորի մարզում, տե՛ս **Եղեգնաձոր**:

**ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Լուկաշին**:

**ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մուսալեռ**:

**ՄԻՋՆԱՏՈւՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Փամբակի լեռների հվ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 51 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2100 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 04.07. 2006թ. վերանվանվել է **Մ.**: 1831թ. ուներ 129, 1897-ին՝ 686, 1926-ին՝ 505, 1939-ին՝ 763, 1959-ին՝ 208, 1970-ին՝ 258, 1978-ին՝ 244, 1989-ին՝ 138, 2001-ին՝ 178, 2004-ին՝ 200 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ (**Օրթաճյա**):

**ՄԻՍԽԱՆԱ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Հանքավան**:

**ՄԻՐԱՔ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի վերին հոսանքի ձախափնյա շրջանում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 37 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2025 մ: 1831թ. ուներ 210, 1897-ին՝ 558, 1926-ին՝ 497, 1939-ին՝ 597, 1959-ին՝ 190, 1979-ին՝ 199, 2001-ին՝ 90, 2004-ին՝ 130 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա 5-6դդ. ավերված եկեղեցի:

**ՄԽՉՅԱՆ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 845 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 391, 1897-ին՝ 1177, 1926-ին՝ 1104, 1939-ին՝ 1268, 1959-ին՝ 2912, 1970-ին՝ 3557, 1979-ին՝ 2843, 2001-ին՝ 5022, 2004-ին՝ 5030 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջա-

րաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ. Հովհաննես եկեղեցի (1890թ.):
**ՄՀՈւԲ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Բալահովիտ**:
**ՄՂԱՐԹ**- գյուղ Լոռու մարզում, Շեկաղբյուր լեռան լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1425 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 44 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 295, 1897-ին՝ 401, 1926-ին՝ 534, 1939-ին՝ 863, 1959-ին՝ 628, 1970-ին՝ 628, 1979-ին՝ 459, 2001-ին՝ 523, 2004-ին՝ 519 բնակիչ, որոնց նախնիները եկել են Օձունից և Վանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: **Մ.** իր շրջ-ջակայքում ունի ուշագրավ հնություններ և գյուղատեղիներ: Գյուղում են գտնվում "Հողացիր" եկեղեցին (7-20դդ.), սբ. Սարգիս (13-14դդ.) և "Ծաղկավանք" (14դ.) մատուռները:
**ՄՅԱՍՆԻԿՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 11 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 910 մ բարձրության վրա: **Մ**-ին միացել է Արաքս ավանը և դարձել մեկ բնակավայր: Գերագույն խորհրդի 30.05. 1984թ. հրամանագրով Մյասնիկյանի անվան սովխոզին կից ավանը վերանվանվել է **Մ.**: 1959թ. ուներ 1364, 1970-ին՝ 2848, 1979-ին՝ 3219, 2001-ին՝ 3798, 2004-ին՝ 4350 բնակիչ, որոնց մի մասը տեղափոխվել են Ախուրյանի, Արթիկի տարածաշրջաններից, մի մասն էլ հայրենադարձվել են Իրանից, Լիբանանից և Սիրիայից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ (**Մյասնիկյանի անվան սովխոզին կից**):
**ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մյասնիկյան**:
**ՄՈԶՐՈՎ**- գյուղ Վայոց ձորի մարզում, ծովի մակերևույթից 200 մ բարձրության վրա, Գնիշիկ գյուղից 15 կմ հս.: 2001թ. ուներ 102, 2004-ին՝ 102 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և գյուղատնտեսությամբ:
**ՄՈՂԵՍ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Կաղնուտ**:
**ՄՈՍԵՍԳԵՂ**- գյուղ Տավուշի մարզում, Մոսեսգետի ցածրադիր ափին, մարզկենտրոնից 63 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 220, 1873-ին՝ 684, 1897-ին՝ 1139, 1920-ին՝ 1431, 1939-ին՝ 2118, 1959-ին՝ 2474, 1970-ին՝ 2904, 1979-ին՝ 2741, 1989-ին՝ 2547, 2004-ին՝ 2175 բնակիչ: Գյուղը սկզբում հիմնված է եղել այժմյանից հվ-արլ., Արցախից եկած վերաբնակիչների կողմից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ և պտուղ-բանջարեղենի մշակությամբ: Գյուղից 3 կմ հվ-արլ.գտնվում է սբ. Գևորգ եկեղեցին (14-17դդ.), Հին Մոսես գյուղատեղին (14-17դդ:
**ՄՈՐՈւՏ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Ակնաղբյուր**:
**ՄՌԱՎՅԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Եղիպատրուշ**:
**ՄՐԳԱՆՈւՇ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը նից՝ 11 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 905 մ: Գյուղը հիմնադրվել է 1873թ.: 1873թ. ուներ 164, 1897-ին՝ 281, 1926-ին՝ 405, 1939-ին՝ 470, 1959-ին՝ 689, 1970-ին՝ 1521, 1979-ին՝ 878, 2001-ին՝ 1100, 2004-ին՝ 1036 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյ և Սալմաստ գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ,

պտղաբուծությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա եկեղեցի (19դ.):

**ՄՐԳԱՇԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 2 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 1838, 1926-ին՝ 1810, 1939-ին՝ 2277, 1959-ին՝ 3593, 1970-ին՝ 4421, 1979-ին՝ 4838, 2001-ին՝ 5297, 2004-ին՝ 5867 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. և 1915-18թթ. գաղթել են Սուրմալուից, Խնուսից, Ալաշկերտից, Խոյից և Սալմաստից: 1949-50թթ. այստեղ հաստատվել են Լիբանանից եկած հայրենադարձները: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների և խորդենու մշակությամբ: Գյուղում է սբ. Աստվածածին եկեղեցին (1900թ.): Գյուղի մոտ է գտնվում մ.թ.ա. 3-րդ-2-րդ հզմ. "Սև բլուր" բնակատեղին:

**ՄՐԳԱՇԵՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի բարձրադիր աջափնյակում, մարզկենտրոնից 40 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա: **Մ.** է վերանվանվել 15.08. 1964թ.: 1959թ. ուներ 1191, 1970-ին՝ 1191, 1979-ին՝ 1310, 2001-ին՝ 1774, 2004-ին՝ 2035 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ և պտղաբուծությամբ (**№ 36 սովխոզին կից**):

**ՄՐԳԱՍՏԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 900 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 28 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 185, 1897-ին՝ 385, 1926-ին՝ 292, 1939-ին՝ 435, 1959-ին՝ 548, 1970-ին՝ 788, 1979-ին՝ 824, 2001-ին՝ 960, 2004-ին՝ 1342 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. և 1915-18թթ. գաղթել է Մոկսի գավառից, Խոյի և Սալմաստի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, անասնապահությամբ, հացահատիկի և բանջարեղենի մշակությամբ: Գյուղում կա 19դ. սբ. Հովհաննես կանգուն եկեղեցի: Գյուղից արմ. կան միջնադարյան խաչքարեր:

**ՄՐԳԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից 500 մ հս-արմ., ծովի մակերևույթից՝ 835 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 134, 1897-ին՝ 836, 1926-ին՝ 914, 1939-ին՝ 887, 1959-ին՝ 1350, 1970-ին՝ 1693, 1979-ին՝ 1799, 2001-ին՝ 1872, 2004-ին՝ 1518 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարեղենի մշակությամբ և անասնապահությամբ: **Մ.** հվ-արմ. եզրին գտնըվում է մ.թ.ա. 3-րդ հզմ. բնակատեղի: Գյուղում գտնվում են սբ. Աստվածածին (1828թ.) և սբ. Հակոբ (1902-1905թթ.) եկեղեցիները:

**ՄՐԳԱՎԵՏ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 9 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 845 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., **Մ.** է վերանվանվել 21.10. 1967թ.: 1831թ. ուներ 296, 1897-ին՝ 432, 1926-ին՝ 465, 1939-ին՝ 588, 1959-ին՝ 1215, 1970-ին՝ 1521, 1979-ին՝ 1746, 2001-ին՝ 2226, 2004-ին՝ 2158 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Բընակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և պտղաբուծությամբ (**Ծաղկաշեն**):

**ՄՈւԼՔԻ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Կայք**:

**ՄՈւՂՆԻ**- գյուղ Արագածոտնի մարզում: Հեռավորությունը Աշտարակից՝ 2 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1260 մ: 1831թ. ուներ 54, 1897-ին՝ 267, 1926-ին՝ 299, 1939-ին՝ 294, 1959-ին՝ 374, 1970-ին՝ 488 բնակիչ, որոնց մի մասը այստեղ են տեղափոխվել Մաստարա գյուղից: Բը-նակչությունը զբաղվում է այգեգործությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի հս-արլ. կողմում է գտնվում 17դ. “Կարբո ծով” ջրամբարը, իսկ հվ. մասում՝ սբ. Գևորգ (1664-1669թթ.) եկեղեցին և Մուղնու վանական համալիրը (14-17դդ.):

**ՄՈւՍԱԼԵՌ**- գյուղ Արմավիրի մարզում, Երևան տանող ավտոմայրուղու վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 34 կմ արլ.: **Մ.** է վերանվանվել 29.03.1972թ.: 1897թ. ուներ 44, 1926-ին՝ 57, 1939-ին՝ 565, 1959-ին՝ 1260, 1970-ին՝ 3114, 1979-ին՝ 2197, 2001-ին՝ 2534, 2004-ին՝ 2894 բնակիչ: Մի մասը հայրենադարձվել են Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից և Կիլիկիայի Մուսալեռի գյուղերից 1946թ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղի ուշագրավ կառույցը նրա հս-արլ. կողմում, բարձունքի վրա կանգնեցված կոթողհուշարձանն է ՝ ի հիշատակ 1915թ. Մուսա լեռան հերոսամարտերի (1976թ.) (**Ներսեսապատ**, **№ 3 սովխոզին կից**, **18-րդ կուսակցական համագումարի անվան սովխոզին կից**, **Միկոյանի անվան սովխոզին կից**, **Գինեվետ**):

**ՄՈւՍԱԼԼԱՄ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի աջ ափին, Լեռնաձոր գյուղից 7 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 34, 1931-ին՝ 105, 1939-ին՝ 114, 1959-ին՝ 154, 1970-ին՝ 449, 1979-ին՝ 390, 2001-ին՝ 106, 2004-ին՝ 79 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում կա 11-13դդ. կիսավեր եկեղեցի և գերեզմանոց (**Մուսաշաղ**):

**ՄՈւՍԱՅԵԼՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյանի տարածաշրջանում, տե՛ս Բասեն:

**ՄՈւՍԱՅԵԼՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Աշոցքի տարածաշրջանում, մարզկենտրոնից 32 կմ արլ., ծովի մակերևույթից 2045 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 274, 1897-ին՝ 366, 1926-ին՝ 258, 1939-ին՝ 512, 1959-ին՝ 469, 1970-ին՝ 442, 1979-ին՝ 408, 2001-ին՝ 386, 2004-ին՝ 395 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1877-78թթ. գաղթել է Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի 1896թ. սբ. Տրդատ եկեղեցի:

**ՄՈւՍԱՇԱՂ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Մուսալլամ**:

**ՄՈւՐԽՈւԶ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ցղունի**:

**ՄՈւՑՔ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 118 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1760 մ բարձրության վրա: **Մ.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1897թ. ուներ 911, 1926-ին՝ 1047, 1939-ին՝ 1023, 1959-ին՝ 808, 1970-ին՝ 544, 1979-ին՝ 423, 2001-ին՝ 376, 2004-ին՝ 383 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. գաղթել է Խոյից և Սալմաստից: Գյուղի մոտ հայտնաբերվել են կապարի պաշարներ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կա եկեղեցի՝ սբ. Աստվածածին (1870թ.) (**Բարձրավան**):

# Ց

**ՑԱՂԴԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 37 կմ հս-արմ.: 1873թ. ուներ 282, 1897-ին՝ 495, 1926-ին՝ 540, 1939-ին՝ 888, 1959-ին՝ 917, 1970-ին՝ 856, 1979-ին՝ 785, 2001-ին՝ 354, 2004-ին՝ 90 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում է գտնվում 13դ. կամուրջը: Այստեղ է գտնվում "Կարմիր խաչ" (13-14դդ.) և սբ. Պողոս (1862թ.) եկեղեցիները, սբ. Գրիգոր մատուռը (**Եղիտանք**):

**ՑԱՆԸՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Նշխարք**:

# Ն

**ՆԱՁՐՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Ղազարավան**:

**ՆԱԻՐԻ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Հացիկ**:

**ՆԱԼԲԱՆԴ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Շիրակամուտ**:

**ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 10 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 630, 1897-ին՝ 1704, 1926-ին՝ 2165, 1939-ին՝ 1850, 1959-ին՝ 2789, 1970-ին՝ 3463, 1979-ին՝ 3596, 2001-ին՝ 4502, 2004-ին՝ 5078 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1914-22թթ. գաղթել են Վանի, Իգդիրի, Կողբի և Սալմաստի գավառներից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջաբաբուծությամբ և հացահատիկի մշակությամբ:

**ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Արագած լեռան հվ-արմ. ստորոտին, մարզկենտրոնից 23 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 293, 1897-ին՝ 465, 1926-ին՝ 622, 1939-ին՝ 518, 1959-ին՝ 647, 1970-ին՝ 655, 1979-ին՝ 650, 2001-ին՝ 817, 2004-ին՝ 1032 բնակիչ, որոնց մի մասը 1863թ. փոխադրվել է Հառիճ գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ճակընդեղագործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կա 6դ. սբ. Գևորգ եկեղեցի (**Փարոս**):

**ՆԱՎՈՒՐ**- գյուղ Տավուշի մարզում, Կենաց լեռների լանջին, մարզկենտրոնից 43 կմ արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1490 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 249, 1897-ին՝ 573, 1926-ին՝ 1210, 1939-ին՝ 1469, 1959-ին՝ 1334, 1970-ին՝ 1405, 1979-ին՝ 1333, 1989-ին՝ 1359, 2001-ին՝ 1238, 2004-ին՝ 1108 բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել է Բերդից (1862թ.), Արցախից, Ճամբարակի տարածաշրջանից և Արծվաբերդ գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների

մշակությամբ: **Ն.** և նրա շրջակայքը հարուստ են հնավայրերով. գյուղի մեջ է սբ. Աստվածածին եկեղեցին (16-19դդ.), հվ-ում են գտնվում մ.թ.ա. 1-ին հզմ. "Ցից քար", "Տանձուտ", "Քարի գլուխ" ամրոցները, արմ-ում մ.թ.ա. 1-ին հզմ. "Արտներ" ամրոցը:

**ՆԱՐԵԿ**- գյուղ Արարատի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1030 մ, հեռավորությունը Արտաշատից՝ 11 կմ հս-արլ.: 1984թ. ուներ 335, 2001-ին՝ 1138, 2004-ին՝ 1049 բը-նակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ:

**ՆԱՐԻՄԱՆԼՈւ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Շատվան**:

**ՆԵՂՈՑ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջափնյակում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 550 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 60 կմ հս-արլ.: 1926թ. ուներ 96, 1939-ին՝ 250, 2001-ին՝ 320, 2004-ին՝ 277 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և երկրագործությամբ: Գյուղում և շըրջակայքում կան 9-17դդ. գյուղատեղիներ: Գյուղում է գտնվում 10-17դդ. մատուռը:

**ՆԵՐՍԵՍԱՊԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Մուսալեռ**:

**ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 37 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ: 1831թ. ուներ 53, 1897-ին՝ 617, 1926-ին՝ 426, 1939-ին՝ 746, 1959-ին՝ 848, 1970-ին՝ 1252, 1979-ին՝ 1273, 2001-ին՝ 1408, 2004-ին՝ 1531 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունի Արծվիք, Կծանք, Քաշքշենք և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղից 1,5 կմ հվ-արմ. գըտնըվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Սև բերդ" ամրոցը:

**ՆԵՐՔԻՆ ԳԵՂԱՁՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Վարդենիկ**:

**ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արգիճի գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 34 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 1960 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 331, 1897-ին՝ 1516, 1926-ին՝ 2197, 1939-ին՝ 2548, 1959-ին՝ 3246, 1970-ին՝ 4906, 1979-ին՝ 5637, 1989-ին՝ 6835, 2001-ին՝ 7658, 2004-ին՝ 8325 բնակիչ, որոնց նախնիները հիմնականում գաղթել են 1828-29թթ. Ալաշկերտի Թոփրախկալա գյուղից, ոմանք՝ Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: **Ն.Գ.** միջնադարյան Կոթ գյուղաքաղաքն է իր հնություններով հարուստ: Գյուղի կենտրոնում են գտնվում սբ. Գրիգոր Լուսավորիչ (19դ.) և սբ. Վարդան (9-10դդ.) եկեղեցիները և սբ. Ամենափրկիչ մատուռը (12-13դդ.): Գյուղի արմ կողմում, մի բարձրավանդակի վրա, գերեզմանատան մեջ է գտնվում Կոթի սբ. Աստվածածին եկեղեցին (851-901թթ.) և 9-17դդ. բազմաթիվ խաչքարեր, արլ. եզրին է "Ջոջ կուլոն" դամբարանադաշտը (մ.թա. 2-րդ-1-ին հզմ.): Արգիճի գետի աջ ափին, գյուղից 1,5 կմ հվ. գտնվում է Իշխանագյուղ գյուղատեղին (10-17դդ.) և 11-13դդ. "Իշխանհատիկ" եկեղեցին (**Կոթ**):

**ՆԵՐՔԻՆ ԳԻՐԱԹԱՂ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախ կողմում, Վերին Գիրաթաղ գյուղից 4 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1440 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 87, 1926-ին՝ 87, 1939-ին՝ 139, 1959-ին՝ 167,

1979-ին՝ 143 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ:

**ՆԵՐՔԻՆ ԳՅՈՂԱԿԼՈւ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Բարգուշատ**:

**ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Դաշտադեմ**:

**ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ**- գյուղ Սյունիքի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 84 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1160 մ: Գյուղը հիմնադրվել է 1985թ.: 03.04. 1991թ. վերանվանվել է **Ն.Խ.**: 1989թ. ուներ 100, 2001-ին՝ 184, 2004-ին՝ 225 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի և բանջարեղենի մշակությամբ (**Խնձորեսկ Երկրորդ**):

**ՆԵՐՔԻՆ ԽՈՏԱՆԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Խոտանան գետի հովտում, մարզկենտրոնից 21 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 108, 1926-ին՝ 149, 1939-ին՝ 251, 1959-ին՝ 141, 1970-ին՝ 120, 1979-ին՝ 75, 2001-ին՝ 101, 2004-ին՝ 76 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ:

**ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Տավուշի մարզում, Տավուշ գետի ձախափնյակում, Կենաց լեռան լանջին, մարզկենտրոնից 58 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: 1908թ. ուներ 374, 1926-ին՝ 893, 1939-ին՝ 1175, 1959-ին՝ 1221, 1970-ին՝ 1348, 1979-ին՝ 1214, 1989-ին՝ 1241, 2001-ին՝ 1061, 2004-ին՝ 934 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 5 կմ հս-արմ. գտնվում են Շենատեղեր գյուղատեղին և 10-15դդ. խաչքարերով գերեզմանոցը:

**ՆԵՐՔԻՆ ԿԶՆՈւՏ**-պատմական գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս ք. **Մարտունի**:

**ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ**- գյուղ Սյունիքի մարզում, Ծավ գետի աջ կողմում, մարզկենտրոնից 35 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 900 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 226, 1926-ին՝ 392, 1939-ին՝ 386, 1959-ին՝ 221, 1970-ին՝ 192, 1979-ին՝ 88, 2001-ին՝ 113, 2004-ին՝ 77 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ. Հռիփսիմե եկեղեցի և Շինատեղ գյուղատեղի:

**ՆԵՐՔԻՆ ՇՈՐԺԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մասրիկ գետի աջ ափին, մարզկենտրոնից 83 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2260 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 75, 1897-ին՝ 584, 1926-ին՝ 497, 1939-ին՝ 764, 1959-ին՝ 634, 1970-ին՝ 932, 1979-ին՝ 1045, 2001-ին՝ 44, 2004-ին՝ 86 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մեջ կան եկեղեցի (12-13դդ.), գերեզմանոց և խաչքարեր (14-18դդ.): Մասրիկի ձախափնյա կիրճի սարահարթին է մ.թ.ա. 1-ին հզմ.-մջնդ. բնակատեղի:

**ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 40 կմ հս-արմ.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ: 1831թ. ուներ 49, 1873-ին՝ 265, 1897-ին՝ 233, 1922-ին՝ 345, 1926-ին՝ 362, 1931-ին՝ 452, 1939-ին՝ 668, 1959-ին՝ 750, 1970-ին՝ 901, 1979-ին՝ 877, 1989-ին՝ 1032, 2001-ին՝ 999, 2004-ին՝ 1093 բնակիչ, որոնց մեծ մասի նախնիները գաղթել են Սասունից, Մուշից և Խր-նուսից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների

և ծխախոտի մշակությամբ: Գյուղում կա երկու եկեղեցի:

**ՆԵՐՔԻՆ ՓԻՐԼՈւ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գեղավանք**:

**ՆԺԴԵՀ**- գյուղ Սյունիքի մարզում, Սիսիան գետի աջակողմյան Այրիգետ վտակի վերնազավառում, մարզկենտրոնից 126 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: **Ն.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 154, 1926-ին՝ 149, 1939-ին՝ 299, 1959-ին՝ 591, 1970-ին՝ 777, 1979-ին՝ 736, 2001-ին՝ 114, 2004-ին՝ 263 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Մոտակայքում գտնվում են մի քանի գյուղատեղիներ (**Պիսակ**, **Սոֆլու**):

**ՆԻԳԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 39 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2025 մ: 21.10.1967թ. վերանվանվել է **Ն.**: 1831թ. ուներ 149, 1897-ին՝ 873, 1926-ին՝ 1401, 1939-ին՝ 1659, 1959-ին՝ 731, 1970-ին՝ 807, 1979-ին՝ 670, 2001-ին՝ 707, 2004-ին՝ 588 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի Կարինի, Մուշի և Պարսկահայաստանի տարբեր շրջանների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Ն**-ի կենտրոնում է գտնվում 19դ. սբ. Ստեփանոս եկեղեցին, իսկ հս. մասում՝ 13-14դդ. “Ժամատեղ” եկեղեցին: Գյուղից 2 կմ հվ. գտնվում է “Թուխ Մանուկ” մատուռը (17-18դդ.), 2,5 կմ հս-արմ.՝ “Թեվաթորոս” մատուռը (18-19դդ.) (**Հովիտ**):

**ՆԻԳԱՏՈւՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Նիգատուն գետի վերնազավառում, Արտաշավան գյուղից 3,5 կմ հս-արմ.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թթ.: 1831թ. ուներ 53, 1897-ին՝ 503, 1926-ին՝ 441, 1939-ին՝ 453, 1959-ին՝ 201 բնակիչ: Բընակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի արմ. մասում է գտնըվում մ.թ.ա. 2-րդ հզմ. “Նիգատուն” ամրոցը:

**ՆԻԶԱՄԻ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախափնյակում, արգավանդ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 835 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 231, 1897-ին՝ 791, 1926-ին՝ 368, 1939-ին՝ 885, 1959-ին՝ 1340, 1970-ին՝ 1671, 1979-ին՝ 1342, 2001-ին՝ 1257, 2004-ին՝ 1300 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ:

**ՆԻԿՈԼԱԵՎԿԱ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Ջրաբեր**:

**ՆՅՈւՎԱԴԻ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Նռնաձոր**:

**ՆՇԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, այգեվետ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 9 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 880 մ: 1831թ. ուներ 55, 1897-ին՝ 127, 1926-ին՝ 194, 1939-ին՝ 795, 1959-ին՝ 1266, 1970-ին՝ 1519, 1979-ին՝ 1618, 1989-ին՝ 1824, 2001-ին՝ 1978, 2004-ին՝ 2000 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828թ. գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից: Գյուղը 21. 10.1967թ. վերանվանվել է **Ն.**: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ (**Լուսակերտ**):

**ՆՇԽԱՐՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մարտունի-Եղեգնաձոր խճուղու վրա, Արգիճի գետի աջակողմյան վտակի ափին, Գեղհովիտ գյուղից 13

կմ հվ.: **Ն.** է վերանվանվել 04.07. 2006թ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2275 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 194, 1897-ին՝ 303, 1926-ին՝ 209, 1931-ին՝ 218 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղում կան ավերակ եկեղեցի, խաչքարեր և հին գերեզմաններ (**Յանըղ**):

**ՆՈՅԱԿԵՐՏ**- գյուղ Արարատի մարզում, մարզկենտրոնից՝ 13 կմ հվ-արլ.: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 820 մ: 03.04.1991թ. վերանվանվել է **Ն.**: 1989թ. ուներ 1752, 2001-ին՝ 1937, 2004-ին՝ 1900 բնակիչ: Գյուղը բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած հայերի կողմից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ (**Խալիսա**):

**ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ**- քաղաք Տավուշի մարզում, մարզկենտրոնից 48 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 820 մ բարձրության վրա: 1831թ.ուներ 294, 1897-ին՝ 1197, 1926-ին՝ 1901, 1939-ին՝ 2655, 1959-ին՝ 3138, 1970-ին՝ 4330, 1980-ին՝ 5115, 1989-ին՝ 6116, 2001-ին՝ 5486, 2004-ին՝ 5500 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ: Հայտնի է իր դեղձով: Կարևոր դեր ունի կաթնամթերքի, հատկապես պանրի արտադրությունը: Քաղաքի տարածքում կան երկաթի բովեր, պղնձի երևակումներ, սպիտակ ֆելզիտի պաշարներ և հանքային ջրեր: **Ն.** ունի 1903թ. սբ.Սարգիս եկեղեցի: Քաղաքի շրջակայքում կան զանազան հնություններ՝ հս. մասում "Թփի դաշ" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 2 կմ հս-արլ. Բերդատեղի ամրոցը, 2 կմ հվ-արմ. "Ջուխտակեղցի" եկեղեցին (13-14դդ.):

**ՆՈՎՈՍԵԼՑՈՎՈ**- գյուղ Լոռու մարզում, Ջորագետի ձախափնյակում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1475 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36 կմ հս-արմ.: 1926թ. ուներ 163, 1939-ին՝ 209, 1970-ին՝ 277, 1979-ին՝ 271, 1989-ին՝ 212, 2001-ին՝ 192, 2004-ին՝ 155 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ:

**ՆՈՐ ԱՋՆԱԲԵՐԴ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Ճահուկ գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակի ափին, Վայոց ձորի լեռների հվ. բարձրադիր լանջին, ծովի մակերևույթից 1580 մ բարձրության վրա , մարզկենտրոնից 42 կմ հվ-արլ.: **Ն.Ա.** է վերանվանվել 1991թ.: 1831թ. ուներ 157, 1897-ին՝ 235, 1926-ին՝ 96, 1939-ին՝ 202, 1959-ին՝ 148, 1979-ին՝ 253, 2001-ին՝ 182, 2004-ին՝ 187 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Ճահուկ գետի վրա են գտնվում Վերին Շենիկ գյուղի ավերակները (**Գյուլստան**):

**ՆՈՐ ԱՄԱՆՈՍ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 37 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1040 մ: 2001թ. ուներ 672, 2004-ին՝ 784 բնակիչ, որոնք զբաղվում են անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:

**ՆՈՐ ԱՄԱՍԻԱ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Ամասիա**:

**ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի վերին հոսանքի ձախ ափին, մարզկենտրոնից՝ 31 կմ հս-արմ., ծովի մակերևույթից՝ 1850 մ բարձրության վրա: **Ն.Ա.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 55, 1926-ին՝ 71, 1939-ին՝ 108, 1959-ին՝ 306, 1970-ին՝ 467, 1979-ին՝ 422, 2001-ին՝ 53, 2004-ին՝ 47 բնակիչ: Բը-

նակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Պահպանվել են եկեղեցու ավերակներ, գերեզմանոց և Սանջեր գյուղատեղիի հետքեր (**Փայահան**):

**ՆՈՐ ԱՐԹԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 68 կմ հս-արմ., ծովի մակերևույթից՝ 1550 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 644, 1926-ին՝ 795, 1939-ին՝ 993, 1959-ին՝ 866, 1970-ին՝ 590, 1979-ին՝ 560, 2001-ին՝ 562, 2004-ին՝ 578 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից և Կարինի Կան գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղում կա 1898թ. եկեղեցի: Գյուղից 2 կմ հս-արմ. գտնվում է 17-18դդ. "Գեղ" գյուղատեղին:

**ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 8 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 885 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1923թ. Պոլսից և այլ տեղերից եկած հայրենադարձներ կողմից: 1926թ. ուներ 188, 1939-ին՝ 594, 1959-ին՝ 1027, 1979-ին՝ 1379, 2001-ին՝ 1703, 2004-ին՝ 1936 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

**ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 14 կմ հվ-արմ.: 1897թ. ուներ 413, 1926-ին՝ 654, 1939-ին՝ 698, 1959-ին՝ 1181, 1970-ին՝ 1462, 1979-ին՝ 1361, 2001-ին՝ 1581, 2004-ին՝ 1840 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կողբից, Սասունից և Սուրմալուից: Բը-նակչությունը զբաղվում է այգեգործությամբ, դաշտավարությամբ, թըռչ-նաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ:

**ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ**- գյուղ Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 38 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1982թ.: 04.12. 1995թ. դարձել է գյուղ և մտել Կոտայքի մարզի մեջ: Այստեղ էր զըտ-նըվում ԳԱ կիրառական կենդանաբանության կենտրոնը, որը զբաղվում էր վայրի կենդանիների բուծմամբ: 1989թ. ուներ 396, 2001-ին՝ 1038, 2004-ին՝ 1120 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, դաշտավարությամբ և պտղաբուծությամբ:

**ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ**- քաղաք Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գավառ**:

**ՆՈՐ ԳԵՂԻ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի բարձրադիր աջափնյակում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1330 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 34 կմ հվ-արմ.: **Ն.Գ.** է վերանվանվել 08.07. 1962թ.: 1897թ. ուներ 630, 1926-ին՝ 85, 1939-ին՝ 256, 1970-ին՝ 2018, 1979-ին՝ 2496, 1989-ին՝ 4753, 2001-ին՝ 5184, 2004-ին՝ 6162 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և թռչնաբուծությամբ: Պահպանվել է սբ. Գևորգ եկեղեցին (**Ճաթղըռան**, **Բազմավան**):

**ՆՈՐ ԳՅՈՒՂ**- գյուղ Կոտայքի մարզում, Գետառ գետի աջափնյակում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1430 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 39 կմ հվ-արմ.: **Ն.Գ.** է վերանվանվել 04.04.1946թ.: 1897թ. ուներ 709, 1926-ին՝ 768, 1939-ին՝ 686, 1959-ին՝ 610, 1970-ին՝ 727, 1979-ին՝ 948, 1989-ին՝ 1279, 2001-ին՝ 1560, 2004-ին՝ 1853 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ, ծխախոտագործությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ:

Գյուղում կա 1886թ. սբ. Աստվածածին (սբ.Վարդան) եկեղեցի (**Դաշտավանք**, **Նորաշեն**, **Թազագյուղ**):

**ՆՈՐ ԵԴԵՍԻԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 25 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1070 մ: Հիմնադրվել է 1975թ., իսկ 1978թ. վերանվանվել է **Ն.Ե.**: 1981թ. ուներ 165, 1982-ին՝ 260, 2001-ին՝ 982, 2004-ին՝ 1017 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**№ 3 և № 4 սովխոզներին կից**):

**ՆՈՐ ԵՐԶՆԿԱ**- գյուղ Կոտայքի մարզում, Քասաղ գետի ձախ ափին, Երևան-Եղվարդ ավտոճանապարհի ձախ կողմում: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 1200 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 45 կմ հվ-արմ.: **Ն.Ե.** է վերանվանվել 25.11.1966թ.: 1970թ. ուներ 524, 1979-ին՝ 1154, 2001-ին՝ 1627, 2004-ին՝ 1985 բնակիչ: Բնակիչները եկել են Ախալքալաքից, Ապարանից և Մարտունուց: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղից հս-արմ. կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոց-բնակատեղի (**№ 41 սովխոզին կից**):

**ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1460 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ արմ.: 08.08.1991թ. վերանվանվել է **Ն.Խ.**: 1831թ. ուներ 54, 1873-ին՝ 539, 1897-ին՝ 763, 1922-ին՝ 840, 1926-ին՝ 863, 1931-ին՝ 986, 1939-ին՝ 1356, 1959-ին՝ 1324, 1970-ին՝ 1826, 1979-ին՝ 1726, 2001-ին՝ 635, 2004-ին՝ 690 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ (**Մարալ**):

**ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 900 մ: 1980թ. ուներ 4097, 2001-ին՝ 6186, 2004-ին՝ 5641 բնակիչ: Այն 1929թ. հիմնել են խարբերդցիները: 1965թ. վերանվանվել է **Ն.Խ.**: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ (**Խարբերդ**, **Նոր Կյանք**):

**ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԱՅԳԵՊՏՂԱԲՈւԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈւԹՅԱՆԸ ԿԻՑ**-նախկինում ավան Արարատի մարզում, տե՛ս **Նոր Կյուրին**:

**ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 910 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 16 կմ հվ-արմ.: Հիմնադրվել է 1949թ.: **Ն.Կ.** է վերանվանվել 14.01. 1969թ.: 1970թ. ուներ 731, 1981-ին՝ 1168, 2001-ին՝ 1318, 2004-ին՝ 1400 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ (**“Խորդենի” սովխոզին կից**, **Եթերայուղային կոմբինատին կից**):

**ՆՈՐ ԿՅԱՆՔ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Նոր Խարբերդ**:

**ՆՈՐ ԿՅԱՆՔ**- գյուղ Արարատի մարզում, մերձարաքսյան հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 840 մ: Գյուղը հիմնադրվել է 1946թ.: 1959թ. ուներ 957, 1970-ին՝ 1636, 1979-ին՝ 1737, 1989-ին՝ 2278, 2001-ին՝ 2516, 2004-ին՝ 2500 բնակիչ որոնց հիմնական մասը եկել է Իրանի Խոյ և Սալմաստ գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է

այգեգործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ:

**ՆՈՐ ԿՅԱՆՔ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի ձախ ափին: Մարզկենտրոնից 16 կմ հվ-արլ., ծովի մակերևու0յթից 1650 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 271, 1897-ին՝ 1131, 1926-ին՝ 1136, 1939-ին՝ 1174, 1959-ին՝ 1138, 1970-ին՝ 1370, 1979-ին՝ 1246, 1989-ին՝ 1690, 2001-ին՝ 1464, 2004-ին՝ 1433 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են Կարսից և Խնուսից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի, շաքարի ճակնդեղի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում գտնվում են սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (6-7դդ.), "Թուխ Մանուկ" մատուռը (10-12դդ.), "Անտոնենց" (մ.թ.ա. 1-ին հզմ.) և 8դ. "Տապան կոտրուկի արտեր" գյուղատեղիները:

**ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 870 մ: 13.03. 1992թ. վերանվանվել է **Ն.Կ.**: 2001թ. ուներ 967, 2004-ին՝ 1000 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ (**Նոր Խարբերդի այգեպտղաբուծական տնտեսությանը կից**):

**ՆՈՐ ՀԱՃՆ**- քաղաք Կոտայքի մարզում, Հրազդան գետի աջափնյակում: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1330 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 37 կմ հվ-արմ.: Հիմնադրվել է 26.02.1953թ., որպես Արզնի ՀԷԿ-ին կից բանավան: Քաղաքատիպ ավան է դարձել 04.11.1958թ.: 04.12. 1995թ. դարձել է քաղաք: 1959թ. ուներ 1406, 1975-ին՝ 5671, 1989-ին՝ 11091, 1991-ին՝ 11300, 2001-ին՝ 10168, 2004-ին՝ 10100 բնակիչ: Այստեղ է գտնվում թանկարժեք քարերի մշակման գործարանը: Արզնիի կիրճի վրա կառուցված է երկհարկանի կամուրջ, որի վրայով անցնում է Մասիս-Նուռնուս երկաթուղին և ավտոխճուղին (**"Արզնի" ՀԷԿ-ին կից**):

**ՆՈՐ ՀԱՂԱՋՈՒՄ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Աչաջուր**:

**ՆՈՐ ՈՒՂԻ**- գյուղ Արարատի մարզում, Ուրծի լեռների ստորոտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 875 մ: Գյուղը հիմնադրվել է 1970-ական թթ., իսկ 04.12. 1995թ. վերանվանվել է **Ն.Ու.**: 1970թ. ուներ 423, 1989-ին՝ 607, 2001-ին՝ 782, 2004-ին՝ 800 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է տնկիների մշակմամբ և այգեգործությամբ (**Գինու գործարանին կից**):

**ՆՈՐԱԲԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սոթքի ճանապարհի աջ կողմում, մարզկենտրոնից 86 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: 03.04.1991թ. վերանվանվել է **Ն.**: 1889թ. ուներ 447, 1926-ին՝ 374, 1939-ին՝ 562, 1959-ին՝ 746, 1970-ին՝ 1130, 1979-ին՝ 1407, 2001-ին՝ 345, 2004-ին՝ 278 բնակիչ, որոնց մի մասը եկել են Ադրբեջանի Քարհատ (Դաշքեսան) ք-ից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ, ծխախոտագործությամբ և թռչնաբուծությամբ: Գյուղում պահպանվել է հայկական հին գերեզմանոց (12-18դդ.), 1,5 կմ արմ. կա 17-18դդ. Արքանվեր գյուղատեղի (**Ազիզլու**):

**ՆՈՐԱԲԱՑ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 855 մ: Գյուղը հիմնադրվել է 1897թ.:

1897թ. ուներ 27, 1926-ին՝ 194, 1939-ին՝ 446, 1970-ին՝ 1469, 1979-ին՝ 1590, 1989-ին՝ 1881, 2001-ին՝ 2193, 2004-ին՝ 2200 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Այստեղ է գտնվում նոր քարեդարի բնակատեղի՝ "Հին Նորաբաց" (մ.թ. ա. 5-րդ-4-րդ հզմ.):

**ՆՈՐԱԳԵՂ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Այնթապ**:

**ՆՈՐԱԳՅՈՒՂ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ծովասար**:

**ՆՈՐԱԴՎԱԾ ԳՅՈՒՂ**- գյուղ Գեղարքու-նիքի մարզում, տե՛ս **Նորատուս**:

**ՆՈՐԱԿԵՐՏ**- գյուղ Արմավիրի մար-զում, մարզկենտրոնից 38 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 940 մ բարձրու-թյան վրա: Հիմնադրվել է 1946թ.: 1959թ. ուներ 563, 1970-ին՝ 1613, 1979-ին՝ 2030, 1989-ին՝ 2765, 2001-ին՝ 2645, 2004-ին՝ 3120 բնակիչ: Բը-նակ-չությունը զբաղվում է անասնապա-հությամբ, այգեգործությամբ և պտղա-բուծությամբ:

**ՆՈՐԱԿԵՐՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճից արլ., մարզ-կենտրոնից 94 կմ հվ-արլ.: Բնակավայ-րը գտնվում է ծովի մակերևույթից 1930 մ բարձրության վրա: Գյուղը հիմ-նադրել են 1927թ. Արմ. Հայաստանի Վանի գավառի Սեղ գյուղից գաղթած 12 ընտանիքներ: 1939թ. ուներ 747, 1959-ին՝ 851, 1970-ին՝ 948, 1979-ին՝ 794, 1989-ին՝ 729, 2001-ին՝ 867, 2004-ին՝ 947 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի, կար-տոֆիլի մշակությամբ և անասնա-պահությամբ:

**ՆՈՐԱՄԱՐԳ**- գյուղ Արարատի մար-զում: Հեռավորությունը մարզկենտրո-նից՝ 12 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 827 մ: Գյուղը հիմնադրվել է 1989թ. Ադրբեջանից բռնագաղթված հայերի կողմից, իսկ 03.04.1991թ. այն վերանվանվել է **Ն.**: 1989թ. ուներ 2784, 2001-ին՝ 2003, 2004թ.-2000 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և այգեգործությամբ (**Կալինինի անվան**):

**ՆՈՐԱՄՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում, Լո-ռիգետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1710 մ, հեռավորու-թյունը Մեղվահովտից՝ 2 կմ հս-արմ.: 1991թ. վերանվանվել է **Ն.**: 1922թ. ուներ 112, 1939-ին՝ 127, 1959-ին՝ 192, 1970-ին՝ 281, 1979-ին՝ 240, 2001-ին՝ 66, 2004-ին՝ 57 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ և դաշտավարությամբ: Գյուղի շրջակայքում կան գյուղատեղիներ, ավերված մատուռ և ամրոց (**Ղա-րաղալա**):

**ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մար-զում, Ապարանի տարածաշրջանում, տե՛ս **Շողակն**:

**ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մար-զում, Արագածի տարածաշրջանում, Շարայի լեռան լանջին: Հեռավորու-թյունը մարզկենտրոնից՝ 61 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերե-վույթից՝ 1950 մ: 1831թ. ուներ 162, 1897-ին՝ 1037, 1926-ին՝ 1336, 1939-ին՝ 1182, 1959-ին՝ 838, 1970-ին՝ 929, 1979-ին՝ 924, 1989-ին՝ 1198, 2001-ին՝ 1141, 2004-ին՝ 1154 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլ-տուրաների մշակությամբ: Գյուղից 5 կմ հս-արլ. գտնվում է սբ. Հովհաննես եկեղեցին (16-17դդ.), 4 կմ հս-արլ., Շարայի լեռան գագաթին՝ ժայռափոր մատուռը (14-20դդ.):

**ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 910 մ: Գյուղը հիմ-

նադրվել է 1873թ.: 1873թ. ուներ 366, 1897-ին՝ 564, 1926-ին՝ 694, 1939-ին՝ 1259, 1959-ին՝ 2255, 1970-ին՝ 2495, 1979-ին՝ 2694, 1989-ին՝ 3309, 2001-ին՝ 3265, 2004-ին՝ 3300 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտ և սբ. Հովհաննես եկեղեցի (19դ.) (**Վերին Նորաշեն**):

**ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հս-արմ. ափամերձ շրջանում, մարզկենտրոնից 20 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա: 1831թ.ուներ 28, 1897-ին՝ 422, 1926-ին՝ 269, 1939-ին՝ 428, 1959-ին՝ 308, 1970-ին՝ 331, 1979-ին՝ 324, 1989-ին՝ 367, 2001-ին՝ 460, 2004-ին՝ 460 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: **Ն.** արլ. մասում է գտնվում Խաչեր գյուղատեղին (9-15դդ.), 7 կմ հվ-արլ.՝ "Ելից" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) իսկ 1,5 կմ հս-արմ.՝ "Խաչեր" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ., 13-14դդ.) ամրոցները: Գյուղի արմ. եզրին կան մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Արեգնաբերդ" ամրոցը, դամբարանադաշտ, խաչքարեր:

**ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1575 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 51 կմ հս-արմ.: 1873թ. ուներ 365, 1897-ին՝ 508, 1926-ին՝ 862, 1939-ին՝ 1301, 1959-ին՝ 1803, 1970-ին՝ 1979, 1979-ին՝ 2014, 1989-ին՝ 2014, 2001-ին՝ 1763, 2004-ին՝ 1426 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղից 5 կմ հվ. գըտ-նըվում է մ.թ.ա. 5-րդ-6-րդ դդ. ամրոց, որն ունեցել է աշտարակներ (**Բոզդանովկա**):

**ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Նոր Գյուղ**:

**ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Տավուշի մարզում, Մռսեսգետի ձախ ափին, մարզկենտրոնից 60 կմ արլ., ծովի մակերևույթից 1240 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 147, 1897-ին՝ 615, 1926-ին՝ 1174, 1939-ին՝ 1490, 1959-ին՝ 1743, 1970-ին՝ 2196, 1979-ին՝ 2002, 1989-ին՝ 1760, 2001-ին՝ 1792, 2004-ին՝ 1840 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղի հվ. մասում գտնվում են մ.թ.ա. 2-րդ հզմ. "Պիլուր պար", Ջորաբերդ և "Սև լեռ" ամրոցները, իսկ 1 կմ արմ.՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Ահազնի" ամրոցը:

**ՆՈՐԱՇԵՆԻԿ**- գյուղ Սյունիքի մարզում, Աճանան գետի հովտում, մարզկենտրոնից 18 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1080 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 97, 1922-ին՝ 387, 1959-ին՝ 206, 1970-ին՝ 257, 1979-ին՝ 203, 1989-ին՝ 151, 2001-ին՝ 158, 2004-ին՝ 101 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա 17դ. եկեղեցի, դեպի արլ., հին գյուղատեղիում, կա ևս մի եկեղեցի, որը կիսականգուն է:

**ՆՈՐԱՊԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 1 կմ հվ.: 1981թ. ուներ 1913, 2001-ին՝ 2780, 2004-ին՝ 3250 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և այգեգործությամբ:

**ՆՈՐԱՎԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 2 կմ հս., ծովի մակերևույթից 870 մ բարձրության

վրա: 1959թ. ուներ 286, 1970-ին՝ 559, 1981-ին՝ 653, 2001-ին՝ 962, 2004-ին՝ 1700 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

**ՆՈՐԱՎԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի ձախ կողմում: Մարզկենտրոնից 93 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1929թ., նույն շրջանի գյուղերից եկածների հաշվին: 1931թ. ուներ 338, 1939-ին՝ 411, 1959-ին՝ 669, 1970-ին՝ 538, 1979-ին՝ 355, 1989-ին՝ 405, 2001-ին՝ 517, 2004-ին՝ 527 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

**ՆՈՐԱՏՈՒՆՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Նորատուս**:

**ՆՈՐԱՏՈՒՍ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գավառագետի ստորին հոսանքի աջափնյակում, մարզկենտրոնից 4 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1920 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 605, 1897-ին՝ 2726, 1926-ին՝ 2605, 1939-ին՝ 3425, 1959-ին՝ 3649, 1970-ին՝ 4289, 1979-ին՝ 4605, 1989-ին՝ 5222, 2001-ին՝ 5671, 2004-ին՝ 6730 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է ծխախոտի, հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի մշակությամբ: Այստեղ կան բազմաթիվ հուշարձաններ՝ գյուղի կենտրոնում սբ. Աստվածածին (9դ.), իսկ գյուղից հվ. սբ. Գրիգոր Լուսավորիչ (9դ.) եկեղեցիները, 2 կմ արլ. “Աղելիճ” վանքը (13-17դդ.), “Հերի դար” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.): Գյուղից 2 կմ արմ. գտնվում են Յոթ Աղբյուր գյուղատեղին (7-17դդ.), համանուն ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.) և 13-14դդ. եկեղեցին: Հվ. մասում է Նորատուսի մեծ գերեզմանոցը (9-17դդ.), որտեղ պահպանվել են հին կոթողներ, հուշասյուների բեկորներ, 9-18դդ. բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր և դամբարաններ (**Նորադվաց գյուղ**, **Նորատունք**):

**ՆՈՐԻՆՈՒՍ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Նուռնուս**:

**ՆՈՐՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյանի ձախ ափին, Բագրավանից 7 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 288, 1926-ին՝ 303, 1939-ին՝ 399, 1959-ին՝ 235, 1970-ին՝ 135, 1979-ին՝ 33 բնակիչ: Գյուղը հիմնել են 1894թ. Շիրակավանից եկածները, 04.07.2006թ. այն վերանվանվել է **Ն.**: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի դիմաց, Ախուրյանի աջ ափին, փռված են Անիի ավերակները (**Խարկով**):

**ՆՌՆԱՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Արաքսի ձախափնյա մասում, Նռնաձոր գետի ստորին հոսանքի աջ ափին: Մարզկենտրոնից 99 կմ հվ., ծովի մակերևույթից 625 մ բարձրության վրա: **Ն.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 291, 1897-ին՝ 952, 1926-ին՝ 494, 1939-ին՝ 618, 1959-ին՝ 761, 1970-ին՝ 1277, 1979-ին՝ 1539, 1989-ին՝ 1344, 2001-ին՝ 152, 2004-ին՝ 106 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղի շրջակայքում կան մի քանի գյուղատեղիներ (**Նյուվադի**):

**ՆՈՒՌՆՈՒՍ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի ձախ բարձրադիր ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 20 կմ հվ-արմ.: 1873թ. ուներ 372, 1897-ին՝ 550, 1926-ին՝ 234, 1939-ին՝ 461, 1959-ին՝ 361,

1970-ին՝ 418, 1979-ին՝ 369, 1989-ին՝ 412, 2001-ին՝ 572, 2004-ին՝ 561 բնակիչ: Ունի դիատոմիտի և բազալտի պաշարներ: Բնակչությունը զբ-բաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղում կա 13դ. եկեղեցի, իսկ գյուղի մոտ, Հրազդանի ափին, նշմարվում են քարեդարյան քարայրեր (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) (**Նորինուս**):

# Շ

**ՇԱԲԱԴԻՆ** - գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Եղեգ**:

**ՇԱՀԱՊ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Մայակովսկի**:

**ՇԱՀՈւՄՅԱՆ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 2-3 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 830 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 253, 1897-ին՝ 1979, 1926-ին՝ 1804, 1939-ին՝ 2147, 1959-ին՝ 2886, 1970-ին՝ 3323, 1979-ին՝ 3539, 1989-ին՝ 4131, 2001-ին՝ 4162, 2004-ին՝ 4200 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյ գավառից: Գյուղում կա 1887թ.՝ սբ. Աստվածածին եկեղեցի, իսկ 1 կմ հվ-արմ.՝ 19-20դդ. սբ. Հակոբ մատուռ:

**ՇԱՀՈւՄՅԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, Վաղարշապատ-Աշտարակ ճանապարհին: Բընակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 940 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 28 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 120, 1897-ին՝ 297, 1926-ին՝ 168, 1939-ին՝ 291, 1959-ին՝ 509, 1970-ին՝ 618, 1979-ին՝ 693, 1989-ին՝ 956, 2001-ին՝ 1119, 2004-ին՝ 1355 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Խոյից, Սալմաստից և Արմ. Հայաստանի զանազան գյուղերից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: **Շ**-ում կա ավերված եկեղեցի (հավանաբար 19դ.) (**Խաչի-գյուղ**):

**ՇԱՀՈւՄՅԱՆ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 1 կմ հվ-արլ.: 1989թ. ուներ 1441, 2001-ին՝ 2383, 2004-ին՝ 2759 բնակիչ, որոնց մեծ մասը կազմում են Բաքվից, Սումգայիթից, Շամքորից, Գանձակից, Մարդակերտից և Արծվաշենից բռնագաղթված հայերը: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ (**Շահումյանի անվան սովխոզին կից**):

**ՇԱՀՈւՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Լոռու մարզում, տե՛ս **Շահումյան**:

**ՇԱՀՈւՄՅԱՆԻ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԿԻՑ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, մարզկենտրոնից 29 կմ հսարլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 950 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1950-ական թթ. սկզբներին: 1959թ. ուներ 246, 1970-ին՝ 581, 1979-ին՝ 676, 2001-ին՝ 951, 2004-ին՝ 1175 բնակիչ, որոնք հիմնականում աշխատում են թռչնաֆաբրիկայում (**Թռչնաբուծական ֆաբրիկային կից**):

**ՇԱՂԱՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Շաղատ գետի ստորին հոսանքի շրջանում, Որոտանի աջ ափին, մարզկենտրոնից 115 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1740 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 243, 1897-ին՝ 1117,

1926-ին՝ 1110, 1939-ին՝ 1180, 1959-ին՝ 864, 1979-ին՝ 941, 1989-ին՝ 931, 2001-ին՝ 1049, 2004-ին՝ 1144 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Մարաղայից, Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղն ունի նոր շրջանի սբ. Գրիգոր , սբ. Գրիգոր Զորավոր եկեղեցիներ: Շրջակայքում գտնվում են Փուլ, “Խոռնտուս”, Շոքար, գյուղատեղիները և “Քոչաբերդ” ավերակ բերդը:

**ՇԱՂԱՓ**- գյուղ Արարատի մարզում, Շաղափի սելավի ընդարձակ ու գեղատեսիլ վայրում, շրջապատված ոչ բարձր ու մեղմաթեք կանաչապատ բլուրներով: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 35 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1300 մ: Գյուղը հիմնադրվել է 1873թ.: 1873թ. ուներ 437, 1897-ին՝ 853, 1926-ին՝ 253, 1939-ին՝ 493, 1959-ին՝ 657, 1970-ին՝ 725, 1979-ին՝ 681, 1980-ին՝ 750, 2001-ին՝ 899, 2004-ին՝ 900 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Վանի և Շատախի գավառներից: Բնակչությունը զբաղվում է ծխախոտի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 4,5 կմ հվ-արմ. գտնվում են Մարգաձոր գյուղատեղին (9-14դդ.) և համանուն գերեզմանոցը (19-20դդ.):

**ՇԱՂԻԿ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճի հս-արմ. մասում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 41 կմ հս-արմ.: **Շ.** է վերանվանվել 03. 04.1991թ.: 1886թ. ուներ 185, 1897-ին՝ 302, 1959-ին՝ 145, 1970-ին՝ 217, 1979-ին՝ 239, 1989-ին՝ 180, 2001-ին՝ 85, 2004-ին՝ 106 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և երկրագործությամբ: Գյուղում կա “Ոսկե ժամ” եկեղեցի, իսկ արմ. կողմում է գտնվում Հենաց բերդը (**Ղարաբուլաղ**):

**ՇԱՄԲ**- գյուղ Սյունիքի մարզում, Դարբասից 8 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1375 մ բարձրության վրա: Գյուղը հիշատակվում է Բագրատունի Աշոտ Գ. թագավորի 966թ. Մաղարդավանքի, իսկ հետագայում Որոտնավանքի 1315թ. արձանագրությունների մեջ: 1908թ. ուներ 495, 1931-ին՝ 40, 2001-ին՝ 443, 2004-ին՝ 485 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և գյուղատնտեսությամբ: Այստեղ գտնվել են չորրորդական շրջանի կենդանիների բրածո մնացորդներ:

**ՇԱՄԻՐԱՄ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 28 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1775 մ: 1873թ. ուներ 159, 1897-ին՝ 362, 1926-ին՝ 583, 1939-ին՝ 723, 1959-ին՝ 420, 1970-ին՝ 747, 1979-ին՝ 1017, 1989-ին՝ 1316, 2001-ին՝ 945, 2004-ին՝ 1500 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի զանազան գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: **Շ.** շրջակայքում է պահպանվել են մ.թ.ա. 2-րդ հզմ. Շամիրամ քաղաքատեղին, իր դամբարանադաշտով:

**ՇԱՄԼՈՒՂ**- քաղաք Լոռու մարզում, Կուրի ավազանի Հովանաձոր ենթավտակի հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1175 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 69 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 91, 1897-ին՝ 862, 1926-ին՝ 836, 1939-ին՝ 1874, 1959-ին՝ 2864, 1964-ին՝ 3127, 1979-ին՝ 4500, 1989-ին՝ 1523, 2001-ին՝ 882, 2004-ին՝

800 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և երկրագործությամբ: Ք-ում է գտնվում հունական սբ. Գեորգի մատուռը:

**ՇԱՄՌՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում, Գուգարաց լեռների արմ. մասում, Մարց գետի աջափնյա լեռնակողին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 54 կմ հս-արլ.: 1873թ. ուներ 226, 1897-ին՝ 221, 1926-ին՝ 425, 1939-ին՝ 571, 1959-ին՝ 628, 1970-ին՝ 523, 1979-ին՝ 376, 1989-ին՝ 448, 2001-ին՝ 334, 2004-ին՝ 302 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղի մեջ և նրա շրջակայքում պահպանվել են՝ ամրոց (18դ.), եկեղեցի (17դ.), գյուղատեղի (13-17դդ.) և սբ. Սարգիս մատուռ (17դ.):

**ՇԱՎԱՌՈՒՏ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Հուշակերտ**:

**ՇԱՎԱՐՇԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Կոթի**:

**ՇԱՏԻՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի աջակողմյան Եղեգիս վտակի ափին, մարզկենտրոնից մոտ 13 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1270 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 523, 1926-ին՝ 673, 1939-ին՝ 974, 1959-ին՝ 1020, 1970-ին՝ 1460, 1979-ին՝ 1596, 1989-ին՝ 1677, 2001-ին՝ 1754, 2004-ին՝ 1889 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ և ծխախոտի մշակությամբ: Գյուղից մոտ 4 կմ արլ., Եղեգիս գետի ձախափնյա լանջին գտնվում է Շատիվանքի համալիրը (10-17դդ.), 2 կմ հվ.՝ "Անգեղի" (Նահատակի) մատուռն է, "Աղվան" եկեղեցին (11-13դդ.), ինչպես նաև "Ճապուկ" (12-13դդ.) և "Ծատուրի" (1666թ.) կամուրջները: Գյուղում կան 17դ. զանգակատուն,10-17դդ. խաչքարեր, 5դ. "Բերդանիստ" ամրոցը, սբ. Սիոնի եկեղեցին (վերակառուցված 1665թ.), Հոստուն գյուղատեղիում՝ 10դ. եկեղեցի:

**ՇԱՏՋՐԵՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մասրիկի դաշտում, մարզկենտրոնից 82 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2025 մ բարձրության վրա: **Շ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1831թ. ուներ 117, 1897-ին՝ 457, 1926-ին՝ 355, 1939-ին՝ 629, 1959-ին՝ 638, 1979-ին՝ 1440, 1989-ին՝ 475, 2001-ին՝ 568, 2004-ին՝ 402 բնակիչ: 1988-89թթ. այստեղ բնակություն են հաստատել Ադրբեջանի Կասում- Իսմայիլովի շրջանից բռնագաղթված հայերը: Բն-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների, կարտոֆիլի և հացահատիկի մշակությամբ: Գյուղում կան 15-16դդ. եկեղեցու ավերակներ, խաչքարեր (10-11դդ.), իսկ արլ. մասում՝ 17-18դդ. գյուղատեղի (**Ղոշաբուլաղ**):

**ՇԱՏՎԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 83 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: 03.04.1991թ. վերանվանվել է **Շ.**: 1873թ. ուներ 636, 1897-ին՝ 877, 1926-ին՝ 609, 1939-ին՝ 873, 1959-ին՝ 976, 1970-ին՝ 1577, 1979-ին՝ 1855, 1989-ին՝ 275, 2001-ին՝ 577, 2004-ին՝ 701 բնակիչ, որոնց մի մասը 1988-89թթ. Ադրբեջանի Շամքոր ք-ից բռո-նագաղթված հայեր են: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, ծխախոտի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղում պահպանվել են 15-16դդ. խաչքարերով հայկական գերեզմաններ և եկեղեցու ավերակներ (**Նարիմանլու**):

**ՇԱՔԻ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 103 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1710 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 48, 1897-ին՝ 1191, 1926-ին՝ 792, 1939-ին՝ 1159, 1959-ին՝ 1385, 1970-ին՝ 1704, 1979-ին՝ 1698, 1989-ին՝ 1449, 2001-ին՝ 1390, 2004-ին՝ 1598 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում բխում են հորդառատ ու սառնորակ աղբյուրներ, որոնք կազմում են Շաքի գետակը, որի գետաբերանի մոտ գտնվում է Շաքիի գեղատեսիլ ջրվեժը: Ունի ընտիր բազալտի հանքեր: Գյուղի մոտ, Շաքի գետի վրա, գըտ-նըվում է Շաքիի ՀԷԿ-ը (1937թ.): Պահպանվել են Շաքիի վանքի ավերակները, խարխուլ մատուռ և խաչքար: Շրջակայքում են գտնվում Շամախիի բերդը՝ համանուն գյուղատեղիով:

**ՇԱՖԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Վաննան**:

**ՇԵՆԱԹԱՂ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջ վտակ Շենաթաղ գետի ափին, մարզկենտրոնից 112 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 78, 1897-ին՝ 672, 1926-ին՝ 628, 1931-ին՝ 647, 1939-ին՝ 564, 1970-ին՝ 467, 1979-ին՝ 368, 2001-ին՝ 390, 2004-ին՝ 400 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Խոյից, Սալմաստից, Նախիջևանից և Արցախից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում սբ. Մարտիրոս (1860թ.), սբ. Աստվածածին, սբ. Սարգիս եկեղեցիները: Շրջակայքում կան հանքային աղբյուրներ, պղնձի, երկաթի և մոլիբդենի երևակումներ, բազմաթիվ գյուղատեղիներ՝ Ավահիզ, Անապատ, Մրոց, անուններով (**Լեռնաշեն**):

**ՇԵՆԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արլ. ստորոտին, Գեղարոտ գետի հովտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1875 մ: 1831թ. ուներ 397, 1897-ին՝ 725, 1926-ին՝ 778, 1939-ին՝ 871, 1959-ին՝ 1028, 1970-ին՝ 1095, 1979-ին՝ 1156, 1989-ին՝ 1716, 2001-ին՝ 1699, 2004-ին՝ 1753 բնակիչ, որոնց մի մասը գաղթել է Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում է գտնվում 18դ. եկեղեցի (**Բլխեր**, **Խոտավետ**):

**ՇԵՆԱՎԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 890 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 17 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 100, 1897-ին՝ 721, 1926-ին՝ 943, 1939-ին՝ 968, 1959-ին՝ 1466, 1970-ին՝ 1564, 1989-ին՝ 2156, 2001-ին՝ 1768, 2004-ին՝ 1624 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Սուրմալուից, Թալինից և այլ տեղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ:

**ՇԵՆԱՎԱՆ**- գյուղ Լոռու մարզում, Շենավան գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 41, 1897-ին՝ 220, 1926-ին՝ 212, 1939-ին՝ 444, 1959-ին՝ 513, 1970-ին՝ 601, 1979-ին՝ 571, 1989-ին՝ 193, 2001-ին՝ 475, 2004-ին՝ 587 բնակիչ, որոնց մի մասը եկել են Բաքու և Մինգեչաուր քաղաքներից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, բան-

ջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղն ունի եկեղեցի (5-19դդ.): Գյուղի հս. մասում գտնվում է "Կարմիր ավերակներ" գյուղատեղին (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.):

**ՇԵՆԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 27 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1125 մ բարձրության վրա: **Շ.** է վերանվանվել 25.01. 1978թ.: 1981թ. ուներ 400, 1989-ին՝ 854, 2001-ին՝ 852, 2004-ին՝ 826 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի շրջակայքում կան մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտ, մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. բնակատեղի և 3-5դդ. ամրոց (**Վիտամինային խոտալյուրի սովխոզին կից**):

**ՇԵՆԿԱՆԻ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հս-արլ. ստորոտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 44 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2135 մ: 1873թ. ուներ 193, 1897-ին՝ 289, 1926-ին՝ 346, 1939-ին՝ 351, 1959-ին՝ 141, 1970-ին՝ 170, 1979-ին՝ 210, 1989-ին՝ 207, 2001-ին՝ 192, 2004-ին՝ 240 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ:

**ՇԻԴԼՈւ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Եղեգնավան**:

**ՇԻԿԱՀՈՂ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրու լեռների արլ. ճյուղերից մեկի լանջին, մարզկենտրոնից 23 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 980 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 254, 1897-ին՝ 703, 1926-ին՝ 909, 1939-ին՝ 870, 1959-ին՝ 516, 1970-ին՝ 475, 1979-ին՝ 329, 1989-ին՝ 262, 2001-ին՝ 272, 2004-ին՝ 211 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Տարածքում պահպանվել են միջնադարյան Բերդքար և Կոտրած խաչ գյուղատեղիները, 17-18դդ. գերեզմաններ, 19դ. կամուրջ, մ.թ.ա. 7-րդ-6-րդ դդ. դամբարաններ, "Խրավանդ" սրբավայրը, իսկ արմ. կողմում կան բերդի ավերակներ:

**ՇԻՆՈւՀԱՅՐ**- գյուղ Սյունիքի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 72 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ: 1831թ. ուներ 244, 1897-ին՝ 1517, 1926-ին՝ 1282, 1939-ին՝ 1343, 1959-ին՝ 1146, 1970-ին՝ 1306, 1979-ին՝ 1896, 1989-ին՝ 2645, 2001-ին՝ 2593, 2004-ին՝ 2590 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:Հին գյուղատեղիում պահպանվել է 18դ. Շնհեր ամրոցի հետքերը, հվ. կողմում՝ գտնվում է Շնհերի սբ. Աստվածածին անապատ համալիրը (1676թ.), իսկ բուն գյուղում գտնվում են սբ. Ստեփանոս եռանավ եկեղեցին (17դ.) և "Խաչեր" գերեզմանատունը (1261թ.) (**Շնհեր**):

**ՇԻՇԿԵՐՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Խուստուփ լեռան լանջին, Ծավ գետի ձախակողմյան Շիշկերտ վտակի ձախ ափին, Ծավ գյուղից 12 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1820 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 82, 1897-ին՝ 334, 1926-ին՝ 586, 1939-ին՝ 598, 1959-ին՝ 636, 1970-ին՝ 341, 1979-ին՝ 336, 1989-ին՝ 262, 2001-ին՝ 342, 2004-ին՝ 213 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Շրջակայքում պահպանվել են 17-18դդ. եկեղեցիներ և 17դ. գյուղատեղիներ:

**ՇԻՇԿԱՅԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գեղամասար**:

**ՇԻՐԱՋԼՈւ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Ոսկետափ**:

**ՇԻՐԱԿ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝

1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հս-արլ.: Գյուղը հիմնադրվել է 18դ. վերջերին՝ Կարսի Ենիքեյ, Ջային Մազրա և Ղարախան գյուղերից եկածների կողմից: 1831թ. ուներ 192, 1897-ին՝ 1125, 1926-ին՝ 1158, 1939-ին՝ 1132, 1959-ին՝ 847, 1970-ին՝ 859, 1979-ին՝ 839, 1989-ին՝ 548, 2001-ին՝ 1081, 2004-ին՝ 1065 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակությամբ, ճակընդեղագործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում են 19դ. սբ. Հակոբ եկեղեցին և 19դ. սբ. Մինաս մատուռը:

**ՇԻՐԱԿԱՄՈւՏ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի ձախափնյակում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26 կմ հս-արլ.: **Շ.** է վերանվանվել 25.01.1978թ.: 1831թ. ուներ 161, 1897-ին՝ 1030, 1926-ին՝ 1545, 1939-ին՝ 1854, 1959-ին՝ 2118, 1970-ին՝ 2531, 1979-ին՝ 2408, 1989-ին՝ 1872, 1993-ին՝ 2628, 2001-ին՝ 2310, 2004-ին՝ 2626 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, ճակնդեղի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են բնակատեղի, դամբարանադաշտ (մ.թ.ա. 3-րդ հզմ.) և Չիչկանավանքը (7դ.) (**Նալբանդ**):

**ՇԻՐԱԿԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 20 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1510 մ բարձրության վրա, Երևան-Գյումրի երկաթուղու ձախ կողմում: Հիմնադրվել է 1976թ. Ախուրյանի ջրամբարի ջրերի տակ մնացած նախկին Շիրակավան գյուղի ապաբնակեցվելուց հետո: 1831թ. ուներ 403, 1897-ին՝ 903, 1926-ին՝ 685, 1939-ին՝ 786, 1959-ին՝ 454, 1970-ին՝ 426, 1979-ին՝ 432, 1989-ին՝ 933, 2001-ին՝ 743, 2004-ին՝ 714 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Այստեղ է գտնվում սբ. Մինաս մատուռը:

**ՇԻՐԱՊԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Փարաքար**:

**ՇԻՐՎԱՆԻՋՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Շվանիձոր**:

**ՇՂԱՐՇԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 46 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: 1831թ. ուներ 19, 1897-ին՝ 338, 1926-ին՝ 213, 1939-ին՝ 386, 1959-ին՝ 504, 1970-ին՝ 506, 1979-ին՝ 498, 1989-ին՝ 448, 2001-ին՝ 536, 2004-ին՝ 568 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մոտկանի գավառակից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Շ**-ի մոտ, բլրի վրա, նշմարվում են հեթանոսական շրջանի ամրոցի հետքեր:

**ՇՆՀԵՐ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Շինուհայր**:

**ՇՆՈՂ**- գյուղ Լոռու մարզում, Գուգարաց լեռների արլ. մասում, Շնող գետի գետաբերանի մոտ, Դեբեդի աջակողմյան սարավանդի վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 725 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 67 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 538, 1897-ին՝ 2205, 1926-ին՝ 2296, 1939-ին՝ 2758, 1959-ին՝ 2586, 1970-ին՝ 3142, 1979-ին՝ 2885, 1989-ին՝ 3328, 2001-ին՝ 3117, 2004-ին՝ 2826 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Այստեղ են պահպանվել հնագույն հանքավայրեր, հին բնակատեղիներ և միջնադարյան գերեզմա-

նոցներ: Գյուղում և նրա շրջակայքում են գտնվում սբ. Սարգիս եկեղեցին (17-19դդ.), սբ. Սարգիս (17-19դդ.), սբ. Խաչ մատուռները և միջնադարյան Կայծոն բերդը:

**ՇՈՂԱԿՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Թեղենյաց լեռների լանջին, Քասաղ գետի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 22 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 2000 մ: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թթ., **Շ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1831թ. ուներ 146, 1897-ին՝ 605, 1926-ին՝ 479, 1939-ին՝ 659, 1959-ին՝ 256, 1970-ին՝ 131, 1979-ին՝ 102, 1989-ին՝ 145, 2001-ին՝ 136, 2004-ին՝ 132 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում է գտնվում 13դ. "Թուխ Մանուկ" և 9-10դդ. սբ. Թադևոս Առաքյալ մատուռները, 5-6դդ. սբ.Աստվածածին եկեղեցին, իսկ 1,5 կմ հս-արլ.՝ 18-19դդ. "Օսկոյի" գյուղատեղին (**Նորաշեն**):

**ՇՈՌՆՈԽՈ**- պատմական գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Շուռնուխ**:

**ՇՈՐԺԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի ափին, մարզկենտրոնից 66 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1930 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 140, 1897-ին՝ 308, 1926-ին՝ 469, 1939-ին՝ 799, 1959-ին՝ 762, 1970-ին՝ 894, 1979-ին՝ 956, 1989-ին՝ 410, 2001-ին՝ 565, 2004-ին՝ 491 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի քրոմիտի պաշարներ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են մ.թ.ա. 1-ին հզմ. բերդի ավերակներ, դամբարաններ (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), եկեղեցիներ (17դ.), մատուռներ և այլ հնություններ:

**ՇՎԱՆԻՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Արաքսի ձախ ափին, մարզկենտրոնից 89 կմ հվ., ծովի մակերևույթից 700 մ բարձրության վրա: Նախկինում գտնվում էր ներկա վայրից մոտ 7 կմ հս-արլ., որտեղից տեղափոխվել է 18դ. առաջին կեսին: **Շ.** է վերանվանվել 1935թ.: 1831թ. ուներ 152, 1897-ին՝ 977, 1926-ին՝ 830, 1939-ին՝ 890, 1959-ին՝ 749, 1970-ին՝ 677, 1979-ին՝ 690, 1989-ին՝ 407, 2004-ին՝ 331 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Ունի 17-18դդ. եկեղեցի, Գոմարանց գյուղատեղի (**Աստվածաձոր**, **Շիրվանիձոր**):

**ՇՐՎԵՆԱՆՑ**- գյուղ Սյունիքի մարզում, Խոտանան գետի ձախափնյա լեռնալանջին, մարզկենտրոնից 22 կմ հս., ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 53, 1897-ին՝ 260, 1926-ին՝ 216, 1939-ին՝ 250, 1959-ին՝ 177, 1970-ին՝ 139, 1989-ին՝ 349, 2001-ին՝ 72, 2004-ին՝ 61 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են 10-17դդ. գյուղատեղիներ և 10-20դդ. եկեղեցիների ավերակներ: Ունի սբ. Սարգիս եկեղեցի:

**ՇՈՒՌՆՈՒԽ**- գյուղ Սյունիքի մարզում, Շուռնուխ գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ: **Շ.** հիմնադրվել է 1930թ. պատմական Շոռնոխո ավերակ գյուղի տեղում: 1897թ. ուներ 84, 1926-ին՝ 101, 1939-ին՝ 351, 1959-ին՝ 363, 1970-ին՝ 363, 1979-ին՝ 324, 2001-ին՝ 148, 2004-ին՝ 197 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ (**Շոռնոխո**):

**ՇՈւՄԱԲԱԴ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Պաղակն**:

# Ո

**ՈԼՈՐՈւՏ**- պատմական բնակավայր Տավուշի մարզում, տե՛ս **Բերդ**:

**ՈՂՋԱԲԵՐԴ**- գյուղ Կոտայքի մարզում, Երևան-Գառնի ավտոխճուղու վրա, քարայրներով հայտնի Ողջաբերդի լեռների լանջին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1700մ բարձրության վրա, մարզկենտրոնից 52 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 73, 1897-ին՝ 265, 1926-ին՝ 370, 1939-ին՝ 593, 1959-ին՝ 571, 1970-ին՝ 717, 1979-ին՝ 766, 1989-ին՝ 860, 2001-ին՝ 957, 2004-ին՝ 1114 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղի հս. կողմում կան մ.թ.ա. 2-րդ հզմ. մեգալիթյան հուշարձաններ (կրոմլեխներ), հվ. կողմում՝ 4-5դդ. գմբեթավոր եկեղեցու ավերակներ:

**ՈՂՋԻ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրիկ գետի հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1630 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հս-արմ.: **Ո.** է վերանվանվել 03.04. 1991թ.: 1886թ. ուներ 551, 1897-ին՝ 747, 1926-ին՝ 799, 1939-ին՝ 1093, 1959-ին՝ 1032, 1970-ին՝ 1412, 1979-ին՝ 1504, 1989-ին՝ 110, 2001-ին՝ 602, 2004-ին՝ 631 բնակիչ: 1989-90 թթ-ից գյուղում ապրում են նաև Ադրբեջանից գաղթած, Ախալքալաքի և Բոգդանովկայի գյուղերից եկած բնակիչներ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի մշակությամբ և պտղաբուծությամբ (**Օղչօղլի**):

**ՈՉԵԹԻ**- պատմական գյուղ Սյունիքի մարզում, Ողջիի աջակողմյան վտակ Գեղի գետի աջ ափին, Նոր Աստղաբերդ գյուղից 6 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: **Ո.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1897թ. ուներ 30, 1926-ին՝ 51, 1939-ին՝ 95, 1959-ին՝ 125, 1970-ին՝ 148, 1979-ին՝ 165 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է կաթնաանասնապահությամբ: Գյուղում պահպանվել են գերեզմանոց և եկեղեցու ավերակներ (**Հաջաթին**):

**ՈՍԿԵԹԱՍ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագածի հվ-արմ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 57 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050 մ: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թթ.: 1831թ. ուներ 95, 1897-ին՝ 261, 1926-ին՝ 343, 1939-ին՝ 541, 1959-ին՝ 571, 1970-ին՝ 595, 1979-ին՝ 590, 1989-ին՝ 422, 2001-ին՝ 526, 2004-ին՝ 592 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ:

**ՈՍԿԵՀԱՍԿ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հվ-արմ.: 1886թ. ուներ 462, 1897-ին՝ 591, 1926-ին՝ 1203, 1939-ին՝ 1923, 1959-ին՝ 2093, 1970-ին՝ 2327, 1979-ին՝ 2362, 1989-ին՝ 2558, 2001-ին՝ 2231, 2004-ին՝ 2652 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի

մշակությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

**ՈՍԿԵՀԱՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ամբերդ գետի ստորին հոսանքի շրջանում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1025 մ: Գյուղը հիմնադրվել է 1829-1830 թթ.: 1831թ. ուներ 51, 1897-ին՝ 463, 1926-ին՝ 281, 1939-ին՝ 388, 1959-ին՝ 549, 1970-ին՝ 668, 1979-ին՝ 761, 1989-ին՝ 892, 2001-ին՝ 995, 2004-ին՝ 1046 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղի արմ. մասում է գտնվում սբ.Սարգիս ամրոցը (17-19դդ.), որը կատարել է նաև եկեղեցու դեր, իսկ 1 կմ հս-արլ.՝ "Ճգնավորի այր" քարայր-կացարանը (12-13դդ.) (**Բաթռինջ**):

**ՈՍԿԵՀԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 28 կմ արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: Հիմնադրրվել է 1930-ական թթ. սկզբներին, իսկ 25.01.1978թ. վերանվանվել է **Ո.**: 1971թ. ուներ մոտ 330 տուն՝ 1800 բնակչով, 1989-ին՝ 2574, 2001-ին՝ 2448, 2004-ին՝ 3120 բնակիչ, որոնք մեծ մասամբ հայրենադարձներ են, ինչպես նաև Ապարանից, Հրազդանից, Գորիսից, Արթիկից և այլ տեղերից եկածներ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ (**№ 4 սովխոզին կից**):

**ՈՍԿԵՊԱՐ**- գյուղ Տավուշի մարզում, Ոսկեպար գետի հովտում, մարզկենտրոնից 31 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 179, 1897-ին՝ 393, 1926-ին՝ 617, 1939-ին՝ 842, 1959-ին՝ 832, 1970-ին՝ 1097, 1979-ին՝ 1189, 1989-ին՝ 1309, 2001-ին՝ 956, 2004-ին՝ 869 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և ծխախոտագործությամբ: Իջևան տանող ճանապարհի եզրին է գտնվում մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Շաքարաբերդ" ամրոցը: Գյուղից 1 կմ հս-արլ. գտնվում է սբ. Աստվածածին եկեղեցին (6-7դդ.), իսկ 3 կմ հվ-արմ.՝ "Ջորակամուրջ" ամրոցը (10-14դդ.):

**ՈՍԿԵՎԱԶ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1040 մ: Գյուղը հիմնադրվել է 1828թ.: 1831թ. ուներ 410, 1897-ին՝ 1429, 1926-ին՝ 1794, 1939-ին՝ 2035, 1959-ին՝ 2818, 1970-ին՝ 3350, 1979-ին՝ 3356, 1989-ին՝ 4062, 2001-ին՝ 4204, 2004-ին՝ 4289 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյի գավառի Ջամալավա գյուղից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ և հատապտուղի մշակությամբ: Գյուղում է գտնվում 7-13դդ. սբ.Հովհաննես եկեղեցին: **Ո**-ից 2 կմ հվ-արմ. գտնվում է "Բադալի ժամ" եկեղեցին, 2,5 կմ հվ.՝ մ.թ.ա. 3-րդ հզմ. "Ճերմակ" քաղաքատեղին, համանուն ամրոցի համալիրը և 18դ. դըր-յակը:

**ՈՍԿԵՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Ոսկեպար լեռան հվ. լանջին, մարզկենտրոնից 33 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 930 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 534, 1897-ին՝ 1041, 1926-ին՝ 1204, 1939-ին՝ 1681, 1959-ին՝ 1186, 1970-ին՝ 1571, 1979-ին՝ 1495, 1989-ին՝ 1621, 2001-ին՝ 1381, 2004-ին՝ 1318 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ,

պտղաբուծությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մեջ է սբ. Գայանե եկեղեցին, 4 կմ արմ.՝ Շեկ աղբյուր, 3 կմ հս.՝ Ոսկեվան, 3 կմ արլ.՝ Խլեզձոր և 5 կմ հս.՝ Սոի գյուղատեղիները:

**ՈՍԿԵՏԱՓ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 840 մ: Գյուղը հիմնադրվել է 1873թ., իսկ 03.04. 1991թ. վերանվանվել է **Ո.**: 1873թ. ուներ 150, 1897-ին՝ 451, 1926-ին՝ 398, 1939-ին՝ 1181, 1959-ին՝ 2161, 1970-ին՝ 3338, 1979-ին՝ 3867, 1989-ին՝ 3826, 2001-ին՝ 4677, 2004-ին՝ 4700 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղից 30 կմ արլ. գտնվում է Պարտիզակ գյուղատեղին (9-14դդ.) (**Շիրազլու**):

**ՈՍՏԱՆ**- գյուղ Արարատի մարզում, այգեպատ հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 835 մ, մարզկենտրոնի հս-արլ. կողմում: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 352, 1897-ին՝ 1270, 1926-ին՝ 1204, 1939-ին՝ 1494, 1959-ին՝ 2388, 1970-ին՝ 2830, 1979-ին՝ 3042, 1989-ին՝ 3087, 2001-ին՝ 3125, 2004-ին՝ 3100, որոնց նախնիների մի մասը գաղթել է Խոյից և Սալմաստից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում է գտնվում 1848թ. կառուցված սբ. Սարգիս եկեղեցին:

**ՈՍՏԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Բագարան**:

**ՈՐԴԿԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Արտաշավան**:

**ՈՐԴՆԱՎ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ջրաշեն**:

**ՈՐՆԱԿ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ակներ**:

**ՈՐՈՏԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Գորիսի տարածաշրջանում, Որոտան գետի ձախ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 58 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1420 մ: 1981թ. ուներ 79, 2001-ին՝ 271, 2004-ին՝ 271 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ և այգեգործությամբ:

**ՈՐՈՏԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Սիսիանի տարածաշրջանում, Որոտան գետի ձախ ափին, մարզկենտրոնից 97 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1420 մ բարձրության վրա: Վերանվանվել է **Ո.** 1968թ.: 1831թ. ուներ 11, 1922-ին՝ 173, 1959-ին՝ 623, 1970-ին՝ 609, 1979-ին՝ 663, 1989-ին՝ 162, 2001-ին՝ 283, 2004-ին՝ 271 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի մոտ են գտնվում գյուղատեղիներ, Մելիք-Թանգու կամուրջը (1856թ.), Որոտնավանք իջևանատունը, իսկ Որոտան գետի աջ ափին, անմատչելի լեռան վրա՝ Որոտնաբերդի (4դ.) ավերակները (**Ուռուտ**, **Որոտն**):

**ՈՐՈՏՆ**- պատմական գյուղ Սյունիքի մարզում, Սիսիանի տարածաշրջանում, տե՛ս **Որոտան**:

# Չ

**ՉԱԽՄԱԽ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Կամխուտ**:
**ՉԱԽՐԼՈւ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Խաչաղբյուր**:
**ՉԱՅԲԱՍԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Արավետ**:
**ՉԱՅՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տես՝ **Դպրաբակ**:
**ՉԱՅՔԵՆԴ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գետիշեն**:
**ՉԱՆԱԽՉԻ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Զանգակատուն**:
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**- քաղաք Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1660 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 12 կմ հվ-արմ.: **Չ.** է վերանվանվել 23.09.1967թ.: 1979-ին ուներ 24590, 1989-ին՝ 32229, 2001-ին՝ 25039, 2004-ին՝ 24800 բնակիչ: Արդյունաբերական կենտրոն է: Քաղաքի շրջակայքում կա քարե դարի աշելյան ժամանակաշրջանի կայան (**Լուսավան**):
**ՉԱՓՆԻ**- գյուղ Սյունիքի մարզում, Շաբաղին գետի վերին հոսանքի ձորում, մարզկենտրոնից 13 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 69, 1897-ին՝ 400, 1929-ին՝ 231, 1939-ին՝ 239, 1959-ին՝ 157, 1970-ին՝ 137, 1979-ին՝ 77, 1989-ին՝ 67, 2001-ին՝ 126, 2004-ին՝ 108 բնակիչ: 1930-ական թ-ից մինչև 1959թ. Զանգեզուրի պղնձի, ապա պղնձամոլիբդենային կոմբինատի օժանդակ տնտեսություն էր: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Գյուղում կա 1912թ. եկեղեցի, իսկ գյուղի մոտ՝ Խորձորի վանքն է:
**ՉԻՆԱՐԻ**- գյուղ Տավուշի մարզում, Աղնջա գետի աջափնյակում, մարզկենտրոնից 78 կմ արլ., ծովի մակերևույթից 750 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 614, 1926-ին՝ 707, 1939-ին՝ 1097, 1959-ին՝ 1464, 1970-ին՝ 1575, 1979-ին՝ 1473, 1989-ին՝ 1467, 2001-ին՝ 1253, 2004-ին՝ 1182 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 2,5 կմ հս-արլ. պահպանվել են Խորանաշատի վանական համալիրը (13դ.), մ.թ.ա. 1-ին հզմ. դամբարաններ և 13դ. գերեզմանոց: **Չ**-ից 1,5 կմ հվ-արմ. գտնվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոց:
**ՉԻՆՉԻՆ**- գյուղ Տավուշի մարզում, Կենաց լեռների լանջին, մարզկենտրոնից 48 կմ հս-արլ., ծովի մակերեվույթից 1290 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 134, 1926-ին՝ 616, 1939-ին՝ 1147, 1959-ին՝ 1028, 1970-ին՝ 1014, 1979-ին՝ 838, 1989-ին՝ 747, 2001-ին՝ 713, 2004-ին՝ 581 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, ծխախոտի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից հվ-արմ. գտնվում է Կապտավանքի համալիրը (1151թ.) և Կալի քար բնակատեղին (13-17դդ.), իսկ 3 կմ հս-արմ.՝ Բրտանոց գյուղատեղին (12-15դդ.):
**ՉԻՉԱԿԲՈւԼԱՂ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Գեղատափ**:
**ՉԻՎԱ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Եղփին գետի աջ ու ձախ ափին, ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 20 կմ արմ.: 1831թ. ուներ 52, 1897-ին՝ 689, 1926-ին՝ 461, 1939-ին՝ 758, 1959-ին՝ 669, 1970-ին՝ 910, 1979-ին՝ 933, 1989-ին՝ 755, 2001-ին՝ 892, 2004-ին՝ 921 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, հացահատիկի, ծխախոտի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա 10դ. եկեղեցի:

**ՉԻՎԻՆԼԻ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Եղնաջուր**:

**ՉԿԱԼՈՎ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջափնյակում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արլ.: 1886թ. ուներ 232, 1897-ին՝ 297, 1926-ին՝ 522, 1939-ին՝ 620, 1959-ին՝ 474, 1970-ին՝ 415, 1979-ին՝ 286, 1989-ին՝ 408, 2001-ին՝ 216, 2004-ին՝ 152 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, գյուղատնտեսությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են խաչքարեր (13-17դդ.) և գյուղատեղիներ (13-19դ.):

**ՉԿԱԼՈՎԿԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 25 կմ հս-արմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1925 մ բարձրության վրա: **Չ.** է վերանվանվել 26.04. 1946թ.: 1831թ. ուներ 45, 1897-ին՝ 204, 1926-ին՝ 377, 1939-ին՝ 491, 1959-ին՝ 491, 1970-ին՝ 479, 1979-ին՝ 424, 1989-ին՝ 455, 2001-ին՝ 503, 2004-ին՝ 533 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղից 2 կմ արլ. կա խաչքարերով գերեզմանոց (10-12դդ.) (**Ալեքսանդրովկա**):

**ՉՈՐԱԹԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, մարզկենտրոնից 64 կմ արլ., ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 413, 1897-ին՝ 395, 1926-ին՝ 743, 1939-ին՝ 1022, 1959-ին՝ 1283, 1970-ին՝ 1368, 1979-ին՝ 1138, 1989-ին՝ 1121, 2001-ին՝ 1088, 2004-ին՝ 1136 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ, ծխախոտագործությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են սբ. Հռիփսիմե եկեղեցին (1683թ.), 17դ. մատուռը և 17-18դդ. խաչքարերով գերեզմանոցը: 2 կմ հս-արմ. գտնվում են մ.թ.ա. 1-ին հզմ. "Ներքին շեն" և մ.թ.ա. 1-ին հզմ. Դամբարանադաշտը, 3 կմ հվ-արմ.՝ Հին Չորաթան (12-18դդ.) գյուղատեղին:

**ՉՈՐՐՈՐԴ ԳՅՈՒՂ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Քաղցրաշեն**:

**ՉՔՆԱՂ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ծաղկունյաց լեռների արմ. լանջին, Քասաղ գետի ձախ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 34 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1945 մ: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թվականներին: 1831թ. ուներ 177, 1897-ին՝ 527, 1926-ին՝ 527, 1939-ին՝ 515, 1959-ին՝ 242, 1970-ին՝ 235, 1979-ին՝ 216, 1989-ին՝ 217, 2001-ին՝ 250, 2004-ին՝ 234 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում է գտնվում 5դ. սբ.Ստեփանոս եկեղեցին, 2,5 կմ հս-արմ. պահպանվում են մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Հռոմի պալեր" ամրոցի մնացորդները:

# Պ

**ՊԱՂԱԿՆ**- գյուղ Շիրակի մարզում, Արփի լճի ամբարտակի մոտ: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 2040 մ, Բերդաշեն գյուղից 1 կմ հս.: **Պ.** է վեր-

անվանվել 08.08.1991թ.: 1886թ. ուներ 171, 1897-ին՝ 249, 1926-ին՝ 223, 1939-ին՝ 341, 1959-ին՝ 173, 1970-ին՝ 219, 1979-ին՝ 260, 1989-ին՝ 55, 1990-ին՝ 300, 2001-ին՝ 39, 2004-ին՝ 32 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, կերային և հացահատիկային կուլտուրաների մշակությամբ (**Շուրաբադ**):

**ՊԱՂԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1750 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 57 կմ հս-արմ.: 03.04.1991թ-ից վերանվանվել է **Պ.**: 1897թ. ուներ 155, 1926-ին՝ 411, 1939-ին՝ 382, 1959-ին՝ 419, 1979-ին՝ 695, 1989-ին՝ 453, 2001-ին՝ 133, 2004-ին՝ 164 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և պտղաբուծությամբ (**Սովուղբուլաղ**):

**ՊԱՌԱՎԱՔԱՐ**- գյուղ Տավուշի մարզում, Վարագաջուր գետի ստորին հոսանքի ձախափնյակում, Վարագի լեռների լանջին, մարզկենտրոնից 38 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 457, 1897-ին՝ 871, 1926-ին՝ 884, 1939-ին՝ 2013, 1959-ին՝ 1529, 1970-ին՝ 2026, 1979-ին՝ 1924, 1989-ին՝ 1917, 2001-ին՝ 1730, 2004-ին՝ 1760 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղագործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղից հվ-արլ. գտնըվում է Հին Պառավաքար (13-20դդ.) գյուղատեղին, իսկ հս-արմ. մասում՝ "Օձաքար" ամրոցը (մջնդ.) և Երկար մատներ գյուղատեղին:

**ՊԱՐՏԻԶԱԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 38 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1175 մ: 1989թ. ուներ 303, 2001-ին՝ 274, 2004-ին՝ 332 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և խաղողագործությամբ:

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ**- գյուղ Արարատի մարզում, Ուրծի լեռների մեղմաթեք և արևկող լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 43 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1170 մ: **Պ.Ս.** հիմնադրվել է 1978թ., իսկ 30.05.1984թ. դասվել է գյուղերի կարգը: 1998թ. ուներ 604, 2001-ին՝ 623, 2004-ին՝ 600 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ:

**ՊԵՄԶԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, Արագած լեռան արմ. ստորոտիում, մարզկենտրոնից 26 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1790 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 191, 1897-ին՝ 1496, 1926-ին՝ 1331, 1939-ին՝ 1757, 1959-ին՝ 3599, 1989-ին՝ 3384, 2001-ին՝ 2862, 2004-ին՝ 2701 բնակիչ, որոնց մի մասը գաղթել է Ալաշկերտից, Բասենից և Մուշից: Ունի վարդագույն և կարմիր տուֆ, պեմզա: Բնակչությունը զբաղվում է բնական շինանյութերի հանույթով, ծխախոտագործությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Պահպանվել են 5դ. բազիլիկ եկեղեցու հիմնապատերը, 6դ. եկեղեցիներ, Մակարավանքի սբ. Սիոն (1001թ.), սբ.Աստվածածին (17դ.), Առաքելոց վանքի (11դ.) եկեղեցիները, 13-14դդ. խաչքարեր: Գյուղից հվ-արլ. կան միջնադարյան բերդի պարիսպների հետքեր, գտնվել են մ.թ.ա. 2-րդ հզմ. բրոնզե և երկաթե իրեր:

**ՊԵՏՐՈՎԿԱ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1530 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 49 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադըրվել է 1920թ-ին: 1939թ. ուներ 181, 1959-ին՝ 199, 1970-ին՝ 330, 1979-ին՝ 365, 1989-ին՝ 41, 2001-ին՝ 248, 2004-

ին՝ 207 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ:

**ՊԻՊԻՍ**- պատմական գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Բերքաբեր**:

**ՊԻՍԱԿ**- պատմական գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Նժդեհ**:

**ՊՂՆՁԱՀԱՆՔ**- պատմական գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Հանքավան**:

**ՊՅՈՒՏԿՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Պտղնի**:

**ՊՌՈՇՅԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Երևան-Աշտարակ ավտոմայրուղու վրա, մարզկենտրոնից 52 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: **Պ.** է վերանվանվել 15.08. 1964թ.: 1970թ. ուներ 572 տուն՝ 1743, 1979-ին՝ 3379, 1989-ին՝ 4538, 2001-ին՝ 4660, 2004-ին՝ 5189 բնակիչ, որոնք տեղափոխվել են Տեղեր, Նիգատուն և այլ գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ (**№ 38 սովխոզին կից**):

**ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ №9 ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Պտղունք**:

**ՊՏՂԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Դեբեդ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 70 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 445 մ բարձրության վրա: 1959թ. ուներ 549, 1970-ին՝ 760, 1979-ին՝ 884, 1989-ին՝ 672, 2001-ին՝ 903, 2004-ին՝ 752 բնակիչ, որոնց մի մասը այստեղ է եկել Բաքվից, Վարդաշենից, Խանլարից, Մինգեչաուրից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողի և կերային կուլտուրաների մշակությամբ (**Այրումի խաղողա-գինեգործական սովխոզին կից**):

**ՊՏՂՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի բարձրադիր ափին, մարզկենտրոնից 37 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1320 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1831թ. հին լքված գյուղի տեղում: 1831թ. ուներ 92, 1897-ին՝ 278, 1926-ին՝ 453, 1939-ին՝ 581, 1959-ին՝ 602, 1970-ին՝ 1024, 1979-ին՝ 1063, 1989-ին՝ 1233, 2001-ին՝ 1357, 2004-ին՝ 1572 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և խաղողագործությամբ: Գյուղի տարածքում գտնվում է կիսավեր Պտղավանքը և "Թուխ Մանուկ" մատուռը (17դ.), Կաթողիկե եկեղեցին (6-7դդ.): Գյուղի տարածքում նշմարվում են մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. կիկլոպյան ամրոցի մը-նացորդներ (**Պյուտկնի**):

**ՊՏՂՈՒՆՔ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, մարզկենտրոնից 33 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա: **Պ.** է վերանվանվել 30.12. 1957թ.: 1959թ. ուներ 847, 1970-ին՝ 1585, 1979-ին՝ 1096, 1989-ին՝ 1193, 2001-ին՝ 1454, 2004-ին՝ 1580 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ (**Բաղրամյանի անվան սովխոզին կից**, **Պտղաբուծական № 9 սովխոզին կից**, **№ 9 սովխոզին կից**):

**ՊՐԻՎՈԼՆՈՅԵ**- գյուղ Լոռու մարզում, Ուռուտ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 54 կմ հս-արմ.: 1873թ. ուներ 840, 1897-ին՝ 1568, 1926-ին՝ 2024, 1939-ին՝ 2154, 1959-ին՝ 1803, 1970-ին՝ 1570, 1979-ին՝ 1379, 1989-ին՝ 988, 2001-ին՝ 248, 2004-ին՝ 1064 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, ճակնդեղի և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ՊՈՒՂԱՎԱՐ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վահրավար**:

**ՊՈՒՇԿԻՆՈ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջակողմյան Գարգառ վտակի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 15 կմ հս-արմ.: 1886թ. ուներ 510, 1897-ին՝ 728, 1926-ին՝ 793, 1939-ին՝ 918, 1959-ին՝ 823, 1970-ին՝ 968, 1979-ին՝ 853, 1989-ին՝ 417, 2001-ին՝ 411, 2004-ին՝ 185 բնակիչ: **Պ.** է վերանվանվել 14.02. 1937թ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

# Ջ

**ՋԱԼԱԼՕՂԼԻ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ստեփանավան**:

**ՋԱՂԱՑԱՁՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մասրիկ գետի ափին, մարզկենտրոնից 83 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: 03.04.1991թ. վերանվանվել է **Ջ.**: 1873թ. ուներ 294, 1897-ին՝ 436, 1926-ին՝ 379, 1931-ին՝ 471, 1939-ին՝ 568, 1959-ին՝ 594, 1970-ին՝ 834, 1979-ին՝ 1049, 1989-ին՝ 10, 2001-ին՝ 141, 2004-ին՝ 203 բնակիչ, որոնց մի մասը 1988-89թթ. Բաքվից բռնագաղթված հայեր են: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղից 1,5 կմ հվ. "Բարձրավեր" բնակատեղին է (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.- 16-17դդ.), որտեղ կա գերեզմանոց (16-17դդ.), 1452թ. տապանաքար : Մասրիկ գետի ափերին պահպանվել են շուրջ երկու տասնյակ ջրաղացների մնացորդներ (19-20դդ.): Գյուղի տարածքում կան 13-17դդ. խաչքարեր (**Սարիյաղուբ**):

**ՋԱՄՇԼՈՒ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջափնյակում, Փամբակի լեռների ստորոտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050 մ: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թթ.: 1837թ. ուներ 157, 1897-ին՝ 183, 1926-ին՝ 283, 1939-ին՝ 335, 1959-ին՝ 226, 1970-ին՝ 313, 1979-ին՝ 285, 1989-ին՝ 255, 2001-ին՝ 227, 2004-ին՝ 277 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ՋԱՆՖԻԴԱ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 13 կմ հվ.: 1831թ. ուներ 283, 1897-ին՝ 1071, 1926-ին՝ 1546, 1939-ին՝ 1382, 1959-ին՝ 1827, 1970-ին՝ 2311, 1979-ին՝ 2321, 1989-ին՝ 2858, 2001-ին՝ 3088, 2004-ին՝ 3150 բնակիչ, որոնց մի մասի նախնիները այստեղ են գաղթել Մուշի, Մանազկերտի, Սասունի, Ալաշկերտի և այլ գավառներից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

**ՋԱՋՈՒՌ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 12 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 486, 1897-ին՝ 1517, 1926-ին՝ 797, 1939-ին՝ 1092, 1959-ին՝ 815, 1970-ին՝ 887, 1979-ին՝ 742, 1989-ին՝ 563, 2001-ին՝ 824, 2004-ին՝ 886 բնակիչ, որոնց

նախնիները 1828թ. գաղթել են Խնուսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կա 13դ. սբ. Աստվածածին եկեղեցի:

**ՋԱՋՈՒՌ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ջաջուռավան**:

**ՋԱՋՈՒՌԱՎԱՆ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1800 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս-արլ.: **Ջ.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 9, 1926-ին՝ 46, 1939-ին՝ 99, 1959-ին՝ 113, 1970-ին՝ 422, 1979-ին՝ 393, 1989-ին՝ 136, 2001-ին՝ 307, 2004-ին՝ 280 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշից և Բասենից: Բնակչության մի մասը զբաղվում է երկաթուղու սպասարկմամբ, իսկ մյուսները՝ անասնապահությամբ և բանջարաբուծությամբ (**Ջաջուռ կայարանին կից**):

**ՋԱՐԽԵՉ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Հաղարծին**:

**ՋԵՐՄՈՒԿ**- քաղաք Վայոց ձորի մարզում, Արփա գետի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 50 կմ հս-արլ.: Առողջարանային քաղաք է: 1959թ. ուներ 2063, 1968-ին՝ 3700, 1980-ին՝ 5492, 1989-ին՝ 9014, 2001-ին՝ 5394, 2004-ին՝ 6400 բնակիչ: Արփայի մեջ թափվող վտակի գետաբերանի մոտ առաջացել է մի քանի տասնյակ մետր բարձրության հանքային ջրվեժ: Հայտնի է հատկապես Արփայի աջ և ձախ ափերին գտնվող՝ թվով 36 բուժիչ տաք աղբյուրներով, ջերմուկներով, որոնք ունեն հիդրոկարբոնատասուլֆատային բաղադրություն: Շրջակայքում կան նաև “Նարզան” տիպի ջուր, բուժիչ ցեխ, ապակու հումք (կվարցիտներ): Քաղաքում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից ամենախոշորը “Ջերմուկ” հանքային ջրերի գործարանն է (1949թ.), քարհանքեր, ՀԷԿ, պանրի գործարան, գործում է բազմահարկ հյուրանոց: Արփայի վերին հոսանքի կիրճում են գտնվում քարայրների համալիրը (բրոնզե դարի ժամանակից), սբ. Հովհաննես եկեղեցին, “Թուխ Մանուկ” և սբ. Գևորգ մատուռները:

**ՋԻԼ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների լճահայաց լանջին, Վարդենիս տանող ճանապարհին, Ջիլ գետակի ափին, մարզկենտրոնից 82 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2040 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 265, 1873-ին՝ 287, 1897-ին՝ 739, 1926-ին՝ 826, 1939-ին՝ 1226, 1959-ին՝ 1170, 1970-ին՝ 1606, 1979-ին՝ 1519, 1989-ին՝ 231, 2001-ին՝ 680, 2004-ին՝ 553 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի հս. եզրին, թեք սարալանջին, կա եկեղեցի (16-17դդ.), իսկ հս-արլ. մասում՝ 15-18դդ. խաչքարերով գերեզմանոց (**Ճիլ**):

**ՋԻԼԻՋԱ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 79 կմ հս-արլ.: 1897թ. ուներ 62, 1959-ին՝ 348, 1970-ին՝ 292, 1979-ին՝ 116, 1989-ին՝ 127, 2001-ին՝ 220, 2004-ին՝ 159 բնակիչ, որոնց մի մասը եկել է Արցախից (19դ.): Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: **Ջ.** տարածքում է գտնվում Մանկուք գյուղատեղին: Գյուղում և շրջակայքում են գտնվում Խորակերտի վանքը, սբ. Սարգիս (5-

7դդ.), 5-18դդ. եկեղեցիները և 13դ. մատուռ (**Խորակերտ**):

**ՋԻՎԻԽԼՈւ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ճապկուտ**:

**ՋՈՂԱՋ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Բերքաբեր**:

**ՋՐԱԲԵՐ**- գյուղ Կոտայքի մարզում, Գութանասարի արմ. ստորոտին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 18 կմ հս-արմ.: **Ջ.** է վերանվանվել 1948թ.: 1873թ. ուներ 172, 1897-ին՝ 167, 1926-ին՝ 96, 1939-ին՝ 233, 1959-ին՝ 395, 1970-ին՝ 394, 1979-ին՝ 315, 1989-ին՝ 361, 2001-ին՝ 451, 2004-ին՝ 635 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915թ. գաղթել են Ալաշկերտի գյուղերից, իսկ մյուսները Հրազդան ք-ից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղից հս. հայտնաբերվել են աշելյան շրջանի քարե գործիքներ (**Նիկոլաևկա**):

**ՋՐԱՀՈՎԻՏ**- գյուղ Արարատի մարզում, այգեվետ հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: Գյուղը հիմնադըրվել է 1831թ.: 1831թ. ուներ 275, 1897-ին՝ 264, 1929-ին՝ 224, 1939-ին՝ 240, 1959-ին՝ 496, 1970-ին՝ 775, 1979-ին՝ 872, 1989-ին՝ 1028, 2001-ին՝ 1144, 2004-ին՝ 1100 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: **Ջ.** մոտ գտնվում են նոր քարի, պղնձի և բրոնզի դարերի համանուն հնավայրերը: Գյուղի հվ. մասում գտնվում է Ջրահովիտ բնակատեղին (մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ.-17-19դդ.):

**ՋՐԱՁՈՐ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյանի ձախակողմյան Հողմաջուր գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1740 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 206, 1897-ին՝ 646, 1926-ին՝ 490, 1939-ին՝ 663, 1959-ին՝ 378, 1970-ին՝ 343, 1979-ին՝ 314, 1989-ին՝ 298, 2001-ին՝ 302, 2004-ին՝ 285 բնակիչ, որոնց նախնիները 19 դ. գաղթել են Բասենի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: **Ջ.** պահպանվել է սբ. Գևորգ եկեղեցին:

**ՋՐԱՄԲԱՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջ ափին, Ապարանի ջրամբարից հվ.: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1800 մ: 2001թ. ուներ 215, 2004-ին՝ 176 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ: **Ջ**-ից 5 կմ հս. գտնվում են Ջովունի գյուղատեղին, սբ.Պողոս- Պետրոս (4դ.) և սբ.Վարդան (4-5դդ.) եկեղեցիները, “Թուխ Մանուկ” մատուռը (4դ.):

**ՋՐԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, բարեբեր հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 935 մ: Գյուղը հիմնադրվել է 1914թ.: 1914թ. ուներ 187, 1922-ին՝ 373, 1931-ին՝ 463, 1959-ին՝ 583, 1970-ին՝ 1272, 1979-ին՝ 1473, 1989-ին՝ 976, 2001-ին՝ 1792, 2004-ին՝ 1800 բնակիչ, որոնց մի մասը գաղթել է Խոյ և Սալմաստ գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ:

**ՋՐԱՇԵՆ**- գյուղ Արմավիրի մարզում, այգեվետ հարթավայրում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 5 կմ հվ.: Հիմնադրվել է 1928թ.: 1931թ. ուներ 150, 1939-ին՝ 209, 1959-ին՝ 419, 1970-ին՝ 529, 1979-ին՝ 602, 1989-ին՝

773, 2001-ին՝ 727, 2004-ին՝ 835 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Սալմաստի, Արմ. Հայաստանի Բասենի, Երևանի նահանգի Սուրմալուի գյուղերից, նոր ժամանակներում՝ Լիբանանից, Հունաստանից և Սիրիայից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղը գտնվում է հնագույն Արմավիր մայրաքաղաքի տարածքում:

**ՋՐԱՇԵՆ**- գյուղ Լոռու մարզում, Որդնավ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1680 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հվ-արմ.: **Ջ.** է վերանվանվել 1940թ.: 1831թ. ուներ 185, 1897-ին՝ 1705, 1926-ին՝ 2056, 1939-ին՝ 2179, 1959-ին՝ 1706, 1970-ին՝ 2470, 1979-ին՝ 2749, 1989-ին՝ 1284, 2001-ին՝ 3352, 2004-ին՝ 3529 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Բուլանըխի, Խնուսի, Մանազկերտի և Մուշի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում գտնըվում է սբ. Նշան եկեղեցին (1884թ.) և "Հյուրատեղ" մատուռը (**Որդնավ**):

**ՋՐԱՌԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, Մեծամոր գետի աջափնյակում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 835 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 37 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 885, 1897-ին՝ 1193, 1926-ին՝ 523, 1939-ին՝ 535, 1959-ին՝ 1539, 1970-ին՝ 2527, 1979-ին՝ 2818, 1989-ին՝ 4300, 2001-ին՝ 2808, 2004-ին՝ 3458 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-20թթ. գաղթել են Երևանի նահանգի Սուրմալուի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ:

**ՋՐԱՌԱՏ**- գյուղ Կոտայքի մարզում, ցածրադիր, բլրաշատ վայրում, ծովի մակերևույթից 1730 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 3 կմ հս-արլ.: 31.03.1982թ. վերանվանվել է **Ջ.**: 2004թ. ուներ 200 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ (**Ջրառատի կաթնային համալիրին կից**):

**ՋՐԱՌԱՏ**- գյուղ Շիրակի մարզում, Ջրառատ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1820 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 124, 1897-ին՝ 1281, 1926-ին՝ 1420, 1939-ին՝ 1424, 1959-ին՝ 1026, 1970-ին՝ 1212, 1979-ին՝ 1061, 1989-ին՝ 829, 2001-ին՝ 1147, 2004-ին՝ 1252 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասենի, Խնուսի, Մուշի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից արլ. գտնվում են Ծաղկասար գյուղատեղին (10-20դդ.) և "Թուխ Մանուկ" եկեղեցին (10-20դդ.): **Ջ.** կա 6դ. սբ. Մինաս եկեղեցի:

**ՋՐԱՌԱՏԻ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԿԻՑ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Ջրաբբի**:

**ՋՐԱՌԱՏԻ ԿԱԹՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Ջրառատ**:

**ՋՐԱՐԲԻ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 39 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 835 մ բարձրության վրա: **Ջ.** է վերանվել 14.12.2004թ.: 2004թ. ուներ 1654 բնակիչ, որոնք հիմնականում աշխատում են թռչնաֆաբրիկայում (**Ջրառատի թռչնաֆաբրիկային կից**):

**ՋՐԱՓԻ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյանի ձախ կողմում, մարզկենտրոնից 32 կմ հվ-արմ., ծովի մակե-

բնույթից 1500 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1974թ. ապաբնակեցված Ներքին և Վերին Ջրափի գյուղերի բնակիչներին վերաբնակեցնելու համար: 1989թ. ուներ 1075, 2001-ին՝ 845, 2004-ին՝ 985 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Այստեղ է գտնվում "Բվի" քարանձավը:

**ՋՐՎԵԺ**- գյուղ Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 48 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 108, 1897-ին՝ 492, 1926-ին՝ 749, 1939-ին՝ 839, 1959-ին՝ 834, 1970-ին՝ 2877, 1979-ին՝ 4228, 1989-ին՝ 5696, 2001-ին՝ 6273, 2004-ին՝ 6848 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից, մյուսները տեղափոխվել են Շամքորի, Գանձակի և Ախալքալաքի շրջաններից 1960-ական թթ.: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Մոտակայքում կա տուֆի քարհանք: Գյուղի պատմաճարտարապետական հուշարձաններից է 4-5դդ. գերեզմանատան հուշահամալիրը , որը բաղկացած է եկեղեցուց և կոթող-դամբարանից: Գյուղից արմ., ձորակում, գտնվում են սբ. Սարգիս, արլ. մասում՝ սբ. Խաչ մատուռները, խաչքարեր, տապանաքարեր և 1856թ. կառուցված Կաթողիկե եկեղեցին:

**ՋՈՒՋԵՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Բաղանիս գետի վերնազավառում, մարզկենտրոնից 42 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 73, 1897-ին՝ 172, 1926-ին՝ 328, 1939-ին՝ 380, 1959-ին՝ 481, 1970-ին՝ 547, 1979-ին՝ 520, 1989-ին՝ 583, 2001-ին՝ 581, 2004-ին՝ 569 բնակիչ, որոնց մի մասի նախնիները եկել են Այրումից, Հաղպատից և Լըճկաձորից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում սբ. Գրիգոր և 19դ. "Ջուջևանք" եկեղեցիները, "Խեչ" սրբատեղին և 12-14դդ. մատուռը (**Ճչեվանք**):

# Ռ

**ՌԱԴԻՈԿԱՅԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Գետարգել**:

**ՌԱՆՉՊԱՐ**- գյուղ Արարատի մարզում, Մեծամոր գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 830 մ: Գյուղը հիմնադրվել է 1873թ.: 1873թ. ուներ 197, 1897-ին՝ 405, 1926-ին՝ 209, 1939-ին՝ 324, 1959-ին՝ 418, 1970-ին՝ 953, 1979-ին՝ 1024, 1989-ին՝ 1457, 2001-ին՝ 1103, 2004-ին՝ 1100 բնակիչ: Բնակչությունը ըզ-բաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ՌԻՆԴ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Ջովասար լեռան լանջին, ծովի մակերևույթից 1320 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 23 կմ արմ. վրա: Բնակչության մի մասի նախնիները 1828թ. գաղթել են Խոյի և Սալմաստի գյուղերից: 1970թ. ուներ 1279, 1979-ին՝ 1353, 1989-ին՝ 1510, 2001-ին՝ 1444, 2004-ին՝ 1471 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտի, հացահատիկի և կերային

կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 1-1,5 կմ արլ. գտնվում է կիսավեր սբ. Աստվածածին (13-14դդ.) և սբ. Ստեփանոս (12-14դդ.) եկեղեցիները, 10-15դդ. խաչքարեր:

**ՌՅԱ ԹԱՉԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ջառջառիս գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 41 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050 մ: Գյուղը հիմնադրվել է 1830թ.: 1831թ. ուներ 323, 1873-ին՝ 323, 1926-ին՝ 672, 1939-ին՝ 641, 1959-ին՝ 437, 1970-ին՝ 488, 1979-ին՝ 610, 1989-ին՝ 328, 2001-ին՝ 443, 2004-ին՝ 523 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից և Վանի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մը-շակությամբ: Գյուղում է գտնվում 13-14դդ. սբ. Սարգիս եկեղեցին:

**ՌՈՒԲԵՆԱԿԵՐՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Վահան**:

# Ս

**ՍԱԴՈՒՆՑ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագածի ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 51 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 2100 մ: **Ս.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 192, 1926-ին՝ 380, 1939-ին՝ 584, 1959-ին՝ 299, 1970-ին՝ 332, 1979-ին՝ 263, 2001-ին՝ 293, 2004-ին՝ 286 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ (**Ամրե Թազա**):

**ՍԱԼ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Սալլի**:

**ՍԱԼԼԻ**- գյուղ Վայոց ձորի մարզում, ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 18 կմ հս-արմ., Սելիմագետի ափին: 1839թ. ուներ 77, 1873-ին՝ 422, 1897-ին՝ 668, 1926-ին՝ 291, 1931-ին՝ 344, 1939-ին՝ 497, 1959-ին՝ 296, 1970-ին՝ 355, 1979-ին՝ 329, 1989-ին՝ 167, 2001-ին՝ 235, 2004-ին՝ 247 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828թ. գաղթել է Խոյի և Սալմաստի գյուղերից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ և գյուղատնտեսությամբ: Գյուղից հս-արմ. կա ավերակ եկեղեցի (**Սալ**):

**ՍԱԼՎԱՐԴ**- գյուղ Սյունիքի մարզում, Ջոհաջուր գետի հովտում, մարզկենտրոնից 114 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 244, 1873-ին՝ 479, 1897-ին՝ 714, 1926-ին՝ 967, 1931-ին՝ 1106, 1939-ին՝ 1064, 1959-ին՝ 541, 1970-ին՝ 508, 1979-ին՝ 420, 1989-ին՝ 352, 2001-ին՝ 418, 2004-ին՝ 316 բնակիչ, որոնց մի մասը 1828-29թթ. գաղթել է Խոյի գավառի Մահլազան և Ուզումչի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, ծխախոտի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի սբ. Գևորգ եկեղեցի:

**ՍԱԼՈՒՏ**- գյուղ Շիրակի մարզում, Վարդաղբյուր գետի վերնագավառում, մարզկենտրոնից 30 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 110, 1908-ին՝ 160, 1926-ին՝ 125, 1931-ին՝ 167, 1939-ին՝ 212, 1959-ին՝ 87, 1970-ին՝ 86, 1979-ին՝

79, 1989-ին՝ 67, 2001-ին՝ 94, 2004-ին՝ 108 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում կա 19դ. կիսավեր եկեղեցի (**Սըկութ**):

**ՍԱՂՄՈՍԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջափնյա մասում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 8 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1620 մ: Գյուղը հիմնադրվել է 1830-ական թթ.: 1831թ. ուներ 131, 1873-ին՝ 166, 1886-ին՝ 238, 1931-ին՝ 155, 1959-ին՝ 194, 1970-ին՝ 133, 1979-ին՝ 78, 1989-ին՝ 87, 2001-ին՝ 198, 2004-ին՝ 219 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մոտ են գտնվում Սաղմոսավանքի վանական համալիրը (13-18դդ.), սբ. Գրիգոր Լուսավորչի անապատը (13-14դդ.), սբ. Աստվածածին (1225թ.) և սբ.Սիոն (1215թ.) եկեղեցիները:

**ՍԱՄԱՂԱՐ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Գեղակերտ**:

**ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախափնյակում, այգեվետ հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 827 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրրվել է 1829թ.: 1831թ. ուներ 525, 1873-ին՝ 1183, 1897-ին՝ 1178, 1926-ին՝ 742, 1931-ին՝ 379, 1939-ին՝ 877, 1959-ին՝ 1164, 1970-ին՝ 1671, 1979-ին՝ 1818, 1989-ին՝ 2379, 2001-ին՝ 1992, 2004-ին՝ 2000 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Պարսկահայաստանից: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ՍԱՆԳՅԱՌ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Կանիաշիր**:

**ՍԱՌՆԱԿՈՒՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Սառնակունք գետի ափին, մարզկենտրոնից 119 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: 1926թ. ուներ 363, 1939-ին՝ 744, 1959-ին՝ 703, 1970-ին՝ 658, 1979-ին՝ 539, 1989-ին՝ 434, 2001-ին՝ 514, 2004-ին՝ 574 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Նախիջևան ք-ից, Ջուղայից և Սիսիանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մոտ պահպանվել են մ.թ.ա. 1-ին հզմ. ժայռապատկերներ, հս-արլ. մասում են՝ Ձկնարած, Բերդ, Բերդաշեն և Մուխրաբակ ավերակ գյուղերը: 1945թ հայտնաբերվել է արծաթյա հնագույն գանձ-հավաքածու (Սառնակունքի գանձ) (**Ազատաշեն**):

**ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ** - գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 34 կմ հվ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: **Ս.** է վերանվանվել 1940թ.: 1831թ. ուներ 262, 1897-ին՝ 2385, 1939-ին՝ 2851, 1959-ին՝ 2012, 1970-ին՝ 2394, 1979-ին՝ 2460, 1989-ին՝ 2928, 2001-ին՝ 3034, 2004-ին՝ 2159 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Ալաշկերտից, Կարսից, Բասենից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Տարածքում կան տուֆի և պեմզայի հարուստ պաշարներ: Գյուղի կենտրոնում են գտնվում սբ. Թադևոս (1883թ.), սբ. Հակոբ (5-6դդ.) և սբ. Կարապետ (1205թ.) եկեղեցիները: Գյուղի մոտ են գտնվում 5-13դդ. Հոգեվանքը, սբ.Գրիգոր Լուսավորիչ ուխտատեղին, իսկ 6 կմ արլ.՝ սբ. Ղազար եկեղեցին (5-6դդ.), “Գնդաքար” (մ.թ.ա.

1-ին հզմ.) և “Բերդիկ” (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) ամրոցները (**Ուռնուտ**):

**ՍԱՌՑԱՇԵՆ**- նախկինում գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Սևան**:

**ՍԱՍՈւՆԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի ձախափնյա հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 4 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1070 մ: Գյուղը հիմնադրվել է 04.12. 1955թ., իսկ 15.08.1964թ. վերանվանվել է **Ս.**: 1959թ. ուներ 418, 1970-ին՝ 1768, 1979-ին՝ 1951, 2001-ին՝ 2239, 2004-ին՝ 2537 բնակիչ, որոնք եկել են Վրաստանից, Ադրբեջանից, իսկ մի մասն էլ հայրենադարձներ են: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղից 3 կմ հվ-արլ. գտնվում է մ.թ.ա. 2-րդ հզմ.”Սասունիկի դաշտ” ամրոցը (**№ 39 սովխոզին կից**):

**ՍԱՍՈւՆԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Վերին Սասունիկ**:

**ՍԱՏԱՆԱԽԱՉ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Արեգունի**:

**ՍԱՐԱԳՅՈւՂ**- գյուղ Շիրակի մարզում, Ծաղկաշեն գետի վերնագավառում, Ջավախքի լեռների արմ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից 49 կմ հս., ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա: **Ս.** է վերանվանվել 1946թ.: 1873թ. ուներ 135, 1897-ին՝ 266, 1926-ին՝ 378, 1931-ին՝ 468, 1939-ին՝ 579, 1959-ին՝ 320, 1970-ին՝ 349, 1979-ին՝ 287, 1989-ին՝ 208, 2001-ին՝ 192, 2004-ին՝ 198 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան սբ. Երրորդություն (Հին գեղի ժամ) եկեղեցի և սրբավայրեր:

**ՍԱՐԱԼ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Նոր Խաչակապ** :

**ՍԱՐԱԼԱՆՋ**- գյուղ Արագածոտնի մարզում, Ծաղկունյաց լեռների ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 34 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Գյուղը հիմնադրվել է 1830թ.: 1831թ. ուներ 96, 1897-ին՝ 338, 1926-ին՝ 333, 1939-ին՝ 432, 1959-ին՝ 242, 2001-ին՝ 238, 2004-ին՝ 219 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ալաշկերտի, Մուշի և Սասունի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի հս. մասում են գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (19դ.) և “Թուխ Մանուկ” մատուռը (19դ.):

**ՍԱՐԱԼԱՆՋ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 35 կմ հս-արմ.: 1873թ. ուներ 240, 1897-ին՝ 345, 1926-ին՝ 475, 1939-ին՝ 585, 1959-ին՝ 322, 1970-ին՝ 224, 1979-ին՝ 137, 1989-ին՝ 107, 1993-ին՝ 196, 2001-ին՝ 215, 2004-ին՝ 226 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ:

**ՍԱՐԱԼԱՆՋ**- գյուղ Կոտայքի մարզում, Սարալանջ գետի ափին, Արայի լեռան արլ. ստորոտին, մարզկենտրոնից 31 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 227, 1897-ին՝ 261, 1926-ին՝ 210, 1939-ին՝ 375, 1959-ին՝ 341, 1970-ին՝ 328, 1979-ին՝ 1011, 1989-ին՝ 242, 2001-ին՝ 332, 2004-ին՝ 298 բնակիչ, որոնց մի մասի նախնիները տարբեր ժամանակներում գաղթել են Մուշի և Կարսի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ: Գյուղից հվ-արլ. գտնվում է Սարալանջ ավերակ գյուղը:

**ՍԱՐԱԼԱՆՋ**- գյուղ Շիրակի մարզում, Արագած լեռան հս-արմ. ստորոտին: Հեռավորությունը մարզկենտրոնից 25 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1970 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 139, 1897-ին՝ 903, 1926-ին՝ 1182, 1939-ին՝ 1014, 1959-ին՝ 999, 1970-ին՝ 1135, 1979-ին՝ 958, 1989-ին՝ 1093, 2001-ին՝ 1115, 2004-ին՝ 1030 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարինից, Մուշից և Կարսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղում և շրջակայքում կան զանազան հնություններ՝ 5դ. եկեղեցի, գյուղատեղի և գերեզմաններ:

**ՍԱՐԱԿԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Բագարան**:

**ՍԱՐԱԿԱՊ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 35 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1570 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 70, 1897-ին՝ 937, 1926-ին՝ 597, 1931-ին՝ 762, 1939-ին՝ 910, 1959-ին՝ 686, 1970-ին՝ 657, 1979-ին՝ 649, 1989-ին՝ 550, 2001-ին՝ 591, 2004-ին՝ 638 բնակիչ, որոնց նախնիները 1915-20թթ. գաղթել են Ալաշկերտից և Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում է գտնըվում սբ. Աստվածածին (7դ., վերանորոգված 1885-87թթ.) եկեղեցին: **Ս.**-ից 6 կմ հվ-արլ. են գտնվում “Կարմիր վանք” (7դ.) եկեղեցին և “Ծակքար” մատուռը: Նշմարվում են կիկլոպյան ամրոցի հետքեր:

**ՍԱՐԱՀԱՐԹ**- գյուղ Լոռու մարզում, Գոգարան գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1725 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 56, 1873-ին՝ 481, 1897-ին՝ 839, 1926-ին՝ 1322, 1931-ին՝ 1486, 1939-ին՝ 1494, 1959-ին՝ 1835, 1970-ին՝ 1928, 1979-ին՝ 1527, 1989-ին՝ 1435, 2001-ին՝ 1387, 2004-ին՝ 1506 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բասենի գավառի գյուղերից: Բնակչությունը ըզ-բաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում են գտնվում “Ժամ” եկեղեցին (18-19դդ.) և “Կարմիր Ավետարան” մատուռը:

**ՍԱՐԱՄԵՋ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակի լեռների հվ. լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1770 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ հվ-արմ.: 1873թ. ուներ 363, 1897-ին՝ 572, 1926-ին՝ 845, 1931-ին՝ 904, 1939-ին՝ 865, 1959-ին՝ 857, 1970-ին՝ 1120, 1979-ին՝ 1137, 1989-ին՝ 489, 1993-ին՝ 1454, 2001-ին՝ 1407, 2004-ին՝ 1590 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խնուսի և Մուշի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի եկեղեցին կառուցված է 1906թ-ին:

**ՍԱՐԱՊԱՏ**- գյուղ Շիրակի մարզում, Չիչկան գետի վերին հոսանքի ձախափնյակում, Գոգարանց լեռների լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից 38 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1970 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 165, 1897-ին՝ 282, 1926-ին՝ 242, 1939-ին՝ 348, 1959-ին՝ 158, 1970-ին՝ 228, 1979-ին՝ 170, 1989-ին՝ 67, 2001-ին՝ 148, 2004-ին՝ 144 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ. Սարգիս եկեղեցի:

**ՍԱՐԱՎԱՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Դարբ գետի ափին, ծովի մակերևույթից 1720 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 35 կմ հվ-արլ.: Վերանվանվել է **Ս.** 27.02.1956թ.: 1831թ. ուներ 96, 1873-ին՝ 243, 1897-ին՝ 187, 1926-ին՝ 222, 1931-ին՝ 408, 1939-ին՝ 501, 1959-ին՝ 322, 1970-ին՝ 519, 1979-ին՝ 685, 1989-ին՝ 216, 2001-ին՝ 340, 2004-ին՝ 273 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում կան 17դ. ավերակ եկեղեցի, 13դ. աղբյուր-հուշարձան, 4-5 կմ հվ-արմ.՝ 14-19դդ. մատուռ և 11-17դդ. խաչքարեր (**Դերբն**):

**ՍԱՐԱՏԱԿ**- գյուղ Շիրակի մարզում, Կարկաչան գետի աջափնյակում, մարզկենտրոնից 17 կմ հվ., ծովի մակերևույթից 1560 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 191, 1873-ին՝ 565, 1897-ին՝ 878, 1926-ին՝ 923, 1939-ին՝ 1112, 1959-ին՝ 1062, 1970-ին՝ 1181, 1979-ին՝ 1142, 1989-ին՝ 1429, 2001-ին՝ 1274, 2004-ին՝ 1335 բնակիչ, որոնք 1828-29թթ. գաղթել են Բասենից և Խնուսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում կա կանգուն եկեղեցի:

**ՍԱՐԱՏՈՎԿԱ**- գյուղ Լոռու մարզում, Տաշիր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1480 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 38 կմ հս-արմ.: 1907թ. ուներ 586, 1926-ին՝ 127, 1939-ին՝ 133, 1959-ին՝ 547, 1970-ին՝ 591, 1979-ին՝ 516, 1989-ին՝ 477, 2001-ին՝ 428, 2004-ին՝ 311 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների, կարտոֆիլի և կաղամբի մշակությամբ:

**ՍԱՐԴԱՐԱՊԱՏ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 3 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա: **Ս.** է վերանվանվել 14.12. 2004թ.: 1831թ. ուներ 1487, 1897-ին՝ 2440, 1926-ին՝ 2831, 1939-ին՝ 2585, 1959-ին՝ 3574, 1970-ին՝ 4529, 1979-ին՝ 4755, 2001-ին՝ 5727, 2004-ին՝ 6171 բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ է գաղթել Արմ. Հայաստանից՝ Մուշից, Վանից, Ալաշկերտից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Այստեղ են գտնվում Սարդարապատ ամրոցի մնացորդները (18դ.): Ունի 1882թ. սբ. Աստվածածին կանգուն եկեղեցի (**Հոկտեմբեր**):

**ՍԱՐԴԱՐԱՊԱՏ**- նախկինում գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս ք. **Արմավիր**:

**ՍԱՐԻԱՐ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ապավեն**:

**ՍԱՐԻԳՅՈՒՂ**- գյուղ Տավուշի մարզում, Աղստև գետի ձախ կողմում, մարզկենտրոնից 19 կմ հս., ծովի մակերևույթից 800 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 450, 1897-ին՝ 689, 1926-ին՝ 730, 1931-ին՝ 974, 1939-ին՝ 1115, 1959-ին՝ 957, 1970-ին՝ 1033, 1979-ին՝ 1046, 1989-ին՝ 1525, 2001-ին՝ 1178, 2004-ին՝ 1078 բնակիչ, որոնց մի մասը վերաբնակիչներ են Ոսկևան գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: **Ս**-ի տարածքում կան մանգանի, ագաթի և բենտոնիտային կավերի հանքապաշարներ: Գյուղից 3 կմ հվ-արլ. գտնվում են "Ծակ" եկեղեցին, մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարա-

նադաշտ և 12-13դդ. խաչքարերով գերեզմանոց:

**ՍԱՐԻՅԱՂՈւԲ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ջաղացաձոր**:

**ՍԱՐՀԱՏՈւ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Խաշթառակ**:

**ՍԱՐՉԱՊԵՏ**- գյուղ Լոռու մարզում, Նորաշեն գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 54 կմ հս-արմ.: 1897թ. ուներ 729, 1926-ին՝ 1417, 1931-ին՝ 1669, 1939-ին՝ 1954, 1959-ին՝ 2157, 1970-ին՝ 2966, 1979-ին՝ 3033, 1989-ին՝ 3096, 2001-ին՝ 2504, 2004-ին՝ 2400 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Կարինի և Ալաշկերտի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մը-շակությամբ: Գյուղն ունի “Ժամ” (1913թ.) և նորակառույց եկեղեցի: Լոք լեռան գագաթին կա ուխտատեղի (18դ.):

**ՍԱՐՎԱՆԼԱՐ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Միս**:

**ՍԱՐՈւԽԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Կուկուձոր գետի ափին , մարզկենտրոնից 6 կմ հվ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1990 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 700, 1897-ին՝ 2899, 1926-ին՝ 4042, 1931-ին՝ 4294, 1939-ին՝ 4335, 1959-ին՝ 4732, 1970-ին՝ 5686, 1979-ին՝ 6449, 1989-ին՝ 7637, 2001-ին՝ 7690, 2004-ին՝ 9218 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Բայազետի գյուղերից 1829-30թթ. և 1877-78թթ.: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, կարտոֆիլի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ. Գևորգ եկեղեցի (1883թ.), իսկ հվ՝ Թուխ Մանուկ մատուռ (16-17դդ.), “Կարեի քարայր” բնակատեղի (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.): Գյուղից 3 կմ արմ. գտնվում է “Նազեի սուրբ” գյուղատեղին (10-17դդ.), 4,5 կմ արմ. “Բանդի դաշտ” (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և 5 կմ հվ-արմ.՝ “Քըռքըռա” (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) դամբարանադաշտերը, 9 կմ հվ-արմ. “Թոմոյի լիճ” բնակատեղին (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ) (**Ակունք**):

**ՍԵՄՅՈՆՈՎԿԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռնանցքի մոտ, մարզկենտրոնից 52 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 298, 1897-ին՝ 509, 1926-ին՝ 232, 1931-ին՝ 508 գերազանցապես ռուս բնակիչ, որոնք 1950-ական թթ. տեղափոխվել են Հյուսիսային Կովկաս: 1959թ. գյուղն ուներ 495, 1970-ին՝ 442, 1979-ին՝ 375, 1989-ին՝ 290, 2001-ին՝ 291, 2004-ին՝ 299 հայ բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ՍԵՎԱԲԵՐԴ**- գյուղ Կոտայքի մարզում, Գեղամա լեռների լանջին, մարզկենտրոնից 53 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերեվույթից 2050 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 403, 1897-ին՝ 599, 1926-ին՝ 343, 1939-ին՝ 720, 1959-ին՝ 503, 1970-ին՝ 655, 1979-ին՝ 393, 1989-ին՝ 305, 2001-ին՝ 361, 2004-ին՝ 280 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-18թթ. և 1922-25թթ. գաղթել են Մուշի, Վանի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի և կերային կուլտուրաների մը-շակությամբ: Գյուղի մոտ են գըտնըվում միջնադարյան ավերված ամրոցը և ջրամբարը:

**ՍԵՎԱԺԱՅՌ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփայի աջակողմյան վտակ Եղեգիս գետի վերին հոսանքի աջ կողմում: Ծովի մակերևույթից՝ 2200 մ

բարձրության վրա, Վարդահովտից՝ 1 կմ հս.: 1873թ. ուներ 141, 1897-ին՝ 259, 1926-ին՝ 97, 1939-ին՝ 161, 1959-ին՝ 152, 1970-ին՝ 133, 1979-ին՝ 208, 2001-ին՝ 19, 2004-ին՝ 64 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղի մոտ կան եկեղեցու ավերակներ (**Ղարաղայա**):

**ՍԵՎԱՆ**- քաղաք Գեղարքունիքի մարզում: Քաղաք է 1961թ-ից (1938-61թթ. եղել է քաղաքատիպ ավան, մինչ այդ՝ գյուղ): Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 32 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1925 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 944, 1897-ին՝ 1371, 1926-ին՝ 1032, 1939-ին՝ 2668, 1959-ին՝ 6415, 1979-ին՝ 20663, 1989-ին՝ 26951, 2001-ին՝ 21422, 2004-ին՝ 22900 բնակիչ: 19դ. 40-ական թթ. **Ս.** զգալի թիվ էին կազմում Ռուսաստանից գաղթած մոլոկանները, որոնք հիմնականում զբաղվում էին դաշտավարությամբ և անասնապահությամբ: Քաղաքի բուռն զարգացումը սկսվեց 1940-ական թթ. վերջերից: 50-ական թթ. այն արդեն բավական բազմամարդ բնակավայր էր և ուներ արդյունաբերական մի քանի ձեռնարկություններ և ձկնարդյունաբերություն: Բազմաճյուղ է նաև **Ս.** գյուղատնտեսությունը: Զբաղվում են կերային կուլտուրաների, կարտոֆիլի, կաղամբի մշակությամբ և անասնապահությամբ (**Ելենովկա**, **Սառցաշեն**):

**ՍԵՎԱՎԵՐ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Արագյուղ**:

**ՍԵՎԱՔԱՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնաճյուղերից մեկի լանջին, Սևաքարի ջուր գետակի աջ ափին, մարզկենտրոնից 14 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 183, 1897-ին՝ 703, 1926-ին՝ 494, 1939-ին՝ 431, 1959-ին՝ 288, 1970-ին՝ 203, 1979-ին՝ 89, 1989-ին՝ 112, 2001-ին՝ 122, 2004-ին՝ 80 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի 17դ. սբ. Աստվածածին եկեղեցի, իսկ շրջակայքում երևում են գյուղատեղիների հետքեր:

**ՍԵՎՔԱՐ**- գյուղ Տավուշի մարզում, Սևքար գետի հովտում, մարզկենտրոնից 18 կմ հս., ծովի մակերևույթից 800 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 1019, 1897-ին՝ 2411, 1926-ին՝ 1511, 1939-ին՝ 2363, 1959-ին՝ 1626, 1979-ին՝ 2158, 1989-ին՝ 2153, 2001-ին՝ 2222, 2004-ին՝ 1997 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, խաղողագործությամբ, պտղ-դաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 2 կմ հվ. կա 17դ. եկեղեցի, իսկ 3 կմ արմ. գտնվում է 16-17դդ. Դարպասի գյուղատեղին:

**ՍԵՎՔԱՐԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Աճարկուտ**:

**ՍԵՎՔԱՐԻ ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Աճարկուտ**:

**ՍԵՐՍ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Սերս գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36 կմ հվ-արլ.: 1873թ. ուներ 297, 1897-ին՝ 474, 1926-ին՝ 533, 1939-ին՝ 654, 1959-ին՝ 414, 1970-ին՝ 429, 1979-ին՝ 293, 1989-ին՝ 204, 2001-ին՝ 238, 2004-ին՝ 232 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. գաղթել է Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի,

ծխախոտի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան “Մեծ Վանք” (սբ. Հովհաննես, 19դ.) և 17դ. եկեղեցիներ, իսկ 1,5 կմ հվ-արմ.՝ “Թուխ Մանուկ” մատուռ (17դ.) և խաչքարեր (**Ցեցիկ**):

**ՄՁՆԱԿ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախ կողմում, Սյունիք գյուղից 1 կմ արմ., ծովի մակերևույթից 760 մ բարձրության վրա: 1959թ. ուներ 166, 1970-ին՝ 300, 1979-ին՝ 255, 1989-ին՝ 31, 2004-ին՝ 152 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

**ՄՐԿՈՒԹ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Սալուտ**:

**ՄԻՋԱՎԵՏ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 44 կմ հս., ծովի մակերևույթից 2075 մ բարձրության վրա: **Մ.** է վերանվանվել 1967թ.: 1873թ. ուներ 294, 1897-ին՝ 729, 1926-ին՝ 1031, 1931-ին՝ 481, 1939-ին՝ 1300, 1959-ին՝ 345, 1970-ին՝ 321, 1979-ին՝ 303, 1989-ին՝ 375, 2001-ին՝ 318, 2004-ին՝ 379 բնակիչ, որոնց նախնիների մի մասը Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Հեշտիա և Լոռու գյուղերից գաղթած վերաբնակիչներ են: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի սբ. Ամենափրկիչ եկեղեցի (**Ծաղկաշեն**):

**ՄԻՍ**- գյուղ Արարատի մարզում, Հրազդանի աջափնյա հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 828 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 03.04. 1991թ. վերանվանվել է **Մ.**: 1831թ. ուներ 153, 1897-ին՝ 953, 1926-ին՝ 426, 1931-ին՝ 404, 1939-ին՝ 580, 1959-ին՝ 816, 1970-ին՝ 1253, 1979-ին՝ 1552, 1989-ին՝ 2437, 2001-ին՝ 1331, 2004-ին՝ 1300 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ (**Սարվանլար**):

**ՄԻՍԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 13 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 860 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 03.04. 1991թ. այն վերանվանվել է **Մ.**: 1831թ. ուներ 37, 1897-ին՝ 313, 1926-ին՝ 390, 1939-ին՝ 480, 1959-ին՝ 879, 1970-ին՝ 1482, 1979-ին՝ 1694, 1989-ին՝ 1500, 2001-ին՝ 1914, 2004-ին՝ 1900 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ (**Ենգիջա**):

**ՄԻՍԱՎԱՆ**- պատմական բնակավայր Սյունիքի մարզում, տե՛ս **Միսիան**:

**ՄԻՍԻԱՆ**- քաղաք Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ և ձախ ափերին, մարզկենտրոնից 103 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1625 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 116, 1897-ին՝ 1266, 1926-ին՝ 1186, 1939-ին՝ 2215, 1959-ին՝ 3859, 1979-ին՝ 10373, 1989-ին՝ 15292, 2001-ին՝ 16843, 2004-ին՝ 16800 բնակիչ: Զարգացած անասնաբուծության կենտրոններից է, կարևոր տեղ են գրավում նաև պտղաբուծությունը, թռչնաբուծությունը, բանջարաբուծությունը, ծխախոտագործությունը և մեղվաբուծությունը: **Մ.** մասնագիտացված է սննդի արդյունաբերության, շինանյութերի արտադրության ուղղությամբ, մեծ համբավ ունի պանրի գործարանը: Շրջակայքում հայտնաբերվել է հնագույն դամբարան, որն ունի 2000 տարվա պատմություն: Այստեղ է Սիսավանի սբ.Հովհաննես եկեղեցին (**Միսավան**):

**ՄԻՓԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Փամբակի լեռների հվ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48

կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2100 մ: Գյուղը հիմնադրվել է 1870-ական թթ.: 1873թ. ուներ 292, 1897-ին՝ 382, 1926-ին՝ 336, 1939-ին՝ 443, 1959-ին՝ 350, 1979-ին՝ 473, 1989-ին՝ 391, 2001-ին՝ 264, 2004-ին՝ 275 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

**ՍԻՓԱՆԻԿ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 828 մ: 1989թ. ուներ 2620, 2001-ին՝ 437, 2004-ին՝ 400 բնակիչ, որոնք բռնագաղթվել են Բաքվից և Մինգեչաուրից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ:

**ՍՅՈՒՆԻՔ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 4 կմ արլ., ծովի մակերևույթից 700 մ բարձրության վրա: 1989թ. ուներ 596, 2001-ին՝ 1023, 2004-ին՝ 697 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ: Տարածքում պահպանվել են նախկին պղնձաձուլարանի խարամը, հին բերդի և Դիցմայրի գյուղի ավերակները: Հայտնաբերվել են բրոնզե դարի գերեզմաններ:

**ՍՈԹ**- պատմական գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Սոթք**:

**ՍՈԹՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Սոթ գետի ափին, մարզկենտրոնից 85 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2020մ բարձրության վրա: **Ս.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1829-32թթ. ուներ 245, 1897-ին՝ 1584, 1926-ին՝ 1336, 1939-ին՝ 1946, 1959-ին՝ 1290, 1979-ին՝ 2984, 1989-ին՝ 2790, 2001-ին՝ 1118, 2004-ին՝ 1219 բնակիչ: 1988-89թթ. այստեղ բնակություն են հաստատել Ադրբեջանի Խանլարի շրջանի Ոսկանապատ գյուղից բռնագաղթված հայերը: Գյուղից արլ. գտնվում են ոսկու հանքերը, որոնք մշակվել են դեռևս մեր թվարկությունից մի քանի հարյուրամյակ առաջ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային կուլտուրաների, կարտոֆիլի և ծխախոտի մշակությամբ: Գյուղի մեջ է սբ. Աստվածածին եկեղեցին (9դ.) և "Զարմանք" խաչքարը (1274թ.), իսկ 1,5 կմ արլ.՝ "Հինգ քար" ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.) (**Սոթ**, **Զոդ**):

**ՍՈԼԱԿ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի ձախ ափին, բլրապատ վայրում: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 9 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 363, 1897-ին՝ 1339, 1926-ին՝ 1297, 1939-ին՝ 1759, 1959-ին՝ 1833, 1970-ին՝ 2175, 1979-ին՝ 2110, 1989-ին՝ 2147, 2001-ին՝ 2548, 2004-ին՝ 2418 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Ալաշկերտի, Արճեշի, Վանի գավառների ու Սալմաստի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Հս-արմ.՝ "Տափակ մայրի" վայրում, գտնվում է սբ. Աստվածածին եկեղեցին (7դ.), որի վրա կա 1224թ. արձանագրություն, շուրջը՝ 13-19դդ. խաչքարերով գերեզմանոցներ: Այստեղ է գտնվում նաև միջին դարերի հռչակավոր Մայրավանքը:

**ՍՈՎԵՏԱԿԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Ալաշկերտ**:

**ՍՈՎԵՏԱԿԵՐՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Խաչաղբյուր**:

**ՍՈՎԵՏԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Զանգակատուն:**

**ՍՈՎԵՏԱՔԵՆԴ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Կախակն**:

**№ 1 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Թաիրով**:

**№ 2 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մայիսյան**:

**№ 2 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Արտամետ**:

**№ 3 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արագածոտնի մարզում, տե՛ս **Լուսակն**:

**№ 3 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Արևադաշտ**:

**№ 3 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Լուկաշին**:

**№ 3 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Մուսալեռ**:

**№ 3 ԵՎ № 4 ՍՌՎԽՈԶՆԵՐԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արագածոտնի մարզում, տե՛ս **Նոր Եդեսիա**:

**№ 4 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Ոսկեհատ**:

**№ 4 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Վանանդ**:

**№ 5 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Արաքս**:

**№ 5 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Տալվորիկ**:

**№ 6 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Լենուղի**:

**№ 9 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Պտղունք**:

**№ 10 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Այգեվան**:

**№ 36 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզուն, տե՛ս **Մրգաշեն**:

**№ 38 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Պռոշյան**:

**№ 39 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արագածոտնի մարզում, տե՛ս **Սասունիկ**:

**№ 40 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Քասախ**:

**№ 41 ՍՌՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Կոտայքի մարզում, տե՛ս **Նոր Երզնկա**:

**ՍՌՎՈՒՂԲՈՒԼԱՂ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Պաղաղբյուր**:

**ՍՈՐԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 62 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ: Գյուղը հիմնադրվել է 1870-ական թթ.: Բնակչությունը՝ 1873թ. ուներ 39, 1897-ին՝ 142, 1931-ին՝ 142, 1939-ին՝ 508, 1959-ին՝ 241, 1970-ին՝ 306, 1979-ին՝ 269, 1989-ին՝ 334, 2001-ին՝ 182, 2004-ին՝ 220 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ:

**ՍՈՑԱՐՇԱՎ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Արտիմետ**:

**ՍՈՖԼՈՒ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Նժդեհ**:

**ՍՊԱՆԴԱՐՅԱՆ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 22 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1825 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 65, 1873-ին՝ 429, 1897-ին՝ 632, 1926-ին՝ 816, 1931-ին՝ 881, 1939-ին՝ 856, 1959-ին՝ 873, 1970-ին՝ 1131, 1979-ին՝ 1118, 1989-ին՝ 1446, 2001-ին՝ 1482, 2004-ին՝ 1579 բնակիչ,

որոնց նախնիների մի մասը 1829-30թթ. գաղթել է Ալաշկերտի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, ճակնդեղի և ծխախոտի մշակությամբ: Գյուղում կան բազալտի պաշարներ: **Ս.** ունի սբ. Ամենափրկիչ կիսավեր եկեղեցի, պահպանվել է Արգիշտի I-ի սեպագիր արձանագրությունը:

**ՍՊԱՆԴԱՐՅԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 115 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 22, 1873-ին՝ 112, 1897-ին՝ 230, 1926-ին՝ 342, 1939-ին՝ 544, 1959-ին՝ 564, 1970-ին՝ 555, 1979-ին՝ 465, 1989-ին՝ 378, 2001-ին՝ 446, 2004-ին՝ 482 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, դաշտավարությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղում կա 5-6դդ. եկեղեցի: Գյուղի մոտ, Որոտան գետի վրա, կառուցվել է Սպանդարյանի ջրամբարը:

**ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արարատի մարզում, տե՛ս **Սուրենավան**:

**ՍՊԻՏԱԿ**- քաղաք Լոռու մարզում, Փամբակ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1530 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 15 կմ արմ.: 1831թ. ուներ 466, 1897-ին՝ 3004, 1926-ին՝ 4078, 1939-ին՝ 5035, 1959-ին՝ 3740, 1979-ին՝ 14536, 1989-ին՝ 3740, 1991-ին՝ 17700, 2001-ին՝ 14984, 2004-ին՝ 15000 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյի և Մուշի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և երկրագործությամբ: Քաղաքում է գտնվում սբ. Հարություն եկեղեցին (1999թ.):

**ՍՊԻՏԱԿ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Լեռնանցք**:

**ՍՎԱՐԱՆՑ**- գյուղ Սյունիքի մարզում, Աղանձուգետի մոտ, Արամազդ լեռան հս. փեշին: Հեռավորությունությունը մարզկենտրոնից՝ 52 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1780 մ: 1873թ. ուներ 181, 1897-ին՝ 350, 1926-ին՝ 387, 1989-ին՝ 358, 2001-ին՝ 360, 2004-ին՝ 368 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Գյուղի մոտակայքում են գտնվում "Ցուրաբերդ" ամրոցի ավերակները և համանուն եկեղեցին:

**ՍՎԵՐԴԼՈՎ**- գյուղ Լոռու մարզում: Ուռուտ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 46 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 147, 1897-ին՝ 791, 1926-ին՝ 1497, 1939-ին՝ 1421, 1959-ին՝ 1066, 1970-ին՝ 924, 1979-ին՝ 287, 1989-ին՝ 1077, 2001-ին՝ 1020, 2004-ին՝ 965 բնակիչ, որոնց մի մասը եկել է Արմ. Հայաստանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, կարտոֆիլի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա մատուռ (13դ.), իսկ հս. մասում՝ սբ. Գևորգ եկեղեցի (6դ.):

**ՍՏԱԼԻՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Լենուղի**:

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ**- քաղաք Լոռու մարզում, Ձորագետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 148, 1897-ին՝ 3324, 1926-ին՝ 4973, 1939-ին՝ 6057, 1959-ին՝ 9714, 1975-ին՝ 14764, 1989-ին՝ 14273, 2001-ին՝ 16299, 2004-ին՝ 16600 բնակիչ: **Ս.** է վերանվանվել

1923թ.: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ, անասնապահությամբ, դաշտավարությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Ք-ի շրջակայքում են գտնվում "Չիմանիս" դամբարանադաշտը համանուն եկեղեցիով (10դ.), սբ. Սարգիս եկեղեցին (19դ.) և սբ. Նշան մատուռը (**Զալալօղլի**):

**ՄՐԱՇԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Շիկահող գետի աջափնյա վայրում, մարզկենտրոնից 27 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1025 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 101, 1897-ին՝ 235, 1926-ին՝ 470, 1939-ին՝ 414, 1959-ին՝ 245, 1970-ին՝ 171, 2001-ին՝ 105, 2004-ին՝ 79 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ և պտղաբուծությամբ: **Մ.** ունի սբ.Հռիփսիմե եկեղեցի (17դ.), գյուղից հս-արմ. գտնվում է Սղնախատեղ ավերակ գյուղը: Մոտակայքում կան պղնձահանքի պաշարներ:

**ՄՈւԲԱԹԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գեղաքար**:

**ՄՈւՄԵՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 66 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1575 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1870-ական թթ.: 1873թ. ուներ 60, 1897-ին՝ 185, 1926-ին՝ 220, 1939-ին՝ 310, 1959-ին՝ 301, 1970-ին՝ 325, 1979-ին՝ 299, 1989-ին՝ 315, 2001-ին՝ 346, 2004-ին՝ 369 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մուշի գավառի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի արլ. ծայրամասում կա սրբատեղի:

**ՄՈւՐԵՆԱՎԱՆ**- գյուղ Արարատի մարզում, Ուրծի լեռների հվ. մեղմաթեք սարահարթում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 815 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 22 կմ հվ-արլ.: Գյուղը հիմնադրվել է 1897թ., իսկ 12.11.1946թ. վերանվանվել է **Մ.**: 1897թ. ուներ 49, 1926-ին՝ 110, 1939-ին՝ 244, 1970-ին՝ 1836, 1979-ին՝ 2073, 1989-ին՝ 2406, 2001-ին՝ 2393, 2004-ին՝ 2400 բնակիչ, որոնց նախնիները եկել են Իրանի Սպահան ու Սուլթանաբադ քաղաքներից: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**Սպանդարյանի անվան սովխոզին կից**):

# Վ

**ՎԱԶԱՇԵՆ**- գյուղ Տավուշի մարզում, Վահազնի լեռների լանջին, մարզկենտրոնից 20 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 750 մ բարձրության վրա: **Վ.** է վերանվանվել 25.01. 1978թ.: 1831թ. ուներ 23, 1897-ին՝ 463, 1926-ին՝ 655, 1939-ին՝ 788, 1959-ին՝ 658, 1970-ին՝ 917, 1979-ին՝ 1030, 1989-ին՝ 987, 2001-ին՝ 790, 2004-ին՝ 704 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողի, պտուղ-բանջարեղենի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղից հս-արլ. գտնվում է "Աղբեն Խաչ" մատուռը (**Լալիգյուղ**):

**ՎԱՀԱԳՆԱՁՈՐ**- գյուղ Լոռու մարզում, Փամբակ գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից 1040 մ, հեռավորությունը մարզկենտրոնից 16 կմ հս-արլ.: 1926թ. ուներ 342, 1939-ին՝ 362,

1959-ին՝ 609, 1970-ին՝ 534, 1979-ին՝ 423, 1989-ին՝ 425, 2001-ին՝ 368, 2004-ին՝ 285 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում է գտնվում Վահագնաձորի կամուրջը (19դ.):

**ՎԱՀԱԳՆԻ**- գյուղ Լոռու մարզում, Վահագնի գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1030 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 113, 1897-ին՝ 913, 1926-ին՝ 1688, 1939-ին՝ 1970, 1959-ին՝ 1432, 1970-ին՝ 1359, 1979-ին՝ 1149, 1989-ին՝ 817, 2001-ին՝ 1251, 2004-ին՝ 984 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ.Սարգիս եկեղեցի:

**ՎԱՀԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Գետիկի վերին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 75 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1925 մ բարձրության վրա: Հիմնադրվել է 1925թ.: **Վ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1926թ. ուներ 679, 1939-ին՝ 1032, 1959-ին՝ 1591, 1970-ին՝ 1433, 1979-ին՝ 1342, 1989-ին՝ 1269, 2001-ին՝ 1181, 2004-ին՝ 1213 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի արլ. մասում կան մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարանադաշտ, ամրոց (մ.թ. ա. 1-ին հզմ.), գերեզմանոց (10-13դդ.) և խաչքարեր (10-17դդ.) (**Ռուբենակերտ**, **Օրջոնիկիձե**):

**ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ**- գյուղ Շիրակի մարզում, Ախուրյան գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 247, 1897-ին՝ 466, 1926-ին՝ 272, 1939-ին՝ 538, 1959-ին՝ 602, 1970-ին՝ 747, 1979-ին՝ 752, 1989-ին՝ 919, 2001-ին՝ 1155, 2004-ին՝ 1154 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսի Ինջալար գյուղից: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, ճակնդեղի մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղից հվ-արմ., ձորամիջում, գտնվում են Մարմաշենի վանքը (9-13դդ.) և 13դ. կամուրջը:

**ՎԱՀՐԱՎԱՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Վահրավար գետի աջափնյա լեռնալանջին, մարզկենտրոնից 66 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 18, 1897-ին՝ 194, 1926-ին՝ 410, 1939-ին՝ 257, 1959-ին՝ 187, 1970-ին՝ 174, 1979-ին՝ 89, 2001-ին՝ 57, 2004-ին՝ 56 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա սբ. Գևորգ եկեղեցի, իսկ մոտակայքում՝ 17դ. Կարմրավանքի եկեղեցին (**Պուղավար**):

**ՎԱՂԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 75 կմ հս-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 96, 1897-ին՝ 677, 1926-ին՝ 1209, 1939-ին՝ 1332, 1959-ին՝ 1835, 1970-ին՝ 2407, 1979-ին՝ 2743, 1989-ին՝ 3264, 2001-ին՝ 3601, 2004-ին՝ 4074 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Ալաշկերտի և Մուշի գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղի մեջ

է սբ. Աստվածածին եկեղեցին (1695թ.), 2 կմ հվ.՝ Ձոր գյուղատեղին (10-17դդ.), 3 կմ հվ-արլ.՝ "Ալոյի կող" ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 3 կմ հվ.՝ "Կորդի կող" ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.):

**ՎԱՂԱՏԻՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի ձախափնյա մասում, մարզկենտրոնից 95 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1575 մ բարձրության վրա: Վերանվանվել է **Վ.** 1991թ.: 1831թ. ուներ 44, 1897-ին՝ 1286, 1926-ին՝ 527, 1939-ին՝ 783, 1959-ին՝ 1132, 1970-ին՝ 1318, 1979-ին՝ 1111, 1989-ին՝ 537, 2001-ին՝ 631, 2004-ին՝ 708 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի, ծխախոտի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի մոտ է գտնվում նշանավոր Վաղատնո կամ Որոտնավանքը իր սբ. Ստեփանոս, սբ. Կարապետ և սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներով (10-13դդ.): Գյուղի արմ. կողմում կա խաչքար, իսկ շրջակայքում՝ Փայլատու և Մոխրաղբյուր գյուղատեղիներ, միջնադարյան կամուրջ (**Վաղուդի**):

**ՎԱՂԱՏՈՒՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Վաղատուր գետի հովտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 87 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ: **Վ.** է վերանվանվել 07. 05.1969թ.: 1831թ. ուներ 101, 1897-ին՝ 363, 1926-ին՝ 429, 1939-ին՝ 541, 1959-ին՝ 611, 1970-ին՝ 566, 1979-ին՝ 444, 1989-ին՝ 428, 2001-ին՝ 458, 2004-ին՝ 479 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի երկու եկեղեցի՝ "Վաղատուրի" (հավանաբար 17դ.) և "Ժամ" (**Բայանդուր**):

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ**- քաղաք Արմավիրի մարզում: Քաղաքի մոտակայքով է հոսում Քասաղ գետը: Բարձրությունը ծովի մակերևույթից 880 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ հս-արլ.: Հնում այստեղ եղել է Վարդգեսավան քաղաքը, մ.թ. 140-ական թթ.՝ Վաղարշապատը 3-4դդ.՝ Հայաստանի մայրաքաղաքը, կոչվել է նաև Կայնեպոլիս (Նոր քաղաք): Այժմ հանդիսանում է Հայաստանյաց Առաքելական եկեղեցու կենտրոնը և կաթողիկոսի նստավայրը: 12.03.1945թ. վերանվանվել է Էջմիածին, իսկ 04.12. 1995թ.՝ **Վ.**: 1831թ. ուներ 2175, 1873-ին՝ 2787, 1914-ին՝ 5755, 1919-ին՝ 16886, 1926-ին՝ 8400, 1931-ին՝ 8349, 1959-ին՝ 19560, 1968-ին՝ 27100, 1976-ին՝ 44040, 1990-ին՝ 60000, 2001-ին՝ 56388, 2004-ին՝ 56400 բնակիչ: Բը-նակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Քաղաքում են գտնվում՝ Մայր տաճարը (303թ.), սբ. Հռիփսիմե (618թ.), սբ. Գայանե (630թ.), սբ. Շողակաթ (1694թ.) և սբ. Աստվածածին (1768թ.) եկեղեցիները: Մայր աթոռին կից գործում է Գևորգյան ճեմարանը (1874թ.) (**Վարդգեսավան**, **Էջմիածին**):

**ՎԱՂՈՒԴԻ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վաղատին**:

**ՎԱՅՔ**- քաղաք Վայոց ձորի մարզում, Արփա գետի աջ ափին, ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 17 կմ հվ-արլ.: **Վ.** է վերանվանվել 23.11.1990թ.: 1897թ. ուներ 22, 1963-ին՝ 1115, 1976-ին՝ 4644, 1989-ին՝ 6550, 2001-ին՝ 6024, 2004-ին՝ 6000 բնակիչ: Այստեղ է գտնվում "Ջերմուկ" հանքային ջրերի գործարանի մասնաճյուղը, շինանյութերի կոմբինատը և գորգագործական ֆաբրիկան: Բնակչությունը ըզ-բաղվում է արդյունաբերությամբ և գյու-

ղատնտեսությամբ: Դեպի հս-արլ., Երևան-Ջերմուկ ճանապարհի ձախ կողմում, գտնվում են հին բնակավայրի ավերակներ և սբ. Տրդատ եկեղեցին: **Վ.**-ից մոտ 1 կմ արմ., Ար-փայի վրա, գտնվում է "Պասկևիչի" կամուրջը՝ վերանորոգված 1827թ. (**Ազիզբեկով**):

**ՎԱՆԱՁՈՐ**- քաղաք Լոռու մարզում, մարզկենտրոն, Փամբակ գետի հովտում, որտեղ վերջինիս մեջ թափվում է Տանձուտ վտակը: **Վ.** շրջապատված է հս-ից՝ Բազումի, իսկ հվ-ից՝ Փամբակի լեռներով: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1300 մ, հեռավորությունը Երևանից՝ 104 կմ: Քաղաքը 1926թ. վերանվանվել է Մարտունաշեն, 03.01.1935թ-ից՝ Կիրովական, իսկ 25.06.1992թ.՝ **Վ.**: 1831թ. ուներ 494, 1873-ին՝ 2017, 1897-ին՝ 3917, 1926-ին՝ 8640, 1939-ին՝ 17607, 1959-ին՝ 49424, 1970-ին՝ 106691, 1980-ին՝ 148876, 2001-ին՝ 107394, 2004-ին՝ 106300 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Ք-ում են գտնվում Գուգարաց սբ. Սարգիս, ավետարանչական և ռուսական ուղղափառ եկեղեցիները, "Կոտրած" եկեղեցին (վաղ մջնդ.), սբ. Կիրակի (1894թ.), "Կամակատար" մատուռները (19դ.) և Գանձաքար ամրոցը (մ.թ. ա.2-րդ հզմ.) (**Ղարաքիլիսա**, **Մարտունաշեն**, **Կիրովական**):

**ՎԱՆԱՆԴ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտանի աջակողմյան Քաշունի վտակի ձախափնյա հովտում: Հեռավորությունը Շուռնուխ գյուղից՝ 9 կմ հվ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1430 մ: **Վ.** է վերանվանվել 04. 07.2006թ.: 1897թ. ուներ 35, 1926-ին՝ 37, 1939-ին՝ 73, 1959-ին՝ 131, 1970-ին՝ 137, 1979-ին՝ 121, 1989-ին՝ 45 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 5-6 կմ հվ-արլ., անտառի մեջ, կա կիսավեր եկեղեցի (**Թաղտուն**, **Ղուրդղուլլաղ**):

**ՎԱՆԱՆԴ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 24 կմ հվ-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1025 մ բարձրության վրա: Գյուղը կազմավորվել է 1984թ.: 1989թ. ուներ 865, 2001-ին՝ 845, 2004-ին՝ 1188 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և խաղողագործությամբ (**№ 4 սովխոզին կից**):

**ՎԱՆԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 870 մ: Գյուղը հիմնվել է 1873թ.: 1873թ. ուներ 166, 1897-ին՝ 316, 1926-ին՝ 299, 1939-ին՝ 629, 1959-ին՝ 1219, 1970-ին՝ 1790, 1979-ին՝ 1974, 1989-ին՝ 2141, 2001-ին՝ 2314, 2004-ին՝ 2300 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: **Վ**-ից 27 կմ արլ. զըտ-նըվում է "Սրբաշեն" գյուղատեղին (մջնդ.-19-20դդ.), 38 կմ արլ.՝ "Սեվահող" գյուղատեղին (10-14դդ.,19-20դդ.): Վերջինում է գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (12-13դդ.):

**ՎԱՆԵՎԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհի վրա, մարզկենտրոնից 69 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1940մ բարձրության վրա: **Վ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1873թ. ուներ 183, 1897-ին՝ 301, 1926-ին՝ 174, 1939-ին՝ 315, 1959-ին՝ 431, 1970-ին՝ 635, 1979-ին՝ 725, 1989-ին՝ 357, 2001-ին՝ 349, 2004-ին՝ 397 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի և կարտոֆիլի մշակու-

թյամբ: Գյուղի հս. մասում կան 9-13դդ. խաչքարեր (**Շաֆակ**):

**ՎԱՆԵՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Աճանան գետի վերին հոսանքի աջ ափին, մարզկենտրոնից 24 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1225 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 25, 1897-ին՝ 213, 1926-ին՝ 65, 1939-ին՝ 172, 1959-ին՝ 98, 1979-ին՝ 149, 2001-ին՝ 83, 2004-ին՝ 76 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղից 1 կմ հվ. պահպանված են նախկին Հոռմանց (Հոռոմանց) գյուղի ավերակները, եկեղեցի և գերեզմանոց (**Ղարատղա**):

**ՎԱՍԱԿԱԿԵՐՏ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գորայք**:

**ՎԱՍԱԿԱՇԵՆ**- նախկինում գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս ք. **Վարդենիս**:

**ՎԱՐԱԳԱՎԱՆ**- գյուղ Տավուշի մարզում, Վարագաջուր գետի հովտի ձախ լանջին, մարզկենտրոնից 38 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 800 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 112, 1897-ին՝ 681, 1926-ին՝ 517, 1939-ին՝ 832, 1959-ին՝ 626, 1970-ին՝ 764, 1979-ին՝ 669, 1989-ին՝ 719, 2001-ին՝ 748, 2004-ին՝ 716 բնակիչ, որոնց նախնիները տարբեր ժամանակներում եկել են Արցախից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի, ծխախոտի, բանջարեղենի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից արմ., սարալանջի վրա, գտնվում է 12-13դդ. "Նոր Վարագավանք" վանական համալիրը, իսկ 3 կմ արլ.՝ Վարագ գյուղատեղին, խաչքարերով գերեզմանոցը և 10-17դդ. եկեղեցին (**Վարդապետի գյուղ**):

**ՎԱՐԴԱԲԼՈՒՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Փամբակ և Արագած լեռների միջև ընկած գոգավորությունում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2075 մ: Գյուղը հիմնադրվել է 1829-30թթ.: 1831թ. ուներ 373, 1897-ին՝ 267, 1926-ին՝ 706, 1959-ին՝ 667, 1970-ին՝ 681, 1979-ին՝ 600, 1989-ին՝ 486, 2001-ին՝ 577, 2004-ին՝ 630 բնակիչ, որոնց նախնիները զաղթել են Մշո դաշտի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա 1911թ. սբ.Դանիել եկեղեցի:

**ՎԱՐԴԱԲԼՈՒՐ**- գյուղ Լոռու մարզում, Գարգառ գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1325 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 75, 1886-ին՝ 830, 1897-ին՝ 1019, 1926-ին՝ 1597, 1939-ին՝ 1810, 1959-ին՝ 1517, 1970-ին՝ 1906, 1979-ին՝ 1146, 1989-ին՝ 1390, 2001-ին՝ 1353, 2004-ին՝ 1178 բնակիչ, որոնց նախնիները եկել են Մուշից և Սասունից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղի արլ. կողմում է գտնվում "սբ. Սարգիս" ամրոցը, հս. կողմում, Ձորագետի վտակի ափին, գտնվում է "Զգրաշեն" եկեղեցին (6դ.), գյուղում՝ սբ. Աստվածածին եկեղեցին (11-19դդ.), սբ. Խաչ (12դ.), սբ. Սարգիս (10դ.), սբ. Գևորգ 12դ. մատուռները:

**ՎԱՐԴԱՀՈՎԻՏ**- գյուղ Վայոց ձորի մարզում, ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 31 կմ հս-արլ.: **Վ.** է վերանվանվել 03. 04.1991թ.: 1989թ. ուներ 220, 2001-ին՝ 94, 2004-ին՝ 170 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան 13-16դդ. խաչքարեր (**Գյուլլիդուզ**):

**ՎԱՐԴԱՁՈՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 26 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 169, 1926-ին՝ 1308, 1939-ին՝ 1750, 1959-ին՝ 1404, 1970-ին՝ 1999, 1979-ին՝ 2044, 1989-ին՝ 2277, 2001-ին՝ 2949, 2004-ին՝ 3033 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. և 1877-78թթ. գաղթել են Ալաշկերտի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի արմ. մասում է "Գոմերի ժամ" գյուղատեղին (9-17դդ.), "Ծովաբերդ" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և 1 կմ արլ.՝ "Քռայի" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) ամրոցները: Գյուղի կենտրոնում կա սբ. Աստվածածին եկեղեցի (19դ.), խաչքարեր (9-16դ.), գերեզմանոց (9-20դդ.), իսկ հվ-արմ. մասում՝ սբ. Սարգիս եկեղեցի (վրկռ. 19դ.):

**ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 27 կմ հս., ծովի մակերևույթից 2040 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 151, 1897-ին՝ 225, 1926-ին՝ 271, 1939-ին՝ 383, 1959-ին՝ 93, 1970-ին՝ 97, 1979-ին՝ 70, 1989-ին՝ 72, 2001-ին՝ 90, 2004-ին՝ 94 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Կարինից և Բասենից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում կա 1700թ. եկեղեցի:

**ՎԱՐԴԱՆԱՇԵՆ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 18 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 32, 1897-ին՝ 403, 1926-ին՝ 319, 1939-ին՝ 307, 1959-ին՝ 423, 1970-ին՝ 591, 1979-ին՝ 630, 1989-ին՝ 762, 2001-ին՝ 913, 2004-ին՝ 1249 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1914-20թթ. գաղթել են Սուրմալուի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ և բանջաբաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա 19դ. սբ. Աստվածածին մատուռ:

**ՎԱՐԴԱՆԻՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրի գետի միջին հոսանքի ձախափնյա մասում, մարզկենտրոնից 56 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1075 մ բարձրության վրա: 1831թ ուներ 41, 1887-ին՝ 516, 1926-ին՝ 196, 1939-ին՝ 374, 1959-ին՝ 413, 1970-ին՝ 480, 1979-ին՝ 483, 1989-ին՝ 201, 2001-ին՝ 197, 2004-ին՝ 151 բնակիչ: Շրջակայքում կան մոլիբդենի և ոսկու երևակումներ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 7 կմ հս-արլ. գտնվում է Թխկուտ գյուղատեղին, որտեղ նշմարվում են եկեղեցու և տների ավերակներ (**Լռկ**):

**ՎԱՐԴԱՇԱՏ**- գյուղ Արարատի մարզում, Արածոգետի վերին հոսանքի աջ կողմում, սարալանջի վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 56 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 73, 1959-ին՝ 200, 1970-ին՝ 195, 1979-ին՝ 173, 1989-ին՝ 173, 2001-ին՝ 230, 2004-ին՝ 200, որոնց մի մասի նախնիները գաղթել են Խոյ և Սալմաստ գավառներից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և հողագործությամբ: **Վ.** կա մի կիսավեր եկեղեցի (19դ.): Գյուղից 2 կմ հս. կա գյուղատեղի:

**ՎԱՐԴԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, Ազատ գետի ափին, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 900 մ: 1831թ. ուներ 118, 1897-ին՝ 152, 1926-ին՝ 155, 1939-ին՝ 195, 1959-ին՝ 383, 1970-ին՝

439, 1979-ին՝ 469, 1989-ին՝ 533, 2001-ին՝ 471, 2004-ին՝ 500 բնակիչ, որոնց մի մասը գաղթել է Խոյ և Սալմաստ գավառներից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և բանջարաբուծությամբ:

**ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՅՈՒՂ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Վարագավան**:

**ՎԱՐԴԱՎԱՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 11 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1025 մ բարձրության վրա: **Վ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1897թ. ուներ 201, 1926-ին՝ 118, 1939-ին՝ 221, 1959-ին՝ 180, 1970-ին՝ 275, 1979-ին՝ 381, 2001-ին՝ 120, 2004-ին՝ 56 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և մեղվաբուծությամբ: Այստեղ կան եկեղեցի, գերեզմանոցներ և "Պուտխաչ" հնավայրի ավերակները (**Վերին Գյոդակլու**):

**ՎԱՐԴԱՔԱՐ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 15 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 201, 1897-ին՝ 723, 1926-ին՝ 829, 1939-ին՝ 789, 1959-ին՝ 673, 1970-ին՝ 768, 1979-ին՝ 612, 1989-ին՝ 831, 2001-ին՝ 646, 2004-ին՝ 643 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-29թթ. գաղթել է Կարսից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի մշակությամբ: Շրջակայքում կան գյուղատեղի, "Սրբի դաշտ" մատուռ, խաչարձան, 19դ.սբ. Աստվածածին եկեղեցի, բրոնզե դարին վերաբերող զանազան հնություններ:

**ՎԱՐԴԳԵՍԱՎԱՆ**- պատմական քաղաք Արմավիրի մարզում, տե՛ս **Վաղարշապատ**:

**ՎԱՐԴԵՆԻԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Վարդենիս գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 46 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնըվում է ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 560, 1897-ին՝ 3016, 1926-ին՝ 4693, 1939-ին՝ 5198, 1959-ին՝ 5236, 1970-ին՝ 8126, 1979-ին՝ 8296, 1989-ին՝ 7956, 2001-ին՝ 8798, 2004-ին՝ 10199 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1827-29թթ. գաղթել են Ալաշկերտի ու Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, ծխախոտի մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղի արլ. մասում են գտնվում սբ. Աստվածածին (19դ.), "Իշխանավանք" (13դ.), "Ծաղկավանք" (9-10դդ.) եկեղեցիները; սբ. Հովհաննես (12-13դդ.), և Թուխ Մանուկ (19դ.) մատուռները: Գյուղի շրջակայքում կան "Բերդագրակ" (9-16դդ.), "Լեռնանցքի ավերակներ" (9-17դդ.) և Հին Վարդենիկ (վաղ մջնդ.) գյուղատեղիներ (**Վարդենիս**, **Ներքին Գեղաձոր**):

**ՎԱՐԴԵՆԻՍ**- քաղաք Գեղարքունիքի մարզում: Գտնվում է Սևանա լճից արլ., Մասրիկի դաշտի հվ. մասում, մարզկենտրոնից 74 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 178, 1897-ին՝ 2193, 1926-ին՝ 3468, 1959-ին՝ 6322, 1979-ին՝ 11549, 1989-ին՝ 13905, 2001-ին՝ 12753, 2004-ին՝ 12700 բնակիչ: Քաղաքի տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավում արդյունաբերությունը: Ք-ի գյուղացիական տնտեսությունները զբաղվում է անասնապահությամբ, ինչպես նաև հացահատիկի, կերային կուլտուրաների և ծխախոտի մշակությամբ: Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այստեղ

հայտնաբերվել են բրոնզե դարի մի քանի տասնյակ դամբարաններ: Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցված է 1902-10թթ., որի բակում կան գերեզմաններ, գեղազարդ խաչքարեր ու տապանաքարեր (15-18դդ.) (**Վասակաշեն**):

**ՎԱՐԴԵՆԻՍ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջակողմյան Վարդենիս վտակի կանաչապատ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 33 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: 1831թ. ուներ 248, 1897-ին՝ 1067, 1926-ին՝ 1190, 1939-ին՝ 1347, 1959-ին՝ 706, 1970-ին՝ 623, 1979-ին՝ 562, 1989-ին՝ 673, 2001-ին՝ 604, 2004-ին՝ 703 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Ալաշկերտի, Բայազետի, Բասենի, Մուշի Վանի և Խոյի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում 17դ. սբ. Աստվածածին եկեղեցին և12-13դդ. "Յոթ վերք" մատուռը: **Վ**-ից 2 կմ հվ-արլ., Քասաղի ափին գտնվում է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. "Բերդշեն" ամրոցը, 1,5 կմ հվ-արլ.՝ "Բլրի գլուխ" բնակատեղին (մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ.), իսկ հվ-արմ. մասում՝ "Չոիկ" բնակատեղին (մ.թ.ա.2-րդ-1-ին հզմ.):

**ՎԱՐԴԵՆԻՍ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Վարդենիկ**:

**ՎԱՐԴԵՆՈՒՏ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 314, 1897-ին՝ 961, 1926-ին՝ 883, 1939-ին՝ 1172, 1959-ին՝ 756, 1970-ին՝ 964, 1979-ին՝ 699, 1989-ին՝ 696, 2001-ին՝ 852, 2004-ին՝ 916 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Պարսկահայաստանի տարբեր շրջաններից և Արմ. Հայաստանի Ալաշկերտի ու Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում 17դ. սբ. Աստվածածին եկեղեցին և 13դ. "Թուխ Մանուկ" մատուռը:

**ՎԱՐԴԵՐԵՍ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Երանոս**:

**ՎԱՐՍԵՐ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 35 կմ հս-արմ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1915 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 126, 1897-ին՝ 778, 1926-ին՝ 1225, 1939-ին՝ 1452, 1959-ին՝ 1458, 1970-ին՝ 1616, 1979-ին՝ 1474, 1989-ին՝ 1524, 2001-ին՝ 1738, 2004-ին՝ 2010 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828թ. գաղթել են Խոյի և Մակուի գյուղերից, ինչպես նաև 1829թ. Արմ. Հայաստանի Բայազետ ք-ից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ: Գյուղի արմ. եզրին է գտնվում "Ծաղկավանք" մատուռը (16դ.), գյուղի մեջ կա 9-20դդ. գերեզմանոց և 9-16դդ. խաչքարեր:

**ՎԵԴԻ**- քաղաք Արարատի մարզում, Ուրծի լեռների հվ-արլ. փեշերին, Վեդի գետի աջափնյա սարավանդում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 880 մ: Բնակավայրը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 1244, 1897-ին՝ 2798, 1926-ին՝ 1839, 1937-ին՝ 2830, 1959-ին՝ 3581, 1970-ին՝ 6165, 1979-ին՝ 7900, 1989-ին՝ 10757, 2001-ին՝ 12963, 2004-ին՝ 13000 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Վանի, Շատախի և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է

բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Քաղաքից 1 կմ հս-արլ. կա 8-13դդ. ամրոց:

**ՎԵԴՈՒ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արարատի մարզում, տե՛ս **Գինեվետ**:

**ՎԵՐԻՆ ԱԽԹԱԼԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Ախթալա**:

**ՎԵՐԻՆ ԱԽՏԱ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Լեռնանիստ**:

**ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 6 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 880 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 370, 1897-ին՝ 1299, 1926-ին՝ 1639, 1939-ին՝ 1999, 1959-ին՝ 2974, 1970-ին՝ 3319, 1979-ին՝ 3525, 2001-ին՝ 4193, 2004-ին՝ 4491 բնակիչ, որոնց նախնիները եկել են Խոյից ու Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղում կա մի եկեղեցի (19դ.): Գյուղից հս-արմ. գտնվում են Դվին մայրաքաղաքի ավերակները:

**ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 40 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 70, 1897-ին՝ 489, 1926-ին՝ 242, 1939-ին՝ 449, 1959-ին՝ 442, 1970-ին՝ 432, 1979-ին՝ 397, 2001-ին՝ 472, 2004-ին՝ 526 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունի Աղբիկ, Դաշտադեմ, Ծղակ, Հեթինք, Մուշի և Բայազետի Մոսուն, Առաղ, Հավատորիկ, Սինամերկ, Տալիասն գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հացահատիկի մշակությամբ: Գյուղում է գտնվում 12-17դդ. սբ. Ամենափրկիչ մատուռը:

**ՎԵՐԻՆ ԳԱՆՁԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ծաղկաշեն**:

**ՎԵՐԻՆ ԳԵՂԱՎԱՆՔ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի ձախ ափին, մարզկենտրոնից 26 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: **Վ.Գ.** է վերանվանվել 04.07. 2006թ.: 1831թ. ուներ 41, 1897-ին՝ 140, 1926-ին՝ 26, 1939-ին՝ 235, 1959-ին՝ 320, 1970-ին՝ 650, 1979-ին՝ 586, 1989-ին՝ 405 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Պահպանվել են "Սուխան", "Իմաստնոց" և "Տոնաշեն" գյուղատեղիները (**Փիրլու**):

**ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Արգիճի գետի ստորին հոսանքի ձախ ափին, մարզկենտրոնից 35 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1980 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 94, 1897-ին՝ 1503, 1926-ին՝ 1907, 1939-ին՝ 2268, 1959-ին՝ 2656, 1870-ին՝ 3601, 1979-ին՝ 3589, 1989-ին՝ 3916, 2001-ին՝ 5055, 2004-ին՝ 5109 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են հիմնականում Ալաշկերտի Խաստուտ գյուղից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղում կա սբ. Աստվածածին եկեղեցի (1878թ.): Գյուղից 15 կմ հվ-արմ. կան "Սպիտակ բանալի" (մ.թ.ա. 1-ին հզմ.), "Տաթև" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) ամրոցներ, քարայր-կացարան (մ.թ.ա. 1-ին հզմ.- մջնդ.): Գյուղի արլ. եզրին, ձորում, Արգիճի գետի ձախ ափին կան 9-14դդ. խաչքարեր և 15-16դդ. "Ձորի մատուռ" անունով մատուռ (**Վերին Կոթ**, **Ծառաձոր**):

**ՎԵՐԻՆ ԳԻՐԱԹԱՂ**- գյուղ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախ կողմում, մարզկենտրոնից 19 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 328, 1926-ին՝ 225, 1939-ին՝ 139, 1959-ին՝ 310, 1979-ին՝ 120 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Մոտակայքում են Ջրախոր գյուղի և եկեղեցու ավերակները:

**ՎԵՐԻՆ ԳՅՈԴԱԿԼՈւ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վարդավանք**:

**ՎԵՐԻՆ ԴՎԻՆ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 950 մ: Գյուղը հիմնադրվել է 1873թ.: 1873թ. ուներ 278, 1857-ին՝ 745, 1926-ին՝ 543, 1939-ին՝ 726, 1959-ին՝ 2974, 1979-ին՝ 3525, 2001-ին՝ 2175, 2004-ին՝ 2186 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: **Վ.Դ.** կա 19դ. եկեղեցի:

**ՎԵՐԻՆ ԹԱԼԻՆ**- քաղաք Արագածոտնի մարզում, տե՛ս **Թալին**:

**ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Խոտանան գետի վերնագավառում, Բարգուշատ լեռների հվ. լանջին, մարզկենտրոնից 26 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 34, 1897-ին՝ 511, 1926-ին՝ 645, 1939-ին՝ 736, 1959-ին՝ 396, 1970-ին՝ 393, 1979-ին՝ 237, 2001-ին՝ 295, 2004-ին՝ 183 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Այստեղ կա 17դ. սբ. Աստվածածին եկեղեցի, իսկ շրջակայքում՝ 14դ. հուշարձան-դամբարաններ:

**ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ**- գյուղ Տավուշի մարզում, Տավուշ գետի աջափնյակում, մարզկենտրոնից 59 կմ արլ., ծովի մակերևույթից 1320 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 329, 1897-ին՝ 779, 1926-ին՝ 1095, 1939-ին՝ 1529, 1959-ին՝ 1765, 1970-ին՝ 2136, 1979-ին՝ 2011, 1989-ին՝ 1970, 2001-ին՝ 1948, 2004-ին՝ 1870 բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել են Լոռու և Արցախի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, ծխախոտագործությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում պահպանվել է 1701թ. սբ. Հովհաննես եկեղեցին, իսկ արլ. մասում՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. Նորաշենի դամբարանադաշտը:

**ՎԵՐԻՆ ԿՋՆՈւՏ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գեղհովիտ**:

**ՎԵՐԻՆ ԿՈԹ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Վերին Գետաշեն**:

**ՎԵՐԻՆ ՆՈՐԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում, տե՛ս **Նորաշեն**:

**ՎԵՐԻՆ ՇՈՐԺԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Մասրիկ գետի վերին հոսանքի հովտում, մարզկենտրոնից 84 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2340 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 75, 1897-ին՝ 218, 1926-ին՝ 253, 1939-ին՝ 402, 1959-ին՝ 390, 1970-ին՝ 592, 1979-ին՝ 710, 2001-ին՝ 31, 2004-ին՝ 27 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գյուղի շրջակայքում կան՝ եկեղեցի (1251թ.) և խաչքարեր (13-16դդ.):

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ**- գյուղ Կոտայքի մարզում, Սևանի խճուղու վրա, մարզկենտրոնից 35 կմ հվ-արմ.: **Վ.Պ.** է վերանվանվել 03.04.1991թ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: 1959թ. ուներ 435, 1970-ին՝ 1031, 1989-ին՝ 764, 2001-ին՝ 887, 2004-ին՝ 1280 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործու-

թյամբ և պտղաբուծությամբ (**Այգեգործական պետական տնտեսությանը կից**):

**ՎԵՐԻՆ ՍԱՄՆԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 41 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: **Վ.Ս.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 142, 1922-ին՝ 175, 1926-ին՝ 223, 1931-ին՝ 343, 1939-ին՝ 413, 1959-ին՝ 348, 1970-ին՝ 400, 1979-ին՝ 462, 1989-ին՝ 775, 2001-ին՝ 363, 2004-ին՝ 390 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Սասունի և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ (**Վերին Սասունաշեն**):

**ՎԵՐԻՆ ՍԱՍՈՒՆԱՇԵՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Վերին Սասնաշեն**:

**ՎԵՐԻՆ ՍԱՍՈՒՆԻԿ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ. լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1625 մ: **Վ.Ս.** է վերանվանվել 07.11.1995թ.: 1873թ. ուներ 272, 1897-ին՝ 382, 1906-ին՝ 345, 1926-ին՝ 121, 1931-ին՝ 243, 1939-ին՝ 398, 1959-ին՝ 410, 1989-ին՝ 2371, 2001-ին՝ 81, 2004-ին՝ 190 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղը ունի 7դ. եկեղեցի (**Սասունիկ**):

**ՎԵՐԻՆ ՍԻՍԻԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Հացավան**:

**ՎԵՐԻՆ ՎԱՐԴԱՆԱՁՈՐ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Թխկուտ**:

**ՎԵՐԻՆ ՔՅՈՐՓԼՈՒ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Ջորական**:

**ՎԵՐԻՇԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Վարարակ գետի վերին հոսանքի ձորամիջում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 72 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ: 1897թ. ուներ 351, 1926-ին՝ 866, 1939-ին՝ 918, 1959-ին՝ 1149, 1970-ին՝ 1669, 1979-ին՝ 1727, 1989-ին՝ 1859, 2001-ին՝ 2314, 2004-ին՝ 2385 բնակիչ: Բն-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և պտղաբուծությամբ: Գյուղն ունի երկու եկեղեցի, որոնցից մեկը սբ. Նորակունքն է: Գյուղի շրջակայքում կան մի քանի գյուղատեղիներ:

**ՎԵՐՆԱՇԵՆ**- գյուղ Վայոց ձորի մարզում: Ծովի մակերևույթից՝ 1540 մ բարձրության վրա, մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 91, 1897-ին՝ 594, 1926-ին՝ 590, 1939-ին՝ 809, 1959-ին՝ 812, 1970-ին՝ 1073, 1979-ին՝ 1137, 1989-ին՝ 1228, 2001-ին՝ 1255, 2004-ին՝ 1615 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Խոյից ու Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում սբ. Հակոբ եկեղեցին (17դ.), 13-14դդ. խաչքարեր: Գյուղի հս. եզրում կա 13դ. եկեղեցի, 6 կմ արլ.՝ Գլաձորի վանքը (5-13դդ.), սբ. Ստեփանոս (1273թ.), սբ. Նշան (13դ.) և 5-7դդ. բազիլիկ եկեղեցիները:

**ՎԺԱՆ**- պատմական գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Ուջան**:

**ՎԺԵՆԻՍ**- պատմական գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ուժանիս**:

**ՎԻՏԱՄԻՆԱՅԻՆ ԽՈՏԱԼՅՈՒՐԻ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Շենիկ**:

**ՎՈՍԿՐԵՍԵՆԿԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Լերմոնտովո**:

**ՎՈՐՈՇԻԼՈՎԻ ԱՆՎԱՆ**- նախկինում ավան Արմավիրի մարզում, տե՛ս **Հացիկ**:

**ՎՈՒՐՂՈՒՆ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Հովք**:

## Տ

**ՏԱԹԵՎ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1680 մ: 1831թ. ուներ 313, 1873-ին՝ 1326, 1897-ին՝ 1971, 1926-ին՝ 1958, 1931-ին՝ 2058, 1939-ին՝ 2096, 1959-ին՝ 1376, 1970-ին՝ 1408, 1979-ին՝ 1096, 1989-ին՝ 913, 2001-ին՝ 1042, 2004-ին՝ 1025 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, պըտ-ղաբուծությամբ, հացահատիկի, ծըխախոտի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում և նրա շրջակայքում են գտնվում Տաթևի վանքը, սբ. Պողոս-Պետրոս (906թ.), սբ. Գրիգոր Լուսավորիչ (848թ.), սբ. Աստվածածին (1087թ.) եկեղեցիներով, ճոճվող հուշասյունը (10դ.): Գյուղի պատմամշակութային կառույցներից են "Սատանի" և Տաթևի (17դ.) կամուրջները:

**ՏԱԼՎՈՐԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 950 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 22 կմ հվ-արմ.: 26.09.1984թ. վերանվանվել է **Տ.**: 1989թ. ուներ 129, 2001-ին՝ 204, 2004-ին՝ 327 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ (**№ 5 տովխոզին կից**):

**ՏԱՃԱՐԱԲԱԿ**- պատմական գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Ձորաղբյուր**:

**ՏԱՆՁԱՎԵՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Քաշունի գետի հովտում, մարզկենտրոնից 37 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա: 1886թ. ուներ 75, 1919-ին՝ 173, 1926-ին՝ 55, 1931-ին՝ 93, 1939-ին՝ 204, 1959-ին՝ 310, 1970-ին՝ 246, 1979-ին՝ 193, 1989-ին՝ 147, 2001-ին՝ 263, 2004-ին՝ 178 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի սբ. Ստեփանոս եկեղեցի (15դ.), շրջակայքում՝ Միջնադաշտ և Մաձ կոչվող վայրերում պահպանվել են մ.թ.ա. 3-րդ հզմ. բնակավայրեր և դամբարան-քարայրեր:

**ՏԱՆՁԱՏԱՓ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ կողմում, Աղանձուգետ գետի ձորում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1420 մ: 1831թ. ուներ 32, 1873-ին՝ 240, 1886-ին՝ 312, 1897-ին՝ 362, 1922-ին՝ 466, 1926-ին՝ 262, 1931-ին՝ 404, 1939-ին՝ 236, 1959-ին՝ 209, 1970-ին՝ 149, 1979-ին՝ 109, 1989-ին՝ 76, 2001-ին՝ 99, 2004-ին՝ 140 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում է 17-18դդ. սբ. Մինաս եկեղեցին, իսկ 1,5 կմ հս., ձորալանջին, գտնվում է "Սրվանց Խաչ" մատուռը:

**ՏԱՆՁՈՒՏ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 11 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 211, 1873-ին՝ 496, 1897-ին՝ 769, 1922-ին՝ 605, 1926-ին՝ 596, 1931-ին՝ 660, 1939-ին՝ 561, 1959-ին՝ 1131, 1970-ին՝ 1389, 1979-ին՝ 1501, 1989-ին՝ 1679, 2001-ին՝ 1914, 2004-ին՝ 1994 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Կարսի և Մուշի գյուղերից, իսկ մի մասն էլ հայրենադարձվել Իրանից: Կան նաև

Բերդի, Թալինի, Մարալիկի տարածաշրջաններից եկած վերաբընակիչներ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Գյուղում է գտնվում 1912թ. սբ. Սահակ եկեղեցին:

**ՏԱՇԻՐ**- քաղաք Լոռու մարզում, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 42 կմ հս-արմ.: Տ. է վերանվանվել 03.04.1991թ.: 1886թ. ուներ 2284, 1897-ին՝ 3076, 1926-ին՝ 4042, 1939-ին՝ 4245, 1959-ին՝ 4766, 1989-ին՝ 10090, 2001-ին՝ 9538, 2004-ին՝ 9400 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ, անասնապահությամբ, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Քաղաքում են գտնվում սբ. Սարգիս (9-13դդ.) և սբ. Աստվածածին եկեղեցիները (**Կալինինո**):

**ՏԱՇՏՈւՆ**- գյուղ Սյունիքի մարզում, Մեղրի գետից ձախ, մարզկենտրոնից 47 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: Տ. լեռնանցքով է (2480 մ) անցնում Կապան-Մեղրի ավտոմայրուղին: 1831թ. ուներ 23, 1873-ին՝ 147, 1897-ին՝ 311, 1922-ին՝ 470, 1926-ին՝ 500, 1931-ին՝ 621, 1939-ին՝ 580, 1959-ին՝ 495, 1970-ին՝ 342, 1979-ին՝ 343, 1989-ին՝ 259, 2001-ին՝ 170, 2004-ին՝ 158 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի 11-13դդ. սբ. Ստեփանոս եկեղեցի (**Դաշտոն**):

**ՏԱՎՐՈՍ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Տավրուս**:

**ՏԱՎՐՈւՍ**- գյուղ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների հվ. լանջին, Ողջիի վտակ Աճանան գետի հովտում, մարզկենտրոնից 24 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա: Տ. է վերանվանվել 04.07.2006թ.: 1831թ. ուներ 11, 1897-ին՝ 303, 1926-ին՝ 144, 1939-ին՝ 268, 1959-ին՝ 216, 1970-ին՝ 330, 1979-ին՝ 344, 2001-ին՝ 105, 2004-ին՝ 88 բը-նակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբուծությամբ (**Տավրոս**, **Դովրուս**):

**ՏԱՎՈւՇ**- գյուղ Տավուշի մարզում, Տավուշ գետի ձախափնյակում, Կենաց լեռան լանջին, մարզկենտրոնից 49 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա: Տ. է վերանվանվել 04.07.2006թ.: 1831թ. ուներ 315, 1897-ին՝ 1289, 1926-ին՝ 1782, 1939-ին՝ 1953, 1959-ին՝ 1656, 1970-ին՝ 1707, 1979-ին՝ 1469, 1989-ին՝ 1573, 2001-ին՝ 1656, 2004-ին՝ 1580 բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ են տեղափոխվել Արցախից, Լոռու և Գեղարքունիքի մարզերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, դաշտավարությամբ և անասնապահությամբ: Ունի սբ. Աստվածածին եկեղեցի (վերակառուցված 19դ.), իսկ արմ. մասում է գտնվում 10-20դդ. Կածարեթ ամրոցը (**Թովուզ**):

**ՏԱՐՈՆԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 15 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 845 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 658, 1873-ին՝ 492, 1922-ին՝ 339, 1931-ին՝ 560, 1950-ին՝ 248, 1970-ին՝ 1243, 1979-ին՝ 1448, 1989-ին՝ 1822, 2001-ին՝ 2017, 2004-ին՝ 2201 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1915-20թթ. գաղթել են Վանի, Բիթլիսի, Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Տ. արմ. կողմում է գտնվում մ.թ.ա. 4-րդ-1-ին հզմ. Մեծամոր բլուր-հնավայրը:

Գյուղն ունի սբ. Աստվածածին եկեղեցի:

**ՏԱՓԵՐԱԿԱՆ**- գյուղ Արարատի մարզում, հարթավայրում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 4 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 835 մ: Հիմնադրվել է 1931թ., իսկ 03.04.1991թ. վերանվանվել է Տ.: 1939թ. ուներ 645, 1959-ին՝ 2321, 1970-ին՝ 2956, 1979-ին՝ 3003, 1989-ին՝ 3495, 2001-ին՝ 3708, 2004-ին՝ 3384 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ (**Կիրովի անվան սովխոզին կից**):

**ՏԵՂ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից՝ 88 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ: 1831թ. ուներ 798, 1873-ին՝ 2285, 1897-ին՝ 2703, 1922-ին՝ 2669, 1926-ին՝ 2167, 1931-ին՝ 2775, 1939-ին՝ 2570, 1959-ին՝ 2213, 1970-ին՝ 2197, 1979-ին՝ 2109, 1989-ին՝ 1755, 2001-ին՝ 2333, 2004-ին՝ 2520 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, ծխախոտագործությամբ, կարտոֆիլի, ճակնդեղի և կերային կուլտուրաների մշակությամբ: Տ-ի սբ. Գևորգ եկեղեցու մի մասը կառուցված է 4-5դդ., իսկ մյուսը՝ 1737թ.: Գյուղից 3 կմ հվ-արլ. գտնվում է սրբատաշ բազալտից կառուցված “Սռնեղցի” կոչվող եկեղեցին:

**ՏԵՂԵՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ. բարձրադիր լանջին, Տեղեր գետի աջ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 35, 1873-ին՝ 364, 1897-ին՝ 459, 1922-ին՝ 506, 1926-ին՝ 408, 1931-ին՝ 367, 1939-ին՝ 655, 1959-ին՝ 554, 2001-ին՝ 90, 2004-ին՝ 261 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում է գըտ-նըվում Տեղերի վանական համալիրը (13-15դդ.)՝ 1221թ. սբ. Աստվածածին եկեղեցիով և 13-17դդ. սբ.Հովհաննես մատուռով:

**ՏՈԼՈՐՍ**- գյուղ Սյունիքի մարզում, Սիսիան գետի աջակողմյան Այրիգետ վտակի ձախ ափին, մարզկենտրոնից 109 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1660 մ բարձրության վրա: Տոլորսի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը նախկին տեղից 300 մ տեղափոխվել է ավելի բարձրադիր վայր: 1831թ. ուներ 88, 1897-ին՝ 909, 1907-ին՝ 1000, 1926-ին՝ 740, 1939-ին՝ 730, 1959-ին՝ 377, 1970-ին՝ 344, 1979-ին՝ 288, 1989-ին՝ 376, 2001-ին՝ 406, 2004-ին՝ 432 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի, ծխախոտի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղն ունի 1861թ. սբ. Հռիփսիմե եկեղեցի, խաչքարերով գերեզմանոց, իսկ շրջակայքում պահպանվել են մի քանի գյուղատեղիներ (**Տոլորք**):

**ՏՈԼՈՐՔ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Տոլորս**:

**ՏՈՐԹՆԻ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Անտառաշատ**:

**ՏՈՐՈւՆԻՔ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 117 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: Տ. է վերանվանվել 1991թ.: 1988թ. ուներ 138, 2001-ին՝ 181, 2004-ին՝ 534 բնակիչ: Բնակչությունը ըզ-բաղվում է անասնապահությամբ (**Ղզլշաֆակ**):

**ՏՈՐՖԱՇԵՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Տորֆավան**:

**ՏՈՐՖԱՎԱՆ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 70 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1910 մ բարձ-

րության վրա: Հիմնադրվել է 1936թ.: 1939թ. ուներ 65, 1959-ին՝ 322, 1970-ին՝ 228, 1979-ին՝ 833, 1989-ին՝ 149, 2001-ին՝ 505, 2004-ին՝ 504 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է տորֆի հանույթով: 1988-89թթ. այստեղ բնակություն են հաստատել Բաքվից գաղթածները: Գյուղի մեջ կան 15-20դդ. գերեզմանոց և 15-16դդ. խաչքարեր (**Տորֆաշեն**):

**ՏՐԵՏՈՒՔ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոնից 90 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: **Տ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1873թ. ուներ 317, 1897-ին՝ 517, 1926-ին՝ 218, 1939-ին՝ 379, 1959-ին՝ 444, 1970-ին՝ 633, 1979-ին՝ 738, 1989-ին՝ 534, 2001-ին՝ 183, 2004-ին՝ 203 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են գաղթել Ադրբեջանի Ղազախ ք-ից, ՀՀ Ճամբարակի տարածաշրջանից, իսկ 1988-89թթ. Ադրբեջանի Խանլար ք-ից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, երկրագործությամբ և ծխախոտագործությամբ: Գյուղում կան 13-17դդ. խաչքարեր և մի հին եկեղեցու հետքեր (**Ենիքենդ**):

**ՏՐՈՒՆՔ**- գյուղ Վայոց Ձորի մարզում, տե՛ս **Աղնջաձոր**:

**ՏՈՒՖԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 26 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: Գյուղը հարուստ է անսպառ տուֆի պաշարներով: 1831թ. ուներ 114, 1897-ին՝ 617, 1926-ին՝ 575, 1939-ին՝ 608, 1959-ին՝ 627, 1970-ին՝ 570, 1979-ին՝ 442, 1989-ին՝ 588, 2001-ին՝ 513, 2004-ին՝ 479 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Ալաշկերտից և Մուշից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան 19դ. "Ժամ" եկեղեցի, "Թուխ Մանուկ" մատուռ (7-11դդ.), "Արմենքար" կիկլոպյան ամրոց:

## Ց

**ՑԱՄԱՔԱՍԱՐ**- գյուղ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից 63 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1610 մ: 1873թ. ուներ 124, 1897-ին՝ 196, 1926-ին՝ 254, 1939-ին՝ 427, 1959-ին՝ 401, 1970-ին՝ 427, 1979-ին՝ 385, 1989-ին՝ 381, 2001-ին՝ 469, 2004-ին՝ 470 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Մուշի և Մանազկերտի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Այստեղ հայտնաբերվել է մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. դամբարան:

**ՑԵՄԶԱՎՈԴ**- քաղաք Արարատի մարզում, տե՛ս **Արարատ**:

**ՑԵՑԻԿ**- պատմական գյուղ Վայոց Ձորի մարզում, տե՛ս **Մերս**:

**ՑՂՈՒՆԻ**- գյուղ Սյունիքի մարզում, Նժդեհ գյուղից 1 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: **Ց.** է վերանվանվել 1991 թ-ին (**Մուրխուզ**):

**ՑՈՂԱՄԱՐԳ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 24 կմ հս., ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 174, 1897-ին՝ 877, 1926-ին՝ 515, 1939-ին՝ 807, 1959-ին՝ 591, 1970-ին՝ 541, 1979-ին՝ 477, 1989-ին՝ 600, 2001-ին՝ 543, 2004-ին՝ 545 բնակիչ, որոնց նախնիների մի մասը 1828-30թթ. գաղթել է Սեբաստիայից: Բնակչությունը զբաղվում է անասնապա-

հությամբ և երկրագործությամբ: Գյուղում պահպանվել են բերդի մնացորդներ, կիկլոպյան ամրոցի հետքեր (մ.թ.ա. 1-ին հզմ.): Ունի միջնադարյան կանգուն եկեղեցի, "Միսակ-Միսակ" մատուռ և խաչքարեր:

# Ու

**ՈւԶ** - գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ույծ**:

**ՈւԶՈւՆԹԱԼԱՅԻ ՓՈՍՏԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Կայան**:

**ՈւԺԱՆԻՍ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 11 կմ հս-արլ., ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 30, 1897-ին՝ 444, 1926-ին՝ 378, 1939-ին՝ 321, 1959-ին՝ 206, 1970-ին՝ 168, 1979-ին՝ 109, 1989-ին՝ 114, 2001-ին՝ 136, 2004-ին՝ 106 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնաբուծությամբ: Ունի 1873թ. սբ. Հովհաննես եկեղեցի, մատուռ և խաչքար: Գյուղից 2-3 կմ հս-արլ. գտնվում է Հին Ուժանիս գյուղատեղին, որտեղ պահպանվել է կիսավեր եկեղեցի, 1 կմ հս.՝ "Հանդին արտ" վայրում, կա գերեզմանոց, 1-2 կմ արլ.՝ "Սպիտակ աղբյուր" վայրում կա այլ գյուղատեղի (**Վժենիս**):

**ՈւՂԵԶՈՐ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Դարբ գետի վերին հոսանքի աջափնյա սարահարթում, Որոտանի լեռնանցքի մոտ, ծովի մակերևույթից 2025 մ բարձրության վրա, Սարավանից 5 կմ հվ.: **ՈՒ.** է վերանվանվել 03. 04.1991թ.: 1831թ. ուներ 25, 1897-ին՝ 417, 1926-ին՝ 185, 1939-ին՝ 446, 1959-ին՝ 281, 1970-ին՝ 575, 1979-ին՝ 579, 1989-ին՝ 78, 2001-ին՝ 133 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղի մոտ կան ավերակ եկեղեցի և խաչքարեր (**Քոչբեկ**):

**ՈւՅԾ**- գյուղ Սյունիքի մարզում, Սիսիան գետի աջ կողմում, գետաբերանից ոչ հեռու: Մարզկենտրոնից 109 կմ հսարմ., ծովի մակերևույթից 1610 մ բարձրության վրա: **Ու.** է վերանվանվել 1991թ.: 1831թ. ուներ 293, 1897-ին՝ 1169, 1926-ին՝ 1155, 1939-ին՝ 1179, 1959-ին՝ 967, 1970-ին՝ 985, 1979-ին՝ 854, 1989-ին՝ 47, 2001-ին՝ 453, 2004-ին՝ 534 բնակիչ, որոնց նախնիները 1828-29թթ. գաղթել են Խոյից և Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, կերային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Ունեցել է 2 եկեղեցի, որոնցից սբ. Գևորգը (1616թ.) դեռևս կանգուն է: **Ու.** հայտնի է իր Անապատ-ով, որտեղ եղել է Սիոնի վանքը: Գյուղի շրջակայքում կան զանազան հնություններ՝ բնակավայրերի և բերդերի հետքեր (**Ուզ**):

**ՈւՇԻ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արլ. փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 3 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ: 1831թ. ուներ 167, 1897-ին՝ 1249, 1926-ին՝ 624, 1939-ին՝ 959, 1959-ին՝ 780, 1970-ին՝ 1003, 1979-ին՝ 1004, 1989-ին՝ 1246, 2001-ին՝ 1328, 2004-ին՝ 1532 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խութից, Մուշից, Խլաթից և Ռշտունիքից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, ծխախոտի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 1,5 կմ արմ. գտնվում են մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. "Ուշի" ամրոցը, 10-18դդ. համանուն գյուղատեղին, 5-7դդ. սբ.

Սարգիս վանական համալիրը, 3,5 կմ հս-արմ.՝ Ախանդակ գյուղատեղին (ուշ մջնդ.), հվ-արմ. մասում՝ 13դ. սբ. Աստվածածին եկեղեցին:

**ՈՒՋԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ. Վժան լեռնաճյուղի փեշերին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 13 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1150 մ: 1831թ. ուներ 62, 1887-ին՝ 444, 1914-ին՝ 300, 1926-ին՝ 569, 1939-ին՝ 978, 1959-ին՝ 1514, 1970-ին՝ 1845, 1979-ին՝ 1858, 1989-ին՝ 2344, 2001-ին՝ 2758, 2004-ին՝ 3346 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Մոտկանից, Արճեշից և Վանից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ, ծխախոտագործությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից հս. գտնվում են “Արեգունի” ամրոցը (9-13դդ.), մ.թ.ա.1-ին հզմ. “Մոտկան բերդ” ամրոցը և 10-20դդ. Վժան գյուղատեղին, որից 1,5 կմ հս. գտնվում է մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. “Զորակայան” ամրոցը, որտեղ էլ գտնվում են “Ղազարի” (13-18դդ.) և “Յոթ դռնանի” (13-18դդ.) քարայրկացարանները (**Վժան**):

**ՈՒՋԱՆԱՊԱՏ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Գուղեմնիս**:

**ՈՒՌՆՈՒՏ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Սառնաղբյուր**:

**ՈՒՌՈՒՏ**- գյուղ Լոռու մարզում, Լալվար լեռան ստորոտում, Ուռուտ գետի հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45 կմ հս-արմ.: 1873թ. ուներ 413, 1879-ին՝ 767, 1926-ին՝ 1225, 1939-ին՝ 1477, 1959-ին՝ 1399, 1970-ին՝ 1181, 1979-ին՝ 1103, 1989-ին՝ 1224, 2001-ին՝ 1204, 2004-ին՝ 1000 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Արմ. Հայաստանի տարբեր շրջաններից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և այգեգործությամբ: **Ու.** կան սրբատաշ քարից շինված մեկ կանգուն և մեկ ավերակ եկեղեցիներ, հվ-արմ. կողմում՝ սբ. Ամենափրկիչ եկեղեցին:

**ՈՒՌՈՒՏ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Որոտան**:

**ՈՒՐԱՍԱՐ**- գյուղ Լոռու մարզում, Ձորագետի աջ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1525 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 33 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 04.05. 1939թ., իսկ 08.08.1991թ. վերանվանվել է **Ու.**: 1873թ. ուներ 371, 1897-ին՝ 473, 1926-ին՝ 804, 1939-ին՝ 949, 1959-ին՝ 674, 1970-ին՝ 617, 1979-ին՝ 1128, 1989-ին՝ 473, 2001-ին՝ 394, 2004-ին՝ 360 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ (**Կույբիշև**):

**ՈՒՐՑԱԼԱՆՋ**- գյուղ Արարատի մարզում, Արածոգետի վերին հոսանքի շրջանում, Գեղամա լեռների հվ. հատվածի սարահարթի վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 53 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 20.10.1967թ. վերանվանվել է **Ու.**: 1831թ. ուներ 43, 1897-ին՝ 544, 1926-ին՝ 206, 1939-ին՝ 382, 1959-ին՝ 160, 1970-ին՝ 165, 1979-ին՝ 187, 1989-ին՝ 151, 2001-ին՝ 182, 2004-ին՝ 197 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղից 1,5 կմ հս-արմ. կա մի գյուղատեղի (14-18դդ.): **Ու.** 2-3 կմ հս-արմ. գտնվում է “Կապույտխաչ” հնավայրը (**Ջովաշեն**):

**ՈՒՐՑԱՁՈՐ**- գյուղ Արարատի մարզում, Վեդի գետի ձախ ափին: Հեռավո-

բությունը մարզկենտրոնից՝ 26 կմ հվ-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1075 մ: Գյուղը հիմնադրվել է 1873թ.: 1873թ. ուներ 756, 1897-ին՝ 1260, 1926-ին՝ 914, 1939-ին՝ 1447, 1959-ին՝ 1444, 1970-ին՝ 1971, 1979-ին՝ 2227, 1989-ին՝ 2463, 2001-ին՝ 2935, 2004-ին՝ 3060 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղից 6 կմ հս-արմ. գտնվում է "Տափի Բերդ" (Գնորգ Մարզպետունի) ամրոցը (10-13դդ.), 7 կմ հս-արլ.՝ Ուրծ քաղաքատեղին, գյուղից 7 կմ հս-արլ.՝ "Վանք" եկեղեցական համալիրը (14-15դդ.) և 4-17դդ. ամրոցը:

**ՈւՐՈւԲԱ**- պատմական բնակավայր Կոտայքի մարզում,տե՛ս **Աբովյան**:

# Փ

**ՓԱՄԲԱԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Փամբակ գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 95 կմ արլ., ծովի մակերևույթից 1975 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 166, 1897-ին՝ 283, 1926-ին՝ 349, 1939-ին՝ 532, 1959-ին՝ 708, 1970-ին՝ 1110, 1979-ին՝ 1427, 1989-ին՝ 380, 2001-ին՝ 590, 2004-ին՝ 542 բնակիչ: 1988-89թթ. այստեղ են բնակություն հաստատել Ադրբեջանի Դաշքեսան (Քարհատ) ք-ից բռնագաղթվածները: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից հս., սարալանջին, կան հայկական գերեզմաններ և 15-18դդ. խաչքարեր:

**ՓԱՄԲԱԿ**- գյուղ Լոռու մարզում, Գայլաձորի կիրճում, Փամբակ գետի երկու ափերին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1200 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հս-արլ.: 1922թ. ուներ 57, 1939-ին՝ 503, 1959-ին՝ 259, 1970-ին՝ 274, 1979-ին՝ 289, 1989-ին՝ 420, 2001-ին՝ 407, 2004-ին՝ 361 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան խաչքարեր՝ "սբ. Սարգիս" և "Խաչի թումբ": Գյուղից 3 կմ արլ. գտնվում է Բնձոր գյուղատեղին:

**ՓԱՄԲԱԿ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Լոռու մարզում, Գայլաձորի կիրճում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1220 մ, հեռավորությունը Փամբակ գյուղից՝ 1 կմ հս-արլ.: 1926թ. ուներ 133, 1959-ին՝ 79, 1970-ին՝ 40, 1979-ին՝ 39 բնակիչ:

**ՓԱՅԱՀԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Նոր Աստղաբերդ**:

**ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Ձորակ**:

**ՓԱՆԻԿ**- գյուղ Շիրակի մարզում, Մանթաշի ձորահովտի և Շիրակի դաշտի միացման վայրում, Գեղաձոր գետակի ձախափնյա արզավանդ դաշտում, մարզկենտրոնից 16 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: **Փ.** է վերանվանվել 1925թ.: 1831թ. ուներ 176, 1897-ին՝ 1235, 1926-ին՝ 1685, 1939-ին՝ 1707, 1959-ին՝ 1838, 1970-ին՝ 2292, 1979-ին՝ 2377, 1989-ին՝ 3304, 2001-ին՝ 2831, 2004-ին՝ 2531 բնակիչ: 1842թ.

Ալաշկերտից մի խումբ հայեր վերաբնակվել են այս գյուղում: Գյուղի մոտակայքում կան բազալտի քարհանքեր: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, ճակնդեղագործությամբ, մեղվաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կա Տիրամայր եկեղեցի (1761-1846թթ.), գյուղից 5 կմ հս., "Ավերք" կոչվող վայրում, կան անտիկ շրջանի բերդի ավերակներ: **Փ.** եղել է գրչության կենտրոն (**Զվարճաձոր**):

**ՓԱՐԱՔԱՐ**- գյուղ Արմավիրի մարզում, հարթավայրում, ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 35 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 308, 1897-ին՝ 667, 1926-ին՝ 1122, 1939-ին՝ 1158, 1959-ին՝ 1689, 1970-ին՝ 3365, 1979-ին՝ 3971, 1989-ին՝ 4773, 2001-ին՝ 5041, 2004-ին՝ 5722 բնակիչ, որոնց մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Սալմաստից և Խոյից: **Փ.** կա զինու գործարան, բազալտի, տուֆի և կավի հանքեր: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ և թռչնաբուծությամբ: 1959թ. պեղումների ժամանակ գյուղից 1,5 կմ հս. գտնվող բլրաշարի վրա հայտնաբերվել են աշտարակ-մեհյանի ավերակներ: Գյուղն ունի 1855թ.սբ. Հարություն (սբ. Մարիամ Աստվածածին) եկեղեցի (**Շիրապատ**):

**ՓԱՐՈՍ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Նահապետավան**:

**ՓԱՐՊԻ**- գյուղ Արագածոտնի մարզում, Շաղվարդ գետի օժանդակի՝ Փարպու ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ: 1831թ. ուներ 185, 1897-ին՝ 965, 1926-ին՝ 1208, 1939-ին՝ 1266, 1959-ին՝ 1424, 1970-ին՝ 1648, 1979-ին՝ 1625, 1989-ին՝ 2038, 2001-ին՝ 2083, 2004-ին՝ 2420 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Գյուղի մեջ են գտնըվում "Ծիրանավոր" եկեղեցին (5դ.) և "Թուխ Մանուկ" մատուռը (19դ.); հվ-արլ. մասում՝ սբ. Գրիգոր Լուսավորիչ (13դ.) և սբ. Թարգմանչաց (7դ.) եկեղեցիները, "Թուխ Մանուկ" մատուռը (10-13դդ.); 1,5-2 կմ հվ.՝ "Վերին Նավեր" դամբարանադաշտը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) և "սբ. Արդար Դավիթ" մատուռը (մջնդ.):

**ՓԻՐԼՈւ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Վերին Գեղավանք**:

**ՓՅՈՒՆԻԿ**- գյուղ Կոտայքի մարզում, Մարմարիկ գետի միջին հոսանքի ափին, Արտավազ գյուղից 2 կմ արլ., ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: **Փ.** է վերանվանվել 12.06. 1992թ.: 1831թ. ուներ 23, 1897-ին՝ 341, 1926-ին՝ 238, 1939-ին՝ 401, 1959-ին՝ 455, 1970-ին՝ 814, 1979-ին՝ 929, 2001-ին՝ 396, 2004-ին՝ 330 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնաբուծությամբ (**Ախունդով**):

**ՓՇԱՏԱՎԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, Արաքս գետի ձախ ափին, մարզկենտրոնից 14 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 113, 1897-ին՝ 706, 1926-ին՝ 814, 1939-ին՝ 756, 1959-ին՝ 1064, 1970-ին՝ 1513, 1979-ին՝ 1652, 1989-ին՝ 2061, 2001-ին՝ 2217, 2004-ին՝ 2546 բնակիչ, որոնց նախնիների մի մասը գաղթել է Կարինի նահանգի Բայազետի գավառի Առվտոց և Մոսուն գյուղերից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

**ՓՇՈՆՔ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Զառիթափ**:

**ՓՈԼԱԴ**- գյուղ Տավուշի մարզում, տե՛ս **Խաչարձան**:

**ՓՈՌ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ կողմում, Վայքի լեռների հս. փեշերին: Ծովի մակերեվույթից՝ 1510 մ բարձրության վրա, մարզկենտրոնից՝ 27 կմ հվ-արլ.: 1831թ. ուներ 18, 1897-ին՝ 439, 1926-ին՝ 244, 1939-ին՝ 311, 1959-ին՝ 165, 1970-ին՝ 118, 1979-ին՝ 96, 2001-ին՝ 150, 2004-ին՝ 122 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի, բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի սբ. Աստվածածին (1910թ.) և 1830թ. եռանավ բազիլիկ եկեղեցիներ,13-14դդ. խաչքարեր (**Փուռ**):

**ՓՈՔՐ ԱՅՐՈՒՄ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 700 մ, հեռավորությունը Մեծ Այրումից՝ 4 կմ հվ-արմ.: 1926թ. ուներ 88, 1931-ին՝ 154, 1939-ին՝ 207, 1959-ին՝ 233, 1970-ին՝ 420, 1979-ին՝ 388, 2001-ին՝ 170, 2004-ին՝ 268 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

**ՓՈՔՐ ԱՐՄԱՎԻՐ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Հայկավան**:

**ՓՈՔՐ ՄԱԶՐԱ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Փոքր Մասրիկ**:

**ՓՈՔՐ ՄԱՆԹԱՇ**- գյուղ Շիրակի մարզում, մարզկենտրոնից 28 կմ հվ-արլ., ծովի մակերևույթից 1960 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 72, 1886-ին՝ 590, 1922-ին՝ 903, 1931-ին՝ 1035, 1959-ին՝ 1169, 1970-ին՝ 1557, 1979-ին՝ 1707, 2001-ին՝ 2228, 2004-ին՝ 2249 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից, Մուշից և Խնուսից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղն ունի 1864թ. մատուռ:

**ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, Փոքր Մասրիկ գետի ափին, մարզկենտրոնից 92 կմ հվ-արլ.: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1930 մ բարձրության վրա: **Փ.Մ.** է վերանվանվել 03.04.1991թ.: 1831թ. ուներ 227, 1886-ին՝ 978, 1922-ին՝ 359, 1931-ին՝ 912, 1959-ին՝ 1092, 1970-ին՝ 1652, 1979-ին՝ 1831, 1989-ին՝ 351, 2001-ին՝ 744, 2004-ին՝ 862 բնակիչ, որոնց նախնիները այստեղ են տեղափոխվել Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի, կարտոֆիլի մշակությամբ և այգեգործությամբ: Գյուղի մեջ կան՝ 12-13դդ. մատուռ, “սբ. Նշան” խաչքար (1269թ.) և 15-16դդ. գերեզմանոց (**Փոքր Մազրա**):

**ՓՈՔՐ ՍԱՐԻԱՐ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1970 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 30 կմ հս.: 1873թ. ուներ 280, 1897-ին՝ 384, 1926-ին՝ 255, 1931-ին՝ 384, 1939-ին՝ 510, 1959-ին՝ 387, 1970-ին՝ 377, 1979-ին՝ 283, 1989-ին՝ 169, 2001-ին՝ 266, 2004-ին՝ 278 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: **Փ.Ս.** ունի “Ժամ” եկեղեցի:

**ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերեվույթից՝ 1990 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 39 կմ հս.: 1897թ. ուներ 177, 1926-ին՝ 362, 1939-ին՝ 491, 1959-ին՝ 387, 1979-ին՝ 59, 1989-ին՝ 163, 2001-ին՝ 172, 2004-ին՝ 182 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են

Ալաշկերտի, Բասենի և Մուշի գյուղերից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում է գտնվում “Դարի սուրբ” մատուռը:

**ՓՈՔՐ ՎԵԴԻ**- գյուղ Արարատի մարզում, արգավանդ ու բարեբեր հարթավայրում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 825 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 7 կմ հվ-արլ.: Գյուղն հիմնադրվել է 1831թ., իսկ 04.12.1995թ. այն վերանվանվել է **Փ.Վ.**: 1831թ. ուներ 166, 1897-ին՝ 971, 1926-ին՝ 527, 1939-ին՝ 823, 1959-ին՝ 1359, 1970-ին՝ 2495, 1979-ին՝ 2853, 1989-ին՝ 3246, 2001-ին՝ 3091, 2004-ին՝ 3100 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Բալու և Մոկս գավառների գյուղերից: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 37 կմ արլ. գտնվում է Ջղուն գյուղատեղին (9-14դդ.,18-19դդ.): **Փ.Վ.** հվ-արմ. գտնվում է Խոր Վիրապի վանքը (6-13դդ.- 17-18դդ.) (**Քիչիկ Վեդի**):

**ՓՈՔՐ ՕՇԱԿԱՆ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Դաշտ**:

**ՓՈՔՐԱՇԵՆ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1900 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ հս.: 1831թ. ուներ 121, 1897-ին՝ 388, 1926-ին՝ 218, 1939-ին՝ 369, 1959-ին՝ 309, 1970-ին՝ 196, 1979-ին՝ 212, 1989-ին՝ 193, 2001-ին՝ 205, 2004-ին՝ 215 բնակիչ, որոնց նախնիները 1829-30թթ. գաղթել են Բասենի գավառից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում են գտնվում սբ. Հակոբ եկեղեցին (1890թ.) և սբ.Հակոբ մատուռը (**Լեռնանցք**):

**ՓՈՔՐԱՎԱՆՔ**- գյուղ Կոտայքի մարզում, տե՛ս **Ջրավան**:

**ՓՈՒՇԿԱԳ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Այգեձոր**:

**ՓՈՒՌ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Փոռ**:

# Ք

**ՔԱՂԻՆ**- պատմական բնակավայր Արագածոտնի մարզում,տե՛ս **Դաշտադեմ**:

**ՔԱՂՍԻ**- գյուղ Կոտայքի մարզում, մարզկենտրոնից 4 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1680 մ բարձրության վրա: 1970թ. ուներ 1886, 1979-ին՝ 2066, 1989-ին՝ 2004, 2001-ին՝ 2371, 2004-ին՝ 2247 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկի, կերային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում պահպանվել են 1855թ. եկեղեցու հիմքի վրա կառուցված սբ.Աստվածածին եկեղեցին և “Թուխ Մանուկ” մատուռը: Շրջակայքում կան բնակատեղի, դամբարաններ (մ.թ.ա. 3-րդ հզմ.), 17-19դդ. խաչքարերով գերեզմանոց (**Կականս**):

**ՔԱՂՑՐԱՇԵՆ**- գյուղ Արարատի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 8 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 930 մ: 1939թ. ուներ 510, 1959-ին՝ 1436, 1970-

ին՝ 1989, 1979-ին՝ 2295, 1989-ին՝ 2866, 2001-ին՝ 3094, 2004-ին՝ 3091 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Խոյ և Սալմաստ գավառներից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ (**Չորրորդ գյուղ**):

**ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Հրազդան գետի բարձրադիր աջափնյակում, մարզկենտրոնից 42 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա: 1897թ. ուներ 3, 1970-ին՝ 1895, 1979-ին՝ 2327, 1989-ին՝ 3214, 2001-ին՝ 3365, 2004-ին՝ 3264 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:

**ՔԱՇՈՒՆԻ**- գյուղ Սյունիքի մարզում, Որոտան գետի աջ կողմում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 43 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1850 մ: **Ք.** է վերանվանվել 12. 06.1992թ.: 1897թ. ուներ 12, 1926-ին՝ 104, 1939-ին՝ 206, 1959-ին՝ 166, 1970-ին՝ 78, 1979-ին՝ 38, 1989-ին՝ 27, 2001-ին՝ 27, 2004-ին՝ 31 բնակիչ, որոնց նախկին բնակիչները 1920-ական թթ. այստեղ են փոխադրվել Տանձատափ գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղից արմ. կան գերեզմաններ և եկեղեցու ավերակների մնացորդներ (**Մալդաշ**):

**ՔԱՋԱՐԱՆ**- քաղաք Սյունիքի մարզում, Ողջի գետի ափին, մարզկենտրոնից 26 կմ հվ-արմ., ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա, շրջապատված Զանգեզուրի և Մեղրու լեռների ճյուղավորություններով: Քաղաքում Ողջիին է միախառնվում Ծակքար վտակը: Նախկինում քաղաքի տեղում էր գտնվում Քաջարանց գյուղը, որը 04.07.1951թ. վերանվանվել է **Ք.** և 1958թ. դարձել քաղաք: 1831թ. ուներ 50, 1897-ին՝ 394, 1926-ին՝ 431, 1939-ին՝ 548, 1959-ին՝ 11527, 1980-ին՝ 8967, 1989-ին՝ 7519, 2001-ին՝ 8439, 2004-ին՝ 8400 բնակիչ, որոնց մի մասը 1946թ. գաղթել է Իրանից, Սիրիայից և Կիպրոսից: Տընտեսության հիմնական ճյուղը գունավոր մետաղագործությունն է, 1976 թ-ից գործում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Տարածքում մետաղաձուլմամբ են զբաղվել դեռևս բրոնզե դարում: Քաղաքի արմ. ծայրամասում կա երկաթային հանքաղբյուր (Թթուջուր): Հնություններից են “Գանձասար” բաց հանքում պահպանված հեթանոսական սրբատեղին և 17դ. կանգուն եկեղեցին: Շրջակայքում են գտնվում Ողջի և Սուրբ Դավիթ գյուղատեղիները:

**ՔԱՋԱՐԱՆ**- գյուղ Սյունիքի մարզում, մարզկենտրոնից 26 կմ, ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: Քաջարանց գյուղը 04.07.1951թ. վերանվանվել է **Ք.**, 1995թ. դարձել է առանձին համայնք: 2001թ. ուներ 223, 2004-ին՝ 155 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է պղնձարդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ (**Քաջարանց**):

**ՔԱՋԱՐԱՆՑ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Քաջարան**:

**ՔԱՍԱԽ**- պատմական քաղաք Արագածոտնի մարզում, տե՛ս **Ապարան**:

**ՔԱՍԱԽ**- գյուղ Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1175 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 58 կմ հվ-արմ.: **Ք.** է վերանվանվել 11.11. 1970թ.: 1970թ. ուներ 2003, 1979-ին՝ 2384, 1989-ին՝ 4195, 2001-ին՝ 4755, 2004-ին՝ 5562 բնակիչ, որոնք տեղափոխվել են Ապարանի Քասախ և Ջովունի գյուղերից, ինչպես նաև Ախալքալաքից

և Գանձակից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ (**№ 40 սովխոզին կից**):

**ՔԱՐԱԲԵՐԴ**- գյուղ Լոռու մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1675 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 87, 1887-ին՝ 606, 1926-ին՝ 769, 1939-ին՝ 743, 1959-ին՝ 475, 1970-ին՝ 115, 2001-ին՝ 107, 2004-ին՝ 94 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ և երկրագործությամբ: Գյուղում են գտնվում "Ժամ" եկեղեցին (18դ.) և "Խաչի բացատ" մատուռը:

**ՔԱՐԱԲԵՐԴ**- գյուղ Շիրակի մարզում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 32 կմ: 1873թ. ուներ 622, 1897-ին՝ 933, 1926-ին՝ 1000, 1939-ին՝ 1079, 1959-ին՝ 822, 1970-ին՝ 987, 1979-ին՝ 1002, 1989-ին՝ 1013, 2001-ին՝ 1090, 2004-ին՝ 1120 բնակիչ: Գյուղը հիմնադրրվել է 1829թ. Մուշից, Ալաշկերտից, Խնուսից, Բասենից գաղթածների կողմից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մը-շակությամբ: Գյուղում են գտնվում "Թուխ Մանուկ" մատուռը և "Ժամ" եկեղեցին:

**ՔԱՐԱԳԼՈՒԽ**- գյուղ Վայոց ձորի մարզում, Քարագլուխ գետի ափին, Վարդենիսի լեռների հվ. լանջին: Ծովի մակերևույթից՝ 1650 մ բարձրության վրա, մարզկենտրոնից՝ 21 կմ հս-արմ.: 1831թ. ուներ 121, 1897-ին՝ 789, 1926-ին՝ 930, 1939-ին՝ 1286, 1959-ին՝ 807, 1970-ին՝ 888, 1979-ին՝ 729, 1989-ին՝ 796, 2001-ին՝ 831, 2004-ին՝ 926 բնակիչ, որոնց նախնիները 1828թ. գաղթել են Խոյից ու Սալմաստից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ: **Ք.** կան եկեղեցի (19դ.) և խաչքարեր (6-19դդ.), իսկ 3 կմ հվ.՝ Քարագլխի սբ. Մամաս վանքի ավերակները (13դ.) և "Թուխ Մանուկ" մատուռը (13դ.):

**ՔԱՐԱԿԵՐՏ**- գյուղ Արմավիրի մարզում, քարքարոտ հարթավայրում, մարզկենտրոնից 27 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1110 մ բարձրության վրա: 21.01.1965թ. վերանվանվել է **Ք.**: 1873թ. ուներ 108, 1897-ին՝ 168, 1926-ին՝ 110, 1939-ին՝ 169, 1959-ին՝ 942, 1970-ին՝ 2784, 1979-ին՝ 3535, 1989-ին՝ 4589, 2001-ին՝ 3826, 2004-ին՝ 4641 բնակիչ: Բնակչության աճը կատարվել է նախկին Թալինի և Անիի շրջաններից տեղափոխվածների հաշվին: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և անասնապահությամբ (**Կարմրաշեն**):

**ՔԱՐԱՀՈՒՆՋ**- գյուղ Սյունիքի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 64 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1240 մ: 1831թ. ուներ 81, 1897-ին՝ 985, 1926-ին՝ 1005, 1939-ին՝ 1074, 1959-ին՝ 1088, 1970-ին՝ 1175, 1979-ին՝ 1155, 1989-ին՝ 1119, 2001-ին՝ 1254, 2004-ին՝ 1252 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ (հայտնի է իր թթենիներով): **Ք.** պահպանվել է 1675թ. սբ.Հռիփսիմե եկեղեցին: Գյուղի շրջակայքում կան ավերակ ամրոց, Լալքար գյուղատեղի և քարայր-բնակարաններ:

**ՔԱՐԱՁՈՐ**- գյուղ Լոռու մարզում, Քարաձոր գետի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 13 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1836թ.: 1873թ. ուներ 128, 1897-ին՝ 238, 1926-ին՝ 384, 1939-ին՝ 484, 1959-ին՝ 332, 1970-ին՝ 334, 1979-ին՝ 261, 1989-ին՝

124, 2001-ին՝ 461, 2004-ին՝ 406 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է կաթնամթերքի արտադրությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում պահպանվել է 19-րդ դ. եկեղեցի:

**ՔԱՐԱՇԱՄԲ**- գյուղ Կոտայքի մարզում, Արազգետի հովտում, ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 26 կմ հվ-արմ.: 1831թ. ուներ 28, 1897-ին՝ 306, 1926-ին՝ 266, 1939-ին՝ 435, 1959-ին՝ 391, 1970-ին՝ 432, 1979-ին՝ 438, 1989-ին՝ 526, 2001-ին՝ 676, 2004-ին՝ 750 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղից 3 կմ արլ. գտնվում են սբ. Գևորգ եկեղեցու ավերակները (7դ.): Գյուղից դուրս, ձորալանջին, գտնվում են 6դ. վանքի ավերակներ: **Ք**-ի տարածքում պահպանվել են նաև 7դ. քարայրներ:

**ՔԱՐԱՇԵՆ**- գյուղ Սյունիքի մարզում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 82 կմ հս., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ: 1831թ. ուներ 74, 1897-ին՝ 628, 1926-ին՝ 656, 1939-ին՝ 661, 1959-ին՝ 589, 1970-ին՝ 505, 1981-ին՝ 542, 1989-ին՝ 493, 2001-ին՝ 576, 2004-ին՝ 571 բնակիչ, որոնց նախնիները 1829թ. գաղթել են Խոյից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ, ճակնդեղագործությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում պահպանվել են 17դ. փոքր եկեղեցի և գերեզմանոցներ, 1 կմ հս.՝ սբ. Գևորգ եկեղեցին, իսկ շրջակայքում հայտնաբերվել են գյուղատեղիներ:

**ՔԱՐԻՆՋ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջ կողմում, Դժարսար լեռան հվ. ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1230 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36 կմ հս-արլ.: 1878թ. ուներ 374, 1897-ին՝ 536, 1926-ին՝ 966, 1939-ին՝ 1086, 1959-ին՝ 817, 1970-ին՝ 894, 1979-ին՝ 655, 1989-ին՝ 745, 2001-ին՝ 747, 2004-ին՝ 631 բնակիչ, որոնց նախնիները եկել են հարևան Մարց գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում կան եկեղեցի (13-20դդ.) և մատուռ (10-13դդ.):

**ՔԱՐԿՈՓ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 600 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 76 կմ հս-արլ.: Գյուղը հիմնադրվել է 1936թ., իսկ 03.07.1968թ. վերանվանվել է **Ք.**: 1939թ. ուներ 287, 1959-ին՝ 407, 1970-ին՝ 390, 1979-ին՝ 639, 1989-ին՝ 428, 2001-ին՝ 377, 2004-ին՝ 325 բնակիչ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ (**Գրանիտի գործարանին կից**):

**ՔԱՐՎԱՆՍԱՐԱ**- քաղաք Տավուշի մարզում, տե՛ս **Իջևան**:

**ՔԱՐՈՒՏ**- գյուղ Սյունիքի մարզում, Գեղի գետի ձախակողմյան Կահուրդ վտակի ձորահովտում, մարզկենտրոնից 36 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: **Ք.** է վերանվանվել 04.07.2006թ.: 1897թ. ուներ 145, 1926-ին՝ 185, 1939-ին՝ 216, 1959-ին՝ 356, 1970-ին՝ 440, 1979-ին՝ 274, 2001-ին՝ 8 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղի հվ. մասում կան բերդի ավերակներ (**Կահուրդ**, **Քյուրուտ**):

**ՔԵԹԻ**- գյուղ Շիրակի մարզում, արլ-ից Ուխտի սար և հս-ից Պոլոզսար լեռների մեջ փռված գոգավորությունում: Բարձրությունը ծովի մակերևույթից ՝ 1740 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 10 կմ հս.: 1831թ. ուներ

258, 1897-ին՝ 913, 1926-ին՝ 528, 1939-ին՝ 921, 1959-ին՝ 872, 1970-ին՝ 865, 1979-ին՝ 807, 1989-ին՝ 895, 2001-ին՝ 1105, 2004-ին՝ 1141 բնակիչ, որոնց նախնիները գաղթել են Կարսից, Մուշի և Բասենի գյուղերից: Բը-նակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային և բանջարաբոստանային կուլտուրանե-րի մշակությամբ: Գյուղից 2 կմ հս-արմ. "Քարոտ հողեր" հանդա-մասում հայտնաբերվել է դամբարանադաշտ: Այստեղ է գտնվում մ.թ.ա. 10-4դդ. "Զորանոց" ամրոցը:

**ՔԻԼԻՍԱ**- գյուղ Լոռու մարզում, Փամ-բակ գետի աջակողմյան Լեռնաջուր վտակի աջ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1800 մ, հեռավո-րությունը Հալավար գյուղից՝ 2 կմ հվ-արլ.: 1926թ. ուներ 110, 1939-ին՝ 136, 1959-ին՝ 182, 1970-ին՝ 96 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնա-պահությամբ:

**ՔԻՉԻԿ ՎԵԴԻ**- գյուղ Արարատի մար-զում, տե՛ս **Փոքր Վեդի**:

**ՔԻՐՍ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Կիցք**:

**ՔՅՈւՐՈւՏ**- գյուղ Սյունիքի մարզում, **Քարուտ**:

**ՔՈԲԵՐ ԿԱՅԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- գյուղ Լո-ռու մարզում, Դեբեդ գետի կիրճում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 810 մ, հեռավորությունը Թումանյան ք-ից՝ 1 կմ հս-արմ.: Գյուղը հիմնադրվել է 1897թ.: 1926թ. ուներ 25, 1939-ին՝ 74, 1979-ին՝ 140, 1989-ին՝ 137, 2001-ին՝ 45 բնակիչ: Ք-ից 500 մ արմ. գտնվում է Քոբայրի վանական համալիրը (13դ.), 5 կմ հվ՝ "Ավանդավոր" ամրոցը (14-15դդ.):

**ՔՈՉԲԵԿ**- գյուղ Վայոց ձորի մարզում, տե՛ս **Ուղեձոր**:

**ՔՐԴԻԿԱՆՑ**- գյուղ Սյունիքի մարզում, տե՛ս **Լեռնաձոր**:

**ՔՈւՉԱԿ**- գյուղ Արագածոտնի մար-զում, Արագած լեռան արլ.փեշերին: Հե-ռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մա-կերևույթից՝ 1850 մ: Գյուղը հիմնա-դրվել է 1831թ.: 1831թ. ուներ 531, 1897-ին՝ 1836, 1926-ին՝ 2371, 1939-ին՝ 2331, 1959-ին՝ 1417, 1970-ին՝ 1660, 1979-ին՝ 1585, 1989-ին՝ 1887, 2001-ին՝ 1993, 2004-ին՝ 2193 բնակիչ: Նախնիները գաղթել են Մուշից, Ալաշկերտից, Բայազետից, Կարինից և Մակուից: Բնակչությունը զբաղվում է անաս-նապահությամբ, հացահատիկի, կերային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյու-ղում է գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (1900թ.); հս. մասում՝ "Լուս-աղբյուր" (17-18դդ.) և սբ. Թադևոս Առաքյալ (12-13դդ.) մատուռները, մ.թ.ա. 3-րդ-1-ին հզմ. "Էլոյի բերդ" ամրոցը ; 2 կմ հս-արլ.՝ 12-13դդ. "Թուխ Մանուկ" մատուռը; 3 կմ արլ.՝ մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. ամրոցը և սբ. Գևորգ եկեղեցին (1891թ.) (**Ճերմակ վանք**):

# Օ

**ՕԲՎԱԼԿԱ**- գյուղ Լոռու մարզում, տե՛ս **Մեղովկա**:

**ՕԹԵՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մար-զում, Արագածի հվ. լանջին: Հեռավո-րությունը մարզկենտրոնից՝ 40 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերե-վույթից՝ 1800 մ: **Օ.** է վերանվանվել 04.07.2006թ.:1831թ. ուներ 12, 1897-ին՝

404, 1926-ին՝ 237, 1939-ին՝ 383, 1959-ին՝ 177, 1970-ին՝ 221, 1979-ին՝ 190, 2001-ին՝ 182, 2004-ին՝ 281 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և երկրագործությամբ: Այստեղ կա 12-13դդ. եկեղեցի (**Բայսզ**):

**ՕԽՏԱՐ**- գյուղ Սյունիքի մարզում, Աճանան գետի հովտում, մարզկենտրոնից 22 կմ հս-արմ., ծովի մակերեվույթից 1120 մ բարձրության վրա: 1831թ. ուներ 28, 1897-ին՝ 511, 1926-ին՝ 85, 1939-ին՝ 162, 1959-ին՝ 156, 1970-ին՝ 282, 1979-ին՝ 167, 2001-ին՝ 124, 2004-ին՝ 109 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Գյուղից 1,5 կմ հվ-արմ. կա 10դ. եկեղեցի, որի շրջակայքում պահպանվել են բնակավայրի ավերակներ:

**ՕՀԱՆԱՎԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի բարձրադիր ափին: Հեռավորրությունը մարզկենտրոնից՝ 3 կմ հս-արլ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1330 մ: 1831թ. ուներ 229, 1897-ին՝ 601, 1926-ին՝ 1015, 1939-ին՝ 1193, 1959-ին՝ 1160, 1970-ին՝ 1373, 1979-ին՝ 1525, 1989-ին՝ 1887, 2001-ին՝ 2254, 2004-ին՝ 2314 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի արլ. մասում է գտնվում Հովհաննավանքի վանական համալիրը (4-13դդ.), “Սերկնիլի Կալեր” բնակատեղին (մ.թ.ա. 1-ին հզմ.), “Վասակամուտ” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), Կաթողիկե (սբ. Կարապետ) (1216թ.) և 4դ. սբ. Կարապետ եկեղեցիները: Օ-ից 1 կմ հս. գտնվում են սբ. Գրիգոր Լուսավորիչ անապատը (Անապատ հրեշտակաբնակ) (10-13դդ.) և “Աղկունծ” (13դ.) եկեղեցին, 10-14դդ. “Այծանոց” քարայր-կացարանը, իսկ 2 կմ հս.՝ Սերկևլի գյուղատեղին (10-15դդ.), 11-13դդ. ամրոցը, սբ. Գրիգոր Լուսավորիչ (10-13դդ.), սբ. Աստվածածին (Կարմիր վանքեր) (10-13դդ.) եկեղեցիները և մ.թ.ա. 1-ին հզմ. “Ապարանի առու” ջրանցքը:

**ՕՁՈՒՆ**- գյուղ Լոռու մարզում, Դեբեդ գետի ձախ կողմում: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1125 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 47 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 691, 1897-ին՝ 2435, 1907-ին՝ 3370, 1926-ին՝ 4418, 1939-ին՝ 4566, 1959-ին՝ 4315, 1970-ին՝ 4951, 1979-ին՝ 4787, 1989-ին՝ 4777, 2001-ին՝ 4834, 2004-ին՝ 5055 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և պտղաբուծությամբ: Մատենագրական աղբյուրներում **Օ.** հիշատակվում է սկսած 8 դ-ից: Գյուղի կենտրոնում են գտնվում Օձունի տաճարը (6-7դդ.), սբ. Հովհաննես (Խաչգունդ) (717-728թթ.) և Ծիրանավոր (Ծաղկեվանք) եկեղեցիները (5-7դդ.), Հոռոմայրի վանական համալիրը (18դ.), Օձունի կոթող- մահարձանը (5-6դդ.):

**ՕՂԶՕՂԼԻ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Ողջի**:

**ՕԾԱԿԱՆ**- գյուղ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջ ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 5 կմ հվ-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1020 մ: 1831թ. ուներ 611, 1897-ին՝ 2244, 1926-ին՝ 2909, 1939-ին՝ 3373, 1959-ին՝ 3934, 1970-ին՝ 4476, 1979-ին՝ 5044, 1989-ին՝ 5571, 2001-ին՝ 5106, 2004-ին՝ 5644 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում պահպանվել են “Դիքի կոնդ” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին

(1875թ.), Մեսրոպ Մաշտոցի դամբարանը (442-443թթ.), սբ. Թադեվոս Առաքյալ (13դ.) մատուռը և հընգաթռիչք կամուրջը (1705թ.): Գյուղից 0,5 կմ հս-արլ. գտնվում է "Մանկանոց" բնակատեղին (7-18դդ.), որտեղ էլ գտնվում են 7դ. սբ. Սիոն եկեղեցին և 7դ. "Մորիկ կայսեր" կոթողը, հվ-արլ.՝ սբ. Սարգիս (1225թ.) և սբ. Աստվածածին (14դ.) մատուռները, 2 կմ արլ.՝ "Սասունիկ" (մ.թ.ա. 2-րդ հզմ.) և "Օշական" (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.) դամբարանադաշտերը:

**ՕՐԳՈՎ**- գյուղ Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արլ. փեշերին, Ամբերդի գետահովտում: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 11 կմ հս-արմ., բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1630 մ: Գյուղը հիմնադրվել է 1831թ.: 1831թ. ուներ 54, 1897-ին՝ 380, 1926-ին՝ 223, 1939-ին՝ 390, 1959-ին՝ 426, 1970-ին՝ 376, 1979-ին՝ 354, 1989-ին՝ 443, 2001-ին՝ 511, 2004-ին՝ 594 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի արմ. մասում պահպանվել են մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ. կիկլոպյան ամրոցի և բնակավայրի մնացորդներ:

**ՕՐԹԱՃՅԱ**- գյուղ Արագածոտնի մարզում, տե՛ս **Միջնատուն**:

**ՕՐՋՈՆԻԿԻՁԵ**- գյուղ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Վահան**:

**ՕՔՍՅՈւԶ**- գյուղ Շիրակի մարզում, տե՛ս **Դարիկ**:

# Ֆ

**ՖԱՆՏԱՆ**- գյուղ Կոտայքի մարզում, Գութանասար լեռան հս. ստորոտին, մարզկենտրոնից 14 կմ հվ., ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա: 1873թ. ուներ 143, 1897-ին՝ 183, 1926-ին՝ 341, 1939-ին՝ 1070, 1959-ին՝ 1082, 1970-ին՝ 1009, 1979-ին՝ 996, 1989-ին՝ 1020, 2001-ին՝ 1079, 2004-ին՝ 1051 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում գործում էր ձիթհանք: Տարածքում կան հրաբխային ավազահանքի պաշարներ: **Ֆ.**-ում կա քարե դարի կայան (աշելյան ժամանակաշրջան):

**ՖԵՐԻԿ**- գյուղ Արմավիրի մարզում, ծովի մակերևույթից 885 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 17 կմ հս-արլ.: 1831թ. ուներ 47, 1897-ին՝ 498, 1939-ին՝ 290, 1959-ին՝ 257, 1970-ին՝ 432, 1979-ին՝ 498, 1989-ին՝ 576, 2001-ին՝ 399, 2004-ին՝ 618 բնակիչ:
Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ:

**ՖԵՐՄԵՆՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ**- նախկինում ավան Տավուշի մարզում, տե՛ս **Այգեպար**:

**ՖԻՈԼԵՏՈՎՈ**- գյուղ Լոռու մարզում, Աղստև գետի ձախ կողմում, Մարգավետի լեռների ստորոտին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1670 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 17 կմ հս-արլ.: Գյուղը 1820 թ. հիմնադրել են Ռուսաստանի Տամբովի մարզից

արտաքսված ռուսները: 1873թ. ուներ 709, 1897-ին՝ 601, 1926-ին՝ 1061, 1939-ին՝ 1070, 1959-ին՝ 1040, 1970-ին՝ 1259, 1979-ին՝ 1258, 1989-ին՝ 1393, 2001-ին՝ 1519, 2004-ին՝ 1383 բնակիչ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, կաղամբի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում կա 5-6դդ. եկեղեցի:

**ՖՐԱՆԿԱՆՈՑ**- գյուղ Արմավիրի մարզում, տե՛ս **Ամբերդ**: